ՋՈՆ ԲԻՎԵՐ

ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂԸ

ԲԱՑԱՀԱՅՏԵ՛Ք ԱՍՏԾՈՒՆ ՄՏԵՐՄՈՐԵՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԲԱՆԱԼԻՆ

ՄԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՄԵՆՕՐՅԱ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿ

Թանկագի՛ն ընկեր

Սուրբ երկյուղը Աստծո վրա հաստատ հիմնվելու բանալին է. այն բացում է փրկության, իմաստության և գիտության գանձարանները: Աստծո սիրո հետ մեկտեղ, այն անփոխարինելի միջոց է՝ Աստծուն մտերմորեն ճանաչելու համար: Մենք պետք է հասկանանք, որ չենք կարող ճշմարտապես սիրել Աստծուն, քանի դեռ չունենք Նրա երկյուղը, և միևնույն ժամանակ, չենք կարող ճշմարտապես երկյուղ տածել Նրա հանդեպ, քանի դեռ չենք սիրում Նրան: Անչափ կարևոր է, որպեսզի մենք հստակորեն սահմաններ դնենք Աստծո երկյուղի և Նրա դատաստանի միջև, այնուհետև առաջ ընթանանք և Նրան ավելի մտերմորեն ճանաչենք:

Աստծո երկյուղը պետք է վառվի մեր սրտերում՝ անկախ այն բանից, թե որքան ժամանակ է, որ մենք փրկված ենք: Իրականում այն՝ փրկությունը ստանալու բանալին է: Պողոսը հռչակում է. «...ով որ ձեզանում աստվածավախ է, ձեզ ուղարկվեց այս փրկության խոսքը» (Գործք 13.26): Առանց այս սուրբ երկյուղի՝ մենք չենք հասկանա, որ փրկվելու կարիք ունենք: Տիրոջ երկյուղը չի ընկալվում մտքով, այլ փորագրվում է մեր սրտերում: Այն հայտնվում է մեզ Սուրբ Հոգու կողմից, երբ մենք կարդում ենք Նրա Խոսքը: Այն Աստծո Հոգու դրսևորումներից մեկն է: Սաղմոսերգուն հռչակում է. «Որովհետև ո՞վ կա Երկնքում, որ հավասար լինի Տիրոջը»: Որքան ավելի ենք հասկանում Աստծո մեծությունը... այնքան ավելի մենք կարող ենք վախենալ Նրանից կամ երկյուղ տածել Նրա հանդեպ:

Թանկագի՛ն ընկեր, այս ուղերձը մեծ ազդեցություն թողեց իմ կյանքի և ծառայության վրա: Ես աղոթում եմ, որ ձեր կյանքը և ծառայությունը նույնպես վերափոխվեն, երբ դուք ջանասիրաբար փնտրեք, թե ինչ է Աստված ցանկանում ասել ձեզ Իր Սուրբ Հոգով՝ օգտագործելով այս ուղերձը: Փոխանցե՛ք այս ուղերձն այլ մարդկանց: Ոգեշնչե՛ք նրանց, ում ծառայում եք: Այս ուղերձը կոգեշնչի և կառաջնորդի մարդկանց: Սրտումս Աստծուց հղում զգացի, որ պետք է փոխանցեմ այս սերմն աշխարհի տարբեր մասերում գտնվող հոգևոր ավազներին՝ հանձնելով այն նրանց ձեռքերում, ցանելով այն նրանց սրտերում և կյանքերում: Խնդրում եմ, ընդունե՛ք այն իմ անկեղծ եղբայրական սիրով:

Ջոն Բիվեր
JohnBevere@ymail.com

teach reach rescue
Messenger International®
MessengerInternational.org

ՋՈՆ ԲԻՎԵՐ

ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂԸ

ԲԱՑԱՀԱՅՏԵ՛Ք ԱՍՏԾՈՒՆ ՄՏԵՐՄՈՐԵՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԲԱՆԱԼԻՆ

Սերպողության և ամենօրյա ընթերցանության ձեռնարկ

The Fear of the Lord by John Bevere
© 2013 Messenger International
www.MessengerInternational.org
Originally published in English
Additional resources in Armenian are available for free download at:
www.CloudLibrary.org

You are encouraged to duplicate, virally distribute, use extracts or
otherwise share this message
in Armenian with others

To contact the author: JohnBevere@ymail.com

Ջոն Բիվեր «Տիրոջ երկյուղը»
© 2013 Մեսինջեր ինտերնեյշնլ
www.MessengerInternational.org
Գիրքը թարգմանված է անգլերենից

Հեղինակի հետ կարող եք կապ հաստատել՝ JohnBevere@ymail.com

Բոլոր սուրբգրային մեջբերումները արված են Աստվածաշունչ մատյան, արևելահայերեն «Արարատ» թարգմանությունից (1896թ.), եթե չկան այլ նշումներ:

Հավելյալ նյութերը հայերեն լեզվով կարելի է ներբեռնել www.CloudLibrary.org կայքէջից:

Դուք կարող եք ազատորեն կրկնօրինակել այս ուղերձը հայերեն լեզվով, տարածել այն բոլոր հասանելի միջոցներով, օգտագործել քաղվածքներ կամ այլ կերպերով կիսվել այս նյութով մարդկանց հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծանոթություն և ցուցումներ 5

Գլուխ 1 Աստծո գանձարանի բանալին 9

Գլուխ 2 Հայացք Նրա մեծությանը 29

Գլուխ 3 Աստծո փառքը 51

Գլուխ 4 Կարգ ու կանոն, փառք, դատաստան 71

Գլուխ 5 Հետաձգված դատաստան 95

Գլուխ 6 Գալիք փառքը 115

Գլուխ 7 Փառքից՝ փառք 133

Գլուխ 8 Ընկերություն Աստծո հետ 153

ՕԳՏԱԿԱՐ ԱԿՆԱՐԿՆԵՐ՝ ՁԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Ողջունում ենք ձեզ *«Տիրոջ երկյուղը» սերտողության և ամենօրյա ընթերցանության ծեռնարկի* էջերում: Անչափ ուրախ և շնորհակալ ենք, որ դուք որոշել եք մասնակցել այս կարևոր դասընթացին: Պահանջվել են երկարատև աղոթքներ, ուսումնասիրություններ և պատրաստություններ, որպեսզի ձեզ համար կարողանայինք ստեղծել այս խորացված, ինտերակտիվ և կյանքով լի դասընթացը:

Գրքի ութ գլուխներից յուրաքանչյուրը համապատասխանում է նույն համարով «Տիրոջ երկյուղը» տեսադասընթացին: Այս դասերում ընդգրկված են մի շարք հարցեր, որոնք կխթանեն ձեր միտքը, նաև ոգեշնչող նյութեր՝ ընթերցանության համար, և աղոթքներ:

Յուրաքանչյուր գլուխ պարունակում է հետևյալ բաժինները.

- **Հատվածներ Աստվածաշնչից**, որոնք կարող են փոխել ձեր կյանքը: Մենք խրախուսում ենք ձեզ՝ մտորել այս խոսքերի շուրջ: Ոչինչ ավելի մնայուն տպավորություն չի թողնի ձեր կյանքում, քան կենդանի Աստծո Խոսքը:

- **Հռչակել Նրա մեծությունը**: Իմաստուն և Աստծուն փառավորող խոսքեր հավատքի մարդկանցից: Սուրբ գրքում ասվում է, որ խորհրդականների շատությունով ապահովություն կլինի, այնպես որ, ժամանակ հատկացրեք՝ կարդալու համար այս սրտից ասված խոսքերը:

- **Մեջբերումներ Ջոնի խոսքերից:** Կարևոր հատվածներ տեսադասընթացից, որոնք իսկապես արժե հիշել: Ուշադրությամբ վերանայեք այս հատվածները, որոնք արտահայտում են յուրաքանչյուր դասի գլխավոր ասելիքը:

- **Հենց այնտեղ, որտեղ ապրում եք:** Հատուկ քայլեր, որոնք ընդգրկում են յուրաքանչյուր դասի գլխավոր սկզբունքները: Դրանց նպատակն է՝ օգնել ձեզ՝ գործնականում կիրառել այդ սկզբունքները ձեր առօրյա կյանքում:

Դասերի ընթացքում դուք նույնպես կգտնեք որոշ բանալի սահմանումներ, հետաքրքիր փաստեր, որոնց շուրջ կարող եք մտորել, նաև մի բաժին, որը եզրափակում է յուրաքանչյուր գլուխը: Այս ամենն արված է, որպեսզի դուք ամբողջովին ընկալեք դասերում զետեղված ազդեցիկ սկզբունքները և կիրառեք դրանք ձեր կյանքում:

Ժամանակ հատկացրեք, որպեսզի գրի առնեք ձեր մտքերը, զգացմունքները, գաղափարները կամ հայտնությունները, որ Սուրբ Հոգին տալիս է ձեզ, յուրաքանչյուր գլխի վերջում գտնվող *Իմ օրագրի* և *Իմ նշումների* մեջ: Այն սուրբգրային հատվածները և սկզբունքները, որոնք կենդանանում են ձեր ներսում, անգին են: Դրանք կօգնեն ձեզ հոգևորապես աճել: Արժե ժամանակ հատկացնել և գրի առնել դրանք՝ հետագայում վերանայելու համար:

Մենք նույնպես առաջարկում ենք ձեզ.

ՍԿՍԵ՛Ք ԵՎ ԱՎԱՐՏԵ՛Ք ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳԼՈՒԽԸ ԱՂՈԹՔՈՎ: Սկսելով յուրաքանչյուր գլուխը՝ հրավիրե՛ք Սուրբ Հոգուն, և խնդրե՛ք սովորեցնել և առաջնորդել ձեզ ամբողջ ճշմարտության մեջ (տե՛ս Հովհ. 16.13): Ավարտելով գլուխը՝ խնդրե՛ք Նրան՝ հավիտյան կնքել ձեր սրտում այն, ինչ սովորեցիք:

ԿԱՅՈ՛ՒՆ ԵՂԵՔ և ավարտե՛ք յուրաքանչյուր գլուխը մեկ շաբաթվա կամ հատկացված ժամանակի ընթացքում: Դուք կարող եք այն բաժանել մասերի և դարձնել ձեր օրակարգի մասը, կամ՝ այն ավարտել շաբաթվա մեջ՝ երկու կամ երեք օրում: Սա ձեր *անձնական* դասընթացն է Տիրոջ հետ, այնպես որ, այնպիսի օրակարգ մշակեք, որն առավել արդյունավետ կլինի ձեզ համար:

ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ԵՎ ՆՎԻՐՎԱԾ ԵՂԵՔ: Եթե դուք ծրագրել եք անցնել այս դասընթացը որոշակի ժամանակվա ընթացքում և վայրում, այդպես էլ արեք: Եթե չհաջողվի հետևել ձեր ծրագրին, մի՛ հուսահատվեք: Մի՛ դադարեք, մինչև որ չավարտեք դասընթացը: Աստված հավատարմորեն կօրհնի ամեն ջանք, որ անում եք:

ԱՆԿԵՂԾ ԵՂԵՔ ինքներդ ձեզ և Աստծո հետ՝ յուրաքանչյուր հարցին պատասխանելիս: Երբ իմանաք ճշմարտությունն Աստծո Խոսքի և ձեր մասին, կստանաք այնպիսի ազատություն, որն այլևս ոչ մի կերպ չեք կարողանա գտնել:

Թո՛ղ *Տիրոջ երկյուղը* դասընթացի ուսումնասիրությունը ազատություն տա ձեր հոգուն և միավորի Աստծո հետ, օգնի ստեղծել ավելի խորը, ավելի մտերիմ փոխհարաբերություն Նրա հետ, քան երբևէ ունեցել եք: Թո՛ղ ձեր աչքերը բացվեն, որպեսզի տեսնեք Նրա մեծությունը բոլորովին նոր մակարդակի վրա: Զորացե՛ք Նրա Հոգով, որպեսզի տարածեք Նրա փառքի լույսը այն սերնդի մեջ, որում մենք ապրում ենք:

> «Վե՜ր կաց: Լուսավորի՛ր: Քո լույսը եկել է, և Տիրոջ փառքը ծագել է: Այժմ խավարը ծածկում է երկիրը, և թանձր խավարը ծածկում է ազգերը: Բայց Տերը ծագում է, և Նրա փառքը հայտնվում է քեզ վրա: Ազգերը կգան քո լույսի մոտ, և թագավորները կգան քո արևածագի պայծառառության մոտ»:
>
> *— Եսայի 60.1-3, GW*

<u>Առաջարկներ դասընթացն անցկացնող խմբակների ավագների համար</u>

Մենք հորդորում ենք, որ խմբակի յուրաքանչյուր անդամ անպայման ունենա թե՛ սեփական գիրքը, թե՛ սեփական սերտողության ձեռնարկը՝ դասընթացը հնարավորինս ավելի լավ յուրացնելու համար: Այդ դեպքում նրանք հնարավորություն կունենան ավելի անձնապես ու խորապես ուսումնասիրել և ընկալել ուսուցանվող նյութը: Մենք գիտենք, որ դպրոցական ուսուցման ընթացքում դրական արդյունքի հասնելու համար պետք է ոչ միայն լսել դասերը, այլ նույնպես նշումներ անել, կարդալ այն դասագրքերը և կատարել այն առաջադրանքները, որոնք ընդգրկված են ուսումնական ծրագրի մեջ: Նույնը ճշմարիտ է նաև այս դեպքում. դուք դրական արդյունքի կհասնեք, հոգևոր աճ կունենաք և հայտնություններ կստանաք, եթե օգտագործեք բոլոր տրամադրվող միջոցները:

Մեր սերտողության ձեռնարկների նպատակն է՝ դրդել մասնակիցներին՝ կյանքում կիրառել դասընթացի սկզբունքները և գաղափարները: Մենք այն նույնպես նախատեսել ենք խմբակային ուսուցման համար՝ զետեղելով հարցեր, որոնք հարմար են խմբակային քննարկման համար: Հատկապես խորհուրդ է տրվում քննարկել G նշան ունեցող հարցերը, թեև դուք, որպես ավագ, կարող եք որոշել դա ըստ ձեր հայեցողության:

Մենք խրախուսում ենք ձեզ՝ աղոթել և մտորել այն մասին, թե ինչպես ավելի դյուրին և ընկալելի կարող եք դարձնել ձեր հավաքույթները: Ստորև ներկայացվում է երեք տարբերակ. այս մեթոդների հաջորդականությունը հիմնված չէ դրանց արդյունավետության վրա: Մեր ամենակարևոր առաջարկն է, որպեսզի դուք դարձնեք այս դասընթացը *ձերը*, այսինքն՝ լավագույնս համապատասխանեցնեք այն ձեր խմբակին:

Տարբերակ 1. Կարդացե՛ք գիրքը հավաքույթից առաջ, դիտե՛ք հերթական «DVD» դասընթացը հավաքույթի ժամանակ և օգտագործե՛ք սերտողության ձեռնարկը՝ քննարկման համար:

Հանձնարարե՛ք խմբակի անդամներին՝ կարդալ գրքի համապատասխան գլուխները յուրաքանչյուր հավաքույթից առաջ (տե՛ս սերտողության ձեռնարկի յուրաքանչյուր գլխի առաջին էջը): Խմբակի հավաքույթի ժամանակ դիտեք առաջին «DVD» դասընթացը: Այնուհետև ժամանակ հատկացրեք այն քննարկելու համար: (Ըստ ձեր ընտրության. օգտագործե՛ք սերտողության ձեռնարկը ուղեցույցի փոխարեն՝ խմբակային քննարկումն ավելի դյուրին դարձնելու համար: Մենք խրախուսում ենք ձեզ՝ կենտրոնանալ Խ նշանը կրող հարցերի վրա, բայց դուք, որպես ավագ, կարող եք ազատորեն ընտրել, թե որ հարցերն են ավելի համապատասխան ձեր խմբակին): Հաջորդ շաբաթվա ընթացքում (1-ին և 2-րդ դասերի միջև եղած շաբաթը) հանձնարարե՛ք ձեր խմբակի անդամներին՝ ավարտել սերտողության ձեռնարկի չքննարկված մասը: Հետևե՛ք այս օրինակին ամեն շաբաթ:

Տարբերակ 2. Դիտե՛ք հերթական «DVD» դասընթացը հավաքույթի ժամանակ, քննարկե՛ք այն սերտողության ձեռնարկի օգնությամբ, և հանձնարարե՛ք գիրքը և սերտողության ձեռնարկը՝ որպես տնային աշխատանք:

Խմբակի հավաքույթի ժամանակ միասին դիտեք առաջին «DVD» դասընթացը: Մի՛ հանձնարարեք անդամներին՝ կարդալ գիրքը կամ ավարտել աշխատանքային տետրի համապատասխան գլուխը մինչև խմբակի հավաքույթը: Մենք առաջարկում ենք բաժանել անդամներին գիրքը և սերտողության ձեռնարկը՝ առաջին դասը դիտելուց հետո: «DVD» դասընթացի ավարտից հետո, որոշ ժամանակ հատկացրեք՝ այն քննարկելու համար: Օգտագործե՛ք սերտողության ձեռնարկը ուղեցույցի փոխարեն՝ խմբակային քննարկումն ավելի դյուրին դարձնելու համար: Մի՛ ձգտեք քննարկման ընթացքում անպայման ավարտել սերտողության ձեռնարկի ամբողջ դասը: Հաջորդ շաբաթվա համար հանձնարարե՛ք ձեր խմբակի անդամներին՝ կարդալ գրքի համապատասխան գլուխները և ավարտել ցանկացած կետ, որին դուք չանդրադարձաք հավաքույթի ժամանակ: Հետևե՛ք այս օրինակին ամեն շաբաթ:

Տարբերակ 3. Դիտե՛ք հերթական «DVD» դասընթացը հավաքույթի ժամանակ, հանձնարարե՛ք գիրքը և սերտողության ձեռնարկը՝ որպես տնային աշխատանք, և քննարկե՛ք դասը հաջորդ հավաքույթին:

Հավաքե՛ք ձեր խմբակը և միասին դիտեք առաջին «DVD» դասընթացը: Ավարտելուց հետո, ժամանակ հատկացրեք՝ այն քննարկելու համար: Հաջորդ շաբաթվա ընթացքում հանձնարարեք ձեր խմբակի անդամներին՝ կարդալ գրքի համապատասխան գլուխները և ավարտել սերտողության ձեռնարկի գլուխը: Երկրորդ շաբաթվա սկզբում, ժամանակ հատկացրեք՝ քննարկելու համար աշխատանքային տետրի համապատասխան գլխի հարցերը, ինչպես նաև ցանկացած հարցեր կամ մեկնաբանություններ, որ անդամները կարող են ունենալ: Այնուհետև դիտեք երկրորդ «DVD» դասընթացը: Հետևե՛ք այս օրինակին ամեն շաբաթ:

*«Նա (Տերը) հաստատ հիմք կլինի քո ժամանակների համար, փրկության և իմաստության և գիտության առատ պաշար (գանձարան). **Տիրոջ երկյուղն** այս գանձի բանալին է»:*

— Եսայի 33.6, NIV
(թավատառն ավելացրած է)

1

ԱՍՏԾՈ ԳԱՆՁԱՐԱՆԻ ԲԱՆԱԼԻՆ

Խնդրում ենք օգտվել ուսումնական դասընթացի 1-ին դասից, ինչպես նաև՝ *«Տիրոջ երկյուղը»* գրքի ներածությունից, 11-րդ, 13-րդ և 14-րդ գլուխներից:

«Ես միշտ գիտեի, որ Աստծո սերը մեր քրիստոնեական ընթացքի հիմքն է: Սակայն մինչև այն դեպքը, երբ աղաղակեցի Աստծուն, ես չէի գիտակցում, որ Տիրոջ երկյուղը նույնպես Նրա հետ ընթացքի հիմքերից մեկն է: Հիսուսը շարունակում է մնալ մեր Տերը, *Տիրոջ երկյուղի* հիմքի շնորհիվ»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Խ 1 Հենց հիմա՝ դասընթացի ամենասկզբում, կարծ սահմանեք, թե ինչպե՞ս եք հասկանում Տիրոջ երկյուղը:

Ըստ իս՝ Տիրոջ երկյուղը...

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

2 Լավագույն միջոցը՝ Տիրոջ երկյուղը սահմանելու համար, Աստծո Խոսքն է: Աստվածաշնչում՝ Ծննդոցից մինչև Հայտնություն, կան հարյուրավոր խոսքեր, որոնք պատմում են այս զարմանալի ճշմարտության մասին: Մի քանի րոպե հատկացրեք և մտորեք այս խոսքերի մասին, իսկ հետո գրի առեք, թե ինչպես են դրանք օգնում ձեզ սահմանել Տիրոջ երկյուղը:

«…Ի՞նչ է պահանջում քեզնից Տերը՝ քո Աստվածը, բայց միայն [երկյուղածությամբ] *վախենալ Տիրոջից՝ քո Աստծուց,* [այսինքն]՝ քայլել Նրա բոլոր ճանապարհներում և սիրել Նրան, և ծառայել Տիրոջը՝ քո Աստծուն, քո ամբողջ [մտքով և] սրտով և քո ողջ էությամբ՝ պահելու համար Տիրոջ պատվիրանները և Նրա կանոնները, որ այսօր պատվիրում եմ քեզ, որ քեզ համար լավ լինի»:

— *Երկրորդ Օրինաց 10:12,13,* AMP

«Եվ ահա թե ինչ է նա ասում ամբողջ մարդկությանը. «*Տիրոջ երկյուղը* ճշմարիտ իմաստություն է. չարից հեռանալը՝ իրական հասկացողություն»»:

— *Հոբ 28.28,* NLT

«Դուք, որ *վախենում եք Տիրոջից,* փառաբանե՛ք Նրան. բոլորդ՝ Հակոբի ժառանգներ, փառավորե՛ք Նրան և *վախեցե՛ք Նրանից* բոլորդ՝ Իսրայելի ժառանգներ»:

— *Սաղմոս 22.23,* NASB

«*Տիրոջ երկյուղը* չարը ատելն է. հպարտությունը և ամբարտավանությունը և չար ճանապարհը և նենգավոր բերանը Ես ատում եմ»:

— *Առակաց 8.13,* NKJV

Այս խոսքերից ես հասկանում եմ, որ Տիրոջից վախենալը նույնպես նշանակում է…

_____

_____

_____

_____

_____

«Աստված գանձարան ունի, և այդտեղ գտնվող գանձերը ստանալու բանալին Տիրոջ երկյուղն է: Նրա գանձերի թվում են՝ փրկությունը, իմաստությունը և գիտությունը»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

3 Եսայի 33.6-րդ խոսքը, որը տրված էր դասի ամենասկզբում, մենք տեսանք, որ *փրկության*, *իմաստության* և *գիտության* անգին գանձերը հայտնվում են մեր կյանքում Տիրոջ երկյուղի միջոցով:

ա. Կարդացե՛ք Գործք առաքելոցի 10.34,35, 13.26 և Սաղմոս 85.8,9 խոսքերը: Գրե՛ք Տիրոջից ստացած հայտնություններն այն մասին, թե ինչպես է Տիրոջ երկյուղը բացում փրկության դուռը:

_____
_____
_____
_____
_____
_____
_____

Մտածե՛ք այս մասին

Դուք երբևէ եղե՞լ եք Նիագարա ջրվեժի կամ Մեծ կիրճի մոտ: Երբ մոտ եք ջրվեժի եզրին, որտեղ որոտի ձայներ են լսվում և րոպեում 170 000 խորանարդ մետր ջուր է թափվում, կամ երբ կանգնած եք կիրճի եզրին, և սարսափելի վախ եք զգում՝ ետ քայլելով անսահման և անհատակ տարածության առջևից, ինչ-որ առումով կարող եք հասկանալ Աստծո երկյուղը: Այն վատառողջ վախ չէ, այլ անձամբ Աստծո վերապրումը, որն ամբողջովին համակում է ձեզ[1]:

_____

Առնչվող սուրբգրային հատված. Սաղմոս 103.17,18

բ. ***Մտորե՛ք Առակաց 2.1-6 խոսքերի շուրջ*** և բացատրեք, թե ինչպե՞ս է Աստծո երկյուղը կապված իմաստություն, գիտություն և հասկացողություն ստանալու հետ:

_____
_____
_____
_____
_____

Առնչվող սուրբգրային հատվածներ. Առակաց 1.7, 9.10,11, 15.33

գ. Այս աշխարհի իմաստությունը և աստվածային իմաստությունը, որը գալիս է Տիրոջ երկյուղից, տարբերվում են իրարից: Կարդացե՛ք Հակոբոս 3.13-17 խոսքերը և նկարագրե՛ք, թե ի՞նչ է աստվածային իմաստությունը:

_____
_____
_____
_____
_____

Հոշակել

ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Տիրոջից վախենալ՝ նշանակում է Աստծո բնավորության և Խոսքի հանդեպ լցվել ահով: Այն խորը երկյուղածության վիճակ է, որը կարող է դրդել մեզ՝ դողալ Նրա առջև Նրա արդար դատաստանների պատճառով: Տիրոջ երկյուղը նույնպես Նրա փառքը ուրախությամբ գովաբանելն ու երկրպագելն է, ինչի արդյունքում մենք խոնարհությամբ հնազանդվում ենք Նրա կամքին:
Սուրբ վախը... տրված է Աստծուց: Այն կարողություն է տալիս մարդկանց երկյուղածություն տածել Նրա պատվիրանների հանդեպ, նաև ատել ու հեռանալ չարի ցանկացած դրսևորումից»:

— *Նիլ Տ. Անդերսոն և Դիլ Միլլեր*[2]

«Հմուտ կյանքը սկսվում է Աստծո երկյուղից և կյանքում ունեցած խորաթափանցությունից, որը ֆեռք է բերվում Սուրբ Աստծուն ճանաչելուց: Իմ՝ Տիկին Իմաստության միջոցով է, որ քո կյանքը խորն է դառնում, և քո կյանքի տարիները հասունության են հասնում»:

— *Առակաց 9.10,11,* MSG

4 Միգուցե հիմա այնպիսի իրավիճակում եք, որ ինչ-որ բանից ազատվելու (փրկվելու) կարիք ունեք: Ձեզ հարկավո՞ր է գիտություն կամ իմաստություն՝ ճիշտ վարվելու համար:

ա. Կարճ նկարագրե՛ք ձեր իրավիճակը:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

բ. Աղոթե՛ք և իմաստություն խնդրեք Աստծուց այդ իրավիճակում ճիշտ վարվելու համար: *Աղոթքը* Տիրոջ երկյուղի դրսևորումներից մեկն է: Գրի առեք ցանկացած փոփոխություն, որ Տերը մղում է ձեզ՝ անել ձեր վերաբերմունքի կամ գործերի մեջ:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

«Առակաց գրքում գրված է, որ երբ արժևորեք Աստծո Խոսքը և աղաղակեք իմաստություն և հասկացողություն ստանալու համար, «Այն ժամանակ կհասկանաս Տիրոջ երկյուղը, և Աստծո գիտությունը կգտնես» (2.5): Ի՞նչ է նշանակում *«Աստծո գիտությունը»*: Այն նշանակում է, որ դուք մտերմորեն կճանաչեք Աստծուն և կնայեք կյանքին այնպես, ինչպես Աստված է նայում: Այլ խոսքերով՝ դուք կունենաք Քրիստոսի միտքը և կտեսնեք ամեն ինչ Աստծո տեսանկյունից»»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

ԽՍ 5 Աստված արդար է, բայց Նա նույնպես ողորմած է: Երբ մենք անհնազանդության մեջ ենք և կարող ենք վտանգավոր իրավիճակում հայտնվել, Աստված մեղմորեն զգուշացնում է մեզ Իր Խոսքի և այլ մարդկանց միջոցով, (տե՛ս Ամովս 3.7): Նա զգուշացրեց Ղովտին, մինչև Սոդոմը կործանելը, ինչպես և Նինվեի ժողովրդին:

ա. Ղովտի ապագա փեսաները այլ կերպ պատասխանեցին Աստծո զգուշացմանը, իսկ Նինվեի բնակիչները՝ այլ կերպ: Ո՞րն էր տարբերությունը:

_____

_____

_____

_____

Կարդացե՛ք այս կարևոր օրինակները Ծննդոց 19.12-14-ում և Հովնան 3-րդ գլխում:

բ. Ի՞նչ եք հասկանում այս երկու օրինակներից:

_____

_____

_____

_____

«Որովհետև մենք չենք կարող նայել արևին՝ իր պայծառության պատճառով, երբ քամիներն արդեն հեռացրել են ամպերը, ոչ էլ կարող ենք նայել Աստծո ահարկու մեծությանը, երբ Նա մոտենա մեզ Երկնքից՝ լույսով ողողված շքեղությունը հագած: Մենք չենք կարող պատկերացնել Ամենակարողի զորությունը, սակայն Նա այնքան արդար և ողորմած է, որ չի կործանում մեզ: Զարմանալի չէ, որ մարդիկ ամենուր վախենում են Նրանից»:

—Հոբ 37.21-24, TLB

6 Ռախաբը առողջ և Տիրոջ երկյուղն ունեցող, Նրա ողորմությունը խնդրող անձնավորության մեծ օրինակ է: Հեսուի 2-րդ գլխում կարդացե՛ք զարմանալի պատմությունը նրա մասին և ուշադրություն դարձրեք 9-11 խոսքերին, թե ինչպես նա վարվեց:

ա. Ինչո՞վ էին տարբերվում Ռախաբի գործողությունները Երիքովի բնակիչների գործողություններից:

_____

_____

_____

_____

բ. Ուրիշ ի՞նչ է Աստված ասում այս կնոջ մասին, ով երկյուղածությամբ էր վերաբերվում Տիրոջը:

_____

_____

_____

_____

Կարդացե՛ք Եբրայեցիների 11.31, Հակոբոս 2.25, Մատթեոս 1.5

Հոշակել

ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Վախեցի՛ր Տիրոջից,- ասաց նա,- և պահի՛ր Նրա պատվիրանները: Որովհետև եթե դու պահես Աստծո պատվիրանները, դու զորավոր կլինես ցանկացած գործում: Քո գործերից յուրաքանչյուրն անհամեմատ լավ կստացվի, որովհետև Տիրոջից վախենալու դեպքում դու ամեն բան լավ կանես: Սա այն վախն է, որ դու պետք է ունենաս, որպեսզի փրկված լինես: Բայց մի՛ վախեցիր սատանայից, որովհետև վախենալով Տիրոջից՝ դու կիշխես սատանայի վրա, սատանան չունի ոչ մի զորություն»:

— *Հերմասի հովիվը, 11.7[8]*

գ. Ի՞նչ կարող եք սովորել նրա կյանքից և կիրառել ձեր կյանքում:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

7 Աստծո *երկյուղից զուրկ* մարդը ոչ բարեպաշտ կյանքով է ապրում: Կարդացե՛ք այս հատվածները՝ տեսնելու համար, թե ինչպիսին է Աստծո երկյուղ չունեցող մարդը, և թե ինչպիսի հետևանքներ է նա կրելու:

Խ

«Արդ, այսպիսի խոստումներ ունենալով, սիրելինե՛ր, մեր անձերը սրբենք հոգու և մարմնի ամեն պղծությունից, սրբությունը կատարենք *Աստծո ահով*»:

— *Բ Կորնթացիների 7.1*

«Բայց ասում եմ ձեզ՝ իմ բարեկամներին, մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինը սպանում են, և նրանից հետո ավելի բան չունեն, որ անեն: Բայց ցույց տամ ձեզ, թե ումից պետք է վախենաք. *Նրանից վախեցեք*, որ սպանելուց հետո իշխանություն ունի գեհենի մեջ գցելու. այո՛, ասում եմ ձեզ՝ *Նրանի՛ց վախեցեք*»:

— *Ղուկաս 12.4,5*

«Պատշաճ հարգանք ցուցաբերեք յուրաքանչյուրի հանդեպ. սիրե՛ք հավատացյալների եղբայրությունը, *վախեցե՛ք Աստծուց*, պատվե՛ք թագավորին»:

— *Ա Պետրոս 2.17,* NIV

«Այնպես որ, դուք պետք է ապրեք որպես Աստծո հնազանդ զավակներ: Մի՛ վերադարձեք ձեր հին ապրելաոճին՝ ձեր սեփական ցանկությունները բավարարելու համար: Այդ ժամանակ դուք չգիտեիք այլ ապրելակերպի մասին: Բայց այժմ դուք պետք է սուրբ լինեք ամեն ինչում, որ անում եք, ինչպես Աստված, որ ընտրել է ձեզ, սուրբ է: Որովհետև Սուրբ գրքում գրված է. «Դուք պետք է սուրբ լինեք, որովհետև Ես սուրբ եմ»: Եվ հիշե՛ք, որ երկնային Հայրը, ում դուք աղոթում եք, անաչառ է: Նա կդատի կամ կվարձատրի ձեզ ըստ ձեր գործերի: Այնպես որ, դուք պետք է *ապրեք* Նրա հանդեպ ունեցած *երկյուղած վախով* ձեր ունեցած ժամանակվա ընթացքում՝ լինելով՝ ինչպես «օտարականներ այս երկրի վրա»»:

— *Ա Պետրոս 1.14-17,* NLT

[շեղագիրն ավելացրած է]

ա. Այս խոսքերն ընթերցելուց հետո, արդյո՞ք դեռ մտածում եք, որ ուսմունքը Տիրոջ երկյուղի մասին այլ կերպ է ներկայացվում Հին և Նոր կտակարաններում:

_____

_____

_____

բ. Որպես նորկտակարանյան հավատացյալ, ի՞նչ են ասում ձեզ այս խոսքերը Տիրոջից երկյուղ ունենալու կարևորության մասին:

_____

_____

_____

Առնչվող սուրբգրային հատվածներ. Կողոսացիների 3.1-10, Եբրայեցիների 12.28,29, Հայտնություն 14.7

ՎԱԽ

Նոր կտակարանի հունարեն բնագրի մեծ մասում *ֆոբոս* և *ֆոբեո* բառերը նկարագրում են *վախը* այն դեպքում, երբ խոսքը Տիրոջ երկյուղի մասին է: Դրանք հիմնականում նշանակում են «տագնապ, երկյուղ կամ սարսափ» և կրում են «ահով վերաբերվելու կամ երկյուղած լինելու» գաղափարը[4]:

Տիրոջ երկյուղն առաջանում է մարդու անձի մեջ Սուրբ Հոգու օգնությամբ: Աստվածային վախը նշանակում է, որ մենք սարսափում ենք Նրան տհաճություն պատճառելուց, փափագում ենք Նրա բարեհաճությունը, երկյուղածությամբ ենք վերաբերվում Նրա սրբությանը, ենթարկվում ենք Նրա կամքին, շնորհակալ ենք Նրա օրհնությունների համար, անկեղծորեն երկրպագում ենք Նրան և բարեխղճորեն հնազանդվում ենք Նրա պատվիրաններին: Այն մարդկանց, ովքեր ունեն այս երկյուղը, մեծ օրհնություններ են խոստացված[5]:

Նշում. *Երկյուղը* և *սերը* պետք է գոյակցեն մեզանում, որպեսզի երկուսն էլ առողջ վիճակում լինեն, և որպեսզի մենք կարողանանք հաճեցնել և պատշաճ կերպով ծառայել Աստծուն[6]:

Խ 8 Բացատրե՛ք, թե ինչպես է Տիրոջ երկյուղը տարբերվում Աստծուց վախենալուց:

_____

_____

_____

_____

Կարդացե՛ք Ծննդոց 3.8-10-ը՝ որպես օրինակ:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Աստվածաշնչյան լեզուների բառարանը» սահմանում է *գիտություն* բառը որպես «տեղեկություն որևէ անձնավորության մասին՝ շեշտադրելով այդ մարդու հետ ունեցած փոխհարաբերությունները»: Նմանապես, ըստ *«Վայնի ամբողջական բացատրական բառարանի»՝ գիտություն* բառը նշանակում է «ունենալ մտերիմ, փորձառաբար ձեռք բերվող գիտելիք Աստծո մասին»[7]:

«Տիրոջ երկյուղը *Աստծո հետ մտերմության* հիմքն է: Սա պարզորոշ կերպով նշված է Առակաց գրքի սկզբում: Գրված է. «Գիտության սկիզբը [հիմքը] Տիրոջ երկյուղն է» (Առակաց 1.7, NKJV): Ի՞նչ է նշանակում «Աստծո գիտությունը»: Այն նշանակում է՝ *մտերմորեն* ճանաչել Աստծուն և իմանալ ամեն ինչ այնպես, ինչպես Նա գիտի»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

9 Ամենամեծ օրհնությունը, որ կարող ենք ստանալ Տիրոջ երկյուղը մեր սրտերում ունենալու շնորհիվ՝ Նրա հետ մտերիմ լինելու արտոնությունն է: Մտածե՛ք այս մասին… ողջ արարչագործության Աստված հրավիրում է ձեզ՝ շփվել Իր հետ և լինել Իր ընկերը: Ավելի հրաշալի *ոչինչ* չի կարող լինել:

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ.

«Նայի՛ր: Ահա Ես կանգնած եմ դռան մոտ և թակում եմ: Եթե դու լսես Իմ կանչը և բացես դուռը, Ես ներս կմտնեմ, և մենք կճաշենք՝ ինչպես ընկերներ»:

— *Հայտնություն 3.20,* NLT

«…Այն Հոգին, Ում Նա բնակեցրեց մեր մեջ, փափագում է մեզ, և Նա փափագում է, որպեսզի Հոգին [ընդունվի մեր կողմից] նախանձոտ սիրով»:

— *Հակոբոս 4.5,* AMP

«Տիրոջ [քաղցր, բավականություն պատճառող ընկերակցության] գաղտնիքը նրանցն է, ովքեր վախենում են (երկյուղած են և երկրպագում են) Նրանից, և Նա ցույց կտա նրանց Իր ուխտը և կհայտնի նրանց դրա [խորը, ներքին] նշանակությունը»:

— *Սաղմոս 25.14,* AMP

ա. Կարդալով Հակոբոս 4.5-ը և Հիսուսի խոսքերը Հայտնություն 3.20-ում՝ ինչպե՞ս կնկարագրեիք Աստծո վերաբերմունքը ձեր հանդեպ: Արդյո՞ք այս վերաբերմունքը խրախուսում է ձեզ: Արդյո՞ք այն մարտահրավեր է նետում ձեզ:

_____

_____

բ. Ձեր բառերով բացատրեք, թե ինչ է Տերն ասում ձեզ Սաղմոս 25.14-ում:

_____

_____

10 Տիրոջ երկյուղը Քրիստոսի միտքը և Աստծո տեսանկյունը ունենալու բանալին է: Ներկայումս ձեր կյանքի ո՞ր իրավիճակ(ներ)ում կարիք ունեք տեսնել այնպես, ինչպես Աստված է տեսնում:

_____

_____

_____

Լռությամբ մոտեցեք Տիրոջը և ներկայացրեք Նրան ձեր խնդրանքները՝ հավատալով, որ Նա կբացի ձեր աչքերը, որպեսզի տեսնեք ձեր իրավիճակ(ներ)ը այնպես, ինչպես Նա է տեսնում: Այնուհետև հնազանդությամբ կատարեք ցանկացած քայլ, որ Նա կդրդի անել այդ իրավիճակի վերաբերյալ:

Հոչակել
ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«**Կյանքն** Ինձանում է, և Ես կարող եմ այն քեզ տալ, միայն՝ երբ մենք առանձին շփում ունենանք: Փնտրի՛ր Ինձանում այն վայրը, որտեղ այլևս ոչ ոք չի կարող մուտք գործել: Այդտեղ դու կգտնես Ինձ, և գտնելով Ինձ՝ կհայտնաբերես, որ մնացած բոլոր կարիքներդ բավարարված են: Որովհետև Ինձանում է Կյանքն ավելցուկով, և Ինձ հետ միայն ուրախություն կա, որը հավիտենական է»:

— *Ֆրենսիս Ջ. Ռոբերսոն*[8]

11 Ի՞նչ կանեիք, եթե տեսնեիք Տիրոջն Իր մեծափառությամբ: Երկու մարդ Սուրբ գրքում՝ Եսային և Հովհաննես առաքյալը, ունեցան այդ վերապրումը: Կարդացե՛ք նրանց պատմությունները՝ ուշադրություն դարձնելով, թե ինչպես նրանցից յուրաքանչյուրն արձագանքեց դրան: Այժմ պատկերացրեք, որ նրանց տեղում եք, և կարճ նկարագրեք, թե ինչպես, ըստ ձեզ, կվարվեիք: Գրե՛ք ցանկացած միտք, որ Տերը կհայտնի ձեզ:

Եսային տեսնում է Տիրոջը. Եսայի 6.1-8

Հովհաննեսը տեսնում է Տիրոջը. Հայտնություն 1.10-18

Մինչև Հովհաննեսի բանտարկությունը Պատմոս կղզում, նա ճանաչում էր Հիսուսին միայն որպես հրաշագործ Մեսիա: Բայց երբ Հիսուսը երևաց նրան և տվեց Իր հայտնությունը, Հովհաննեսը ճանաչեց Հիսուսին բոլորովին նոր կերպով, ինչպես չգիտեր անցյալում: Առաջին անգամ նա տեսավ Քրիստոսին՝ որպես Մեծ Արարչի, թագավորների Թագավորի և երկնքի ու երկրի Հավիտենական Դատավորի: Դուք ցանկանո՞ւմ եք նորովի տեսնել Հիսուսին: Դուք ցանկանո՞ւմ եք թարմ հայտնություն ստանալ Տիրոջ երկյուղի մասին:

Աղոթե՛ք այս նորոգման աղոթքը.

Տե՛ր, ես ցանկանում եմ ապրել այն օրհնյալ կյանքով, որ կարելի է ունենալ շնորհիվ Քո երկյուղի: Թարմացրո՛ւ իմ սրտի պատկերը՝ նորովի հայտնելով Քեզ: Ավելի հասկանալի դարձրու ինձ, թե ինչ է նշանակում սրտանց ունենալ Քո երկյուղը: Տո՛ւր ինձ ցանկություն և զորություն, որպեսզի Քո երկյուղը դառնա իմ բերկրանքը, ինչպես և Հիսուսինը (տե՛ս Եսայի 11.1-3): Ես հանձնում եմ իմ կյանքը Քեզ: Սովորեցրո՛ւ ինձ: Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր, և շնորհակա՛լ եմ Քեզ, որ լսում ես իմ աղոթքը և պատասխանում ես... Հիսուսի անունով, ամե՛ն:

ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂԻ ՄԵՋ ՄՏՆՈՒՄ Է՝

- Խորին և մշտական հարգանք ու երկյուղածություն ցուցաբերել Աստծո հանդեպ և այն ամենի հանդեպ, ինչ Նա սուրբ է հայտարարում:
- Բարձրյալ Աստծուն հատկացնել պատվի անսահման և բարձրագույն տեղը ձեր կյանքում:
- Խորապես շնորհակալ լինել և գնահատել Նրա ներկայությունը և Նրա հրաշալի Խոսքը վայելելու արտոնությունը:
- Երկրպագել միայն Աստծուն՝ ջերմեռանդ փառաբանությամբ և շարունակական գոհությամբ:
- Պատվել այն, ինչ Նա է պատվում, սիրել այն, ինչ Նա է սիրում, և ատել այն, ինչ Նա է ատում: Նրա համար կարևոր դարձնել այն, ինչ մեզ համար է կարևոր:
- Ունենալ ներքին ձգտում՝ Աստծուն հաճեցնելու, և ոչ թե տրտմություն պատճառելու համար: Նման բնավորության դեպքում անկարելի է, որպեսզի մարդը անփութորեն կամ համառորեն մեղք գործի:
- Հնազանդեցնել ձեր կամքը՝ Նրա կամքը լիովին ընդունելու համար:
- Տիրոջ երկյուղը մաքրագործող կամ սրբագործող միջոց է, որը մնում է հավիտյան: Այն Սուրբ Հոգու դրսևորումն է և Հիսուսի բերկրանքը: Դրանում ընդհանրապես չկա ոչ մի անբարոյություն կամ նենգություն:

Աստծո երկյուղի օրհնությունները

«Որքա՜ն երջանիկ են նրանք, ովքեր վախենում են Տիրոջից, նրանք, ովքեր հետևում են Նրա ճանապարհներին: Դու կվայելես քո աշխատանքի պտուղը: Որքա՜ն երջանիկ կլինես: Որքա՜ն հարուստ կլինի քո կյանքը: Քո կինը կլինի պտղաբեր որթի նման, որ ծաղկում է քո տանը: Եվ նայի՜ր քո բոլոր երեխաներին: Ահա նրանք նստած են քո սեղանի շուրջը, այնպես առողջ և կյանքով լցված, ինչպես մատղաշ ձիթենու ծառեր: Սա է Տիրոջ վարձատրությունը նրանց համար, ովքեր վախենում են Նրանից»:

Սաղմոս 128.1-4, NLT

«Օրհնված (երջանիկ, բախտավոր և նախանձելի) է այն մարդը, ով երկյուղածությամբ և երկրպագելով վախենում է [Տիրոջից] ամեն ժամանակ [անկախ հանգամանքներից]»:

Առակաց 28.14, AMP

«Քանի՜ մեծ է Քո բարությունը, որ պահեցիր Քեզնից *վախեցողների* համար, և որ անում ես Քեզ հուսացողներին՝ մարդկանց որդիների առջև»:

Սաղմոս 31.19

Շաբաթական գործունեություն
1

Հենց այնտեղ, որտեղ ապրում եք

ԴԱՐՁԵ՛Ք ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Հրեշտակների բանակների Աստված կմիջամտի և կհոգա Իր հոտի՝ Հուդայի ժողովրդի մասին: Նա հարություն կտա նրանց հոգիները, այնպես կանի, որ նրանք հպարտ կլինեն, որ Աստծո կողմից են: Աստված կգործածի նրանց Իր վերակառուցման աշխատանքի մեջ, կգործածի նրանց որպես հիմքեր և սյուներ, կգործածի նրանց որպես ***գործիքներ****, կգործածի նրանց՝ Իր գործը վերահսկելու համար: Նրանք աշխատուժ կլինեն, որոնցով կարելի կլինի հպարտանալ, նրանք միաբան կաշխատեն՝ գլուխները բարձր պահած:*

— *Զաքարիա 10:3-5*

[ընդգծումն ավելացրած է]

Անկասկած, մենք Տիրոջ երկյուղի թարմ հայտնության կարիքն ունենք: Թվում է, մարդկանց անկումը և բարոյալքությունը մեր երկրում ավելանում են: Տիրոջ երկյուղը մեծապես նվազել է, ինչի պատճառով սահմանները ճշմարիտի և սխալի միջև մշուշոտ են դարձել: Լինելով նման ազդեցության ներքո՝ մենք կորցնում ենք Աստծո գերբնական ուժը:

Որպես հավատացյալ՝ դուք ունեք փոփոխության բանալին: Այդ բանալին *աղոթքն* է: Աստված սպասում է, որ *Իր ժողովուրդը* ջերմեռանդորեն, անկեղծորեն և շարունակաբար փնտրի Իր երեսը: Նա չի սպասում, որ աթեիստները, ագնոստիկները կամ այլ կրոնների ներկայացուցիչներ փնտրեն Իրեն. Նա սպասում է, որ նրանք, ովքեր Իրեն «Տեր» են անվանում, աղաղակեն այս երկրի համար:

> **«Եկեղեցու համար կարևոր է պահպանել *Տիրոջ երկյուղը* այս ազգի առջև: Տիրոջ երկյուղն է, որ կատարելագործում է սրբությունը մեր կյանքերում: Մենք փրկվածների մեծ հունձք կհավաքենք, երբ այս ազգը տեսնի, թե ինչպես է եկեղեցին քայլում Տիրոջ երկյուղի մեջ»:**
>
> **ՋՈՆ ԲԻՎԵՐ**

Ընդունի՛ր մարտահրավերը

Հաջորդ 30 օրվա ընթացքում, որոշո՛ւմ կայացրեք աղոթել ձեր ժողովրդի համար օրական առնվազն 5-15 րոպե: Աղոթե՛ք, որ *Տիրոջ երկյուղի հիմքերը* և *Նրա խոսքի ճշմարտությունը* կրկին գտնվեն և վերականգնվեն՝ սկսած ձեր կյանքից:

Աղոթե՛ք այն մարդկանց համար, ովքեր գտնվում են՝

Ձեր ընտանիքում	Ձեր համայնքում
Ձեր եկեղեցում	Ձեր մարզում
Ձեր աշխատավայրում	Ձեր երկրում

Բարեխոսական աղոթքի օրինակ

Հա՛յր, ես ապաշխարում եմ իմ մեղքերի և իմ երկրի մեղքերի համար: Խնդրում եմ, ների՛ր մեզ՝ Քո պատվիրանները խախտելու, սխալը՝ «ճիշտ» և ճիշտը՝ «սխալ» անվանելու, աղքատներին հարստահարելու, արդարությունը ուրնահարելու համար: Ների՛ր մեզ, որ դրել ենք նյութական իրերը, անձնական հաջողությունը և շատ այլ բաներ այն տեղում, որն իրավամբ պատկանում է Քեզ: Ես խնդրո՛ւմ եմ, որ Դու միջամտես Քո ողորմությամբ: Մաքրի՛ր մեզ Հիսուսի բանկագին արյունով: Վերականգնի՛ր Տիրոջ երկյուղի հիմքերը և Քո Խոսքի ճշմարտությունը մեր երկրի յուրաքանչյուր քաղաքացու կյանքում: Մաքրի՛ր Քո եկեղեցին անմաքրությունից, ինքնագոհությունից, եսասիրությունից, ապստամբությունից և մեղքերից: Տո՛ւր մեզ նոր սրտեր, որոնք փափուկ են և զգայուն են Քո հպմանը: Շնորհակալությո՛ւն, Ապրված, որ լսում ես ինձ... Հիսուսի անունով, ամե՛ն:

Այս աղոթքը հիմնված է հետևյալ սուրբգրային հատվածների վրա.
Բ Մնացորդաց 7.13-15, Դանիել 9.3-19 և Եզեկիել 36.25-27

Ձեր աղոթքներն *անպայման* դրական փոփոխություններ *կառաջացնեն*: Խնդրե՛ք Տիրոջը՝ ցույց տալ ձեզ, թե ինչպես է Նա գործում՝ ի պատասխան ձեր բարեխոսության: Այս գլխի վերջում գտնվող *իմ նշումների* մեջ գրի՛ առեք, թե ինչ է Նա հայտնում: Այդ գրառումները կավելացնեն թե՛ ձեր հավատքը, թե՛ այն մարդկանց հավատքը, ում դուք կպատմեք դրանց մասին: «Տերն օրհնում է յուրաքանչյուր ազգ, որ միայն Իրեն է երկրպագում: Նա օրհնում է Իր ընտրյալներին» (Սաղմոս 33.12, CEV):

Խ **ՆՇՈՒՄ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԱՎԱԳՆԵՐԻ ՀԱՄԱՐ**. Դուք կարող եք օգտակար համարել՝ աղոթքն անցկացնել ողջ խմբակի հետ՝ ըստ նշված ցուցակի, որի մասին գրված է «Ընդունի՛ր մարտահրավերը» բաժնում: Մի՞թե երեսուն օր տևող աղոթքը սկսելու ավելի լավ միջոց կա, քան զորավոր խմբային աղոթքը: Եթե ժամանակը թույլ տա, միգուցե ցանկանաք միասին աղոթել յուրաքանչյուր հավաքույթի ժամանակ, որ տեղի է ունենալու այդ երեսուն օրվա ընթացքում:

Շաբաթական գործունեություն
1

ՃԻՇՏ ՀԻՄՔԸ

*«Տիրոջ երկյուղը ճշմարիտ իմաստության **հիմքն** է: Նրանք, ովքեր հնազանդվում են Նրա պատվիրաններին, ավելի իմաստուն կդառնան: Փառաբանե՛ք Նրան հավիտյան»:*

— *Սաղմոս 111.10,* NLT

[թավատառն ավելացրած է]

Յուրաքանչյուր տուն և յուրաքանչյուր շինություն ուժեղ, ամուր հիմքի կարիք ունի: Հիմքը անտեսանելի է, սակայն անմիջապես շինության ավարտից հետո այն անչափ կարևոր է ողջ կառույցի որակի և ամրության համար: Եթե

հիմքն անկայուն է՝ պատրաստված անորակ նյութերից կամ լցված խոտանով, ապա որոշ ժամանակ անց այդ շինությունն անպայման կքանդվի:

Նմանապես՝ որպես Քրիստոսի հետևորդ, դուք ուժեղ, ամուր հիմքի կարիք ունեք: Ինչպես բետոնը և երկաթացանցն են հաստատ նյութական հիմք ձևավորում, նույնպես և *Աստծո սերը* և *Տիրոջ երկյուղը* գործակցում են՝ հաստատ հոգևոր հիմք ստեղծելու համար: Ձեր քրիստոնեական կյանքը *միայն* Աստծո սիրո հիմքի վրա կառուցելը նման է բետոնն ամրացնող երկաթացանցը հիմքից հեռացնելուն: Միգուցե որոշ ժամանակ ամեն ինչ լավ լինի, բայց երբ կյանքի ողջ ծանրությունը սկսի ճնշել ձեր շնչի «սալաքարերը», ձեր հիմքը կերերա:

«Հիմքն այնքան կարևոր է: Դուք կարող եք տուն կառուցել ամենալավ մարմարով, ամենագեղեցիկ պատուհաններով և լցնել այն լավագույնով: Բայց եթե այդ տունը կառուցված չէ ամուր հիմքի վրա, երբ բավականին ուժեղ փոթորիկ լինի, այն կկործանվի և մեծ կլինի նրա կործանումը: Կարևոր չէ, թե որքան հաճելի է ձեր քրիստոնեական կյանքը, և նույնիսկ՝ թե որքան արդյունավետ է այն. եթե դուք ճիշտ հիմք չունեք, ապա որքան մեծ է տունը, այնքան մեծ կլինի նրա կործանումը: Ճիշտ հիմքը *Տիրոջ երկյուղն է*»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Մի պահ դադարե՛ք և մտածե՛ք: Հիշե՛ք, թե երբ որոշեցիք ձեր կյանքը տալ Աստծուն: Ինչպե՞ս ազդեց այդ որոշման վրա այն փաստը, որ *Աստված սիրում է ձեզ* և ուղարկել է Իր միածին Որդուն՝ Հիսուսին, ձեր փոխարեն մահանալու:

_____

_____

_____

_____

_____

Ինչպե՞ս են Աստծո սիրո մասին գիտելիքը և հայտնությունը օգնում ձեզ՝ *պահպանել* սուրբ շփումը Նրա հետ:

_____

_____

_____

_____

_____

*«Քո **սերը**, Տե՛ր, իմ երգն է, և Ես կերգեմ այն: Ես հավիտյան կպատմեմ բոլորին, թե որքան հավատարիմ ես Դու: Ես երբեք չեմ դադարի պատմել Քո սիրո պատմությունը՝ թե ինչպես Դու կառուցեցիր տիեզերքը և ապահով կերպով հաստատեցիր ամեն ինչ, որ դրանում է: Քո սերը միշտ եղել է մեր կյանքերի **հիմքը**, քո նվիրվածությունը տանիք է եղել մեր աշխարհի համար»:*

— *Սաղմոս 89.1,2,* MSG
[թավատառն ավելացրած է]

Արդյո՞ք Տիրոջ երկյուղը դրդեց ձեզ ապաշխարել ձեր մեղքերից և տալ ձեր կյանքն Աստծուն սկզբնական շրջանում: Եթե այո, ապա ինչպե՞ս դա պատահեց:

_____

_____

_____

_____

_____

Ինչպե՞ս է Տիրոջ առողջ երկյուղ ունենալը դրդում ձեզ *պահել սրբությունը* Աստծո հետ ընթացքի մեջ:

_____

_____

_____

_____

_____

*«Հմուտ և աստվածապաշտ Իմաստության շնորհիվ կառուցվում է տունը (կյանքը կամ ընտանիքը), և հասկացողությունով է այն հաստատվում [ողջամիտ և բարի **հիմքի** վրա]»:*

— *Առակաց 24.3,* AMP
[թավատառն ավելացրած է]

Ի՞նչ է Հիսուսն ասում ձեր կյանքի հիմքի մասին: Կարդացե՛ք և մտորե՛ք Նրա խոսքերի շուրջ այս հատվածում, իսկ հետո պատասխանեք դրան հաջորդող հարցին:

«Այս խոսքերը, որ Ես խոսում եմ ձեզ, պարզապես հավելումներ չեն ձեր կյանքին, և նման չեն տանտիրոջ կողմից տան բարեկարգմանը՝ ձեր կյանքի մակարդակը բարձրացնելու նպատակով: Սրանք **հիմքային** խոսքեր են, որոնց

վրա պետք է կառուցեք ձեր կյանքը: Եթե դուք գործադրեք այս խոսքերը ձեր կյանքում, նման կլինեք իմաստուն հյուսնի, ով խորը փորեց և դրեց իր տան հիմքը ժայռի վրա: Երբ գետը ափերից վարարեց և եկավ այդ տան վրա, այն ընդհանրապես չսասանվեց, որովհետև կառույցն ապահով էր: Բայց եթե դուք պարզապես օգտագործում եք Իմ խոսքերն Աստվածաշնչի ուսումնասիրության դասերին և չեք գործադրում դրանք ձեր կյանքում, ապա դուք անխելք հյուսնի նման եք, ով տուն կառուցեց, բայց չդրեց հիմքը: Երբ վարարած գետը եկավ այդ տան վրա, այն կործանվեց՝ խաղաքարտերից պատրաստված տան պես: Ողջ աշխատանքը կորստյան մատնվեց»:

— *Ղուկաս 6.47-49,* MSG

[թավատառն ավելացրած է]

Ի՞նչ է Սուրբ Հոգին ասում ձեզ այս հատվածի միջոցով: Ի՞նչ է Նա ցույց տալիս ձեզ հոգևոր հիմքի մասին:

_____

_____

_____

_____

_____

_____

Արդյո՞ք այս պահին ինչ-որ բաներ կան ձեր կյանքում, որ խանգարում են ձեզ՝ հաստատ կանգնել Ամուր Ժայռի՝ Հիսուս Քրիստոսի վրա: Եթե այո, ապա ինչի՞ մասին է խոսքը: Աղոթքով տվեք այդ բաները Տիրոջը՝ իմանալով, որ Նա շատ է սիրում ձեզ և ցանկանում է մոտ լինել ձեզ:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

«Հիշե՛ք, կա միայն մեկ **հիմք**, որ արդեն դրված է՝ Հիսուս Քրիստոսը: Շատ ուշադիր եղեք ձեր շինարարական նյութերն ընտրելիս: Վերջում ստուգում է լինելու: Եթե դուք օգտագործեք էժան և ցածրորակ նյութեր, ապա կբռնվեք / շուտով դա կբացահայտվի: Ստուգումը մանրակրկիտ և խիստ կլինի: Դուք անպատիժ չեք մնա ցանկացած թերացման համար (Ա Կորնթացիների 3.11-13, MSG, թավատառն ավելացրած է): Այնպես որ, կառուցե՛ք ձեր կյանքը Աստծո անփոփոխ Խոսքի և Տիրոջ երկյուղի հաստատ և ամուր հիմքի վրա: Այս երկուսն անփոխարինելի են:

Իմ օրագիրը

ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ՀԻՇԵԼ

«Հիշե՛ք. Տիրոջ երկյուղը չի նշանակում սարսափել Աստծուց կամ վախի զգացում ունենալ Նրա հանդեպ: Եթե դուք սարսափեք Աստծուց, ապա կհեռանաք Նրանից: Ինչպե՞ս կարող եք մտերիմ շփում հաստատել Աստծո հետ, եթե սարսափած եք Նրանից: Իսկ Աստված ամբողջ սրտով ցանկանում է մտերիմ շփում հաստատել թե՛ ձեր, թե՛ յուրաքանչյուրիս հետ»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Հասնելով այս գլխի ավարտին՝ ժամանակ հատկացրեք և լռության մեջ վերհիշեք այն նոր մտքերը, որ Աստծո Հոգին հայտնեց ձեզ: Ի՞նչ է նա ցույց տալիս, որ անցյալում երբեք չեք տեսել: Ինչպե՞ս է Նա դրդում ձեզ՝ փոխվել: Արագորեն մի՛ շրջանցեք այս կետը, քանի որ այն որոշիչ է այս գիրքն ուսումնասիրելու համար: Ժամանակ հատկացրեք և գրի առեք այն, ինչ Նա խոսում է ձեր սրտում:

ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ինչպես և Աստծո սերը, *Տիրոջ երկյուղը* մեր քրիստոնեական ընթացքի ամենակարևոր, հիմքային մասն է: Այն առաջանում է մեր ներսում Աստծո Հոգու հրաշալի աշխատանքի շնորհիվ: Այն զորացնում է մեզ, որպեսզի խուսափենք չարից, հնազանդվենք Աստծո պատվիրաններին և մտերիմ շփում ունենանք Նրա հետ ամեն օր: Այն ոչ միայն իմաստության և գիտության սկզիբն է, այլ նույնպես Աստծո օրհնությունների գանձարանի բանալին: Թեև Տիրոջ երկյուղի սահմանումը չափազանց ծավալուն է, հիմնականում այն խորը, անհաղթահարելի հարգանք և երկյուղածություն է Աստծո, Նրա Խոսքի և Նրա անքննելի ճանապարհների հանդեպ: Տիրոջ երկյուղի պատճառով է, որ մենք կարող ենք աճել և հասունանալ սրբության մեջ:

(1) *«Nelson's Annual preacher's Sourcebook 2002 Edition»*, Ռոբերտ Ջ. Մորգան՝ խմբագիր (Նեշվիլ, Տենեսի, «Thomas Nelson Publishers», 2001թ.), էջ 114:
(2) Նիլ Տ. Անդերսոն և Ռիչ Միլլեր. *«Ազատություն վախից»* (Յուջին, Օրեգոն, «Harvest House Publishers», 1999թ.), էջ 237:
(3) Մեջբերումներ *Տիրոջ երկյուղի* մասին (http://www.christian-history.org/fear-of-god-quotes.html, վերցրած 23.09.2010թ.):
(4) Մեջբերում *«Սթրոնգի Աստվածաշնչի լիակատար համաբարբառ»*-ից, Ջեյմս Սթրոնգ՝ Իրավագիտության և Աստվածաբանության դոկտոր (Նեշվիլ, Տենեսի. «Thomas Nelson Publishers», 1990թ.):
(5) Մեջբերում *«Անգերի նոր Աստվածաշնչի բառարան»*-ից, Մերիլ Ֆ. Անգեր (Չիկագո, Իլինոյս. «Moody Press», Վերանայված և նորացված հրատարակություն, 1988թ.):
(6) Նույնը:
(7) Ջոն Բիվեր. *«Մոտենալ Աստծուն»* (Նեշվիլ, Տենեսի «Thomas Nelson Inc.» 2004թ), էջեր 87,88:
(8) Ֆրենսիս Ջ. Ռոբերտս. *«Ե՛կ, իմ սիրելի»* (Օջայ, Կալիֆոռնիա, «King's Farspan, Inc.», 1973,) էջ 181:

Իմ նշումներդ

*«Փնտրե՛ք բարձրում և ցածրում, զննե՛ք երկինքները և երկիրը, և **Աստծո նման ոչ ոքի և ոչինչ չեք գտնի**: Աստծուց պետք է մեծապես զարհուրել սրբերի հավաքույթում, և բոլոր Նրա շուրջը գտնվողները պետք է երկյուղածությամբ վերաբերվեն Նրան»:*

– Եսայի 33.6,7
6-րդ խոսքը՝ MSG, 7-րդ խոսքը՝ NKJV
[թավալտառն ավելացրած է]

2

ՀԱՅԱՑՔ ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅԱՆԸ

Խնդրում ենք օգտվել ուսումնական դասընթացի 2-րդ դասից, ինչպես նաև՝ *«Տիրոջ երկյուղը»* գրքի 1-ին, 3-րդ և 12-րդ գլուխներից:

«Աստծո երկյուղը ձեր կյանքում սահմանափակված է *Նրա մեծության մասին ձեր պատկերացմամբ*: Մովսեսը գիտեր, թե որքան կարևոր է հասկանալ Աստծո մեծությունը, որովհետև հենց դա է օգնում մեզ ունենալ Նրա երկյուղը: Որքան ավելի լայն է մեր պատկերացումն Աստծո մեծության մասին (թեև այն ինքնին անհնար է ընկալել ամբողջությամբ), այնքան ավելի մենք կարող ենք ունենալ Նրա երկյուղը»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Խ **1** Աստծո մեծությունն անքննելի է: Նա ցույց է տալիս Իր մեծությունը թե՛ Իր արարչագործության միջոցով, թե՛ անձնական հայտնության, երբ անմիջապես հայտնում է Իրեն մեր հոգում: Ահա թե ինչ նկատի ունի Բ Կորնթացիների 4.6-ը (NIV)՝ ասելով, որ Աստված «…ծագեցրեց իր լույսը մեր սրտերում, որպեսզի տա մեզ *Աստծո փառքի գիտության լույսը՝* Քրիստոսի դեմքում» (շեղագիրն ավելացրած է):

ա. Կարո՞ղ եք հիշել այնպիսի դեպք, երբ Աստված հայտնել է Իր փառքը և մեծությունը ձեր հոգում՝ դարձնելով այն իրական ձեզ համար: Եթե այո, ապա նկարագրեք այդ դեպքը: Ի՞նչ զգացողություն ունեցաք այդ ժամանակ, և ինչպե՞ս արձագանքեցիք դրան:

_____

_____

_____

_____

_____

բ. Ինչպե՞ս է այդ վերապրումն ազդում ձեզ վրա առայսօր:

_____

_____

_____

*«Օ՜, Ինքնիշխան Տե՛ր, Դու դեռ նոր ես սկսել ցույց տալ Քո **մեծությունը** և Քո ձեռքի ուժը ինձ՝ Քո ծառային: Արդյո՞ք կա որևէ աստված Երկնքում կամ երկրի վրա, որ կարող է նման մեծ և զորավոր գործեր անել, ինչպես Դու ես անում»:*

—Երկրորդ Օրինաց *3.24,* NLT
[թավատառն ավելացրած է]

ՄԵԾՈՒԹՅՈՒՆ

Հին կտակարանում կան մի քանի եբրայերեն բառեր իրենց ածանցյալներով, որոնք օգտագործվում են՝ Աստծո *մեծությունը* նկարագրելու համար: Չորս գլխավոր բառերն են՝ *գոդել, գեդուլլահ, ռոբ և ռեբուվ*: Միասին նշանակում են «մեծություն, մեծարել, գերազանցել, զորավոր գործեր, մեծապես գերազանց»[1]: Նոր կտակարանում, *մեծություն* բառը հիմնականում արտահայտվում է երկու հունարեն բառով՝ *մեգեթոս*, որը նշանակում է «Աստծո զորությունը», և *հուպերբոլե*, որը նշանակում է «Աստծո գերազանց մեծությունը»[2]:

2 Աստծո մեծությունը կամ փառքը անբաժանելիորեն կապված են Նրա ներկայության հետ: Փնտրելով Նրա ներկայությունը՝ մենք կարող ենք ավելի լավ հասկանալ Նրա մեծությունը: Սուրբ գրքում նշվում է Աստծո ներկայության երկու տեսակ կամ դրսևորում՝ Նրա ամենագո *լինելը* և Նրա *դրսևորված ներկայությունը*:

ա. Կարդացե՛ք այս խոսքերը և կարճ նկարագրե՛ք Աստծո **ամենագո լինելը**:

Սաղմոս 139.7-10 • Առակաց 15.3 • Երեմիա 23.23,24 • Մատթեոս 28.20

_____

_____

_____

բ. Կարդացե՛ք այս սուրբգրային հատվածները: Հիմնվելով դրանց վրա՝ ինչպե՞ս կնկարագրեք Աստծո **դրսևորված ներկայությունը** (փառքը): Ինչո՞վ է այն տարբերվում Նրա ամենագո լինելուց:

Սաղմոս 85.9 • Բ Մնացորդաց 7.1-6 • Հովհաննես 11.38-45 • Գործք 2.1-12

_____

_____

_____

_____

ԴՐՍԵՎՈՐԵԼ

Այն հունարեն բառերը Նոր կտակարանում, որոնք թարգմանվել են որպես *դրսևորել*, նշանակում են «դարձնել տեսանելի կամ պարզ, երևան հանել կամ լուսավորել»[3]: Վեբսթերը *դրսևորել* բառը սահմանում է այսպես՝ «հայտնել, պարզորոշ կերպով ցույց տալ, հրապարակել կամ բացահայտել՝ աչքի կամ հասկացողության առումով»[4]: Երբ Աստծո ներկայությունը *դրսևորվում* է որևէ վայրում, Նրա մեծությունը բացահայտ է դառնում բոլորի համար: Այդտեղ գտնվող մարդիկ կարող են տեսնել դա իրենց աչքերով, և բացի այդ, նրանցից շատերը կարող են ավելի լավ հասկանալ Նրա մեծությունն իրենց սրտերում:

*«Անկասկած, Նրա փրկությունը մոտ է նրանց, ովքեր երկյուղածությամբ և երկրպագությամբ վախենում են Նրանից [և պատրաստ են Նրա կողմից օգտագործված լինել / որ Նա գործի իրենց միջոցով], որ [Աստծո **դրսևորված ներկայությունը**՝ Նրա] փառքը, բնակվի մեր երկրում, ինչպես խորանի մեջ»:*

—Սաղմոս 85.9, AMP
[թավատառն ավելացրած է]

Խ 3 Զոնը պատմեց Բրազիլիայի հավաքույթին ներկա մարդկանց պահվածքի մասին եկեղեցական ծառայության սկզբում: Քանի որ այդ մարդիկ երկյուղածություն չունեին Աստծո հանդեպ, Աստծո դրսևորված ներկայությունը չկար այդ վայրում: Զավեշտական է, բայց նրանք նույնիսկ տեղյակ չէին այդ մասին:

ԴՈՒՔ ՈՒՆԵ՞Ք ԵՐԿՅՈՒՂԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԾՈ ՀԱՆԴԵՊ ՆՐԱ ՏԱՆ ՄԵՋ

Ուշադրություն դարձրեք հետևյալ բանի վրա.

ՀԱՎԱՔՈՒՅԹԻ ԳԱԼՈՒ ԺԱՄԸ. Որքա՞ն կարևոր է ձեզ համար ժամանակին եկեղեցում լինելը: Պատահո՞ւմ է, որ երբեմն ամբողջովին բաց թողնեք փառաբանությունը, թե՞ ձեզ համար պատվի հարց է՝ նստած լինել դահլիճում մինչև ծառայության սկիզբը:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ. Դուք հանդիսատեսի դերո՞ւմ եք փառաբանության և երկրպագության ժամանակ, թե՞ մասնակցի: Միգուցե բոլորովին չեք մասնակցում այն ամենին, ինչ տեղի է ունենում այդ ժամանակ: Թե՞ գործուն կերպով ներգրավված եք երկրպագության մեջ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ. Ինչի՞ վրա եք կենտրոնացած, երբ ձեր հովիվը ծառայություն է անցկացնում: Միգուցե ծառայության ամփոփաթերթիկն եք կարդում և մտածում, թե ինչ ուտեք ճաշին, կամ շարունակ մտածում եք «մեծ խաղի» մասին, որը սկսվելու է կեսօրին: Թե՞ ուշադիր լսում եք նրա խոսքը:

ՀԱՎԱՔՈՒՅԹԻՑ ԳՆԱԼՈՒ ԺԱՄԸ. Ե՞րբ եք դուրս գալիս ծառայությունից: Միգուցե ոտքի եք կանգնում և դուրս եք գալիս վերջին աղոթքի ժամանակ: Թե՞ մնում եք այդտեղ՝ ցանկանալով, որ Աստված գործի ձեր և այլ մարդկանց կյանքերում:

Ձեր պատասխանների լույսի ներքո, ինչպե՞ս կնկարագրեք Տիրոջ երկյուղը ձեր կյանքում, երբ խոսքը Նրա տան մասին է: Դուք զգո՞ւմ եք, որ Նա խնդրում է ձեզ՝ բարձրանալ հաջորդ մակարդակը:

«Սաղմոս 89.7-ում գրված է. «Աստծուց պետք է մեծապես զարհուրել սրբերի հավաքույթում և բոլոր Նրա շուրջը գտնվողները պետք է երկյուղածությամբ վերաբերվեն Նրան» (NKJV): Դուք երբեք չեք գտնի Աստծո *դրսևորված ներկայությունը* այնպիսի մթնոլորտում, որտեղ Նրան չեն վերաբերվում մեծագույն հարգանքով»»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

*«Այն մարդը, ով ունի Իմ պատվիրանները և պահում է դրանք, նա է, ով [իրականում] սիրում է Ինձ: Եվ ով [իրականում] սիրում է Ինձ, կսիրվի Իմ Հորից, և Ես [նույնպես] կսիրեմ նրան և ցույց կտամ (կհայտնեմ, **կդրսևորեմ**) Ինձ նրան: [Ես Ինձ պարզ կերպով տեսանելի կդարձնեմ նրա համար, և Ինձ իրական կդարձնեմ նրա համար]»:*

—Հովհաննես 14.21, AMP
[թավատառն ավելացրած է]

4 Տիրոջ երկյուղի մասին ուսմունքը լսելուց հետո, բրազիլիական մարզադահլիճում գտնվող մարդիկ ապաշխարեցին իրենց ցուցաբերած վերաբերմունքի համար, և Տիրոջ ներկայության հրաշալի այցելություն վերապրեցին: Աստծո դրսևորումն այնքան զորավոր էր, որ տարիներ շարունակ մարդիկ խոսում էին այդ մասին:

ա. Երբ մենք ցույց ենք տալիս մեր սերը Աստծո հանդեպ՝ պահելով Նրա պատվիրանները, Նա Իրեն հայտնում է մեզ: Ինչպիսի՞ զարմանալի պարգև է Աստված տվել մեզ, որպեսզի օգնի հնազանդվել և հաճեցնել Իրեն:

_____

_____

_____

Կարդացե՛ք Ա Կորնթացիների 15.10, Հակոբոս 4.6

բ. Կարո՞ղ եք հիշել այն ժամանակը, երբ հատուկ այցելություն եք ունեցել՝ զգալով Աստծո ներկայությունը, կամ, երբ Նա խոսել է ձեր սրտի հետ: Եթե այո, ապա համառոտ կերպով նկարագրե՛ք տեղի ունեցածը:

_____

_____

_____

_____

_____

_____

գ. Ի՞նչ ազդեցություն թողեց ձեզ վրա այդ հանդիպումը: Արդյո՞ք այդ վերապրումը մինչև օրս պահպանել է իր ազդեցությունը:

_____

_____

_____

_____

*«...**Քո ներկայության մեջ** ուրախության լիություն կա. Քո աջ ձեռքին՝ վայելքներ հավիտյան»:*

—Սաղմոս 16.11, NKJV
[թավատառն ավելացրած է]

Հոչակել
ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Հավատացյալը փափագում է Աստծուն. նա փափագում է հայտնվել Նրա *ներկայության մեջ*... զգալ Նրա սերը... զգալ, որ մոտ է Նրան ծածուկ վայրում... զգալ ամբոխի մեջ, որ Նա ավելի մոտ է, քան բոլոր արարածները: Թանկագի՛ն եղբայրներ, արդյո՞ք երբևէ ճաշակել եք այս երանությունը: Մեկ ժամ լինելով Աստծո ներկայության մեջ՝ կարելի է ավելի շատ հանգիստ և սփոփանք գտնել, քան եթե հավիտյան լինեիք մարդու ներկայության մեջ»:

— *Ռոբերտ Մյուրի Էմ'Չեյնի*[5]

5 Պատկերացրեք, որ նստած եք մի սենյակում, Խ և հանկարծ ձեր ամենասիրելի մարզիկը, երաժիշտը, դերասանը (ուիհին) կամ եկեղեցական ծառայողը ներս է մտնում: Ի զարմանս ձեզ, նա գալիս և նստում է ձեր առջև, մեկից երկու մետր հեռավորությամբ, նայում է ուղիղ ձեր աչքերին և սկսում խոսել ձեզ հետ:

ա. Ինչպե՞ս կվարվեիք նրանց ներկայությամբ: Ինչպե՞ս կվերաբերվեիք անձամբ նրանց: Որքանո՞վ կարժևորեիք ձեր խոսքերը:

_____

_____

_____

_____

_____

բ. Երբ դուք ժամանակ եք անցկացնում ձեր ամուսնու, կնոջ կամ լավ ընկերների հետ, ցանկանո՞ւմ եք, որ նրանք ցույց տան, որ գնահատում են ձեր ընկերակցությունը և իրենց հետաքրքիր է այն, ինչ դուք ասում եք: Ինչպե՞ս եք ցանկանում, որ նրանք անեն դա:

_____

_____

_____

_____

գ. Հաշվի առնելով ձեր նախորդ պատասխանները, ինչպե՞ս կարող եք բարձրանալ հաջորդ մակարդակին՝ գնահատելով այն ժամանակը, որ անցկացնում եք Տիրոջ հետ:

_____

_____

_____

«Եկեք գոչյուններով փառաբանե՛նք Աստծուն, մեծ աղմուկ բարձրացնենք այն Ժայռի համար, Ով փրկեց մեզ: Եկեք քայլերգո՛վ մտնենք Նրա ներկայության մեջ՝ փառաբանության երգեր երգելով, բարձրաձայն հիմներ երգելով: Եվ ինչո՞ւ: Որովհետև Աստված լավագույնն է, Նա Բարձր Թագավոր է բոլոր աստվածների վրա: Մի ձեռքում Նա պահում է խոր քարանձավները և երկրի խոռոչները, մյուս ձեռքում բռնել է բարձր սարերը: Նա ստեղծել է օվկիանոսը. այն Իրեն է պատկանում: Նրա ձեռքերը կազմել են երկիրը: Ուրեմն եկե՛ք, եկե՛ք երկրպագենք. խոնարհվե՛ք Նրա առջև ձեր ծնկների վրա՝ Աստծո առջև, Ով ստեղծել է մեզ: Օ՜, այո, Նա մեր Աստվածն է, և մենք՝ այն մարդիկ ենք, ում Նա հովվում է, այն հոտը, ում Նա կերակրում է»:

—Սաղմոս 95.1-7, MSG

6 Մեծ բաներ կկատարվեն, եթե մենք երկյուղածություն ունենանք Տիրոջ հանդեպ և ժամանակ անցկացնենք Նրա կյանք վերափոխող ներկայության մեջ:

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ

«Որովհետև Տեր Աստված մեր *արևն* է և մեր վահանը: Նա շնորհք և փառք է տալիս մեզ: Տերը չի պահի ոչ մի բարի բան նրանցից, ովքեր ճիշտ են վարվում»:

— Սաղմոս 84.11, NLT

«Արդ Հիսուսը դարձյալ խոսեց նրանց հետ և ասաց. «Ես եմ *աշխարհի լույսը*. ով որ Իմ ետևից գա, նա խավարում չի գնա, այլ *կյանքի լույսը* կընդունի»»:

— Հովհաննես 8.12

«Աստված՝ օրհնյալ և միակ Իշխանը, թագավորների Թագավորը և տերերի Տերը, Ով միայն անմահ է, և *Ով ապրում է անմատույց լույսի մեջ*, Ում ոչ ոք չի տեսել և ոչ էլ կարող է տեսնել, Նրան լինի պատիվը և զորությունը հավիտյան: Ամե՛ն»:

— Ա Տիմոթեոս 6.15,16, NIV

[շեղագիրն ավելացրած է]

Առնչվող սուրբգրային հատվածներ. Սաղմոս 104.1,2, Բ Կորնթացիների 4.4, Հակոբոս 1.17, Ա Հովհաննես 1.5, Հայտնություն 1.16

ա. Աստծո մեծության ո՞ր մշտական հատկանիշն է հայտնված այս խոսքերում:

_____

_____

_____

բ. Ի՞նչ է կատարվում, երբ նստում եք Աստծո ներկայության մեջ՝ ողողված Նրա լույսով: Մտածե՛ք այն մասին, թե ինչ կատարվեց Մովսեսի հետ՝ Աստծո ներկայության մեջ ժամանակ անցկացնելուց հետո (տե՛ս Ելից 34.29-35):

«Որդին *ճառագում* է Աստծո փառքը և արտացոլում Աստծո էությունը, և Նա պահում է ամեն ինչ Իր հրամանի կարող զորությամբ»:

— *Եբրայեցիների 1.3,* NLT

«Նրանք, ովքեր նայում են Նրան, *լուսավորվում* են. նրանց երեսները երբեք ամոթով ծածկված չեն»:

— *Սաղմոս 34.5,* NIV

«ՎԵՐ ԿԱՑ… Լուսավորվի՛ր (*փայլի՛ր Տիրոջ փառքով*), որովհետև քո լույսը եկել է, և Տիրոջ փառքը ծագել է քեզ վրա»:

— *Եսայի 60.1,* AMP

[շեղագիրն ավելացրած է]

Առնչվող սուրբգրային հատվածներ. Սաղմոս 18.28,29, Ժողովող 8.1, Դանիել 12.3, Բ Կորնթացիների 3.18

Հոչակել

ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Ամենամտերիմ միությունն Աստծո հետ հենց Աստծո ներկայությունն է: Թեև այս շփումն Աստծո հետ ամբողջովին հոգևոր է, այն խթանում է մարդուն, որովհետև շունչը քնած չէ. ընդհակառակը՝ այն մեծապես ոգեշնչված է: Այս վիճակում շունչն ավելի կենսունակ է, քան կրակը, և ավելի վառ, քան պարզկա արևը. սակայն միևնույն ժամանակ այն նուրբ և ակնածանքով լի է»:

— *Եղբայր Լոուրենս*[6]

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

7 Աստծո ներկայության մեջ մտնելու ճանապարհներից մեկը, հատկապես այն ժամանակ, երբ մարդը հուսահատված է, հետևյալն է. հիշել և մտորել այն զարմանալի գործերի մասին, որ Նա արել է անցյալում (տե՛ս Սաղմ. 77.11,12, 105.5): Մի քանի րոպե տրամադրեք, որպեսզի մտածեք Նրա բարության և հավատարմության մասին: Մտածե՛ք այն դեպքերի մասին, երբ Նա փրկել է ձեզ փորձանքներից, անսպասելիորեն օրհնել ձեզ և պաշտպանել վնասից: Գրե՛ք այն, ինչ հիշեցիք:

Մի քանի հուշեր այն բաների մասին, որ Աստված Իր մեծությամբ գործել է իմ կյանքում...

_____

_____

_____

_____

_____

Թող այս հուշերը պատկերեն Աստծո զորավոր, անփոփոխ սերը ձեր հանդեպ:

*«Գոհությո՜ւն Աստծուն: Կանչե՛ք Նրա Անունը: Պատմե՛ք ողջ աշխարհին, թե ով է Նա և ինչ է Նա արել: Երգե՛ք Նրան: Նվագե՛ք Նրա համար: Տարածե՛ք Նրա բոլոր հրաշալիքները: Ուրախացե՛ք Նրա սուրբ անվան մեջ, Աստծո՛ւն փնտրողներ, և ցնծացե՛ք: Սովորե՛ք Աստծո և Նրա ուժի մասին, **փնտրե՛ք Նրա ներկայությունը** օր ու գիշեր. հիշե՛ք բոլոր սքանչելիքները, որ Նա արել է, այն հրաշքները և դատաստանները, որոնք դուրս են եկել Նրա բերանից»:*

—Ա Մնացորդաց 16.8-12, MSG
[թավատառն ավելացրած է]

Խ 8 Սուրբ գիրքը ցույց է տալիս, որ Հիսուսը պարբերաբար առանձնանում էր, որպեսզի աղոթեր և ժամանակ անցկացներ Հոր ներկայության մեջ: Նա գնում էր սարեր, անապատներ, ծովափեր և պարտեզներ: Հնարավո՞ր է արդյոք, որ այդ գեղեցիկ վայրերն օգնում էին Նրան՝ վերականգնել Իր ուժերը և հիշեցնում Նրան Հոր մեծության մասին:

ա. Բնության ինչպիսի՞ տեսարաններ են երկյուղածություն ներշնչում ձեզ Աստծո մեծության հանդեպ՝ ծովափե՞րը, թե՞ սարերը: Միգուցե դուք երկյուղածություն եք զգում, երբ դիտում եք արևամուտը, կամ լսում տերևների սոսափյունը քամուց, կամ՝ երբ նայում եք աստղազարդ երկնքին: Ինչո՞ւ են այդ տեսարաններն այդքան հատուկ ձեզ համար:

_____

_____

_____

_____

Հոչակել

ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Ինձ դուր է գալիս մտածել, որ բնությունը անսահման հեռարձակման կայան է, որի միջոցով Աստված անդադար խոսում է մեզ հետ, եթե միայն տրամադրվենք՝ լսելու համար:
…Բնության մասին կարդալը լավ է, բայց երբ մարդը քայլում է անտառի միջով և ուշադրությամբ լսում, նա կարող է իմանալ ավելին, քան գրքեր կարդալիս, որովհետև բնությունը խոսում է Աստծո ձայնով»:

— *Ջորջ Վաշինգտոն Քարվեր*[7]

Մտածե՛ք այս մասին

Հանգիստ՝ նշանակում է «ուժերի և տրամադրության թարմացում՝ ծանր աշխատանքից հետո»: Բառացիորեն «հանգիստ» բառը (անգլ.՝ recreation) նշանակում է *վերստեղծել, կրկին կյանքի կոչել* և *վերականգնել*[8]: Միգուցե դուք չհանգստանաք՝ բնության գիրկ այցելելով: Հնարավոր է՝ ձեր սիրտը կյանքով է լցվում, երբ գնում եք տեղական ծննդատուն և նայում նորածիններին: Այլ դեպքում, դուք թարմություն եք զգում հրաշալի սիմֆոնիա լսելիս կամ օդանավակայանում թռչող ինքնաթիռներ դիտելիս: *Սնուցե՛ք* այն, ինչ երկյուղածության զգացում է հաղորդում ձեզ և օգնում է մտապահել Աստծո մեծությունը: Ժամանակ հատկացրեք առանձնանալու համար, և թույլ տվեք Աստծուն՝ ձեր շնչի և հոգու մեջ **կրկին ու կրկին արթնացնել** հրաշալի գիտակցումն այն մասին, թե ով է Նա: Եվ դրա շնորհիվ ձեր ողջ կյանքը դրականորեն կփոխվի:

բ. Որքա՞ն հաճախ եք միտումնավոր կերպով առանձնանում՝ Աստծո հետ ժամանակ անցկացնելու և ձեր ուժերը նորոգելու համար: Ինչպե՞ս կարող եք կարգավորել ձեր կյանքը, որպեսզի հնարավորություն ունենաք ավելի հաճախ առանձին ժամանակ անցկացնել Աստծո հետ:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

9 Թշնամին պայքարում է, որպեսզի թույլ չտա ձեզ ժամանակ անցկացնել Աստծո
Խ ներկայության մեջ: Կան շատ քիչ բնագավառներ, որտեղ նա կպայքարի ձեզ հետ նույն համառությամբ: Նա գիտի Աստծո ներկայության զորությունը, քանի որ եղել է դրա մեջ: Թվարկե՛ք երեք գլխավոր պատճառ, որոնք թույլ չեն տալիս ձեզ ժամանակ անցկացնել Աստծո հետ, և խնդրե՛ք Նրան ցույց տալ ձեզ՝ ինչպես հաղթահարել դրանք:

ԵՐԵՔ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՏՃԱՌ, որոնք խանգարում են ինձ որակյալ ժամանակ անցկացնել Աստծո հետ.

1. _____
_____
_____
_____

2. _____
_____
_____
_____

3. _____

Ես հավատում եմ, որ Աստված ցույց է տալիս ինձ հետևյալը՝ այս խոչընդոտները հաղթահարելու համար:

_____

Հոչակել
ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Աստված անաչառ է, և հայտարարում է, որ հրեշտակները կծառայեն նրանց, ովքեր հավատքով Նրա ժառանգներն են դարձել: Եթե մենք՝ Աստծո որդիներս, միայն հասկանայինք, թե որքան մոտ են մեզ Նրա ծառայող հրեշտակները, ինչպիսի՜ հանգստություն և վստահություն կունենայինք կյանքի արհավիրքներին բախվելիս»:

— *Քիլլի Գրեհեմ*

Ապրող երկյուղի օրհնությունները

«Տիրոջ հրեշտակը բանակում է նրանց շուրջը, ովքեր վախենում են Նրանից [ովքեր երկյուղածությամբ են վերաբերվում Նրան և երկրպագում են Նրան ահով], և Նա ազատում է յուրաքանչյուրին: Օ՜, ճաշակեք և տեսեք, որ Տերը [մեր Աստված] բարի է: Օրհնված (երջանիկ, բախտավոր և նախանձելի) է այն մարդը, ով վստահում և ապավինում է Նրան»:

Սաղմոս 34.7,8, AMP

«Բոլորդ, որ վախենում եք Տիրոջից, վստահե՛ք Նրան: Նա ձեր օգնականը և ձեր վահանն է»:

Սաղմոս 115.11, NLT

«Նա կատարում է նրանց ցանկությունները, ովքեր վախենում են Իրենից. Նա լսում է նրանց աղաղակը և փրկում է նրանց»:

Սաղմոս 145.19, NIV

Շաբաթական գործունեություն
2

Հենց այնտեղ, որտեղ ապրում եք

ԴՈՒՔ ԱՀԱՎՈՐ ԵՎ ՁԱՐՄԱՆԱԼԻ ԿԵՐՊՈՎ ԵՔ ՍՏԵՂԾՎԱԾ

*«Որովհետև Դու ստեղծեցիր իմ ներսը. դու գործեցիր ինձ իմ մոր որովայնում: Ես փառաբանում եմ քեզ, որովհետև ես **ահավոր և զարմանալի կերպով** եմ պատրաստված. Քո գործերը հրաշալի են, ես շատ լավ գիտեմ դա»:*

— Սաղմոս 139.13,14, NIV
[թավատառն ավելացրած է]

Դուք գիտե՞ք, որ ձեր կյանքը սկսվել է **մեկ** փոքրիկ բեղմնավորված բջիջից: Այդ աննշան կետիկի միջուկի մեջ գտնվում էր ԴՆԹ կոչվող գլխավոր համակարգիչը, որը գենետիկական ծրագիր էր պարունակում ձեր դեռևս չձևավորված մարմնի յուրաքանչյուր առանձնահատկության մասին: Պատկերացրե՛ք… ամեն մի օրգան, ամեն մի մազ, ամեն մի արյունատար անոթ, ամեն մի դիմագիծ և նրբագծիկ, բոլոր վարքային մոդելները՝ ամեն ինչ ծրագրավորված էր այդ բջիջի ԴՆԹ-ի քրոմոսոմների մեջ[10]:

Այսօր գիտնականները պարզել են, որ առանձին բջիջը շատ ավելի բարդ կառուցվածք ունի, քան նախկինում մտածում էին: Միջին չափահաս մարդը կարող է ունենալ մինչև 100 տրիլիոն բջիջ, որոնցից յուրաքանչյուրը գործում է՝ ինչպես մեծ, պարսպավոր քաղաք: Մտածե՛ք այդ մասին… յուրաքանչյուր բջիջի ներսում կան համակարգեր, որոնք էներգիա են արտադրում, սննդարար նյութեր պատրաստում և տեղափոխում, տեղեկություններ փոխանցում, պաշտպանում օտար մարմիններ ներխուժելուց և հեռացնում աղբը: Զարմանալի է, որ ունենալով բոլոր այս գործառույթները՝ բջիջները ներդաշնակության մեջ են հարևան և մոտակա բջիջների հետ: Ավելի զարմանալին այն է, որ յուրաքանչյուր բջիջ և իր բոլոր համակարգերը ավտոմատ կերպով *վերարտադրման* կարողություն ունեն[11]: Անկասկած, մարդու մարմինը ճչում է Աստծո մեծության մասին:

Դուք **պատահականություն կամ ճակատագրի դիպված չեք**, ինչպես ոմանք ենթադրում են: Դր. Մայքլ Դենտոնը, ով պահպանողական մանրէաբան և քրիստոնյա է, ասել է. «Մեզ հայտնի ամենապարզ բջիջն այն աստիճան բարդ է, որ անհնար է ընդունել, թե նման առարկան հանկարծակի կազմվել է տարօրինակ, խիստ անհավանական իրադարձության հետևանքով»[12]: Դենտոնը միակ գիտնականը չէ, ով խոսում է կյանքի հրաշքի մասին: Թե՛ քրիստոնյա, թե՛ ոչ քրիստոնյա գիտնականները նմանատիպ մեկնաբանություններ են անում:

Գալենը, ով, թերևս, ամենահայտնի և ամենաազդեցիկ բժիշկն էր Հռոմեական Կայսրության պատմության մեջ, ասել է.

«Յուրաքանչյուրը, ով բաց մտքով է նայում ամեն ինչին, ով կենդանի հոգի է տեսնում այս մարմնի և հեղուկների զանգվածի մեջ, նաև դիտարկում է ցանկացած կենդանու կազմվածք… *կհասկանա այն Հոգու գերազանցությունը, որ Երկնքում է*»[13]:

Դր. Ֆրենսիս Կրիկը՝ կենսաբան և Նոբելյան մրցանակի դափնեկիր, ով հայտնաբերել է ԴՆԹ-ն, ասել է.

«Ազնիվ մարդը, զինվելով ողջ գիտությամբ, որ այժմ հասանելի է մեզ, միայն կկարողանա ասել, որ ինչ-որ իմաստով, կյանքի ծագումը ներկայումս գրեթե հրաշք է թվում, քանի որ այնքան շատ պայմաններ կան, որոնք պետք է բավարարված լինեին դրա համար»[14]:

Զավեշտալի է, բայց Չարլզ Դարվինը՝ այն մարդը, ով, ինչպես համարվում է, ամենամեծ ներդրումն է ունեցել էվոլյուցիայի տեսության մեջ, ասել է.

«Ենթադրել, որ աչքը, իր բոլոր անընդօրինակելի հարմարանքներով, օրինակ՝ ուշադրության կենտրոնացման կարգավորումը տարբեր հեռավորությունների վրա, լույսի տարբեր ծավալների ընկալումը և գնդաձև ու գունային շեղումների շտկումը, կարող էր ձևավորվել բնական ընտրության միջոցով, ըստ իմ խոստովանության, *վերին աստիճանի անհեթեթություն է*…»[15]:

Տասնամյակներ շարունակ, թշնամին էվոլյուցիոնիստական գաղափարներ է տարածել՝ մեր Արարիչ Աստծո մեծությունը նվազեցնելու համար: Բայց ճշմարտությունն Աստծո ինքնության մասին միշտ հաղթանակ է տարել: Նա բացառիկ և զարմանալի է, և Նա ցանկանում է մտերիմ շփում ունենալ ՁԵԶ հետ:

Բացահայտե՛ք Նրա մեծությունն այս խոսքերում.

«Այդ ժամանակ Աստված ասաց. «Եկեք ստեղծենք մարդ արարածներին Մեր պատկերով, որպեսզի Մեզ նման լինեն: Նրանք կթագավորեն ծովի ձկների, երկնքի թռչունների, ընտանի անասունների, երկրի բոլոր վայրի կենդանիների և փոքրիկ կենդանիների վրա, որոնք վազվզում են գետնի վրա»: *Եվ Աստված ստեղծեց մարդ արարածներին Իր պատկերով*: Աստծո պատկերով Նա ստեղծեց նրանց. արու և էգ ստեղծեց նրանց»»:

— *Ծննդոց 1.26,27,* NLT

«*Աստծո Հոգին է ստեղծել ինձ*, և Ամենակարողի շունչը՝ ինձ կյանք տվել»:

— *Հոբ 33.4*

«Ճանաչե՛ք, որ Տերն է Աստված. *Նա արավ մեզ*, և ոչ թե մենք, որ մենք Նրա ժողովուրդը և Նրա արոտի ոչխարներն ենք»:

— *Սաղմոս 100.3*

«Ահա թե ինչ է ասում Տերը՝ *քո Փրկիչը, Ով ձևավորեց քեզ արգանդում.* «Ես եմ Տերը, Ով արել է ամեն ինչ, Ով մենակ տարածեց երկինքները, Ով Ինքը ընդարձակեց երկիրը»»:

— *Եսայի 44.24,* NIV

«Ես ճանաչում էի քեզ, մինչև *կազմեցի քեզ քո մոր որովայնում*: Մինչև քո ծնվելը, Ես առանձնացրել էի քեզ և նշանակել էի քեզ որպես Իմ մարգարե՝ ազգերին»:

— *Երեմիա 1.5,* NLT

«*Նա Ինքն է տալիս բոլոր մարդկանց կյանք և շունչ* և մնացած ամեն ինչը: Մեկ մարդուց Նա արեց մարդկանց յուրաքանչյուր ազգը, որ նրանք բնակվեն ողջ երկրի վրա: Եվ Նա որոշեց ժամանակներ, որ դրված էին նրանց համար, և հստակ վայրեր, որտեղ նրանք պետք է ապրեին: Աստված արեց սա, որպեսզի մարդիկ փնտրեն Իրեն և միգուցե հասնեն Իրեն և գտնեն Իրեն, թեև Նա հեռու չէ ամեն մեկիցս»:

— *Գործք 17.25թ-27,* NIV

Այժմ մի պահ դադարե՛ք և մտածե՛ք...

Եթե դուք ստեղծված եք Աստծո պատկերով, ի՞նչ կարող եք ունենալ, որ չունի արարչագործության այլևս ոչ մի տեսակ:

_____

_____

_____

Կարդացե՛ք Ա Հովհաննես 1.3, Հովհաննես 14.23, Հայտնություն 3.20

Արդյո՞ք այս խոսքերը բոցավառում են ձեր հավատքն Աստծո հանդեպ՝ որպես ձեր Մեծ Արարչի:

_____

_____

_____

_____

Արդյո՞ք դրանք լցնում են ձեր սիրտը թարմ երկյուղած հավատքով Տիրոջ հանդեպ:

_____

_____

_____

_____

Զվարճալի ուսումնասիրություն անցկացրեք:

Թո՛ւյլ տվեք, որպեսզի ճշմարտությունն այն մասին, որ Աստված «զարմանալի և ահավոր» կերպով է ստեղծել է ձեզ, կենդանանա և ավելանա ձեր կյանքում: Ձեռք բերեք Աստվածաշնչի համաբարբառ և գտեք աստվածաշնչյան խոսքեր այն մասին, որ Աստված Արարիչ է: Դուք կարող եք փնտրել «Արարիչ», «ստեղծագործություն», «ստեղծված», «հիմք», «անել», «երկինք և երկիր», «երկինքներ», «աստղեր», ինչպես և այլ բառերով:

Մտորելով այն մասին, թե որքան զարմանալի է Աստված՝ Մեծ Արարիչը, դուք հայացք կգցեք Նրա մեծությանը և ավելի խոր երկյուղածությամբ կվերաբերվեք Նրան:

Շաբաթական գործունեություն
2

ԱՆՆԿԱՐԱԳՐԵԼԻ, ԱՆՉԱՓԵԼԻ, ԱՆՍԱՀՄԱՆ ԱՍՏՎԱԾ

«Ստեղծագործությունը և ստեղծվածները ծափահարում են Քեզ, Աստվա՛ծ. Քո սուրբ ժողովուրդն օրհնում է Քեզ: Նրանք խոսում են Քո իշխանության փառքերի մասին, նրանք բացականչում են Քո շքեղության պատճառով: Փա՜ռք Տիրոջը: Փա՜ռք Տիրոջը երկինքներից: Փա՜ռք Նրան երկնքից: Փառաբանե՜ք Նրան, բոլոր Նրա հրեշտակներ, բոլոր երկնքի զորքեր: Փառաբանե՜ք Նրան, արև և լուսին: Փառաբանե՜ք Նրան, բոլոր առկայծող աստղեր: Փառաբանի՜ր Նրան, երկինք, որ վերևում է: Փառաբանե՜ք Նրան, գոլորշիներ, որ ամպերից վեր են: Թող ամենը, որ շնչում է, փառաբանություն երգի Տիրոջը»:

—Սաղմոս 145.10,11, 148.1-4, 150.6
Սաղմոս 145՝ MSG, Սաղմոս 148 և 150, NLT

Մեր Աստված մեկ ճշմարիտ Աստված է, Արարիչը երկնքի և երկրի և այն ամենի, ինչ դրանցում է. սա իսկապես որ զարմանալի է: Նա հավիտենից հավիտյան է: Նա չունի սկիզբ և վերջ: Նա ամենազոր է, ամենագետ և ամենագթ: Նա երբեք չի փոխվում, սակայն Նրա գթասրտությունը և ողորմությունը նորոգվում են մեզ համար ամեն օր: Նա իսկապես որ աննկարագրելի, անչափելի և անսահման է:

Իսկ որքա՞ն մեծ է Աստված ձեզանում: Ինչպե՞ս եք դուք պատկերացնում Նրան ձեր սրտում և մտքում: Եթե Նա աննկարագրելի, անչափելի և անսահման է, միգուցե դուք սահմանափակե՞լ եք Նրան: Ճշմարտությունն այն է, որ ժամանակ առ ժամանակ բոլորս սահմանափակում ենք Աստծուն: Միգուցե հենց հիմա դուք նման վիճակում եք: Բայց Աստված չի ցանկանում, որ մնաք այդտեղ. Նա ցանկանում է, որ դուք սպասեք ավելիին: Նա ցանկանում է, որ դուք նորովի տեսնեք Իրեն՝ ինչպես դեռ չեք տեսել անցյալում: Ինչպե՞ս կարող եք անել դա. մտորե՛ք Նրա Խոսքի շուրջ:

Մտորե՛ք Նրա մեծության շուրջ

«Միայն Դու ես Տերը: Դու ստեղծել ես երկինքները, նույնիսկ՝ ամենաբարձր երկինքները, և դրանց բոլոր աստղերը, երկիրը և ամեն ինչ, որ դրա վրա է, ծովերը և այն, ինչ դրանցում է: Դու կյանք ես տալիս ամեն ինչին, և երկնային բազմությունը երկրպագում է Քեզ»:

— *Նեեմիա 9.6,* NIV

«Դու դրել ես աշխարհն իր հիմքի վրա, այնպես որ, այն երբեք չի շարժվի: Սարերը բարձրացան և դաշտավայրերն իջան այնքան, որքան Դու էիր վճռել: Դու հաստատ սահմաններ դրեցիր ծովերի համար, որպեսզի դրանք այլևս չծածկեն երկիրը»:

— *Սաղմոս 104.5,8,9,* NLT

«Լսե՛ք Ինձ, Ի՛մ ժողովուրդ, Ի՛մ ընտրյալներ: Միայն Ես եմ Աստված: Ես Առաջինն եմ և Ես վերջինն եմ: Իմ ձեռքն է, որ դրեց երկրի հիմքը: Իմ աջ ձեռքի ափը տարածեց երկինքը վերևում. Ես խոսեցի, և դրանք եղան»:

— *Եսայի 48.12,13,* TLB

Առնչվող սուրբգրային հատվածներ. Սաղմոս 33.6-9, 102.25, Եսայի 45.11,12, Գործք 17.24-26

Կրկին և կրկին Ծննդոցից՝ Հայտնություն, Սուրբ գիրքը հայտարարում է, որ Աստված ստեղծեց *ամեն ինչ*: Տասնյակ աստվածավախ մարդիկ, ովքեր ապրել են երեք տարբեր աշխարհամասերում և ավելի քան տասնվեց դարերի ընթացքում, գրի են առել Նրա Սուրբ Խոսքը և հայտարարում են, որ Աստված Արարիչ է, և Արարիչ են անվանում Նրան:

Արդյո՞ք այս խոսքերը զորացնում են ձեր հավատքը և երկյուղածություն ներշնչում ձեր սրտում Աստծո հանդեպ: Ի՞նչ են դրանք հայտնում ձեզ Նրա հրաշալի բնավորության մասին:

Աստված ոչ միայն ստեղծել է ամեն ինչ, այլև *պահում է* ամեն ինչ: Կողոսացիների 1.16,17-ում գրված է. «Քրիստոսն Ինքն է Արարիչը, Ով ստեղծել է ամեն ինչ երկնքում և երկրի վրա՝ այն բաները, որ մենք կարող ենք տեսնել, և այն բաները, որ չենք կարող. հոգևոր աշխարհը՝ իր թագավորներով և թագավորություններով, դրա կառավարիչներին և իշխանությունները. ամենը ստեղծված են Քրիստոսի կողմից Իր գործածման և Իր փառքի համար: Նա կար մինչև մնացած ամեն ինչի սկիզբը, և *Նրա զորությունն է, որ ամեն ինչ պահում է իր տեղում*» (TLB, շեղագիրն ավելացրած է): Զարմանալի՜ է: Հիսուսն այն անպարտելի, անտեսանելի ուժն է, որ ամեն ինչ հաստատ պահում է իր տեղում: Ոչ մի մանրուք անուշադրության մատնված չէ: Կարդացե՛ք այս խոսքերը, որոնք հռչակում են Նրա մեծությունը.

Որքա՜ն մեծ է մեր Աստված

«Նա հաշվում է աստղերը և կանչում բոլորը անուններով: Որքա՜ն մեծ է մեր Տերը: Նրա զորությունը բացարձակ է: Նրա գիտությունը մեր հասկացողությունից վեր է»:

— *Սաղմոս 147.4,5,* NLT

«Ո՞վ է պահել օվկիանոսն իր երկու ափերի մեջ, կամ չափել երկինքը իր թիզով՝ իր բութ մատից մինչև ճկույթը, ո՞վ է դրել երկրի ամբողջ հողը իր դույլերից մեկում, կշռել յուրաքանչյուր սարը և բլուրը»:

— *Եսայի 40.12,* MSG

«Ահա թե ինչ է ասում Տերը. «Երկինքն Իմ գահն է, իսկ երկիրն Իմ ոտքերի պատվանդանն է… Իմ ձեռքերը արեցին և՛ երկինքը, և՛ երկիրը. դրանք և ամեն ինչ դրանում Իմն են. Ես՝ Տերս, խոսեցի»»:

— *Եսայի 66.1,2,* NLT

Ապշեցուցիչ, «բացահայտումներով լի» խոսակցություն վարելու համար, **կարդացե՛ք**, թե ինչ ասաց Աստված Հոբին (տե՛ս Հոբ 38 և 39):

Ի՞նչ է Աստված ցույց տալիս ձեզ այս խոսքերի միջոցով ձեր Արարչի անսահմանության մասին:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Այժմ դուք կարող եք մտածել. *«Այո՛, Աստված մեծ և զորավոր է, բայց արդյո՞ք Նա իրականում մտածում է իմ մասին»*: Հենց այս մասին էր Դավիթը հարցնում Տիրոջը Սաղմոս 8-ում: Նա ասաց. «Երբ ես նայում եմ գիշերային երկնքին և տեսնում Քո մատների գործը՝ լուսինը և աստղերը, որ Դու դրել ես իրենց տեղերում, ի՞նչ են հասարակ մահկանացուները, որ Դու մտածես նրանց մասին՝ մարդ արարածները, որ Դու հոգ տանես նրանց մասին: Սակայն Դու ստեղծել ես նրանց միայն մի փոքր ցածր Աստծուց, և պսակել նրանց փառքով և պատվով (խոսքեր 3-5, NLT):

Տերը մտածո՞ւմ է ձեր մասին: Նա հոգո՞ւմ է այն ամենի մասին, ինչով դուք անցնում եք: Այո՛: Կարդացե՛ք Ղուկաս 12.6,7, Եսայի 49.14-16 և Սաղմոս 56.8 խոսքերը և գրե՛ք, թե ինչ է Տերը խոսում ձեր սրտին:

Թանկագի՛ն ընկեր, Աստված սրտանց սիրում է ձեզ: Տվե՛ք Նրան ձեր սերը: Տվե՛ք Նրան ձեր փառաբանությունը: Նա արժանի՛ է դրան:

Փառաբանության աղոթք

Ո՞վ կա Քեզ նման, ո՞վ Տեր՝ երկնքի և երկրի Մեծ Արարիչ: Դու աննկարագրելի, անչափելի և անսահման ես: Խնդրո՛ւմ եմ, ների՛ր ինձ՝ որևէ կերպով Քեզ սահմանափակելու համար: Օգնի՛ր ինձ ավելի ու ավելի տեսնել Քո մեծությունը: Դու անսահման ես զորությամբ, իմաստությամբ, ողորմությամբ և սիրով: Շնորհակալությո՛ւն, որ հոգում ես իմ մասին և ցանկանում ես շփվել ինձ հետ: Ես այնքան շնորհակալ եմ Քո առաջնորդող և պաշտպանող ներկայության համար իմ կյանքում: Թող որ իմ երկյուղածությունը Քո հանդեպ շարունակ ավելանա: Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր: Դու մե՛ծ ես, և Քեզ պետք է մեծապես փառաբանել… Հիսուսի անունով, ամե՛ն:

Իմ օրագիրը

ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ՀԻՇԵԼ

Արդյո՞ք դուք նոր հայացք գցեցիք Աստծո մեծությանը: Արդյո՞ք ձեր ներսում երկյուղ և հիացմունք առաջացավ Նրա հանդեպ՝ որպես Արարչի: Որոշ ժամանակ հատկացրեք, և առանց շտապելու, լռության մեջ մտորեք այն նոր գաղափարների շուրջ, որ Նա հայտնում է ձեզ, և այն ամենի շուրջ, ինչ Նա ասում է ձեզ:

ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Աստված ցանկանում է, որ ձեր պատկերացումը Նրա մեծության մասին շարունակ ավելանա: Այդ դեպքում կավելանա ձեր երկյուղը Նրա հանդեպ. այն կզորացնի ձեզ՝ արտասովոր կյանքով ապրելու համար: Ինչպե՞ս կարող եք ավելի լավ ընկալել Աստծո մեծությունը. նայելով Նրա ստեղծագործության սքանչելիքներին, ինչպես և՝ ձեր հոգում ստանալով անմիջական հայտնություններ Նրանից: Որքան խորն է ձեր պատկերացումը Նրա մեծության մասին, այնքան մեծ է Նրանից վախենալու կարողությունը: Որքան ավելի երկյուղ ունենաք Նրա հանդեպ, այնքան ավելի կվերապրեք Նրա դրսևորված ներկայությունը և օրհնությունները: Այնպես որ, ժամանակ հատկացրեք առանձնանալու և Տիրոջը փնտրելու համար: Սովորե՛ք շարունակաբար հանգստանալ Նրա ներկայության մեջ: Այդ դեպքում կավելանա թե՛ ձեր սերը, թե՛ երկյուղը Նրա հանդեպ: Ձեր կյանքը կընդարձակվի:

(1) Մեջբերում *«Սթրոնգի Աստվածաշնչի լիակատար համաբարբառ»*-ից, Ջեյմս Սթրոնգ՝ Իրավագիտության և Աստվածաբանության դոկտոր (Նեշվիլ, Տենեսի. «Thomas Nelson Publishers», 1990թ.):
(2) Մեջբերում *«Վայնի Հին և Նոր կտակարանների բառերի ամբողջական բացատրական բառարան»*-ից, Վ. Ի. Վայն (Նեշվիլ, Տենեսի. «Thomas Nelson Publishing», 1996թ.), էջ 281, ՆԿ:
(3) Նույնը՝ էջ 390, ՆԿ:
(4) Մեջբերում Նոյ Վեբսթերի *«Անգլերեն լեզվի ամերիկյան բառանի առաջին հրատարակություն»*-ից (1828թ.), վերահրատարակված պատճենման միջոցով «Foundation for American Christian Education»-ի կողմից (Սան Ֆրանցիսկո, Կալիֆոռնիա, 2000թ.):
(5) Մեջբերումներ Աստծո հետ մտերմության մասին (http://dailychristianquote.com/dcqintimacy3.html, վերցրած 27.08.2010թ.):
(6) Եդբայր Լոուրենս. *«Աստծո ներկայության փորձառությունը»* (Նյու Քեսինգթոն, Փենսիլվանիա. «Whitaker House», 1982թ.), էջ 65:
(7) *«Հաստատ կանգնել. 365 ամենօրյա ընթերցանության ուղերձներ՝ ձեր հավատքը զորացնելու համար»*, կազմված Փեթի Մ. Համելի կողմից (Սենթ Սան Լուիս Օբսիպո, Կալիֆոռնիա, «Parable»), էջ 109:
(8) Տե՛ս Նշում 4:
(9) Բիլլի Գրեհեմ. *«Հրեշտակներ»* (Դալլաս, Տեխաս, «Word Publishing», 1994թ.), էջեր 104,105:
(10) Դենիս Ռ. Պետերսեն. *«Բացահայտել արարչագործության առեղծվածները»* (Էլ Դորադո, Կալիֆոռնիա, «Creation Resource Publications», 2002թ.), վերցրած էջ 88-ից:
(11) Նույնը՝ վերցրած էջ 92-ից:
(12) Նույնը՝ էջ 92:
(13) Ջոն Հադսոն Թայներ. *«Բժշկության պատմությունը»*, (Գրին Ֆորեսթ, Արկանզաս, «Master Books», 1999թ., 2009թ.), էջ 10:
(14) Տե՛ս Նշում 10, էջ 108:
(15) Նույնը՝ էջ 94:

Իմ նշումներդ

*«...Վախեցե՛ք Աստծուց և **փա՛ռք տվեք Նրան**...*
Երկրպագե՛ք Նրան, Ով ստեղծել է երկինքները,
երկիրը, ծովը և ջրերի աղբյուրները»:

–Հայտնություն 14.7, NIV
(թավատառն ավելացրած է)

3

ԱՍՏԾՈ ՓԱՌՔԸ

Խնդրում ենք օգտվել ուսումնական դասընթացի 3-րդ դասից, ինչպես նաև՝ *«Տիրոջ երկյուղը»* գրքի 2-րդ գլխից:

«Շատերն այսօր չգիտեն և չեն ճանաչում *իրական Հիսուսին*, Ով հայտնված է Սուրբ Հոգով: Այն սերունդները, ովքեր ապրել են մեզնից առաջ, ապացուցում են, որ Փառքի Տերը անհայտ է մնում, երբ սուրբ երկյուղը բացակայում է մարդկանց կյանքում: Ճշմարտությունն այն է, որ միայն Աստծուց վախեցողներն են ճանաչում Նրան: Միայն նրանք, ովքեր վախենում են Աստծուց, կտեսնեն Նրա փառքը կամ մեծությունը»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Խ **1** Ինչպես տեսնում եք առաջին երկու գլուխներում, շնորհիվ Տիրոջ առողջ երկյուղի, մենք մտերիմ շփում ունենք Աստծո հետ և մեծ օրհնություններ՝ մեր կյանքում: Տիրոջ երկյուղը զարգանում է և առողջ վիճակում է մնում այն դեպքում, երբ ճիշտ պատկերացում ենք ունենում՝ թե ով է Նա:

ա. Մի քանի րոպեների ընթացքում նկարագրե՛ք, թե ինչպես եք պատկերացնում Աստծուն: Ըստ ձեզ, ինչպիսի՞ն է Նա:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

բ. Այս ուսմունքի երրորդ դասին Զոնը օրինակ է բերում հայտնի առաջնորդի մասին, ով այցելում է օտար երկիր՝ որպես հասարակ մարդ, և անուշադրության մատնվում՝ չստանալով այն հարգանքը և պատիվը, որին արժանի էր: Ինչպե՞ս է կարելի վերագրել այս պատմությունը ձեր շփմանը Տիրոջ հետ: Ձեր կարծիքով, ի՞նչ Նա կասեր ձեր կյանքի մասին՝ համաձայն այս օրինակի:

_____

_____

_____

_____

_____

_____

գ. Մովսեսը, Գեդեոնը, Սողոսը (Պողոսը) և բազում այլ մարդիկ հանդիպում ունեցան Աստծո հետ: Այդ հանդիպումները փոխեցին նրանց կյանքը: Արդյո՞ք դուք ունեցել եք նման անմոռանալի հանդիպում Աստծո հետ: Եթե այո, ապա նկարագրեք ձեր վերապրում(ներ)ը և պատմեք, թե ինչ ազդեցություն ունի այսօր այդ փորձառությունը ձեր կյանքում:

_____

_____

_____

_____

_____

_____

Առնչվող սուրբգրային հատվածներ. Ելից 3.1-6, Դատավորաց 6.11-24, Գործք 9.3-9:

«Եվ Տերն ասաց. «Քանի որ այս մարդիկ մոտենում են Ինձ իրենց բերաններով և պատվում են Ինձ իրենց շուրթերով, բայց հեռացնում են իրենց սրտերը և մտքերը Ինձնից, և ***նրանց վախը և երկյուղածությունն Իմ հանդեպ մարդկային պատվիրան է, որը նրանք սովորել են կրկնության միջոցով*** *[առանց երբևէ մտածելու դրա իմաստի մասին]...»»:*

—Եսայի 29.13, AMP
(թավատառն ավելացրած է)

Խ 2 Թե՛ Եսայի մարգարեի, թե՛ Հիսուսի ժամանակ շատերի համար Աստծուն ծառայելը իրենց առօրյայի սովորական մասն էր: Նրանք սրտանց չէին ծառայում, և նրանց հավատքը հիմնված չէր Տիրոջ ճշմարիտ երկյուղի վրա: Այդ իսկ պատճառով, նրանք շատ սահմանափակ պատկերացում ունեին Աստծո մասին: Նույնը կարող է պատահել մեզ հետ մեր օրերում.

մենք կարող ենք ունենալ *աստվածապաշտության* կերպարանք, բայց ուրանալ դրա զորությունը (տե՛ս Բ Տիմոթ. 3.5):

ա. Կարդացե՛ք Եսայի 29.13-ը և ձեր բառերով բացատրեք, թե ինչ է նշանակում ծառայել Աստծուն սովորական կերպով:

_____

_____

_____

_____

բ. Ի՞նչն է դրդում ձեզ՝ վերածել ձեր շփումն Աստծո հետ ամենօրյա սովորական զբաղմունքի. ի՞նչն է գողանում ձեզնից ձեր փրկության ուրախությունը և կյանքը:

_____

_____

_____

_____

գ. Ի՞նչ գործնական քայլեր կարող եք ձեռնարկել, որպեսզի շարունակաբար զարգացնեք մտերմությունը Տիրոջ հետ:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

«Դու չպետք է այլ աստվածներ ունենաս Իմ առջև կամ բացի Ինձնից: Դու չպետք է քեզ համար որևէ քանդակած ***պատկեր*** *պատրաստես [այն երկրպագելու համար] կամ որևէ նմանություն որևէ բանի, որ վերևում՝ երկնքում է, կամ որ ներքևում՝ երկրի վրա է, կամ որ ջրերում կամ երկրի ներքևում է. դու չպետք է խոնարհվես կամ ծառայես դրանց»:*

—Ելից 20.3-5, AMP
(թավատառն ավելացրած է)

Հոչակել

ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Սկզբում Աստված ստեղծեց մարդուն Իր պատկերով: Այդ ժամանակվանից ի վեր մարդն է պատրաստում Աստծուն՝ իր պատկերով: Կարող եք անվանել սա բնապաշտություն: Կարող եք անվանել սա մարդակերպություն: Կարող եք անվանել սա կռապաշտություն: Կարող եք անվանել սա՝ ինչպես ցանկանաք: Այս հոգևոր հակադարձման արդյունքում առաջացել է մի աստված, ով մոտավորապես մեր չափի է և սարսափելիորեն նման է մեզ: Եվ մեր հոգևոր ձախողումների մեծ մասը բխում է հետևյալ հիմքային սխալմունքից. մենք մտածում ենք Աստծո մասին մարդկային տեսանկյունից: Մենք ստեղծեցինք Աստծուն մեր պատկերով, և ինչպես գրում է Է. Ու. Թոզերը «Սրբի գիտությունը» գրքում, մենք ապրում ենք այնպիսի աստծո հետ, ով «երբեք չի կարող զարմացնել մեզ, երբեք չի կարող անել մեր պատկերացումներից ավելին, երբեք չի կարող ապշեցնել մեզ, և ոչ էլ՝ գերազանցել մեզ»:

— *Մարկ Պետերսոն*

3 Մարդիկ, ովքեր չեն ձգտում մտերիմ շփում ունենալ Աստծո հետ, հաճախ չունեն ճիշտ պատկերացում այն մասին, թե ով է Նա: Հետևաբար, նրանք հակված են պատրաստել իրենց սեփական «քանդակած» պատկերը՝ շաղկապելով Նրան աշխարհում իրենց հայտնի բաների հետ: Ահա թե ինչ արեցին իսրայելցիները, երբ ստեղծեցին ոսկե հորթին և երկրպագեցին դրան որպես «Աստծո, ով դուրս էր հանել իրենց Եգիպտոսից»:

ա. Ինչպիսի՞ խնդիրներ են առաջանում, երբ մենք ցածրացնում ենք Աստծո մեծության պատկերը՝ վերածելով Նրան ինչ-որ մեկի, ով մեզ նման է: Արդյո՞ք սա կատարվել է ձեր կյանքում: Եթե այո, ապա ի՞նչ եք սովորել դրանից:

_____

_____

_____

_____

բ. *Լռությամբ եկեք Տիրոջ առջև*: Խնդրեք Նրան՝ ցույց տալ ցանկացած «աստվածների», որ միգուցե ստեղծել եք, և որոնց ծառայում եք ավելի, քան Նրան: Ժամանակ տրամադրեք ապաշխարելու համար: Աստված ավելի մեծ հայտնություն է տալիս ձեզ այն մասին, թե ով է Ինքն իրականում: Փա՛ռք տվեք Նրան այդ հայտնության համար:

_____

_____

_____

_____

_____

գ. Ինչպիսի՞ օրհնություններ կունենաք, եթե մեծարեք Տիրոջը և թույլ տաք Նրան՝ լինել այն աննկարագրելի, անչափելի և անսահման Աստվածը, որ Նա իրականում է: Ինչպիսի՞ գործնական, պարզ միջոցներ կան՝ սա անելու համար:

_____

_____

_____

_____

_____

_____

*«**Մեծացրե՛ք** ինձ հետ Տիրոջը, թող իրար հետ բարձրացնենք Նրա անունը»:*

—Սաղմոս 34.3, NKJV

(թավատառն ավելացրած է)

Խ 4 Աստծո անուններն իմանալը մեծապես կօգնի ձեզ ընդարձակել ձեր պատկերացումը Նրա մասին և ավելի մեծ սպասումներ ունենալ Նրա մեծությունից: Նա անթիվ անուններ ունի ողջ Աստվածաշնչում, որոնք նկարագրում են Նրա անսահման և անփոփոխ էությունը: Ահա դրանցից մի քանիսը.

ՏԻՐՈՋ ԱՆՈՒՆԸ	ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵԲՐԱՅԵՐԵՆՈՒՄ	ՕՐԻՆԱԿ՝ ՍՈՒՐԲ ԳՐՔՈՒՄ
Եհովա-Յիրե	«Տերը կմատակարարի»	Ծննդոց 22.14
Եհովա-Նիսսի	«Տերը իմ Դրոշն է»	Ելից 17.15
Եհովա-Շալոմ	«Տերը իմ Խաղաղությունն է»	Դատավորաց 6.24
Եհովա-Ցիդկենու	«Տերը մեր Արդարությունն է»	Երեմիա 23.6, 33.16
Եհովա-Շամմա	«Տերը այստեղ է»	Եզեկիել 48.35
Եհովա-Մկադեշ	«Տերը, Ով սրբացնում է»	Ելից 31.13 Ղևտացիների 21.8,15,23
էլ Շադդայ	«Ամենակարող Տեր» (Աստված, Ով ավելի, քան բավական է)	Ծննդոց 17.1, 35.11 Սաղմոս 91.1

ա. Ինչպե՞ս է Տիրոջ անունների շուրջ մտորելը լայնացնում ձեր պատկերացումը Նրա մասին:

_____

_____

_____

_____

բ. Ո՞ր անունն է ամենից շատ հավատք և խրախուսանք ներշնչում: Ինչո՞ւ է այն առանձնահատուկ ձեզ համար:

_____

_____

_____

_____

գ. Աստված հատուկ օրհնություններ է խոստանում նրանց, ովքեր ընդունում ու ճանաչում են Նրան, և վստահում են Նրա անվանը: Կարդացե՛ք Սաղմոս 91.14-16-ը, որտեղ գրված է այդ օրհնությունների մասին:

_____

_____

_____

_____

«Միակ Աստծուն լինի փա՛ռքը հավիտյան, Հիսուս Քրիստոսի միջոցով: Ամե՛ն»:

—Հռոմեացիների 16.27, NIV

5 Երբեմն մենք նվազեցնում ենք Աստծո փառքը և փոքրացնում մեր մտքում Նրա մեծությունը՝ *վարվելով այնպես, ասես Նա չի տեսնում մեր վերաբերմունքը և գործերը:* Ահա թե ինչ էին անում Իսրայելի առաջնորդները Եզեկիելի ժամանակ (տե՛ս Եզեկ. 8.12): Տիրոջ երկյուղը պաշտպանում է մեզ նման վիճակում հայտնվելուց:

Խ

ա. Երբևէ ինքներդ ասե՞լ եք. *«Աստված չի տեսնում, թե ինչ եմ ես անում»*, կամ *«Ես կանեմ այս բանը, իսկ հետո կխնդրեմ Աստծուն՝ ներել ինձ»*: Եթե այո, ապա ի՞նչ է դա նշանակում, և ինչո՞ւ է նման վերաբերմունքը վտանգավոր:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Կարդացե՛ք Հռոմեացիների 6.14-18, Հուդա 3.7

բ. Արդյո՞ք հենց այս պահին դուք փորձում եք ինչ-որ բան թաքցնել Աստծուց: Եթե այո, ապա ի՞նչ է դա:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Դիմե՛ք Աստծուն ապաշխարությունով, որովհետև Նա ողորմած և ներող է: Տիրոջ երկյուղը կօգնի ձեզ մաքուր մնալ թե՛ դրսևանց, թե՛ ներսևանց:

Հոչակել

ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Թե՛ դու, թե՛ ես ունենք գաղափարներ և պատկերացումներ Աստծո մասին, որոնք ճշմարիտ չեն. Սուրբ Հոգին կհեռացնի դրանք, եթե մենք թույլ տանք Նրան: Դրանք մշակութային և վարդապետական ավանդություններ են, որոնք արմատացել են մեր մտքերում: Քրիստոսի կյանքի զորությունը նվազում է՝ մեր ներսում գոյություն ունեցող սխալ պատկերացումների քանակի համաձայն: Առանձին մարդիկ, եկեղեցիներ և, նույնիսկ, ազգեր ավելացնում են իրենց նմանությունը այն պատկերացմանը, որ մենք ունենք Աստծո մասին: Թե՛ աղքատ, թե՛ հարուստ ազգերը նույն կերպով ենթադրում են, որ Ամենակարող Արարիչը գոյություն ունի և մտածում է այնպես, ինչպես իրենք են մտածում: Նրանք չեն ծառայում Աստծուն, այլ այն *պատկերացմանը*, որ ունեն Աստծո մասին: Սակայն Նա, Ով Կենդանի է, կովկասցի կամ սևամորթ չէ: Նա ո՛չ հույն է, ո՛չ էլ՝ հրեա, կաթոլիկ կամ բողոքական չէ: Նա Աստված է»:

— *Ֆրենսիս Ֆրենսիսկոյ*[2]

«Դուք չեք կարող հավիտյան թաքցնել ձեր իրական դեմքը. շուտով դուք կբացահայտվեք: Դուք չեք կարող հավիտյան թաքնվել կրոնական դիմակի տակ. վաղ թե ուշ այդ դիմակը կընկնի, և ձեր ճշմարիտ դեմքը հայտնի կդառնա: Դուք չեք կարող շշնջալ մի բան, երբ մենակ եք, և քարոզել հակառակը մարդկանց առջև. կգա այն օրը, երբ այդ շշնջոցները կկրկնվեն»:

—Ղուկաս 12.2,3, MSG

6 Իր Խոսքում Աստված ասում է, որ մարդիկ փորձում են որոշ բաներ թաքցնել Իրենից, նաև ցույց է տալիս, թե ինչու է դա անօգուտ: Կարդացեք այս հատվածները և գրեք, թե ինչ է Սուրբ Հոգին հայտնում ձեզ:

«Որովհետև մարդու ճանապարհները ուղիղ Տիրոջ աչքերի առջև են, և Նա [Ով ցանկանում է, որպեսզի մենք ապրենք սթափ, պարկեշտ և աստվածապաշտ կյանքով], զգուշորեն կշռում է մարդու բոլոր ճանապարհները»:

— *Առակաց 5.21,* AMP

«Տիրոջ աչքերը ամեն տեղ են. շարունակ դիտում են չարերին և բարիներին»:

— *Առակաց 15.3,* NKJV

«Որովհետև Աստված դիտում է, թե ինչպես են մարդիկ ապրում. Նա տեսնում է այն ամենը, ինչ նրանք անում են»:

— *Հոբ 34.21,* NLT

«Ես կարող եմ տեսնել այն ամենը, ինչ դուք անում եք, նույնիսկ, եթե դուք փորձում եք թաքցնել ձեր մեղքերն Ինձնից»:

— *Երեմիա 16.17,* CEV

Ի՞նչ է Տերը ցույց տալիս ձեզ այս խոսքերում Իրենից ինչ-որ բաներ թաքցնելու փորձ անելու մասին: Այս խոսքերը մարտահրավե՞ր են նետում ձեզ, թե՞ խրախուսում են:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

«Դուք չեք կարող ոչինչ թաքցնել Նրանից, բայց կզարմանաք՝ իմանալով, թե քանիսն են փորձում անել դա: Երբ գիտակցաբար պահում եք Տիրոջ երկյուղը, դուք գիտեք, որ ոչինչ թաքնված չէ Նրանից: Ամեն ինչ՝ յուրաքանչյուր դրդապատճառ, յուրաքանչյուր դիտավորություն, յուրաքանչյուր գործ հայտնի է Նրան, որովհետև Նա մարդ չէ»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

7 Տիրոջ առողջ երկյուղ ունենալը պաշտպանում է մեզ այն մտքից, որ Նա չի տեսնում մեր գործողությունները կամ վերաբերմունքը: Այն զորացնում է մեզ՝ հիշեցնելով, որ մեկ օր մենք կանգնելու ենք Նրա առջև և պատասխան ենք տալու այն կյանքի համար, որ ապրեցինք:

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ

«Այնպես որ, մենք մեր նպատակն ենք դարձնում Նրան հաճեցնելը, թե՛ այստեղ՝ մարմնում, թե՛ մարմնից դուրս: Որովհետև բոլորս պետք է հայտնվենք Քրիստոսի դատաստանի գահի առջև, որպեսզի յուրաքանչյուրն էլ կարողանա ստանալ իր հասանելին այն բաների համար, որ արել է՝ դեռ մարմնում լինելով, թե՛ լավ, թե՛ վատ: Այսպիսով, քանի որ մենք գիտենք, թե ինչ է Տիրոջից վախենալը, մենք փորձում ենք համոզել մարդկանց»:

— Բ Կորնթացիների 5.9-11, NIV

«Չկա ոչինչ, որ կարող է թաքնվել Աստծուց. ամեն ինչ ողջ արարչագործության մեջ բացահայտ է և պարզ դրված է Նրա աչքերի առջև: Եվ բոլորս մեր մասին պետք է պատասխան տանք Նրան»:

— Եբրայեցիների 4.13, TEV

«Վերջին խոսքը սա է. «Վախեցի՛ր Աստծուց: Արա՛ այն, ինչ Նա պատվիրում է քեզ: Ահա և վերջ: Ի վերջո, Աստված կբացահայտի այն ամենը, ինչ մենք անում ենք, և կդատի ըստ մեր ծածուկ մտադրության, լինի այն բարի, թե չար»»:

— Ժողովող 12.13,14, MSG

ա. Ի՞նչ դրական հեռանկար կարող եք ունենալ այս հատվածներից և Մատթեոս 6.1-7-ից:

_____

_____

_____

_____

բ. Ինչպե՞ս են այս խոսքերը դրդում ձեզ ապրել՝ Աստծուն հաճեցնելու համար: Ինչպիսի՞ փոփոխություններ է Տերը մղում, որ անեք ձեր կյանքում (եթե զգում եք, որ Նա մղում է ձեզ ինչ-որ բան անել):

_____

_____

_____

_____

ԽՍ 8 Տիրոջ երկյուղի ամենամեծ օրհնություններից մեկը մեղք *չգործելու* ցանկությունն է: Աստվածավախությունն ավելանալու հետ մեկտեղ նվազում է մեղանչելու ցանկությունը: Ահա թե ինչու Մովսեսն ասաց իսրայելցիներին. «Մի՛ վախեցեք: Աստված եկել է, որ փորձի ձեզ և խոր ու ակնածալի երկյուղ [*վախ*] ներշնչի ձեզ, որպեսզի դուք մեղք չգործեք» (Ելից 20.20, MSG, շեղագիրն ավելացրած է):

ա. Ի՞նչ կարծիք ունեիք մեղքի մասին մինչև այս պահը: Դուք խուսափել եք մեղքից պարզապես այն պատճառով, որ այն սխա՞լ է, թե՞ Աստծո հանդեպ երկյուղի և սիրո պատճառով, քանի որ մեղք *չգործելու* ցանկություն ունեք:

_____

_____

_____

_____

_____

_____

Հոչակել

ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Տիրոջ երկյուղը, որ տրված է մեզ Նոր ուխտում, Երկնքի հակաթույնն է ընդդեմ այն մեղքերի, որ մի ժամանակ շարունակ հետապնդում էին մեզ: Սուրբ Հոգուց տրված երկյուղը դուռ է բացում գերբնական խաղաղության և զորության համար: Աստծո թանկագին վախը պատրաստում է սիրտը՝ ստանալու համար Ուխտի մնացած բոլոր օրհնությունները… Ի՞նչ է իրականում նշանակում քայլել Տիրոջ երկյուղի մեջ: Կարճ ասած՝ այն նշանակում է՝ ինքներդ ձեզ հիշեցնել Նրա զգուշացումների մասին և թույլ տալ Սուրբ Հոգուն՝ բացահայտել ձեր մեղքերը, որպեսզի տեսնեք դրանք և հեռացնեք ձեզնից»:

— *Դեյվիդ Վիլկերսոն*[3]

բ. Մեղքի ինչպիսի՞ հետևանքներից կարող եք **խուսափել**՝ Տիրոջ ողջամիտ երկյուղ ունենալով:

_____

_____

_____

_____

Կարդացե՛ք Սաղմոս 66.16-20, Եսայի 59.1,2, Հովհաննես 9.31, Հեսու 7.11,12

«Անսպառ սերը և հավատարմությունը քավություն են անում մեղքի համար: Վախենալով Տիրոջից՝ մարդիկ խուսափում են չարից»:

—Առակաց 16.6, NLT

«Ողջ մեղքի և անհնազանդության արմատը Տիրոջ երկյուղի բացակայությունն է: Տիրոջ երկյուղը հեռու է պահում մեզ մեղքից: Այն մղում է մեզ մտերիմ շփման Աստծո հետ: Որքա՜ն ազատություն կա Տիրոջ երկյուղի մեջ»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

9 Եթե ձեր երկյուղը Տիրոջ հանդեպ հիմնված է այն պատկերացման վրա, որ ունեք Նրա մասին, ապա ինչպե՞ս կարելի է մաքուր, պարզ և ճշգրիտ պատկերացում կազմել Աստծո մասին. նայելով Հիսուսին՝ Նրա Որդուն: Հիշե՛ք, թե ինչ ասաց Հիսուսը. «Յուրաքանչյուրը, ով տեսել է Ինձ, տեսել է Հորը» (Հովհաննես 14.9, AMP):

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ

«Ոչ ոք երբևէ չի տեսել Աստծուն: Միակ Որդին, Ով ճշմարտապես Աստված է և ամենամոտն է Հորը, ցույց տվեց մեզ, թե ինչպիսին է Աստված»:

—Հովհաննես 1.18, CEV

«{*Հիսուսն ասաց*}. «Ով նայի Ինձ, իրականում նայում է Նրան, Ով ուղարկեց Ինձ»»:

—Հովհաննես 12.45, MSG

«Քրիստոսը անտեսանելի Աստծո տեսանելի պատկերն է: Նա գոյություն ուներ մինչև որևէ բանի ստեղծվելը, և գերազանց է, վեր ողջ արարչագործությունից»:

— Կողոսացիների 1.15, NLT

Հոչակել

ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Հիսուսը՝ Աստծո աննման Որդին, Նա է, Ում միջոցով Հայրը դրսևորել է Իր ողջ փառքը, լիությունը, մտադրությունը և զորությունը: …Նա Աստծո Լիության լուսապատկերի ամբողջությունն է: Նրա միջոցով Աստվածության յուրաքանչյուր կողմ բացվում է մարդկությանը: Մեր գործն է՝ ընդունել ամբողջական հայտնությունը Նրա կատարած աշխատանքի և Նրա սքանչելիքների մասին: Մեր գործն է՝ ծրարվել Նրա դրսևորումների փառավոր լուսապատկերով: Քանի որ անձամբ Հիսուսը այն Լույսն է, որի ներքո մենք տեսանք Աստծո փառքը: Նրա ամբողջական Անհատականությունը և գործերը տարածում են այն աստվածային երանգը, որն անհրաժեշտ է՝ այսօրվա աշխարհը պայծառեցնելու համար»:

— Ջեկ Հայֆորդ

«Նա {*Հիսուսը*} Աստծո փառքի միակ արտահայտությունն է [Լույս-էակը, աստվածայինի ճառագումը կամ փայլը], և Նա [Աստծո] բնության կատարյալ դրոշմը և ճշգրիտ պատկերն է»:

— *Եբրայեցիների 1.3, AMP*

«{*Անհավատները*} …բացարձակապես կույր են Քրիստոսով փայլող Ուղերձի արշալույսի պես պայծառության համար, Ով ցույց է տալիս մեզ Աստծո լավագույն պատկերը, որ երբևէ կարող ենք տեսնել»:

— *Բ Կորնթացիների 4.4, MSG*
[շեղագիրն ավելացրած է]

Լռությամբ մոտեցեք Տիրոջը: Քրիստոսին նկարագրող ինչպիսի՞ խոսքեր են հայտնվում ձեր մտքում: Գրե՛ք դրանք, իսկ հետո խնդրեք Սուրբ Հոգուն՝ հայտնել ձեզ Հիսուսին այնպես, ինչպես նախկինում երբեք չէիք ճանաչել:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

*«**Շարունակե՛ք նայել Հիսուսին**, Ով և՛ սկսեց, և՛ ավարտեց այն ասպարեզը, որը մենք անցնում ենք: **Ուսումնասիրեք, թե ինչպես Նա արեց դա**: Քանի որ Նա երբեք չկորցրեց տեսադաշտից Իր նպատակակետը, ուր գնում էր՝ ուրախության ավարտը Աստծո հետ և Աստծո մեջ, Նա կարողացավ դիմանալ այն ամենին, ինչ հանդիպեց Իր ճանապարհին՝ Խաչին, ամոթին, ցանկացած բանի: Եվ այժմ Նա այդտեղ է՝ պատվի վայրում, անմիջապես Աստծո կողքին: Երբ դուք պարզեք, որ թուլացել եք հավատքի մեջ, կրկին մաս առ մաս վերանայեք այդ պատմությունը, այն բազմաթիվ հակառակությունները, որոնցով Նա անցավ՝ ջանք գործադրելով: Դա ուժ և առույգություն կհաղորդի ձեզ»:*

— Եբրայեցիների 12.2,3, MSG
[թավատառն ավելացրած է]

Ապրող երկյուղի օրհնությունները

«Նա կօրհնի նրանց, ովքեր վախենում են Տիրոջից՝ ամենապակաս կարևորություն ունեցողից մինչև ամենակարևոր մարդուն: Թող Տերը շարունակի օրհնել ձեզ և ձեր երեխաներին: Դուք օրհնված կլինեք Տիրոջից՝ երկնքի և երկրի Արարչից»:

Սաղմոս 115.13-15, GW

«Ավելի լավ է քիչը՝ Տիրոջ երկյուղով, քան մեծ հարստությունը՝ կռիվներով: Ավելի լավ է բանջարեղենից պատրաստած ուտեստը այնտեղ, որտեղ սեր կա, քան պարարտացրած հորթը՝ ատելությունով»:

Առակաց 15.16,17, NIV

«Վախեցե՛ք Տիրոջից, դուք՝ Նրա աստվածապաշտ ժողովուրդ, որովհետև նրանք, ովքեր վախենում են Նրանից, կունենան այն ամենը, ինչի կարիքն ունեն: Նույնիսկ ուժեղ երիտասարդ առյուծները երբեմն քաղցած են, բայց նրանք, ովքեր վստահում են Տիրոջը, ոչ մի բարիքի պակասություն չեն ունենա»:

Սաղմոս 34.9,10, NLT

Շաբաթական գործունեություն

3

Հենց այնտեղ, որտեղ ապրում եք

Ի՞ՆՉ ԿՓՈԽԵԻՔ ՁԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

Մի պահ պատկերացրեք, որ Հիսուս Քրիստոսը, Իր ողջ շլացուցիչ փառքով, կանգնած է անմիջապես ձեր կողքին, և քայլում է ամենուր, ուր գնում եք: Ի՞նչ կփոխեիք ձեր կյանքում: Ի՞նչն այլ կերպ կանեիք:

- Ինչպիսի՞ ֆիլմեր չէիք դիտի կինոթատրոնում կամ տանը: Արդյո՞ք ունեք այնպիսի ֆիլմեր, որ դեն կնետեիք:

_____

_____

_____

_____

- Ինչպիսի՞ երաժշտություն չէիք լսի: Արդյո՞ք ունեք լսասկավառակներ, որոնք դեն կնետեիք:

_____

_____

_____

- Ինչպիսի՞ հեռուստատեսային և ռադիո հաղորդումներ այլևս չէիք դիտի կամ լսի:

- Ինչպիսի՞ ինտերնետային կայքեր այլևս չէիք այցելի:

- Ո՞ւմ հետ այլևս ժամանակ չէիք անցկացնի:

- Արդյո՞ք կսկսեիք այլ կերպ խոսել մարդկանց հետ, հատկապես՝ ձեր երեխաների, կնոջ և ծնողների:

- Արդյո՞ք կորոշեիք այլ կերպ անցկացնել ձեր ժամանակը: Ի՞նչ այլևս չէիք անի: *Ի՞նչ կսկսեիք անել*:

- Արդյո՞ք այլ կերպ կծախսեիք ձեր փողը:

- Կա՞ն արդյոք այլ գործեր կամ սովորություններ, որ դուք կդադարեիք կամ կսկսեիք անել: Եթե այո, ապա ի՞նչ:

Քանի որ դուք վերստին ծնված հավատացյալ եք, Հիսուսն ապրում է ձեր *ներսում*: Այդ իսկ պատճառով, Նա **իրականում** ձեզ հետ է՝ ուր էլ գնաք, լսում է այն ամենը, ինչ ասում եք, հետևում է բոլոր լրատվական նյութերին, որոնցից օգտվում եք, ժամանակ է անցկացնում յուրաքանչյուրի հետ, ում հետ շփվում եք, և այլն: Այնպես որ, մշտապես հիշե՛ք Նրա ներկայության մասին. թո՛ւյլ տվեք, որ Նրա սիրող Հոգին առաջնորդի ձեզ: Թո՛ւյլ տվեք, որ Տիրոջ երկյուղը պաշտպանի ձեզ չարից:

Շաբաթական գործունեություն

3

ՍՐԲՈՒԹՅԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆԸ

*«Տվե՛ք Տիրոջը Նրա անվան փառքը. զո՛հ բերեք և եկե՛ք Նրա առջև: Օ՜, երկրպագե՛ք Տիրոջը **սրբության գեղեցկությամբ**: Դողա՛ Նրա առջև, ամբողջ երկիր»:*

—Ա Մնացորդաց 16.29,30, NKJV
[թավատառն ավելացրած է]

Անկասկած, Աստծո ամենամեծ առանձնահատկությունը Նրա **սրբությունն** է: Նրա սրբությունն անբաժանելի է Նրա էության յուրաքանչյուր կողմից և Նրա բոլոր գործերից: Պարզապես մտածե՛ք այն ածականի մասին, որն ամենից հաճախ է օգտագործվում Սուրբ գրքում՝ Նրան բնութագրելու համար՝ *սուրբ*: Բազմաթիվ խոսքեր հաջորդաբար գովերգում են Նրա փառքը, օրինակ՝ «Փա՛ռք տվեք Նրա *սուրբ* անվանը», «Բարձրանա՛նք Նրա *սուրբ* սարի վրա», «Կանգնած *սուրբ* հողի վրա», «Մտնել *Ամենասուրբ* վայրը», «Հռչակել Նրա *սուրբ* Խոսքը», և այսպես շարունակ:

Ի՞նչ է նշանակում լինել սուրբ:

Հավատացյալի համար լինել սուրբ նշանակում է՝ լինել առանձնացված *մեղքից* և լինել առանձնացված Աստծո համար: Սրբությունը բառացիորեն նշանակում է «բարոյական *ամբողջականություն*»[5]: *Սրբություն* և *սրբացում* բառերը հունարեն հագիասմոս բառից են, և այդ պատճառով նույն իմաստն ունեն: Լինել սուրբ՝ նշանակում է լինել սրբացված, կամ՝ առանձնացված մեղքից և առանձնացված Աստծո համար, Նրա կողմից գործածվելու նպատակով[6]:

Եբրայերենում «սուրբ» թարգմանվող բառերն են՝ *կադոս, կադաս* և *կոդես*, որ հիմնականում նշանակում են *«մաքուր», «նվիրված»* և *«սրբացնել»*: Ինչպես և հունարենում, եբրայերեն բառերը, որոնք թարգմանվում են «սուրբ» և «սրբություն», նույնպես ունեն «սրբանալ» և «սրբացում» իմաստները: Այն մարդը կամ առարկան, որ սուրբ էր համարվում, «առանձնացված էր (նվիրված, և սովորաբար գործածվում էր միմիայն) Աստծուն երկրպագելու համար»[7]:

Իսրայելցիներն անվանվում էին Աստծո սուրբ ժողովուրդ՝ Աբրահամի ժառանգներ լինելու շնորհիվ: Աստված ընտրել էր Նրանց՝ դարձնելով Իրենը: Նմանապես, լինելով քրիստոնյա՝ դուք սուրբ եք *Քրիստոսի մեջ* լինելու շնորհիվ: Սա ձեր դիրքն է Հոգու մեջ: Այն պահին, երբ դուք ապաշխարեցիք ձեր մեղքերից և հրավիրեցիք Հիսուսին ձեր սրտի մեջ՝ որպես Փրկիչ և Տեր, ձեր հոգին վերստին ծնվեց և սուրբ դարձավ: Սա կոչվում է արդարացում՝ դուք այնպիսին եք, ասես երբեք չէիք մեղանչել: Ահա թե ինչ նկատի ունի Աստված, երբ ասում է. «Ուրեմն, եթե մեկը Քրիստոսում է, նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ» (Բ Կորնթացիների 5.17):

Բարեբախտաբար, սրանով Աստված չի ավարտում: Նա շարունակում է այն աշխատանքը, որ սկսեց մեր հոգում և մեր շնչի կամ անձի մեջ, որն, ըստ էության, մեր միտքն է, կամքը և զգացմունքները: Արդարացումը նշանակում է, որ մեր հոգին ակնթարթորեն վերածնվում է, իսկ սրբացումը մեր շնչի վերածնման գործընթացն է, որը տևում է ողջ կյանքի ընթացքում: Տիրոջ հետ մտերիմ շփման միջոցով մեր ցանկությունները, մտքերը և զգացմունքները փոխվում են՝ արտացոլելով **Նրա** ցանկությունները, մտքերը և զգացմունքները: Աստծո մասը այս գործընթացի մեջ՝ մեզ փոխվելու *զորություն* և *ցանկություն* տալն է: Մեր մասը՝ մեր կամքը Նրա կամքին հնազանդեցնելն է: Մենք պետք է որոշում կայացնենք՝ զիջել մեր կամքը Նրա կամքին, ամեն անգամ, երբ դրա կարիքը լինի: Աստված չի կարող կատարել մեր մասը, իսկ մենք չենք կարող կատարել Նրանը:

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ

«Եվ թող Խաղաղության Աստված ամեն կերպ սուրբ անի ձեզ, և թող ձեր ողջ հոգին և շունչը և մարմինը անմեղ մնան մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսը վերադառնա: Աստված կկատարի սա, որովհետև Նա, Ով կանչել է ձեզ, հավատարիմ է»:

— *Ա Թեսաղոնիկեցիների 5.23,24,* NLT

«Աստված է, Ով սկսել է այս բարի գործը ձեզանում, և ես համոզված եմ, որ Նա չի դադարի, քանի դեռ չի կատարել այն մինչև Քրիստոս Հիսուսի վերադարձի օրը»:

— *Փիլիպեցիների 1.6,* CEV

«Իսկ մենք չենք կարող չգոհանալ Աստծուց ձեզ համար, Տիրոջ կողմից սիրված թանկագին եղբայրներ և քույրեր: Մենք միշտ շնորհակալ ենք, որ Աստված ընտրեց ձեզ՝ լինել առաջինների թվում, ովքեր վերապրեցին փրկությունը՝ այն փրկությունը, որ եկավ Հոգու միջոցով, Ով սրբացնում է ձեզ, և ճշմարտության հանդեպ ձեր հավատքի միջոցով»:

— *Բ Թեսաղոնիկեցիների 2.13,* NLT

Առնչվող սուրբգրային հատվածներ. Փիլիպեցիների 2.12,13, Եբրայեցիների 13.20,21, Ա Պետրոս 1.2

Սուրբ դառնալու (սրբացման) ինչպիսի՞ սկզբունքներ են կրկնվում այս խոսքերում:

_____

_____

Ուրիշ ի՞նչ է Սուրբ Հոգին ցույց տալիս ձեզ այս խրախուսող խոսքերի միջոցով:

_____

_____

_____

_____

Բոբ Սորջը, ով դինամիկ հեղինակ է, օգնում է հավատացյալներին՝ ամուր փոխհարաբերություններ հաստատել Քրիստոսի հետ: Նա պարզ ու հասարակ կերպով նկարագրում է սրբությունը իր «Ծածուկ վայրի գաղտնիքները» գրքում: Նա գրում է.

> «Սրբությունը մեր ներսում եղող բնածին հատկանիշ չէ. այն ձեռքբերովի է: Սրբությունն ունի միայն մեկ աղբյուր, որը Սուրբն է: *Սրբությունը որոշվում է զահին մոտ լինելով*: Սերովբեները սուրբ են կոչվում ոչ թե այն պատճառով, թե *ովքեր* են նրանք, այլ այն պատճառով, թե *որտեղ* են գտնվում: Նրանք սուրբ են, որովհետև ապրում են Սրբի անմիջական ներկայության մեջ: Ես սուրբ եմ միայն այնքանով, որքանով բնակվում եմ Նրա սուրբ ներկայության մեջ:
>
> Ես հիմնականում սահմանում էի սրբությունն այն ամենով, ինչ մենք *չենք անում*. սակայն հիմա ես ավելի շատ սահմանում եմ սրբությունն այն ամենով, ինչ մենք *անում ենք*: Սրբությունը ձեռք է բերվում Երրորդության սուրբ կրակին մոտենալով: Այդտեղ ամեն անսուրբ բան հարդի պես այրվում է, իսկ այն ամենը, ինչ սուրբ է, բորբոքվում է կրակով և ավելի տաքանում:
>
> …Սուրբ մարդիկ ապրում են Սուրբ Հոգու ներկայության մեջ: Բավական է մեկ անգամ ճանաչես այս մտերմությունը, որպեսզի հասկանաս, որ չկա ոչինչ, ինչի համար արժե կորցնել այն: Սրբությունը շատ ավելին է, քան պարզապես բարոյական մաքրությամբ ապրելը: *Սրբությունը կյանք է, որն ապրում ես Աստծո գահի առջև*»[8]:

Կրկին կարդացե՛ք այս քաղվածքը:

Ի՞նչ կապ կարող եք տեսնել սուրբ դառնալու և Տիրոջ հետ մտերիմ փոխհարաբերություններ ունենալու միջև:

_____

_____

_____

_____

Ուրիշ ի՞նչ է Սուրբ Հոգին ցույց տալիս ձեզ այս քաղվածքից:

Սուրբ Հոգու հետ մեկտեղ, Աստված ևս մեկ անփոխարինելի պարգև է տվել՝ մեզ սրբացնելու համար: Նա տվել է Իր հրաշալի Խոսքը: Խոսքը ոչ միայն ճշգրտորեն ցույց է տալիս մեզ Աստծո պատկերը, այլև ճշգրտորեն ցույց է տալիս, թե ով ենք մենք Քրիստոսի մեջ: Սուրբ Հոգին օգտագործում է Աստծո Խոսքը՝ ձեզ սրբացնելու համար: Կարդացե՛ք այս խոսքերը և գրե՛ք, թե ինչ է Սուրբ Հոգին հայտնում ձեզ այդ մասին:

Հովհաննես 17.17, Եփեսացիների 5.26, Հակոբոս 1.21 • Հովհաննես 14.26, 16.13-15, Ա Հովհաննես 2.27

Անկասկած, ձեզ սրբացնողը ձեր ներսում ապրող **Սուրբ** Հոգին է: Եղե՛ք պատրաստ և հոժարակամ՝ Նրա հետ գործելու համար: Մշտապես սնվեք Աստծո Խոսքով և գործադրեք այն: Հնազանդեցրե՛ք ձեր կամքը Նրա կամքին: Երբ ապրեք Նրա ներկայության մեջ և հնազանդվեք Նրա մղումներին, Նա սուրբ կդարձնի ձեզ (տե՛ս Եբր. 12.10):

Իմ օրագիրը

ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ՀԻՇԵԼ

Հուսով ենք՝ դուք տեսնում եք, թե որքան կարևոր է ձեր պատկերացումն Աստծո մասին: Այն որոշում է, թե որքանով կունենաք Տիրոջ երկյուղը: Շնորհիվ Տիրոջ երկյուղի օրհնության, դուք կարող եք նմանվել Նրա փառավոր պատկերին: Ցանկանո՞ւմ եք նորոգված պատկերացում ունենալ այն մասին, թե ինչպիսին է Աստված: Սրտանց աղոթե՛ք այս աղոթքը.

Աղոթք նորոգված պատկերացման համար

Հա՛յր, խնդրում եմ, ների՛ր ինձ, որ մտքումս սխալ պատկերացումներ եմ ձևավորել Քո մասին: Հեռացրո՛ւ դրանք Քո Սուրբ Հոգու զորությամբ: Ստեղծի՛ր Քո ճշմարիտ պատկերը իմ սրտի կտավին: Տո՛ւր ինձ ցանկություն

և շնորհք [ուժ, կարողություն և զորություն]՝ սնվել Քո Խոսքով և մնալ Քո ներկայության մեջ: Ես ցանկանում եմ, որ իմ փոխհարաբերությունները Քեզ հետ մշտապես թարմությամբ և կյանքով լցված լինեն: Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր: Շնորհակալությո՛ւն, որ լսում ես և պատասխանում իմ աղոթքին... Հիսուսի անունով, ամե՛ն:

Որոշ ժամանակ հատկացրեք և մտորեք լռության մեջ: Գրի առեք այն, ինչ Սուրբ Հոգին հայտնում է ձեզ:

ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Տիրոջից վախեցողներն օրհնված են, որովհետև կարող են ճանաչել Նրան և տեսնել Նրա փառքը: Երբ ձեր կյանքում պակասում է Աստծո երկյուղը, պակասում է նաև Նրա փառքը: Մյուս կողմից՝ երբ Աստծո երկյուղը *ավելանում է* ձեր կյանքում, Նրա փառքը նույնպես *ավելանում* է և դրսևորվում ձեր միջոցով: Այնպես որ, վառ պահեք Տիրոջ երկյուղի կրակը՝ մնալով Նրա Խոսքի և ներկայության մեջ: Որքան շարունակեք նայել Հիսուսին, այնքան Աստծո պատկերն ավելի պարզ կդառնա, և Նրա փառքը ավելի ու ավելի կդրսևորվի:

(1) Մարկ Բեթերսոն. *«Վայրի սագերի որս»*, (Կոլորադո Սփրինգս, Կոլորադո, «Multnomah Books», 2008թ.), էջ 71:
(2) Ֆրենսիս Ֆրենջիֆեյն. *«Սրբություն, ճշմարտություն և Աստծո ներկայությունը»*, (Սեդար Ռեփիդս, Այովա «Arrow Publications», 1999թ.), էջ 84:
(3) Դեյվիդ Վիլկերսոն. *«Նոր Ուիսրը՝ առանց քողի»*, (Լինդեյլ, Տեխաս, «Wilkerson Trust Publications», 2000թ.), էջեր 76,77:
(4) Ջեկ Հեյֆորդ. *«Լիության ֆզիտումը»* (Դալլաս, Տեխաս, «Word Publishing», 1990թ.), էջեր 74,75:
(5) Մեջբերում *«Անգերի նոր Աստվածաշնչի բառարան»*-ից, Մերիլ Ֆ. Անգեր (Չիկագո, Իլինոյս. «Moody Press», Վերանայված և նորացված հրատարակություն, 1988թ.):
(6) Մեջբերում *«Վայնի Հին և Նոր կտակարանների բառերի ամբողջական բացատրական բառարան»*-ից, Վ. Ի. Վայն (Նեշվիլ, Տենեսի. «Thomas Nelson Publishing», 1996թ.), էջեր 307, 545, ՆԿ:
(7) Նույնը՝ էջեր 113,114, 210-213:
(8) Բոբ Սորջ, *«Ծածուկ վայրի գաղտնիքները»* (Լիս Սամիթ, Միսսուրի, «Oasis House», 2001թ.), էջեր 136,137:

Իմ նշումներդ

*«Ինչ մուրեցողներով **պիպի** սրբվեմ, և ամբողջ ժողովրդի առջև պիպի փառավորվեմ»:*

— Ղևտացիների 10.3
(թավաշառն ավելացրած է)

4

ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ, ՓԱՌՔ, ԴԱՏԱՍՏԱՆ

Խնդրում ենք օգտվել ուսումնական դասընթացի 4-րդ դասից, ինչպես նաև՝ «Տիրոջ երկյուղը» գրքի 4-րդ, 5-րդ և 6-րդ գլուխներից:

ՓԱՌՔ

Եբրայերեն «փառք» բառի սահմանումն է՝ «ինչ-որ բանի քաշը, բայց միայն փոխաբերական և դրական իմաստով»: Այն նույնպես նշանակում է շուք, վեհություն և պատիվ[1]:

«Եվ Նա ասաց. «Աղաչո՛ւմ եմ, Քո փառքը ցո՛ւյց տուր ինձ»»:

— Ելից 33.18

«Ես փնտրել եմ Քեզ, Ասրվա՛ծ... որպեսզի տեսնեմ Քո զորությունը և Քո փառքը»:

— Սաղմոս 63.2, NKJV

ԽՍ **1** Մեր սրտերը պետք է աղաղակեն՝ Աստծո փառքը տեսնելու համար, ինչպես աղաղակում էին Մովսեսը, Դավիթը և Պողոսը: Ինչպե՞ս եք ձգտում Աստծո փառքին: Ինչպե՞ս եք ներկայումս հասկանում և պատկերացնում Աստծո փառքը:

_____

_____

_____

_____

_____

«Թե՛ Հին, թե՛ Նոր կտակարաններում առկա է հետևյալ հաջորդականությունը. *աստվածային կարգ ու կանոնը, Աստծո փառքը և դատաստանը:* Մինչև Աստված հայտնի Իր փառքը, պետք է հաստատվի աստվածային կարգ ու կանոնը: Հայտնվելով Նրա փառքը՝ մեծ օրհնություններ են գալիս:
Բայց երբ Նրա փառքը հայտնվում է, ցանկացած աներկյուղ վերաբերմունք, անկարգություն և անհնազանդություն հանդիպում է անհապաղ դատաստանի»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

ԽՍ 2 Սկզբում Աստված ստեղծեց երկինքները և երկիրը: Վեց օրվա ընթացքում Նա աստվածային կարգ ու կանոն հաստատեց քաոսի փոխարեն՝ Իր ասված Խոսքի զորությամբ: Երկրի պատրաստության յուրաքանչյուր քայլի հետ Նա ավելացնում էր Իր փառքը: Մարդը դարձավ Նրա ստեղծագործության գագաթնակետը:

ա. Ըստ Ծննդոց 1.1-27-ի, պահանջվում է երկու անբաժանելի բաղադրիչ, որպեսզի քաոսը կարգ ու կանոնի վերածվի՝ Աստծո Խոսքը և Նրա Հոգին: Ի՞նչ է ասում այս պնդումը ձեզ և՛ Աստծո հետ փոխհարաբերություններ կառուցելու, և՛ ձեր կյանքում կարգ ու կանոն հաստատելու մասին:

_____
_____
_____
_____
_____

Կարդացե՛ք Զաքարիա 4.6, Երկրորդ Օրինաց 8.3

բ. Մտածե՛ք… Ի՞նչ կկատարվեր, եթե Աստված ստեղծեր բոլոր ցամաքային կենդանիներին երկրորդ օրը՝ *մինչև* բուսականությունը ստեղծելը: Կամ, եթե Նա ստեղծեր մարդուն երրորդ օրը՝ *մինչև* արևը և աստղերը ստեղծելը և Եդեմի պարտեզը տնկելը:

_____
_____
_____
_____
_____
_____

գ. Առաջին Կորնթացիների 14.40-ում գրված է. «Ամեն բան թող պարկեշտությամբ և կարգով լինի»: Ահա թե ինչպես Աստված գործեց աշխարհն արարելիս: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարգ ու կանոնը կարևոր:

_____

_____

_____

_____

3 Աստված մանրամասն կարգադրություններ տվեց Մովսեսին և Սողոմոն թագավորին այն մասին, թե ինչպես կառուցել խորանը և տաճարը, որոնցում Նա պետք է բնակվեր: Հենց որ այս սրբարանների կառուցումն ավարտվեց, հաստատվեց *կարգ ու կանոնը*. Նա լցրեց դրանք Իր փառքով:

ա. Արդյո՞ք Աստված մղում և կարգադրում է ձեզ ինչ-որ բան անել՝ ապագային պատրաստվելու համար: Եթե այո, ապա բացատրեք, թե ինչի մասին է խոսքը:

_____

_____

_____

_____

_____

բ. Ի՞նչ կարող եք ակնկալել Նրանից այն ժամանակ, երբ հնազանդությամբ կատարում եք Նրա կարգադրությունները:

_____

_____

_____

_____

գ. Կա՞ արդյոք որևէ բան, որ թույլ չի տալիս ձեզ կատարել Աստծո հանձնարարությունները: Եթե այո, ապա ի՞նչ է դա: Հանձնե՛ք դա Նրան աղոթքով, և խնդրեք Նրա շնորհքը (զորությունը), որպեսզի կատարեք այն ամենը, ինչ Նա խնդրել է ձեզ:

_____

_____

_____

_____

_____

Խ 4 Կան Աստծո փառքի դրսևորման մի շարք զուգահեռներ՝ Սողոմոնի տաճարի նավակատիքի և Պենտեկոստեի օրվա միջև: Ամենամեծ ընդհանրություններից մեկը միաբանությունն է, որը անբաժանելի է կարգ ու կանոնից: Այս գլխավոր բաղադրիչը ճանապարհ բացեց Աստծո փառքի համար:

Աստծո փառքը լցնում է Սողոմոնի Տաճարը	**Աստծո փառքը լցնում է Մարդու Տաճարը**
Բ Մնացորդաց 5.12-14	*Գործք 1.15, 2.1-4*
120 քահանաները միաբան և միաձայն փառաբանում էին Աստծուն փողերով: Այդ ժամանակ տաճարը լցվեց Աստծո փառքով:	120 աշակերտները միաբան փառաբանում էին Աստծուն աղոթքով, միաձայն: Այդ ժամանակ մարդու «տաճարը» լցվեց Աստծո փառքով:

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ

«Թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, ես ավարտում եմ իմ նամակն այս վերջին բառերով. ուրա՛խ եղեք: Աճեք՝ հասունության հասնելով: Խրախուսե՛ք մեկդ մյուսին: Ապրե՛ք ներդաշնակության և խաղաղության մեջ: Այդ ժամանակ սիրո և խաղաղության Աստված ձեզ հետ կլինի»:

— *Բ Մնացորդաց 13.11,* NLT

«Ամեն ջանք արեք, որ պահեք Հոգու միաբանությունը խաղաղության կապով (NIV): Դուք բոլորդ կանչված եք նույն ճանապարհով և նույն ուղղությամբ գնալու համար, այնպես որ, եղե՛ք միաբան, թե՛ արտաքուստ, թե՛ ներքուստ: Դուք մեկ Տեր ունեք, մեկ հավատք, մեկ մկրտություն, մեկ Աստված և բոլորի Հայրը, Ով տիրում է բոլորին, գործում է բոլորի միջոցով, և ներկա է բոլորի մեջ: Ձեր ողջ ինքնությունը և բոլոր մտքերը պետք է հագեցված լինեն Միաբանությամբ»:

— *Եփեսացիների 4.3-6,* MSG

«Վերջապես [դուք] բոլորդ պետք է մեկ լինեք և նույն միտքն ունենաք (հոգևորապես միավորված) [մեկդ մյուսի հետ], սիրելով [իրար], ինչպես [մեկ ընտանիքի] եղբայրներ, լինելով գթասիրտ և քաղաքավարի (զգայուն և խոնարհ)»:

— *Ա Պետրոս 3.8,* AMP

Առնչվող սուրբգրային հատվածներ. Փիլիպեցիների 1.27, Կողոսացիների 2.2,3

ա. Ի՞նչ է հայտնում ձեզ Սուրբ Հոգին այս խոսքերով միաբանության անհրաժեշտության մասին՝ Աստծո փառքը ևս մեկ անգամ այս երկիր հրավիրելու համար: Ինչպիսի՞ն է միաբանությունը գործնականում:

_____

_____

_____

բ. Կարդացե՛ք Սաղմոս 133-ը և պարզե՛ք, թե ինչ է Աստված խոստանում ձեզ, երբ ձգտում եք միաբանության:

> «Որքա՜ն հրաշալի է, որքա՜ն գեղեցիկ է, երբ եղբայրները և քույրերը համերաշխ են:
> Սա նման է թանկարժեք *օծման յուղի*, որը հոսում է գլխից և մորուքից, հոսում է Ահարոնի մորուքից, հոսում է նրա քահանայական զգեստի օձիքին:
> Սա նման է Հերմոն սարի *ցողին*, որը հոսում է Սիոնի լանջերով:
> Այո, ահա թե որտեղ է Աստված օրհնություն պատվիրում, հաստատում հավիտենական կյանքը:
>
> *Սաղմոս 133, MSG*
>
> —[շեղագիրն ավելացրած է]

Ըստ ձեզ, ի՞նչ է խորհրդանշում օծման յուղը, իսկ ցո՞ղը:

_____

_____

_____

_____

Ի՞նչ է Աստված *պատվիրում*, երբ մենք միաբանության ենք ձգտում: Դուք տեսնո՞ւմ եք սա ձեր կյանքում:

_____

_____

_____

_____

գ. Արդյո՞ք զգում եք, որ Սուրբ Հոգին դրդում է ձեզ անել այն, ինչը կնպաստի միաբանությանը և կավելացնի այն ձեր ամուսնության մեջ, ընտանիքում, եկեղեցում կամ աշխատավայրում: Եթե այո, ապա ի՞նչ է դա: Խնդրե՛ք, որպեսզի Նա ավելի շատ գաղափարներ տա ձեզ:

_____

_____

_____

_____

4 Մեկ այլ կարևոր բաղադրիչ, որ կարող է հրավիրել Աստծո փառքը: Խոսքը *փառաբանության* և *երկրպագության* մասին է: Սողոմոնի տաճարի նավակատիքի ժամանակ հարյուրավոր երգիչներ և երաժիշտներ առաջնորդում էին մարդկանց Աստծուն փառաբանելու մեջ: «Դու սուրբ ես, ո՜վ Դու, որ բնակվում ես Իսրայելի փառաբանության մեջ [սուրբ վայրում, որտեղ այն մատուցվում է]» (Սաղմոս 22.3, AMP):

Հոչակել
ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Փառաբանությունը ներխուժում է դժոխք և ոգեշնչում է երկինքը: Աստծուն փառաբանելիս, մենք պետք է տեսնենք ավելին, քան նոտաները կամ կատարումը: Փառաբանությունը և երկրպագությունը սիրո զորավոր դրսևորումներ են, որոնք գերազանցում են երաժշտության հնարավորությունները: Դրանք տրվել են մեզ որպես պատերազմական զենքեր, կամ՝ որպես տաք ծածկոց ցուրտ գիշերվա համար: Փառաբանությունը գերբնական միջոց է, որով մենք արտահայտում ենք մեր գոհությունը մեր Աստծուն, Ում սերը հավիտյան է: Մենք երբեք չպետք է թերագնահատենք փառաբանության և երկրպագության պարգևն ու զորությունը»:

— *Դարրին Ջեքի*[2]

Լրջորե՛ն վերաբերվեք Տիրոջը գովերգելու և փառաբանելու այս կարգադրություններին.

«Ո՞վ Տերից վախեցողներ, *օրհնե՛ք* Նրան. ո՞վ Հակոբի ամեն զավակներ, *փառավորե՛ք* Նրան և *վախեցեք* Նրանից, ո՞վ Իսրայելի բոլոր զավակներ»:

— *Սաղմոս 22.23*

«*Երգե՛ք* Տիրոջը: Փա՜ռք տվեք Տիրոջը: Նա փրկում է կարիքավորի կյանքը չար մարդկանց ձեռքերից»:

— *Երեմիա 20.13,* NIV

«*Բարձրաձայն փառաբանե՛ք* Տիրոջը: Մեր Աստված բարի է, և ճշմարիտ ու բարի է՝ Նրան փառաբանություն երգելը»:

— *Սաղմոս 147.1,* CEV

[շեղագիրն ավելացրած է]

Առնչվող սուրբգրային հատվածներ. Սաղմոս 135.1-3, 138.1-5, 146.1,2, 149

ա. Ի՞նչ է կատարվում ձեր ներսում, երբ սրտանց փառաբանում և գովերգում եք Տիրոջը: Ինչպե՞ս է դա ազդում ձեր մտքերի, խոսքերի և վերաբերմունքի վրա: Ինչի՞ վրա եք սկսում կենտրոնանալ:

_____

_____

_____

_____

Ի՞նչը թույլ չի տալիս ձեզ՝ փառաբանել Աստծուն: Հանձնե՛ք այդ բաներն Աստծուն աղոթքի միջոցով: Դրանք չեն կարող համեմատվել Նրա մեծության և զորության հետ:

_____

_____

_____

_____

Ձեր սրտում փառաբանություն առաջացնելու հրաշալի միջոց է՝ փառաբանության և երկրպագության երաժշտություն միացնել ձեր տանը կամ մեքենայի մեջ: Միացրե՛ք այնպիսի երաժշտություն, որն իսկապես դուր է գալիս ձեզ, և թույլ տվեք, որ այն հագեցնի ձեզ շրջապատող մթնոլորտը: Ձեր սիրտը կլցվի ուրախությամբ, իսկ բերանը՝ գոհությամբ և փառաբանությամբ:

բ. Սրտանց աղո՛թք գրեք Տիրոջը՝ Նրան փառք տալու համար: Արտահայտե՛ք ձեր շնորհակալությունը և սերը Նրա հանդեպ այն ամենի համար, ինչ մտաբերում եք:

Իմ փառաբանության աղոթքը

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Հոչակել
ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Շատերը մտածում են, որ կարող են գալ Աստծո մոտ և երկրպագել նրան, որովհետև Նրա գովեստին արժանի բարի գործեր են արել: Նրանք չեն կարողանում մոտենալ Նրան և երկրպագել, եթե ճիշտ վարք չեն ցուցաբերել և արել են այնպիսի բաներ, որոնք տհաճ են Աստծուն: Սակայն մենք պետք է հասկանանք, որ մեր վարքը, թե՛ լավ, թե՛ վատ, անմիջական կապ չունի Աստծուն մոտենալու հետ. «Արդ, եղբայրնե՛ր, որովհետև համարձակություն ունենք սրբարանը մտնելու Հիսուսի արյունով» (Եբրայեցիների 10.19): Այս խոսքում մեզ ասվում է, որ մենք մոտենում ենք Աստծուն միմիայն Տեր Հիսուսի արյան շնորհիվ: Ո՛չ բարի գործերը, ո՛չ նախանձավորությունը հոգևոր վերապրումների համար, չեն որակավորում մեզ՝ Աստծուն մոտենալու համար: Միայն Տեր Հիսուսի արյունն է, որ կարողություն է տալիս մեզ մոտենալ Նրան»»:

— *Վոչման Ալի*[3]

ՓԱ՛ՌՔ ՏՎԵՔ ԱՍՏԾՈՒՆ

Ի՞նչ է նշանակում «փառք տալ Աստծուն» կամ «փառավորել» Աստծուն: Փառավորել Աստծուն՝ նշանակում է «մեծարել, փառաբանել, գովաբանել և պատվել Նրան՝ հասկանալով, թե ով է Նա և ինչ է արել»: Փառաբանությունն ընդգրկում է թե՛ Նրա անհավանական հատկանիշները, թե՛ բոլոր զարմանալի գործերը, որ Նա արել է ձեր կյանքում և ողջ աշխարհում»[1]: Մենք անում ենք սա մեր շուրթերի խոսքերով և մեր կյանքի գործերով:

Խ 6 Աստծո փառքն ակնհայտորեն դրսևորվում է, երբ Նա հաղթանակ է տալիս ձեզ դժվարին իրավիճակներում: Բ Մնացորդաց 20.21-30-ում կարող եք կարդալ այն մասին, թե ինչպես փառաբանությունը և երկրպագությունը հնարավորություն տվեցին, որ Աստծո փառքը դրսևորվեր Հովսափատ թագավորի և Հուդայի ժողովրդի համար:

ա. Ի՞նչ արեց Աստված, երբ լսեց ժողովրդի փառաբանությունը:

_____

_____

_____

_____

բ. Ի՞նչ արեցին Հովսափատը և Հուդայի ժողովուրդն այն բանից հետո, երբ Աստված հաղթանակ տվեց նրանց:

_____

_____

գ. Ի՞նչ է Տերը ցույց տալիս ձեզ այս օրինակով: Ինչպե՞ս դուք կարող եք կիրառել այն ձեր կյանքում:

_____

_____

_____

_____

7 Կա ևս մեկ անփոխարինելի բաղադրիչ, որի շնորհիվ Աստծո փառքը կարող է ներխուժել երկիր. *արյան զոհաբերությունը*: Հին ուխտի ներքո Աստված կարգել էր ղևտացիներին՝ որպես քահանաներ, ովքեր պետք է կենդանական զոհաբերություններ մատուցեին՝ մարդկանց մեղքերը ծածկելու համար: Նոր ուխտի ներքո Հիսուս Քրիստոսը դարձավ մեր Քահանայապետը և զոհը՝ վերջ տալով բոլոր զոհերին: Նա դարձավ Աստծո Գառը, Ով վերցնում է աշխարհի մեղքը:

ա. Ինչո՞ւ է անհրաժեշտ արյուն թափել (զոհ մատուցել):

Կարդացե՛ք Եբրայեցիների 9.16-22 • Ղևտացիների 17.11

_____

_____

_____

_____

բ. Ինչո՞վ է Հիսուսի արյունը գերազանցում կենդանիների արյունը: Ի՞նչ է այն անում ձեզ համար:

Կարդացե՛ք Եբրայեցիների 9.12-14, 13.12 • Ա Պետրոս 1.18,19 • Ա Հովհաննես 1.7 • Հայտնություն 1.5

_____

_____

_____

գ. Կարդացե՛ք պատմությունը Հիսուսի զոհի մասին՝ ուշադրություն

դարձնելով այն ամենին, որ Նա կրեց ձեզ համար: Այս հատվածները կարդալիս արդյո՞ք ձեր սիրտը լցվում է Նրա հանդեպ շնորհակալությամբ:

Մատթեոս 26.57-75 • Եսայի 50.6, 53.3-7

_____

_____

_____

Անբիծ Աստծո Որդին տվեց Իր կյանքը մեզ համար: Սա ամենամեծ գինն էր, որ երբևէ կարող էր վճարվել մեր մեղքերի փոխարեն: Իր անչափ թանկ մահվան և փառավոր հարության միջոցով Նա ճանապարհ բացեց, որպեսզի Աստծո փառքը թափվեր մեր մեջ: Թող Նրա զոհը մշտական հիշեցում լինի այն մասին, թե որքան թանկ է Նրա փառքը, նաև այն մասին, թե որքան թանկ եք դուք Նրա համար:

Մտածե՛ք այս մասին

Հին կտակարանի ժամանակներում, Աստված կենդանական զոհաբերությունների համակարգ հաստատեց, որով մարդիկ պետք է քավեին իրենց մեղքերը և պահպանեին ճիշտ փոխհարաբերություններն Իր հետ: Կային մի քանի տեսակ զոհաբերություններ, օրինակ՝ մեղքի, հանցանքի և խաղաղության զոհեր, նաև հացի ու թափելու նվերներ, բարձրացնելու և երերացնելու ընծաներ, ողջակեզներ (կամ այրվող զոհաբերություններ), և կարմիր երինջ զոհաբերելը: Զոհաբերությունները լինում էին *տարեկան՝* յոթ հատուկ տոների ընթացքում, *ամսական՝* նորալուսնի ժամանակ, *շաբաթական՝* շաբաթ օրը, և *օրական*: Ողջակեզը կատարվում էր օրը երկու անգամ՝ առավոտյան և երեկոյան (տե՛ս Թվոց 28.3-8): Կենդանին ամբողջովին այրվում էր կրակով՝ խորհրդանշելով որևէ մարդու կամ մարդկանց խմբի ամբողջովին անձնատուր լինելը, և սրբացումը, որը լինում էր դրա հետևանքով: Ողջակեզների նպատակը՝ միմիայն Եհովայի հետ ուխտը պահպանելն էր[5]:

Այսօր՝ Նոր ուխտի ներքո, մենք այլևս ստիպված չենք կենդանիներ զոհաբերել: Մեր զարմանալի Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, դարձավ այն զոհը, որը դադարեցրեց բոլոր զոհաբերությունները (տե՛ս Եբր. 9.11-28): Նա տվեց Իր կյանքը, որպեսզի մենք կյանք ունենանք: Ինչպե՞ս մենք կարող ենք ստանալ Նրա կատարած աշխատանքի արդյունքը: *Ապաշխարության* և *մեղքերի խոստովանության* աղոթքների միջոցով (տե՛ս Ա Հովհ. 1.9): Ինչպես որ մեր արյունն է 23.5 վայրկյանը մեկ շրջանառություն կատարում մեր մարմնում, որպեսզի սնուցի և մարմնից հեռացնի ոչ մաքուր բաներն ու հիվանդությունները, այնպես էլ ապաշխարող սիրտ ունենալը թույլ է տալիս, որ Հիսուսի արյունը շրջանառություն կատարի (հոգևորապես) մեր կյանքերում: Այն սնուցում է մեր հոգին և հեռացնում մեղքի հիվանդությունը մեր շնչից կամ անձից: Ինչպիսի՜ հրաշալի Աստծո ենք ծառայում:

ԱՆԵՐԿՅՈՒՂ • ԱՆՍՈՒՐԲ • ԾԱՂՐՈՂ

Լինել *աներկյուղ*՝ նշանակում է լինել անհարգալից, ծաղրող, կոպիտ, հանդուգն, հայհոյող կամ անսուրբ: *Աներկյուղ* և *անսուրբ* բառերը միևնույն իմաստն են կրում: *Ծաղրել* բառը նշանակում է՝ շաղակրատել, ծաղրուծանակի ենթարկել, ծիծաղել ինչ-որ մեկի վրա, քմծիծաղել, հեգնել: Այն մարդը, ով աներկյուղ կամ անսուրբ է, անարգանք է ցուցաբերում կամ սովորականի պես է վերաբերվում այն ամենին, ինչը սուրբ և թանկ է Տիրոջ համար:

ԽՍ 8 Նադաբը և Աբիուդը Ահարոնի որդիներն էին և Մովսեսի զարմիկները: Նրանք Աստծո օծված և ընտրյալ առաջնորդներն էին: Սակայն սկսեցին սովորականի պես վերաբերվել Աստծուն և Նրա ներկայությանը՝ կորցնելով իրենց երկյուղը Աստծո հանդեպ: Հպարտության պատճառով նրանք անտեսեցին Աստծո կարգադրություններն այն մասին, թե ինչպես էր պետք խունկ մատուցել Նրան, և կատարեցին այդ գործն *իրենց ձևով* (տե՛ս Ղևտ. 10.1,2): Արդյունքում նրանք անմիջապես դատաստանի ենթարկվեցին:

ա. Արդյո՞ք երբևէ *սովորականի պես* եք վերաբերվել Տիրոջը կամ աներկյուղ վերաբերմունքով եք եկել Նրա ներկայության մեջ: Երբևէ անտեսե՞լ եք այն, ինչ Նա պատվիրել է ձեզ: Եթե այո, ապա ինչպե՞ս:

_____

_____

_____

_____

բ. Ինչի՞ վրա կարող եք կենտրոնանալ, որպեսզի մշտապես հիշեք ձեր սրտում Աստծո մեծության մասին, և մնաք ճիշտ փոխհարաբերությունների մեջ Նրա հետ:

_____

_____

_____

_____

գ. Ի՞նչ է Սուրբ Հոգին հայտնում ձեզ Նադաբի և Աբիուդի օրինակի միջոցով:

_____

_____

_____

_____

9 Այսօր՝ Նոր ուխտի ներքո, Աստված բնակվում է մարդկանց սրտերում: Սա այն հաղորդակցությունն է, որը Նա ցանկանում էր ունենալ մեզ հետ հենց ամենասկզբից: Յուրաքանչյուրը, ով հավատում է Քրիստոսին և ընդունում Նրան իր սրտում, դառնում է *Սուրբ Հոգու տաճար*, որտեղ Նա բնակվում է: Ինչպիսի՜ զարմանալի արտոնություն և պատասխանատվություն:

Մտորե՛ք այս խոսքի շուրջ

«Չե՞ք հասկանում, որ ձեր մարմինը Սուրբ Հոգու տաճարն է, Ով ապրում է ձեզանում և տրվել է ձեզ Աստծո կողմից: Դուք չեք պատկանում ինքներդ ձեզ, որովհետև Աստված մեծ գնով գնել է ձեզ: Այնպես որ դուք պետք է պատվեք Աստծուն ձեր մարմնով»:

— *Ա Կորնթացիների 6.19,20, NLT*

«Ո՞ւմ մտքով կանցներ հեթանոսական կուռքեր դնել Աստծո սուրբ Տաճարում: Բայց մենք հենց այդպիսին ենք՝ յուրաքանչյուրս տաճար է, ում մեջ Աստված է բնակվում: Անձամբ Աստված այսպես ասաց. «Ես կապրեմ նրանց մեջ՝ կտեղափոխվեմ նրանց ներսը. Ես կլինեմ նրանց Աստվածը, և նրանք կլինեն Իմ ժողովուրդը: Այնպես որ, թողե՛ք անբարոյությունը և փոխզիջումը. մշտապես թողե՛ք այն»,- ասում է Աստված:- «Մի՛ կապվեք նրանց հետո, ովքեր կպղծեն ձեզ: Ես ցանկանում եմ, որ դուք ամբողջովին Ինձ համար լինեք / Իմը լինեք: Ես կլինեմ ձեր Հայրը, դուք կլինեք Իմ որդիները և դուստրերը»: Տիրոջ՝ Աստծո Խոսքը»»:

— *Բ Կորնթացիների 6.16-18, MSG*

«Այսպիսով, թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, ես աղաչում եմ ձեզ, որ դուք ձեր մարմինները տաք Աստծուն այն ամենի շնորհիվ, որ Նա արել է ձեզ համար: Թո՛ւյլ տվեք, որպեսզի դրանք կենդանի և սուրբ զոհ լինեն՝ այնպիսիք, որ Նա ընդունելի կհամարի: Սա է Նրան ճշմարտապես երկրպագելու միջոցը»:

— *Հռոմեացիների 12.1, NLT*

Հոչակել
ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Անկասկած՝ Նոր կտակարանը սովորեցնում է, որ Աստված անձամբ բնակվում է Իր ճշմարիտ զավակների ներսում: Ես չգիտեմ, թե ինչպես սա կարող է լինել, բայց ես նույնպես չգիտեմ, թե ինչպես է իմ շունչը բնակվում իմ մարմնի մեջ: Պողոսը մեծ առեղծված անվանեց Աստծո ներբնակության հրաշքը. «Քրիստոսը ձեզանում՝ այն փառքի հույսը»: …Ինչպիսի՞ բնակություն է հաճելի Աստծուն: Ինչպիսի՞ն պետք է լինի մեր բնավորությունը, որպեսզի Նա կարողանա հարմարավետ զգալ Իրեն մեր ներսում: Նա ոչինչ չի խնդրում. միայն մաքուր սիրտ և ոչ նենգ, պարզ միտք: Նա չի խնդրում թանկարժեք տախտակածածկ, արևելյան գորգեր, արվեստի գլուխգործոցներ հեռավոր երկրներից: Նա միայն ցանկանում է անկեղծություն, բաց սիրտ, խոնարհություն և սեր: Մնացածի մասին Նա Ինքը կհոգա»:

— *Է. Ու. Թոպեր*

ա. Արդյո՞ք այս խոսքերը մարտահրավեր են նետում ձեզ՝ դրդելով հոգալ ձեր մարմնի (Աստծո տաճարի) մասին: Ստուգե՛ք ձեր կյանքի բոլոր բնագավառները. ինչպե՞ս եք սնուցում ոչ միայն ձեր բնական մարմինը, այլ նաև ձեր շունչը և հոգին:

_____
_____
_____
_____
_____

բ. Արդյո՞ք Աստված մղում է ձեզ՝ «փոփոխություններ» անել ձեր կյանքում: Եթե այո, ապա ի՞նչ է Նա խնդրում:

_____
_____
_____
_____
_____

«Ես ցանկանում եմ խրախուսել ձեզ, որ մինչև աղոթելը անեք այն, ինչ Հիսուսն ասաց «Հայր մեր» աղոթքի մեջ: Ժամանակ հատկացրեք մտորելու համար Հայր Աստծո վեհության և մեծության մասին, Ում դուք կանչում եք: Ասե՛ք. «Հա՛յր մեր, որ Երկնքում ես, Սուրբ լինի Քո անունը», Նա ձեր Հայրն է, բայց Նա նույնպես մաշող կրակ է»»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

«Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ ունենք մենք. անշարժ թագավորություն: Եվ տեսնո՞ւմ եք, թե որքան շնորհակալ պետք է լինենք: Ոչ միայն շնորհակալ, այլև լցված երկրպագությամբ, իսոր երկյուղով Աստծո առջև: Որովհետև Աստված անտարբեր դիտորդ չէ: Նա գործուն կերպով մաքրում է Իր տունը՝ այրելով այն ամենը, ինչը պետք է այրված լինի, և չի դադարի, մինչև որ ամբողջը մաքրված չլինի: ***Ինքը՝ Աստված, Կրակ է****»:*

— Եբրայեցիների 12.28,29, MSG
[թավատառն ավելացրած է]

10 Տիրոջ փառքն իսկապես երկյուղ է ներշնչում: Սուրբ գրքում ասվում է, որ Նա *մաշող կրակ* է [7]: Հին կտակարանի ժամանակներում Աստծո կրակը

բնակվում էր Խորանում և Տաճարում: Նոր ուխտում Աստծո *կրակը* բնակվում է մարդու հոգու *մեջ*: Այս արտառոց երևույթն առաջին անգամ տեղի ունեցավ Պենտեկոստեի օրը:

> *Հոչակել*
> ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ
>
> «Յուրաքանչյուրիս սրտում ԿՐԱԿ կա ինչ-որ բանի համար: Մեր կյանքի նպատակն է՝ գտնել և պահպանել այն»:
>
> — *Մարի Ֆու Ռեթոն*[8]

ա. Մտածե՛ք այս մասին: Ինչպիսի՞ դրական բաներ կարող է անել կրակը: Ինչպե՞ս դա կարող է առնչվել Աստծո կրակի հետ, որ ձեր ներսում է:

Կրակի դրական հատկանիշները	**Դրանց հոգևոր նշանակությունը**

բ. *Մտորե՛ք այս խոսքերի շուրջ* և գրե՛ք, թե ինչ են դրանք հայտնում ձեզ:

«Մարդու հոգին Տիրոջ *ճրագն* է, որ քննում է նրա էության բոլոր ծածուկ մասերը»:

— *Առակաց 20.27,* NASB

«Որովհետև *Դու լուսավորում ես իմ ճրագը.* Տերը՝ իմ Աստվածը, լուսավորում է իմ խավարը»:

— *Սաղմոս 18.28,* NASB

[շեղագիրն ավելացրած է]

Հովհաննեսը մկրտեց ջրով, բայց Հիսուսը մկրտում է մեզ Իր Սուրբ Հոգով և կրակով (տե՛ս Մատթ. 3.11): Արդյո՞ք դուք ստացել եք Աստծո ներկայության այս զարմանալի դրսևորումը: Նա պատրաստ է և կամենում է տալ ձեզ այս պարգևը. դուք պետք է միայն խնդրեք: Հիսուսն ասաց. «Հայրե՛ր, ձեզնից ո՞վ օձ կտա իր քաղցած երեխային, եթե ձեր երեխան ձուկ խնդրի: Ձեզնից ո՞վ կարիճ կտա իր երեխային, եթե ձեր երեխան ձու խնդրի: Թեև դուք չար եք, միևնույն է՝ դուք գիտեք, թե ինչպես բարի պարգևներ տալ ձեր երեխաներին: *Բայց ձեր երկնային Հայրը առավել ևս պատրաստ է տալ Սուրբ Հոգին յուրաքանչյուրին, ով խնդրի»* (Ղուկաս 11.11-13, CEV, շեղագիրն ավելացրած է):

Եթե դուք խնդրեք Սուրբ Հոգին, դուք *կստանաք* Սուրբ Հոգին: Գործք առաքելոցի 2.4-ում գրված է. «Եվ ամենքը Սուրբ Հոգով լցվեցին և սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ Հոգին նրանց խոսել էր տալիս»: *Խոսք* բառը նշանակում է՝ «վանկեր, հնչյուններ կամ բառեր»: Այն բանից հետո, երբ դուք աղոթեք, դուք հավանաբար կզգաք որևէ վանկ, հնչյուն կամ բառ, որ բարձրանում է ձեր հոգու ներսից կամ պտտվում ձեր մտքում: Թեև այդ զգացումը կարող է թույլ լինել, և դուք անհարմար կզգաք ձեզ, միևնույն է՝ ԽՈՍԵՔ ԱՅՆ: Դա Սուրբ Հոգին է: Նա է տալիս ձեզ այդ խոսքը, բայց դուք պետք է ՁԻՋԵՔ ձեր շուրթերը, լեզուն և ձայնալարերը, որպեսզի խոսեք այն, ինչ Նա տալիս է ձեզ:

Եթե դուք ցանկանում եք ստանալ այս պարգևը, որ Սուրբ Հոգին տալիս է, սրտանց աղոթեք՝ հավատալով, որ կստանաք այն, ինչ խնդրում եք:

Հա՛յր, ես գալիս եմ Քեզ մոտ Հիսուսի անունով և խնդրում եմ Քեզնից Քո Սուրբ Հոգու պարգևը: Խնդրո՛ւմ եմ, ների՛ր ցանկացած մեղք, որը թույլ չի տա ընդունել Նրան. լվա՛ և մաքրի՛ր ինձ Հիսուսի արյունով: Եթե ես չներում ունեմ ոմանց հանդեպ, ապա որոշում եմ կայացնում՝ բաց թողնել այդ մարդկանց և օրհնել նրանց:

Այժմ, որպես Քո զավակ՝ ես խնդրում եմ Քեզնից Սուրբ Հոգու պարգևը, որ Դու խոստացել ես: Հիսուսն ասաց, որ եթե ես խնդրեմ Քեզնից Սուրբ Հոգին, Դու Նրան կտաս ինձ: Ես չեմ կարող բավականաչափ լավը լինել՝ Նրան վաստակելու համար. Քո միակ պահանջը խնդրելն է: Խնդրո՛ւմ եմ, մկրտի՛ր ինձ Քո Սուրբ Հոգով և կրակով: Ես ընդունում եմ այն ամենը, ինչ Դու ցանկանում ես տալ ինձ՝ ներառյալ նոր լեզվով խոսելու կարողությունը, ինչպես որ մարդիկ խոսում էին Գործք առաքելոց գրքում: Այժմ ես հավատքով ընդունում եմ Նրան: Ես հավատում եմ, որ Քո փառքը նորովի կդրսևորվի իմ կյանքում և իմ միջոցով... Հիսուսի անունով, ամե՛ն:

Որոշ ժամանակ տրամադրեք և գրեք, թե ինչ վերապրեցիք և ինչ խոսեց Նա ձեր սրտին:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Հոչակել
ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Տերը ցանկանում է, որ բոլոր փրկվածները զորություն ստանան ի Վերուստ. զորություն՝ վկայելու, զորություն՝ գործելու, զորություն՝ ապրելու, և զորություն՝ հայտնելու Աստծո գերբնական դրսևորումները, որոնք մեր ներսում են: Աստծո զորությունը ձեզ դուրս կբերի ձեր ծրագրերից և կդնի Աստծո ծրագրի մեջ... Դուք այլևս չեք գործի՝ ձեր ծրագրերը կատարելու համար. փոխարենը Աստված կգործի ձեր մեջ և ձեր միջոցով, որպեսզի կատարի Իր բարի և հաճելի կամքը այն Հոգու զորությունով, որ ձեր ներսում է»:

— *Սմիթ Վիգլսվորթ*[9]

Աստծո երկյուղի օրհնություններ

«Ահա, Տիրոջ աչքը նրանց վրա է, ովքեր վախենում են Նրանից [ովքեր երկյուղած են և երկրպագում են Նրան ակնածանքով], ովքեր սպասում են Նրան և հույս ունեն, որ Նրա ողորմությունը և գթությունը կազատեն իրենց մահից և կենդանի կպահեն սովի ժամանակ»:

Սաղմոս 33.18,19, AMP

«Տիրոջ վախի մեջ զորեղ վստահություն կա, և Նրա որդկանց համար ապավեն պիտի լինի: Տիրոջ երկյուղը կենաց աղբյուր է՝ մահվան որոգայթներից խույս տալու համար»:

Առակաց 14.26,27

«Տիրոջ երկյուղը դեպի կյանք է տանում, և մարդը, ով ունի այն, կբնակվի բավականությամբ. չարը չի այցելի նրան»:

Առակաց 19.23, NKJV

Շաբաթական գործունեություն

4

Հենց այնտեղ, որտեղ ապրում եք

ՊԱՏՐԱՍՏՎԵ՛Ք... ԸՆԿԵՐՆԵՐԸ ԳԱԼԻՍ ԵՆ

*«Այսպես է ասում Տերը՝ **կարգի՛ բեր քո տունը**...»:*

—Եսայի 38.1, NIV

[թավատառն ավելացրած է]

Ի՞նչ եք անում, երբ իմանում եք, որ ձեր ընկերներն այցելելու են ձեզ: Դուք կարգի եք բերում ձեր տունը: Դուք ամեն ինչ կարգավորում եք, որպեսզի *պատրաստ լինեք* ձեր հատուկ հյուրերի այցելությանը: Հովհաննես Մկրտիչը եկավ, որպեսզի պատրաստեր Տիրոջ ճանապարհը: Նա է ամենամեծ հյուրը, Ում մենք կարող ենք ընդունել մեր կյանքում: Կարդացե՛ք այս հատվածը և լսե՛ք, թե ինչպես է Սուրբ Հոգու ձայնն աղաղակում ձեր հոգուն...

Պատրաստե՛ք Տիրոջ ճանապարհը

«Անապատի մեջ կանչողի ձայնը, պատրաստե՛ք Տիրոջ ճանապարհը և ուղիղ արեք ամայության մեջ շավիղը մեր Աստծո համար: Ամեն ձոր բարձրանա, և ամեն սար ու բլուր ցածրանա, և ծուռը ուղիղ դառնա, և խորդուբորդ տեղերը՝ հարթահատակ: Եվ պիտի հայտնվի Տիրոջ փառքը, և ամեն մարմին միասին պիտի տեսնեն. որովհետև Տիրոջ բերանն է խոսել»:

— Եսայի 40.3-5

ՁԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ...

- Ո՞ր բնագավառներն են ՁՈՐԻ նման, որ պետք է բարձրանան:
  Արդյո՞ք կան այնպիսի բնագավառներ ձեր կյանքում, որտեղ դուք անկարևոր, մերժված, իայտրառակված կամ դատապարտված եք զգում ձեզ:

  _____

  _____

  _____

- Ո՞ր բնագավառներն են նման ՍԱՐԻ, որ պետք է ցածրանան:
  Արդյո՞ք կան այնպիսի բնագավառներ ձեր կյանքում, որտեղ դուք հպարտություն ունեք, որը պետք է փոխարինվի խոնարհությամբ:

  _____

  _____

  _____

- Ո՞ր բնագավառներն են ԾՈՒՌ և շտկման կարիք ունեն:
  Արդյո՞ք կան այնպիսի բնագավառներ ձեր կյանքում, որտեղ դուք չեք քայլում ամբողջական ճշմարտության մեջ՝ բնագավառներ, որտեղ դուք փոխզիջման եք գնացել կամ խաբված եք:

  _____

  _____

  _____

- Ո՞ր բնագավառներն են ԽՈՐԴՈՒԲՈՐԴ և հարթեցման կարիք ունեն:
  Արդյո՞ք կան այնպիսի բնագավառներ ձեր կյանքում, որտեղ դուք անհամբեր և ոչ հասուն եք, կամ ավելի շատ ինքնավերահսկման կարիք ունեք:

  _____

  _____

  _____

ԸՆԴՈՒՆԵ՛Ք, որ աճելու տեղ ունեք ձեր կողմից նշված բնագավառներում:
Խոնարհությունը դուռ է բացում Աստծո ողորմության և շնորհքի համար:
Նորովի ՀՆԱԶԱՆԴՎԵ՛Ք Տիրոջը՝ ապաշխարելով ցանկացած մեղքից և ընդունելով Նրա ներումը:
Աղոթքով ՀԱՆՁՆԵ՛Ք Նրան ձեր նշած բնագավառները և նորոգե՛ք ձեր միտքը Նրա Խոսքի ճշմարտությունով:

Ընկերները գալիս են: Պատրաստվե՛ք: Հանձնվե՛ք Տիրոջը, և Նա կօգնի ձեզ՝ կարգի բերել ձեր հոգևոր տունը և պատրաստվել, որպեսզի նորովի լցվեք Նրա փառքով:

Շաբաթական գործունեություն

4

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎԸ

*«Որովհետև աստվածային տրտմությունը և այն ցավը, որ Աստված թույլ է տալիս, **ապաշխարություն** են գործում, ինչն առաջնորդում և նպաստում է փրկությանը և ազատագրմանը չարից, և երբեք զղջում չի բերում. բայց աշխարհի տրտմությունը (անհույս տխրությունը, որը բնորոշ է հեթանոսական աշխարհին), մահացու է [հարուցում է մահ և ավարտվում է մահով]»:*

—Բ Կորնթացիների 7.10, AMP
[թավատառն ավելացրած է]

Կան մի շարք բառեր, որոնք մտաբերում եք, երբ մտածում եք քրիստոնեական հավատքի մասին, օրինակ՝ սեր, ողորմություն, շնորհք և ներում: Սակայն կա ևս մեկ բառ, որը չի կարելի անտեսել: Այն կենսատու կապ է, որը կրկին միավորում է Աստծուն և մարդուն՝ ճշմարիտ փոխհարաբերություն հաստատելով: Խոսքը ապաշխարության պարգևի մասին է: Ապաշխարությունը այն սկզբնական քայլն է, որը կարգ ու կանոն է բերում մեր կյանքի քաոսի մեջ: Այն նույնպես շարունակական գործողություն է, որը պահպանում է կարգ ու կանոնը: Ապաշխարությունը ընդհանրացնում է Հովհաննես Մկրտչի պատրաստության ծառայության ողջ նպատակը: Այս ծառայությունն այնքան կարևոր է, որ հիշատակված է բոլոր չորս Ավետարաններում: «**Ապաշխարե՛ք** ձեր մեղքերից և դարձե՛ք Աստծուն, որովհետև Երկնքի արքայությունը մոտ է» (Մատթեոս 3.2, NLT, թավատառն ավելացրած է):

Ի՞նչ է ապաշխարությունը

Ապաշխարությունն նշանակում է փոխել ուղղությունը: Այն հունարեն *մետանոյա* բառն է, որը նշանակում է «մտափոխություն»: Ճշմարիտ ապաշխարությունը բեկումնային շրջադարձն է մեր սրտում՝ **մեղքից դեպի Աստված**[10]: Հիսուսի «Անառակ որդու» մասին առակն իրական ապաշխարության կատարյալ օրինակ է (տե՛ս Ղուկ. 15.11-24):

Ապաշխարությունը պատճառ է ուրախանալու համար: Հիսուսն ասաց. «…երկնքում ավելի շատ ուրախություն կլինի մեկ մեղավորի համար, ով ապաշխարում է, քան իննսունինը արդար մարդկանց համար, ովքեր ապաշխարության կարիք չունեն» (Ղուկաս 15.7, NIV): Ինչպիսի՜ պարգև է սրտանց ապաշխարելը՝ ոչ միայն ընդունել, որ մենք սխալ ենք գործել, այլ նույնպես ունենալ ցանկություն և զորություն՝ փոխելու մեր սիրտը և միտքը դեպի ճշմարտությունը: Աստծո շնորհքով է, որ մենք ունենք ապաշխարելու և սուրբ կյանքով ապրելու զորությունը (տե՛ս Եբր. 12.28):

Խնդրում եմ, հասկացե՛ք, որ սխալների խոստովանությունը և զղջումը իրական ապաշխարություն չէ: Աստվածաշնչում շատ մարդիկ կան, ովքեր խոստովանեցին իրենց մեղքը, բայց ճշմարտապես չապաշխարեցին: Մտածե՛ք այս մասին…

Փարավոնն ասաց. «Ես մեղանչեցի» (տե՛ս Ելից 10.16):

Բաղաամն ասաց. «Ես մեղանչեցի» (տե՛ս Թվոց 22.34):
Աքարն ասաց. «Ես մեղանչեցի» (տե՛ս Հեսու 7.20):
Սավուղն ասաց. «Ես մեղանչեցի» (տե՛ս Ա Թագ. 15.24,30):
Հուդան ասաց. «Ես մեղանչեցի» (տե՛ս Մատթ. 27.4):

Սակայն, այս մարդկանցից ոչ ոք ճշմարտապես չապաշխարեց: Նրանք պարզապես խոստովանեցին իրենց սխալը:

Ի՞նչ է խոստովանությունը

Խոստովանությունը հունարենում բառացիորեն նշանակում է «ասել նույն բանը»: Այն *հոմոլոգեո* բառից է: Երբ խոստովանում ենք Աստծուն մեր մեղքերը, մենք համաձայնում ենք Նրա հետ՝ Նրա հետ միասին ասելով, որ մեր արածը սխալ էր: Սա մեր մեղքը ընդունելը կամ գիտակցելն է[11]:

Թող սա չշփոթեցնի ձեզ. խոստովանությունը կարևոր է: Այն ապաշխարության սկզբնակետն է: Բայց Աստված չի ցանկանում, որ մենք կանգ առնենք այստեղ: Այն բանից հետո, երբ մենք գիտակցում, ընդունում և խոստովանում ենք մեր մեղքը, Նա ցանկանում է, որ մենք ապաշխարենք: Նա տալիս է մեզ աստվածային տրտմության պարգևը, որի շնորհիվ մենք կարողություն ենք ստանում փոխել մեր միտքը և սիրտը, *շրջվել մեղքից՝ դեպի Նա*: Ինչո՞ւ: Որովհետև Նա սիրում է մեզ և փափագում է անխախտ շփում ունենալ մեզ հետ:

Կարդացե՛ք այն մասին, թե ինչպես ապաշխարեցին Դավիթը և Անառակ որդին (տե՛ս Սաղմ. 51, Ղուկ. 15.11-24): Ճշմարիտ ապաշխարության ինչպիսի՞ տարրեր եք նկատում՝ կարդալով յուրաքանչյուրի սրտի աղաղակի մասին:

_____
_____
_____
_____
_____
_____
_____

«Եթե դուք քարոզեք Ավետարանն առանց ապաշխարության մկրտության, կստանաք մի եկեղեցի, որը կառուցված է երերուն, անհաստատ և չհարթեցրած հիմքի վրա: Արդյունքում այն նշան և առակ է դառնում, որի վրա ծիծաղում են և, որի մասին խոսում են հետագա սերունդները: Ահա թե ինչու են մեզ անհրաժեշտ այնպիսի քարոզիչներ, ովքեր ոչ միայն կքարոզեն Ավետարանի բարի լուրը, այլ նույնպես Ավետարանի պահանջը, որն ապաշխարության մկրտությունն է»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ

«Եթե մենք [սրտանց] ընդունենք, որ մեղանչել ենք, և *խոստովանենք* մեր մեղքերը, Նա հավատարիմ և արդար է (հավատարիմ Իր բնությանը և խոստումներին), և կների մեր մեղքերը [կհեռացնի մեր անօրենությունները] և [շարունակաբար] կմաքրի մեզ ամեն անարդարությունից [այն ամենից՝ մեր դիտավորությունների, մտքերի և գործերի մեջ, որոնք չեն համապատասխանում Նրա կամքին]»:

— *Հովհաննես 1.9, AMP*

«Եվ եթե այդ ազգը, ում Ես զգուշացրի, *ապաշխարի* իր չարությունից, այդ ժամանակ Ես կզղջամ և չեմ հասցնի նրան այն արհավիրքը, որ ծրագրել էի»:

— *Երեմիա 18.8, NIV*

«Նա, ով թաքցնում է իր մեղքերը, չի բարգավաճի, բայց ով *խոստովանի* և ուրանա դրանք, ողորմություն կգտնի: Օրհված է այն մարդը, ով մշտապես *վախենում է Տիրոջից*, բայց նա, ով խստացնում է իր սիրտը, փորձանքի մեջ է ընկնում»:

— *Առակաց 28.13,14, NIV*

«Երբ ես հրաժարվեցի *խոստովանել* իմ մեղքը, մարմինս տկարացավ, և ես հառաչում էի ողջ օրը: Ցերեկ ու գիշեր Քո խրատի ձեռքը ծանրացած էր ինձ վրա: Իմ զորությունը գոլորշիացել էր, ինչպես ջուրը ամառային տապին: Վերջապես ես խոստովանեցի Քեզ իմ բոլոր մեղքերը և դադարեցի իմ հանցանքը թաքցնելու փորձերը: Ինքս ինձ ասացի. «Ես կխոստովանեմ իմ ապստամբությունը Տիրոջը»: Եվ դու ներեցիր ինձ: Իմ ամբողջ հանցանքը հեռացել է: Այդ իսկ պատճառով, թող բոլոր աստվածապաշտ մարդիկ աղոթեն Քեզ, քանի դեռ ժամանակ կա, որպեսզի նրանք չխեղդվեն դատաստանի ջրերի մեջ»:

— *Սաղմոս 32.3-6, NLT*

Ըստ ձեզ, ինչո՞ւ է ապաշխարությունը Աստծուց տրված *պարգև*:

_____

_____

_____

Ուրիշ ի՞նչ է Տերը հայտնում ձեզ ապաշխարության և խոստովանության մասին այս խոսքերի միջոցով:

_____

_____

_____

_____

Փա՜ռք Աստծուն Իր բարության համար: Որովհետև հենց դա է առաջնորդում մեզ ապաշխարության (տե՛ս Հռոմ. 2.4): Նրա Հոգին, Ով ապրում է մեզանում, *հանդիմանում* է մեզ մեղքի մեջ՝ տալով ներքին մղում *խոստովանելու* և *ապաշխարելու* համար (տե՛ս Հովհ. 16.8): Հիշեք՝ մեղքը բաժանում է, իսկ ապաշխարությունը կրկին միավորում է՝ վերադարձնելով մեր սրտերը և մտքերը Աստծո մոտ: Ինչո՞ւ է նա հանդիմանում մեզ: Ինչո՞ւ է Նա պատվիրում մեզ՝ խոստովանել մեր մեղքերը և ապաշխարել: Որովհետև Նա սիրում է մեզ և փափագում է շփվել մեզ հետ: Հիսուսն ասում է. «Նրանց, ում [ջերմորեն և քնքշորեն] սիրում եմ, Ես ցույց եմ տալիս նրանց ձախողումները և **հանդիմանում**, և համոզում, և կշտամբում, և խրատում եմ [Ես դաստիարակում և սովորեցնում եմ նրանց]: Այնպես որ, լրջացե՛ք, լցվեք նախանձավորությամբ և **ապաշխարե՛ք** [փոխելով ձեր միտքը և վերաբերմունքը]» (Հայտնություն 3.19, AMP, թավատառն ավելացրած է):

Ապաշխարության աղոթք

Հա՛յր, շնորհակալությո՛ւն Քո ողորմության, բարության և համբերության համար: Շնորհակալությո՛ւն Քո հանդիմանության և ապաշխարության պարգևի համար: Խնդրում եմ, ների՛ր ինձ, որ Քեզ, Քո ներկայությանը կամ Քո սուրբ բաներին անարկյուղ կերպով եմ վերաբերվել: «Մաքրի՛ր ինձ իմ մեղքերից, և ես մաքուր կլինեմ. լվա՛ ինձ, և ես ձյունից սպիտակ կլինեմ: Օ՜, վերադարձրո՛ւ ինձ իմ ուրախությունը. Դու կոտրել ես ինձ, իսկ հիմա թո՛ւյլ տուր, որ ես ցնծամ: Մի՛ շարունակիր նայել իմ մեղքերին: Հեռացրո՛ւ իմ հանցանքի բիծը: Ստեղծի՛ր ինձանում մաքուր սիրտ, ո՜վ Աստված: Նորոգի՛ր անձնվիրության հոգին ինձանում: Մի՛ վտարիր ինձ Քո ներկայությունից, և մի՛ վերցրու Քո Սուրբ Հոգին ինձնից: Վերականգնի՛ր իմ մեջ Քո փրկության ուրախությունը, և հոժար դարձրու ինձ՝ Քեզ հնազանդվելու համար» (Սաղմոս 51.7-12, NLT): Օգնի՛ր ինձ՝ երբեք այնքան հասարակ չհամարել Քեզ, որ վերաբերվեմ Քեզ սովորականի պես: Ես ողջունում եմ Քեզ, որ հարմարավետ զգաս Քեզ ինձանում՝ Քո տաճարի մեջ... Հիսուսի անունով, ամե՛ն:

Իմ օրագիրը

ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ՀԻՇԵԼ

«Դուք չեք կարող ճշմարտապես վախենալ Տիրոջից, քանի դեռ չեք ճգտում հասկանալ, թե որքան մեծ է Նրա փառքը: Շատ կարևոր է ոչ միայն խոսել Աստծո փառքի մասին, այլ նույնպես՝ փնտրել այն: Մովսեսը, Դավիթը և Հովհաննեսը սրտանց աղաղակում էին դրա համար: Մենք նույնպես պետք է սրտանց աղաղակենք Աստծո փառքի համար»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Արդյո՞ք Սուրբ Հոգին բացեց ձեր աչքերը՝ ցույց տալով այն բնագավառները ձեր կյանքում, որոնցում կարգ ու կանոն չկա: Եթե այո, պատճառն այն է, որ Նա սիրում է ձեզ և չի ցանկանում, որ ձեր և Իր միջև որևէ խոչընդոտ լինի: Մի քանի րոպեի ընթացքում աղոթեք և կիսվեք Նրա հետ ձեր սրտից: Խոստովանե՛ք ցանկացած մեղք, ապաշխարե՛ք Նրա շնորհքով և ընդունե՛ք Նրա ներումը, որ Նա տալիս է Իր սիրո շնորհիվ: Չմոռանաք գրի առնել այն նոր մտքերը, որ Նա հայտնում է ձեզ:

ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Կա մի հաջորդականություն, որը կրկնվում է ամբողջ Սուրբ գրքում, ըստ որի Աստված բերում է *աստվածային կարգ ու կանոնը, փառքը*, այնուհետև՝ *դատաստանը*: Մինչև Աստված դրսևորի Իր փառքը, պետք է աստվածային կարգ ու կանոն հաստատվի: Հենց որ հայտնվում է Նրա փառքը, մեծ օրհնություններ են գալիս, բայց դատաստանը ցանկացած աներկյուղ վերաբերմունքի կամ անպատվության համար նույնպես արագ է հասնում: Հին կտակարանի ժամանակներում Աստծո փառքը լցնում էր խորանը և տաճարը, իսկ այսօր Նրա փառքը լցնում է մարդուն, ով Սուրբ Հոգու տաճարն է: Հիսուս Քրիստոսի զոհը հնարավոր է դարձնում Աստծո փառքի դրսևորումը և կրկին միավորում է մեզ Աստծո հետ՝ ճշմարիտ փոխհարաբերություն հաստատելով:

(1) Ջոն Բիվեր. *«Տիրոջ երկյուղը»*, (Լեյք Մերի, Ֆլորիդա, «Charisma House, A Strang Company», 1977թ., 2006թ., 2010թ.), էջ 47:
(2) Դարլին Չեխ. *«Շռայլ երկրպագություն»*, (Բլումիգթոն, Մինեսոտա, «Bethany House Publishers», 2001թ., 2002թ.), էջ 56:
(3) Վոչման Նի. *«Դավատքից՝ հավատք»* (Նյու Յորք, Նյու Յորք, «Christian Fellowship Publishers, Inc.», 1984թ.), էջ 50:
(4) Մեջբերում *«Վայնի Հին և Նոր կտակարանների բառերի ամբողջական բացատրական բառարան»*-ից, Վ. Ի. Վայն (Նեշվիլ, Տենեսի. «Thomas Nelson Publishing», 1996թ.), էջ 267, ՆԿ:
(5) Մեջբերում *«Անգերի Նոր Աստվածաշնչի բառարան»*-ից, Մերիլ Ֆ. Անգեր (Չիկագո, Իլինոյս. «Moody Press», Վերանայված և նորացված հրատարակություն, 1988թ.) էջեր 1102-1109:
(6) Է. Ու. Թոզեր. *«Է. Ու. Թոզերի գանձարանը»*, (Հարիսբուրգ, Փենսիլվանիա, «Christian Publications Inc.», 1980թ.), էջեր 133,134:
(7) Տե՛ս Ելից 24.17, Երկր. Օր. 4.24, 9.3, Եսայի 30.27, 33.14, Սաղմ. 50.3, 97.3
(8) Մեջբերումներ *նպատակի* մասին (http://www.motivational-inspirational-corner.com/getquote.html?startrow=111&caegoryid=52, վերցրած 28.09.2010թ.):
(9) Սմիթ Վիգլսվորթ. *«Հաղթանակող հավատք»* (Սփրինգֆիլդ, Միսսուրի, «Radiant Books, Gospel Publishing House», 1966թ.), էջ 38:
(10) Տե՛ս Նշում 5, էջ 1073:
(11) Տե՛ս Նշում 4, էջ 120, ՆԿ:

Իմ նշումներդ

«Երբ հանցագործությունը չի պատժվում, մարդկանց թվում է, թե իրենք կարող են սխալներ գործել՝ առանց վնաս կրելու: Բայց թեև մարդը հարյուր անգամ մեղանչի և, չնայած դրան, երկար կյանք ունենա, ես գիտեմ, որ նրանք, ովքեր վախենում են Աստծուց, ավելի լավ վիճակում կլինեն: Անօրենները չեն բարգավաճի, որովհետև նրանք չեն վախենում Աստծուց: Նրանց օրերը երբեք չեն երկարի՝ երեկոյան ստվերների նման»:

Ժողովող 8.11-13, NLT

5

ՀԵՏԱՁԳՎԱԾ ԴԱՏԱՍՏԱՆ

Խնդրում ենք օգտվել ուսումնական դասընթացի 5-րդ դասից, ինչպես նաև՝ *«Տիրոջ երկյուղը»* գրքի 7-րդ, 8-րդ և 14-րդ գլուխներից:

«Որքան ավելին է փառքը, այնքան ավելի մեծ և վերահաս է դատաստանը աներկյուղ վերաբերմունքի համար: Երբ մեղքը մուտք է գործում Աստծո փառքի ներկայության մեջ, անմիջապես հակազդեցություն է առաջանում: Մեղքը, նաև՝ ով հոժարությամբ կրում է այն, կոչնչացվեն: Որքան ավելի ուժեղ է լույսը, այնքան քիչ հնարավորություն կա, որ խավարը կմնա»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Խ **1** Անհապաղ դատաստանը գալիս է այն ժամանակ, երբ Աստծո փառքը հզոր ձևով դրսևորված է: Կրկի՛ն կարդացեք Ջոնի մեջբերումը, իսկ հետո՝ Ա Թագավորաց 3.1-14-ը, որը պատմում է, թե ինչ վիճակում էր Իսրայելը Հեղի քահանայի առաջնորդության ներքո:

ա. Ինչպե՞ս կարող է Հեղիի առաջնորդության ժամանակաշրջանը համեմատվել ձեր երկրում տիրող ներկա իրավիճակի հետ:

_____

_____

_____

բ. Ուշադրություն դարձրեք, թե որտեղ էր քնում Հեղին, և որտեղ՝ Սամուելը, և նրանցից ով լսեց Աստծո ձայնը: Ի՞նչ է սա նշանակում անձամբ ձեզ համար:

_____

_____

գ. Ինչո՞ւ է Աստված հետաձգում դատաստանն այն մարդկանց համար, ովքեր մեղքի մեջ են, սակայն ծառայում են եկեղեցում:

_____

_____

_____

_____

Հոչակել
ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Իմ ամբողջ սրտով ես համաձայնում եմ սաղմոսերգուի հետ. «Ժամանակն է, որ Տերն անի այս, որովհետև նրանք Քո օրենքը խափանեցին» (Սաղմոս 119.126): Ես հավատում եմ, որ եթե Նա գործեր նույն վճռականությամբ, ինչպես հաճախ անում էր աստվածաշնչյան ժամանակներում, ողջ քրիստոնեական աշխարհում զարմանալի փոփոխություններ տեղի կունենային: Երբ վերադառնար հարգանքը Նրա անվան հանդեպ, Տիրոջ առողջ երկյուղը կրկին կհամակեր Նրա ժողովրդին: Մենք շատ ավելի հնազանդ կդառնայինք Աստծուն: Ավելին՝ կնորոգվեր մարդկանց նվիրվածությունը և հավատարմությունը ամուսնական ուխտի հանդեպ: Արդյունքում կամրանային շատ ընտանիքներ: Եվ Փեսայի ժամանմանը կսպասեր ավելի սուրբ Հարսը՝ անկեղծ և անգին բնավորությամբ»:

— *Ջարլզ Սպուրջոն*[1]

2 Անանիայի և Սափիրայի դեպքը լուրջ օրինակ է այն մասին, թե ինչու է կարևոր վախենալ Տիրոջից: Այն փաստը, որ նրանք վաճառեցին իրենց սեփականությունը, և Տիրոջը տվեցին եկամուտի մի մասը, արտաքնապես պատվարժան արարք էր թվում, սակայն պարզվեց, որ նրանց սրտերի իրական դրդապատճառն այլ էր:

ա. Աստված չբարկացավ Անանիայի և Սափիրայի վրա այն պատճառով, որ նրանք չզոհաբերեցին իրենց ողջ եկամուտը: Ո՞րն էր նրանց իրական մեղքը:

_____

_____

_____

_____

_____

_____

բ. Արդյո՞ք անցյալում որևէ բան եք արել, որ արտաքնապես պատվարժան է թվացել, սակայն իրականում դուք մարմնավոր (եսասիրական) դրդապատճառ ունեիք: Եթե այո, ապա ի՞նչ էր դա: Ի՞նչ սովորեցիք դրանից:

_____

_____

_____

_____

_____

գ. Արդյո՞ք Աստծո դատաստանի օրինակը Նոր կտակարանում մարտահրավեր է նետում ձեզ և աստվածային երկյուղ ներշնչում:

_____

_____

_____

_____

_____

«Թո՛ւյլ տվեք մի բան ասել ձեզ. Աստված չի փոխվել: Նա նույն Սուրբ Աստվածն է, ինչպես որ Մովսեսի և Ահարոնի օրերին: Նրա Խոսքը և սրբության մակարդակը չեն փոխվել: Աստված մեծ Թագավոր է թե՛ այսօր, թե՛ անցյալում, թե՛ ապագայում, և Նրա հանդեպ պետք է երկյուղ ունենալ: Մենք չենք կարող թեթևորեն վերաբերվել այն բաներին, ինչ Նա սուրբ է անվանում»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

3 Ուղղելով Անանիային՝ Պետրոսն ասաց, որ նա «մարդուն չստեց, այլ՝ *Աստծուն*» (Գործք 5.4, NKJV, շեղագիրն ավելացրած է): Ակնհայտ է, որ ճշմարտությունը խոսելը շատ կարևոր է Աստծո համար: Հիսուսն Ինքն է ճշմարտությունը, Ով եկավ աշխարհ՝ վկայելու ճշմարտության մասին (տե՛ս Հովհ. 14.6, 18.37):

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ

«Ճշմարիտ խոսքերը դիմանում են ժամանակի փորձությանը, բայց ստերը շուտով բացահայտվում են: Տերն ատում է ստախոս շուրթերը, բայց այն մարդիկ, ովքեր ճշմարտությունն են խոսում, հաճելի են Նրան»:

— *Առակաց 12.19,22, NLT*

«Քո նպատակն է, որ ճշմարտությունը հաստատվի իմ ներսում: Մո՛ւտք գործիր իմ մեջ. ստեղծի՛ր նոր, ճշմարիտ կյանք»:

— *Սաղմոս 5.16, MSG*

«Կարելի է ավելացնել հետևյալը. այլևս ո՛չ մի սուտ, ո՛չ մի կեղծավորություն: Ձեր մերձավորին ճշմարտությունն ասեք: Ի վերջո, Քրիստոսի մարմնում բոլորս կախված ենք իրարից: Երբ դուք ստում եք այլ մարդկանց, ի վերջո, դուք ստում եք ինքներդ ձեզ»:

— *Եփեսացիների 4.25, MSG*

Առնչվող սուրբգրային հատվածներ. Սաղմոս 101.7, Առակաց 23.23, Կողոսացիների 3.9

Հոչակել

ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Ցանկացած տեսակի կանխամտածված խաբեություն եսասիրական դրդապատճառներով՝ սուտ է: Եթե խոսքերի, հայացքների կամ գործերի միջոցով դուք այնպիսի տպավորություն եք թողնում, որը չի համապատասխանում բացարձակ ճշմարտությանը, Աստված սուտ է անվանում դա և մեղադրում է ձեզ ստախոսության մեջ»:

— *Ջարլզ Ֆինկի*[2]

ա. Ի՞նչ է Տերը ցույց տալիս ձեզ այս խոսքերի միջոցով:

_____

_____

_____

_____

_____

_____

բ. Կարդացե՛ք Սաղմոս 34.11-14-ը: Արդյո՞ք այն մարտահրավեր է նետում ձեզ: Ինչպե՞ս կարող եք գործնականում կիրառել այս ճշմարտությունը ձեր կյանքում:

_____

_____

_____

_____

_____

Այս ճշմարտությունն այնքան կարևոր է, որ Պետրոսը կրկնում է այն Ա Պետրոս 3.10,11-ում:

գ. Հավանաբար, ամենամեծ բուժումը ստախոսությունից Տիրոջ երկյուղի մասին ճշմարիտ հայտնություն ստանալն է: Կարդացե՛ք Մատթեոս 12.35-37-ը: Արդյո՞ք այն մղում և զգուշացնում է ձեզ՝ հետևել ձեր խոսքերին:

_____

_____

_____

_____

_____

_____

ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՎ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դրդապատճառ բառը նշանակում է «այն, ինչը մղում է գործողության, որոշում է, թե ինչ ընտրություն է կատարվելու, կամ առաջնորդում է կամքը»: Իսկ *մտադրություն* բառը նշանակում է՝ «ուղղել կամ դարձնել միտքը դեպի որևէ առարկան. անսասան ուշադրություն. որոշակի կերպով գործելու վճռականություն»[3]:

Խ 4 Այն, ինչը մղում է մեզ գործողության, կոչվում է դրդապատճառ. այն ցույց է տալիս, թե ինչ է թաքնված մեր գործողությունների ետևում: Դրդապատճառները աներևույթ սեփականություն են. թե՛ հարուստները, թե՛ աղքատները ունեն դրանք: Սովորաբար, դրդապատճառները ծնվում են մեր սրտում: Հարցը հետևյալն է. ինչպիսի՞ն են դրանք:

Մտորե՛ք այս ուղերձի շուրջ

«Մարդու բոլոր ճանապարհներն անմեղ են թվում իրեն, բայց դրդապատճառները կշռվում են Տիրոջ կողմից»:

— Առակաց 16.2, NIV

«Մենք արդարացնում ենք մեր գործերը մեր արտաքին կեցվածքով. Աստված քննում է մեր դրդապատճառները: Անարատ կյանքն Աստծո առջև և արդարությունը մեր մերձավորների հանդեպ շատ ավելին են նշանակում Աստծո համար, քան կրոնական վարքը»:

— Առակաց 21.2,3, MSG

«Մարդու սիրտն ամենախորամանկն է և անհուսորեն չար է: Ո՞վ իրականում գիտի, թե որքան վատն է այն: Բայց Ես՝ Տերս, քննում եմ բոլոր սրտերը և ստուգում ծածուկ դրդապատճառները: Բոլոր մարդկանց Ես տալիս եմ նրանց հասանելի վարձքը, համաձայն նրա, թե ինչի են արժանի նրանց գործերը»:

— Երեմիա 17.9,10, NLT

«Իմ խիղճը մաքուր է, բայց դա չէ, որ անմեղ է դարձնում ինձ. Տերն է, որ դատում է ինձ: Այդ իսկ պատճառով, ոչինչ մի՛ դատեք մինչև սահմանված ժամանակը. սպասե՛ք, մինչև որ Տերը գա: Նա լույս կսփռի այն ամենի վրա, ինչ թաքնված է խավարում, և կբացահայտի մարդկանց սրտերի դրդապատճառները: Այդ ժամանակ յուրաքանչյուրը կստանա իր գովեստը Աստծուց»:

— Ա Կորնթացիների 4.4,5, NIV

Առնչվող սուրբգրային հատվածներ. Սաղմոս 26.1,2, Ա Մնացորդաց 28.9, Ա Թեսաղոնիկեցիների 2.4, Հակոբոս 4.3

ա. Աստված ասում է, որ մեր սրտերը խորամանկ են, այնպես որ, մենք անձամբ չենք կարող իմանալ մեր իրական դրդապատճառները: Այդ դեպքում, ինչպե՞ս կարող եք տեղեկանալ ձեր սրտի իրական դրդապատճառների մասին:

_____

_____

_____

_____

_____

Կարդացե՛ք Սաղմոս 139.23,24, Եբրայեցիների 4.12

բ. Ի՞նչ նոր բաներ իմացաք *այլ մարդկանց* դրդապատճառները դատելու մասին:

_____

_____

_____

_____

գ. Ուրիշ ի՞նչ է Տերը ասում ձեզ այս խոսքերի միջոցով:

_____

_____

_____

_____

Հռչակել
ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Աստվածաշնչում կա ավելի քան 500 խոսք աղոթքի մասին, և մոտավորապես 500 խոսք՝ հավատքի մասին, սակայն ավելի քան 2000 խոսք՝ փողի և ունեցվածքի մասին: Հիսուսը խոսում էր փողի մասին Իր պատմած 38 առակներից 16-ում: Ակնհայտ է, որ համաձայն Աստվածաշնչի՝ մենք պետք է հասկանանք, թե ինչ է փողը և ինչպես օգտագործել այն: Ինչո՞ւ: *Որովհետև փողը՝ փորձություն է Աստծուց*: Տեսնելով, թե ինչպես եք տնօրինում փողը, կարելի է հատորներ գրել ձեր առաջնահերթությունների, հակվածությունների և ցանկությունների մասին: Իրականում, այն ուղղակիորեն ցույց է տալիս, թե ինչպիսի օրհնություններ կստանաք (կամ չեք ստանա) կյանքում»:

— *Ռոբերտ Մորիս*

Հռչակել ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍ 5 Սուրբ գրքում ասվում է, որ տալը *պարգև* է Քրիստոսի մարմնում: Այն պետք է ընդունված լինի և գովեստի արժանանա ճիշտ այնպես, ինչպես սովորեցնելու և սպասավորության պարգևները (տե՛ս Հռոմ. 12.6-8): Բայց ի տարբերություն Անանիայի և Սափիրայի, մենք պետք է տանք մաքուր սրտով:

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ

«Թող յուրաքանչյուրը [տա] այնպես, ինչպես որ մտադրվել և որոշել է իր սրտում, ոչ թե դժկամորեն կամ տրտմությամբ, կամ հարկադրանքով, որովհետև Աստված սիրում է (Նրան հաճելի է, Նա գնահատում է ամենից առավել, և չի ցանկանում թողնել կամ լինել առանց) ուրախ (ցնծագին, պատրաստակամորեն) տվողին [ում սիրտն իր ընծայի մեջ է]»:

— *Բ Կորնթացիների 9.7,* AMP

«Երբ տալիս ես ինչ-որ մեկին, ով կարիքի մեջ է, մի՛ արա դա, ինչպես կեղծավորներն են անում՝ փող փչելով ժողովարաններում և փողոցներում, որպեսզի ուշադրություն գրավեն իրենց բարեգործության վրա: Ես ճշմարտությունն եմ ասում. նրանք ստացել են ողջ վարձքը, որ երբևէ կստանան: Բայց երբ դու

տալիս ես ինչ-որ մեկին, ով կարիքի մեջ է, թույլ մի՛ տուր, որ քո ձախ ձեռքը իմանա, թե ինչ է անում քո աջը: Գաղտնի տուր քո պարգևները, և քո Հայրը, Ով տեսնում է ամեն ինչ, կվարձատրի քեզ»:

— *Մատթեոս 6.2-4, NLT*

«Ձեզնից յուրաքանչյուրը պետք է նվեր բերի համապատասխան այն չափին, որով Տերը՝ ձեր Աստվածը, օրհնել է ձեզ»:

— *Երկրորդ Օրինաց 16.17, NIV*

ա. Համաձայն այս խոսքերի, **ինչպե՞ս** դուք պետք է տաք Տիրոջը և այլ մարդկանց:

_____

_____

_____

բ. Արդյո՞ք կարևոր է, թե **երբ** եք տալիս Աստծուն: Ինչպիսի՞ օրհնություններ է Նա խոստանում, երբ դուք տալիս եք:

_____

_____

_____

Կարդացե՛ք Առակաց 3.9, Մաղաքիա 3.10,11

գ. Ինչպե՞ս է Աստված վերաբերվում առատաձեռնությանը: Ինչպե՞ս է այս հատկանիշն ազդում այն օրհնության վրա, որ ստանում եք՝ ի պատասխան ձեր տալուն:

_____

_____

_____

Կարդացե՛ք Ղուկաս 6.38, Բ Կորնթացիների 9.6, Առակաց 11.25

«Վերջին քսան կամ երեսուն տարիների ընթացքում այն շնորհքը, որ սովորեցրել են և որին հավատացել են մեր եկեղեցիներից շատերում, իրական շնորհքը չէ, այլ դրա աղավաղումն է: Պատճառն այն է, որ մարդիկ չափից ավելի են շեշտադրել Աստծո սերը՝ անտեսելով Նրա երկյուղը: Եթե ուսմունքն Աստծո սիրո մասին հավասարակշռված չէ, և մարդը չունի ճիշտ պատկերացում Տիրոջ երկյուղի մասին, արդյունքում մոլորություն է առաջանում»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Խ 6 Առողջ քրիստոնյա լինելու համար պետք է սովորել ջերմեռանդորեն սիրել Աստծուն և ակնածալի երկյուղածություն տածել Նրա հանդեպ: Նման վերաբերմունք ստեղծվում է, երբ մենք հավասարակշռված պատկերացում ենք կազմում Աստծո մասին՝ որպես Աբբա Հոր և որպես Հավիտենական Դատավորի:

ա. Կարդացե՛ք այս աստվածաշնչյան խոսքերը, որոնք նկարագրում են Տիրոջը՝ որպես մեր սիրող Հայր: Ինչո՞ւ է Աստծո այս հատկանիշը շատ կարևոր: Այլևս ի՞նչ է Տերը ցույց տալիս ձեզ այս խոսքերի միջոցով:

Հովհաննես 3.16-18 • Հռոմեացիների 5.8, 8.15 • Եփեսացիների 1.4-6 • Տիտոս 3.3-7

_____

_____

_____

_____

բ. Ուսումնասիրե՛ք այս խոսքերը, որոնք նկարագրում են Տիրոջը՝ որպես Դատավոր: Ինչո՞ւ է Աստծո այս հատկանիշը կենսականորեն կարևոր: Ինչպիսի՞ն կլիներ կյանքն առանց դրա: Այլևս ի՞նչ է Տերը հայտնում ձեզ:

Մատթեոս 25.31-46 • Գործք 17.30,31 • Բ Կորնթացիների 5.10 • Հայտնություն 20.11-15

գ. Այս խոսքերի լույսի ներքո, նկարագրեք, թե ինչպես է, ըստ ձեզ, Աստծո սերը *գործում* Նրա դատաստանի հետ:

_____

_____

_____

_____

«Բայց հավիտենից հավիտյան Տիրոջ սերը նրանց հետ է, ովքեր վախենում են Իրենից, և Իր արդարությունը նրանց զավակների զավակների հետ է՝ նրանց հետ, ովքեր պահում են իր ուխտը և հիշում են Իր պատվիրաններին հնազանդվելը»:

—Սաղմոս 103.17,18, NIV

Խ 7 Սաղմոս 19.9-ը հզոր ձևով հայտարարում է. «Տիրոջ վախը սուրբ է, մնում է հավիտյան»: Շատերն են տարիներ շարունակ եղել Աստծո հետ: Ոմանք նույնիսկ մեծ գործեր են արել Նրա անունով: Բայց ոչ բոլորն են մնացել մինչև վերջ, որովհետև բոլորը չէ, որ պահպանել են Տիրոջ առողջ երկյուղը:

ա. Ըստ ձեզ՝ ինչպե՞ս է Տիրոջ երկյուղը օգնում ձեզ *հարատևել*: Ինչպե՞ս է այն օգնում ձեզ սուրբ մնալ:

_____

_____

_____

_____

բ. Մի ժամանակ Լյուցիֆերը ծառայում էր Աստծո ներկայության մեջ, և գեղեցիկ, օծված քերովբե էր: Այնուամենայնիվ, նա չմնաց այդ դիրքում, որովհետև նրա սրտում անօրինություն կար: Ի՞նչ կարող եք սովորել նրա օրինակից:

_____

_____

_____

_____

Կարդացե՛ք Լյուցիֆերի անկման մասին՝ Եսայի 14.12-17, Եզեկիել 28.11-18

_____

_____

«Լսե՛ք ինձ, Աստծո ժողովուրդ. ձեզ վրա կարող է սուրբ օծման յուղ լինել, ինչպես Նադաբի և Աբիուդի: Դուք կարող եք հրաշքներ գործել, դևեր քշել և բժշկել հիվանդներին Նրա զորավոր անունով: Դուք կարող եք շատ մեծ զոհաբերություն մատուցել եկեղեցում, ինչպես Անանիան և Սափիրան: Դուք կարող եք օծված լինել փառաբանության և երկրպագության համար, ինչպես Լյուցիֆերը: Բայց եթե դուք չունեք Տիրոջ երկյուղը, ապա չունեք երաշխիք, որ կմնաք հավիտյան: Դուք կարող եք հավիտյան լինել Տիրոջ ներկայության մեջ, միայն շնորհիվ Տիրոջ երկյուղի»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

8 Դուք երբևէ տեսե՞լ եք, թե ինչպես են անօրեն մարդիկ վարձատրվել կամ պատվի արժանացել՝ ինչպես հերոսներ: Դուք կարող եք հիասթափվել, հուսալքվել կամ, նույնիսկ, զայրանալ այդ պատճառով: Դավիթը նույնպես ունեցավ այս ապրումները, բայց Աստված խրախուսեց նրան՝ ցույց տալով այդ մարդկանց վերջը: Կարդացե՛ք Սաղմոս 37-ը և պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

ա. Ինչպիսի՞ վարձք է սպասվում անօրեններին: Ի՞նչ է շարունակաբար հռչակվում այս սուրբգրային հատվածում:

_____

_____

_____

_____

_____

բ. Ինչպիսի՞ խոստումներ է Աստված տալիս արդարներին, որոնք իսկապես խրախուսում են ձեզ: Ի՞նչ պետք է անեք՝ դրանք ստանալու համար:

_____

_____

_____

_____

_____

գ. Աստված չի ցանկանում, որ բարկանաք չար մարդկանց վրա, նախանձեք նրանց կամ նյարդայնանաք նրանց պատճառով: Ի՞նչ է Նա ցանկանում, որ անեք դրա փոխարեն:

_____

_____

_____

_____

_____

Կարդացե՛ք 1-8, 27 և 34 խոսքերը:

«Մի՛ նախանձիր մեղավորներին, այլ մշտապես վախեցիր Տիրոջից: Դու կվարձատրվես դրա համար. քո հույսը չի վերածվի հուսահատության»:

—Առակաց 23.17,18, NLT

8 Հաշվի առնելով այն ամենը, ինչ սովորել եք առաջին հինգ դասերից՝ ձեր կարծիքով՝ ի՞նչն է օգնում Տիրոջ առողջ երկյուղ *ձեռք բերելուն*: Ինչի՞ պատճառով է կարելի *կորցնել* այն: Ներկայումս ինչպիսի՞ նախազգուշական միջոցներ է Սուրբ Հոգին դրդում ձեզ ձեռնարկել:

_____

_____

_____

_____

_____

*«Որովհետև գիտենք Նրան, որ ասաց. «**Իմն է վրեժխնդրությունը**, Ես հատուցումը կտամ,- ասում է Տերը, և դարձյալ, թե՝ **Տերը կդատի Իր ժողովրդին**»: Սարսափելի բան է կենդանի Աստծո ձեռքն ընկնելը»»:*

— Եբրայեցիների 10.30,31

[թավատառն ավելացրած է]

Հոչակել

ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Երբ Աստծո դատաստանները հայտնվում են երկրի վրա, դրանք երկյուղ են առաջացնում Աստծո հանդեպ Նրա ժողովրդի սրտերում: «Մարմինս դողում է Քո ահից»,- ասում է Դավիթը,- «Եվ Քո դատաստաններից վախենում եմ»: (Սաղմոս 119.120): …Իհարկե, շատերը ուշադրություն չեն դարձնում Տիրոջ արարքների վրա, ոչ էլ նկատում Նրա ձեռքի գործերը. նման մարդիկ չեն կարող վախենալ Տիրոջից: Բայց մյուսները ուշադրությամբ հետևում են, և իմաստությամբ խորհում Նրա գործերի և դատաստանների մասին. սա է պատճառը, որ նրանք վախենում են Տիրոջից»:

— *Ջոն Քոլվին*[5]

Աստծո երկյուղի օրհնություններ

«Թող այժմ նրանք, ովքեր երկյուղածությամբ և երկրպագելով վախենում են Տիրոջից, ասեն, որ Նրա ողորմությունը և սիրող գթասրտությունը մնում են հավիտյան»:

Սաղմոս 118.4, AMP

«Տերը հավանում է Իրենից վախեցողներին, որ Իր ողորմությանն են հուսացած»:

Սաղմոս 147.11

«Այլ որքան որ բարձր է երկինքը երկրիս վրա, այնքան զորավոր է Նրա գութը Իրենից վախեցողների վրա: Որքան որ արևելքը հեռու է արևմուտքից, այնքան Նա հեռացրեց մեզնից մեր հանցանքները: Ինչպես որ հայրը կգթա որդիներին, այնպես գթած է Տերը Իրենից վախեցողներին»:

Սաղմոս 103.11-13

Շաբաթական գործունեություն
5

Հենց այնտեղ, որտեղ ապրում եք

ՄԻԳՈՒՑԵ ՀԻՎԱՆԴ ԵՔ, ԵՎ ՉԳԻՏԵՔ ԱՅԴ ՄԱՍԻՆ

*«Վախը մարդկային կարծիքի հանդեպ՝ **անկարող է դարձնում**. Ապրծուն վստահելը՝ պաշտպանում է ձեզ դրանից»:*

— Առակաց 29.25, MSG
[թավատառն ավելացրած է]

Դուք համբերատար սպասում եք: Ի վերջո, բժիշկը ներս է մտնում: Սովորական ողջույնից հետո նա բացում է բերանը և յոթ նշանակալից բառ ասում, որոնք թույլ կտան իրեն ամենայն ճշգրտությամբ որոշել, թե ինչ է կատարվում ձեր ներսում. «Ասե՛ք ինձ, թե ինչպես եք զգում ձեզ»:

Մենք կարող ենք հոգևորապես հիվանդանալ ճիշտ այնպես, ինչպես մարմնով: Ամենածանր կաթվածը պատճառող հիվանդությունը *մարդու վախն է*: Դուք կարող եք մտածել. *«Դա ինձ չի վերաբերում: Ես չեմ վախենում մարդկանցից»*: Սակայն, մարդու վախը բազմաթիվ դիմակներ ունի: Սատանան՝ մեր անձերի թշնամին, սիրում է քողարկել այն: Ճշմարտությունն այն է, որ գրեթե բոլորը հիվանդանում են սրանով կյանքի որևէ փուլում: Այդ իսկ պատճառով, լավ է իմանալ այս հիվանդության ախտանշանների և դեղամիջոցի մասին:

Մարդու վախը
ՀՈՄԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԱԽՏԱՆՇԱՆՆԵՐԸ

Հավանությունից կախվածություն ունեցող
Նա, ով կախվածություն ունի մարդկանց դրական կարծիքից

Մարդկանց հաճեցնող
Նա, ով առաջնորդվում է մարդկանց հաճելի լինելու ցանկությամբ

Ուշադրություն գրավող
Նա, ով երջանկություն է զգում, երբ ուշադրության է արժանանում մարդկանց կողմից

Իր տեսքով ցնորված
Նա, ով անընդհատ մտածում է իր արտաքին տեսքի մասին, և այն տպավորության մասին, որ մարդիկ ստանում են իրենից

Հավանության ձգտող
Նա, ով կախվածություն ունի մարդկանց գովասանքից

Որքանո՞վ է մարդու վախն ազդում ձեր կյանքի վրա:

Ժամանակ հատկացրեք և անկեղծորեն պատասխանեք այս հարցերին՝ գնահատելով յուրաքանչյուր կետը մեկից մինչև տասը միավորով: (Տասը՝ շատ կարևոր, մեկը՝ ընդհանրապես անկարևոր: Պատասխանելով այս հարցերին՝ հաշվի առեք ձեր փոխհարաբերություններն ընտանիքում, աշխատավայրում, եկեղեցում և այլուր):

Նկատվել կամ ճանաչված լինել այլ մարդկանց կողմից (հատկապես՝ «կարևոր» մարդկանց) ___
Լինել մարդկանց ուշադրության կենտրոնում, զվարճացնել մարդկանց ____
Ունենալ ամենանոր, ամենանորաձև հագուստը, մեքենան, խաղերը, էլեկտրոնային սարքերը, և այլն ____
Գովեստի խոսքերի արժանանալ ձեր արտաքին տեսքի համար (քաշը, մազերը, կազմվածքը, հագուստը, և այլն) ____
Գովեստի խոսքերի արժանանալ ձեր կատարած աշխատանքի համար ____
Ձեր պարգևների և տաղանդների ճանաչումը այլ մարդկանց կողմից (ընկերների և առաջնորդների) ____
Կարիք ունենալ, որպեսզի այլ մարդիկ միանան նույն գործունեությանը, ծառայությանը, նախասիրությանը, և այլն, մինչև դուք որոշեք քայլ անել ____
Կարիք ունենալ, որպեսզի այլ մարդիկ հավանություն տան և/կամ հասկանան ձեր չափանիշները, համոզմունքները և դիրքը ____
Պատմել այլ մարդկանց այն, ինչ իրենք ցանկանում են լսել ____
Խուսափել մարդկանց անհավանությունից (ցանկացած պատճառով) ամեն գնով ___

Ընդհանուր գնահատականը ____

Ձեր միավորները...

10-33 = աննշան մարդու վախ կամ դրա բացակայությունը • 34-66 = աննշանից չափավոր մարդու վախ • 67-100 = չափավորից ուժեղ մարդու վախ

Լռությամբ մոտեցեք Տիրոջը, և խնդրե՛ք Նրան՝ ցույց տալ ձեր գործողությունների արմատական դրդապատճառները: Գրե՛ք այն, ինչ Նա հայտնում է ձեզ, և հանձնե՛ք այդ ամենը Նրան աղոթքի միջոցով:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Շաբաթական գործունեություն

5

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ ՄԱՐԴՈՒ ՎԱԽԻՑ

*«Զորաց Տերը՝ սուրբ համարե՛ք Նրան և պաշտվե՛ք Նրա սուրբ անունը [համարելով Նրան ձեր միակ հույսը և ապահովությունը] և **թո՛ւյլ տվեք Նրան՝ լինել ձեր վախը** և թո՛ւյլ տվեք Նրան՝ լինել ձեր սարսափը [որպեսզի*

չվիրավորեք Նրան մարդու վախով, որ ունեք, և Նրա հանդեպ ունեցած անկասկածությամբ: Եվ Նա ձեզ համար սրբարան կլինի [սուրբ և անխորտակելի ապաստարան նրանց համար, ովքեր երկյուղածությամբ վախենում են Նրանից և վստահում Նրան]»:

—Եսայի 8.13,14, AMP
[թավատառն ավելացրած է]

Արարչագործության սկզբից ի վեր բազմաթիվ տղամարդիկ և կանայք ձգտել են ուշադրության, գովաբանության, հավանության և հիացմունքի: Փոփ մշակույթը և ժամանակակից շուկայական հարաբերությունները ձևավորվում և զարգանում են արտաքին տեսքի և այլ մարդկանց կարծիքների հանդեպ ունեցած մոլուցքով: Աստվածաշունչը դա անվանում է *մարդու վախ*, և եթե մենք չզգուշանանք, այն կարող է մահացու հետևանքներ ունենալ մեր կյանքերում: Պարզապես հիշեք Անանիային և Սափիրային՝ երկու հավատացյալների՝ առաջին եկեղեցուց. նրանք առաջնորդվում էին՝ մարդկանց կողմից նկատվելու մարմնական ցանկությունով: Նրանց նպատակն էր՝ արժանանալ ուշադրության ու գովեստի: Քանի որ նրանց վախը մարդկանց հանդեպ ավելին էր, քան նրանց վախն Աստծո հանդեպ, նրանք ստեցին Սուրբ Հոգուն և արժանացան խիստ և արագահաս դատաստանի:

«Եթե ցանկանաք արժանանալ մարդկանց գովեստին, ապա կվախենաք մարդուց: Եթե վախենաք մարդուց, ապա կծառայեք մարդուն, որովհետև դուք կծառայեք նրան, ումից վախենում եք»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Հիսուսը մարդկանց հաճեցնող չէր. Նա վախ չուներ մարդկանցից և չէր ձգտում ստանալ նրանց հավանությունը: Հովհաննես 2.23,24-ում գրված է. «Երբ Նա Երուսաղեմում էր Զատկի Տոնակատարությանը, շատ մարդիկ տեսան այն հրաշագործությունները, որ Նա անում էր, և հավատացին Նրա անվանը: Բայց Հիսուսը *չէր վստահում Իրեն նրանց*, որովհետև Նա գիտեր բոլոր մարդկանց (NIV, շեղագիրն ավելացրած է): Ի՞նչ է նշանակում՝ Հիսուսը չէր վստահում Իրեն նրանց: Արդի անգլերեն թարգմանությունը (CEV) լույս է սփռում այս արտահայտության վրա. «Հիսուսը ճանաչում էր, թե ինչ կար նրանց սրտերում, և Նա *թույլ չէր տալիս, որ նրանք իշխանություն ունենան Իր վրա*» (շեղագիրն ավելացրած է): Փոխարենը վստահելու անհաստատ մարդկանց, Նա Իրեն վստահեց Աստծուն (տե՛ս Ա Պետր. 2.23):

Հովհաննես 6.14,15-ում մենք կրկին տեսնում ենք, որ «երբ մարդիկ տեսան, թե ինչպես Նա այս հրաշագործությունն արեց, նրանք բացականչեցին. «Իհա՜րկե, Նա այն Մարգարեն է, որին մենք սպասում էինք»: Երբ Հիսուսը տեսավ, որ նրանք պատրաստ էին ստիպողաբար Նրան դարձնել իրենց

թագավորը, Նա մենակ և աննկատ հեռացավ սարերի մոտ» (NLT): Մտածե՛ք այս մասին… այն, ինչի համար շատ տղամարդիկ պայքարում են՝ հեղինակություն, դիրք և իշխանություն, կարող էին լինել Հիսուսինը, եթե Նա ցանկանար, սակայն Նա հեռացավ դրանցից: Իսկ ո՞ւր գնաց: Դեպի սարերը, հավանաբար՝ Իր Հոր ներկայության մեջ լինելու համար: Աստված միակն էր, Ումից Հիսուսը ձգտում էր հավանություն և գովեստ ստանալ:

«Արա այն ամենը, ինչ կարող ես, Աստծո հավանությունը ստանալու համար՝ որպես մշակ, ով կարիք չունի ամաչելու, և ով սովորեցնում է միայն ճշմարիտ ուղերձը»:

— Բ Տիմոթեոս 2.15, CEV

Եթե դուք վախենում եք մարդկանցից ավելի, քան Աստծուց, եթե փնտրում եք նրանց հավանությունը, գովեստը և ծափահարությունները, ապա ո՞ւմ եք ձգտում բարձրացնել: Հետևաբար, ո՞վ է դառնում ձեր ուշադրության կենտրոնը, և ո՞վ է նստած գահի վրա ձեր կյանքում:

_____

_____

Ինչպե՞ս է սա հակադրվում Հիսուսի խոսքերի հետ Մատթեոս 16.24-26-ում:

_____

_____

_____

_____

Առնչվող սուրբգրային հատվածներ. Մարկոս 8.34-38, Ղուկաս 9.23-26

Զավեշտական է, որ մի շարք հրեա առաջնորդներ հավատում էին, որ Հիսուսը Մեսիան էր, բայց հրապարակավ չէին խոստովանում իրենց հավատքը, որովհետև վախենում էին վտարվել ժողովարանից: «Որովհետև նրանք սիրեցին մարդկանց հավանությունն ավելի, քան Աստծո հավանությունը» (Հովհաննես 12.43, NASB): Կա՞ արդյոք ինչ-որ բան, կապված Քրիստոսի հանդեպ ձեր հավատքի հետ, որ դուք վախենում եք հրապարակավ դավանել: Եթե այո, ապա ի՞նչ է դա: *Ումի՞ց* կամ *ինչի՞ց* եք դուք վախենում:

_____

_____

_____

_____

_____

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ

«Աստծուն ուրախությամբ փառաբանելն ամենակարևոր բանն է, և սա պետք է լինի մեր նպատակը՝ անկախ մեր հանգամանքներից: Վաղ թե ուշ բոլորս էլ հանդիպելու ենք Աստծուն՝ անկախ մեր հանգամանքներից: Մենք կհայտնվենք Քրիստոսի առջև և կստանանք այն, ինչ հասնում է մեզ, համաձայն մեր գործերի, որոնք կա՛մ լավն են, կա՛մ վատը»:

— *Բ Կորնթացիների 5.9,10,* MSG

«Եղե՛ք անկեղծ ձեր դրդապատճառների մեջ՝ ելնելով հարգանքից ձեր իրական Տիրոջ հանդեպ: Ինչ էլ որ անեք, արեք ամբողջ սրտով, ասես թե գործում եք ձեր իրական Տիրոջ համար, և ոչ թե հասարակ մարդկանց: Դուք գիտեք, որ ձեր իրական Տերը ժառանգություն կտա ձեզ՝ որպես վարձատրություն: Դուք կատարում եք ձեր ծառայությունը Քրիստոսի՝ ձեր իրական Տիրոջ համար»:

— *Կողոսացիների 3.22-24,* GW

«Ծառանե՛ր, հարգալից կերպով հնազանդվեք ձեր երկրային տերերին, բայց արե՛ք դա իրական Տիրոջը՝ Քրիստոսին հնազանդվելու համար: Մի՛ արեք պարզապես այն, ինչ դուք պետք է անեք անպատիժ մնալու համար, այլ՝ սրտանց աշխատեք, ինչպես Քրիստոսի ծառաներ, ովքեր անում են այն, ինչ Աստված է ցանկանում: Եվ աշխատեք՝ ժպիտը ձեր դեմքին, մշտապես հիշելով, որ անկախ այն բանից, թե ով է հրահանգներ տալիս ձեզ, իրականում դուք ծառայում եք Աստծուն: Տերը լավ կվճարի ձեզ լավ աշխատանքի համար, անկախ այն բանից՝ դուք ստրո՞ւկ եք, թե՞ ազատ»:

— *Եփեսացիների 6.5-8,* MSG

Այս ճշմարտությունների լույսի ներքո, ի՞նչը պետք է լինի կյանքի գլխավոր նպատակը: Ի՞նչն է եղել ձեր կյանքի *գլխավոր նպատակը* մինչև այս պահը:

_____

_____

Ի՞նչը պետք է լինի ձեր բոլոր գործողությունների *շարժիչ ուժը*: Ինչո՞ւ:

_____

_____

_____

_____

Այսպիսով, ի՞նչ է մեզ հարկավոր Տիրոջ հրաշալի երկյուղով ապրելու համար: Պատասխանն է՝ Աստծո *շնորհքը*: Հակոբոս 4.6-ում գրված է, որ Աստված «…տալիս է մեզ ավելի ու ավելի **շնորհք** *(Սուրբ Հոգու զորությունը, որպեսզի լիովին պատրաստ լինենք դիմակայել այս և մնացած բոլոր չար միտումներին)»* (AMP, թավատառն ու շեղագիրն ավելացրած են): Այն պահին, երբ մենք գայթակղվում ենք տեղի տալ մարդու վախին, մենք կարող ենք դիմել Տիրոջը

և շնորհք խնդրել Նրանից: Սա Քրիստոսի հետ մտերիմ կապ ունենալու ամենամեծ օրհնություններից մեկն է: Մենք նույնպես կարող ենք ընդունել Աստծո շնորհքը, որպեսզի զարգացնենք այնպիսի մտածելակերպ և ունենանք այնպիսի դրդապատճառներ, որոնք զորացնում էին Քրիստոսին Նրա երկրային կյանքի ընթացքում: Կարդացե՛ք Հովհաննես 4.34, 5.19,30, 12.49 խոսքերը, և նայե՛ք կյանքին այս տեսանկյունից:

Դուք կարող եք ձեռք բերել ճշմարիտ ազատություն մարդու վախից: Ինչպե՞ս: Ջոն Վայթերսփունը՝ ԱՄՆ-ի Անկախության հռչակագիրը ստորագրողներից մեկը նաև Փրինսթոնի քոլեջի նախագահը ասել է դա լավագույն կերպով. «Միայն Տիրոջ երկյուղը կարող է ազատել մեզ մարդու / մարդկային վախից»[6]: Լա՛յն բացեք ձեր սիրտը Տիրոջ երկյուղի Հոգու համար, և թո՛ւյլ տվեք Նրան՝ ամբողջովին թագավորել ձեր կյանքում:

Աղոթք՝ Աստծո Հոգուն ողջունելու համար

Հա՛յր, շնորհակալությո՛ւն Քո ողորմության և հեւրաշնչված դատաստանի համար իմ կյանքում, մինչև այն պահը, երբ իմ աչքերը բացվեցին Տիրոջ երկյուղի ճշմարտության համար: Ես ցանկանում եմ լցված լինել Քո Հոգով, ինչպես որ Հիսուսն էր լցված Քո Հոգով: Թո՛ղ ինձ վրա հանգչի Տիրոջ Հոգին՝ իմաստության և հանճարի Հոգին, խորհրդի և զորության Հոգին, գիտության և Տիրոջ երկյուղի Հոգին, և թո՛ղ իմ բերկրանքը լինի Տիրոջ երկյուղը (տե՛ս Եսայի 11.2,3) ...Հիսուսի անունով, ամե՛ն:

Իմ օրագիրը

ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ՀԻՇԵԼ

«Երբ աներկյուղ վերաբերմունքը դատաստանի է ենթարկվում, բոլորը գնահատում են իրենց կյանքերը, և սխալ դրդապատճառները մաքրվում են դատաստանի լույսի ներքո: Նման մթնոլորտում ճշմարտապես ապաշխարող սրտերը լցվում են Աստծո երկյուղով»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Ի՞նչ է Տերը հայտնում ձեզ այս զգաստացնող գլխի միջոցով: Ինչպիսի՞ սուրբգրային հատվածներ և սկզբունքներ կային, որոնք ձե՛զ էին վերաբերում: Կա՞ն որևէ հատուկ փոփոխություններ, որ, ինչպես զգում եք, Աստված խնդրում է ձեզ իրականացնել ձեր կյանքում: Մի քանի րոպե հատկացրեք լսելու համար, թե ինչ է Աստված ասում Իր սրտից, և գրե՛ք այն, ինչ կստանաք Նրանից:

ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Հասարակությունը վարակված է մեղքով, և եկեղեցին մեծ մասամբ նույնպես անմասն չի մնացել դրանից: Աստծո սրբության չափանիշը չի փոխվել. այդ դեպքում, ինչո՞ւ է Նրա դատաստանը հետաձգվում: Պատճառն այն է, որ Նրա փառքը ուժգին կերպով դրսևորված չէ: Ինչևէ, թեև դատաստանը հետաձգվել է, բայց այն չեղյալ չի համարվել: Այդ իսկ պատճառով, մենք պետք է քննենք մեզ Աստծո Խոսքի և Սուրբ Հոգու ներկայության լույսի ներքո՝ թույլ տալով Նրան՝ քննել մեր սրտերը և մաքրել մեր դրդապատճառները: Սովորելով ջերմեռանդորեն *սիրել* Աստծուն և ակնածալի *երկյուղ ունենալ* Նրա հանդեպ՝ մենք հոգևորապես առողջ կդառնանք: Աստծո երկյուղը կազատի մեզ մարդու վախից՝ տալով մեզ կարողություն, որպեսզի հաճեցնենք Նրան:

(1) Չարլզ Ռ. Սուինդոլ. *«Գտնել ճիշտ բնավորության»*, (Փորթլենդ, Օրեգոն, «Multnomah Publishers», 1987թ.), էջեր 41,42:
(2) Չարլզ Ֆինին. *«Հոգևոր զորություն. 30-օրյա գանձարան՝ ամենօրյա ընթերցանության համար»*, (Լինվուդ, Վաշինգտոն, «Emerald Books», 2002թ.), էջեր 53,54:
(3) Մեջբերում Նոյ Վեբսթերի *«Անգլերեն լեզվի ամերիկյան բառարանի առաջին հրատարակություն»*-ից (1828թ.), վերահրատարակված պատճենման միջոցով «Foundation for American Christian Education»-ի կողմից (Սան Ֆրանցիսկո, Կալիֆոռնիա, 2000թ.):
(4) Ռոբերտ Մորիս. *«Օրհնված կյանքը»* (Վենտուրա, Կալիֆոռնիա, «Regal Books», 2002թ.), էջեր 29,30:
(5) Ջոն Բունյան. *«Աստծո երկյուղը»* (Օռլանդո, Ֆլորիդա, «Soli Deo Gloria Publications», 2006թ.), էջ 79:
(6) Ջոն Վայթերսփունի մեջբերումները (http://dailychristianquote.com/quoteswa-wl.html#John%20 Witherspoon, վերցրած 15.09.2010թ.):

Իմ նշումները

«Այս վերջին տաճարի փառքը մեծ պիտի լինի առաջվանից,- ասում է Զորաց Տերը»:

— *Անգէ 2.9, NKJV*

6

ԳԱԼԻՔ ՓԱՌՔԸ

Խնդրում ենք օգտվել ուսումնական դասընթացի 6-րդ դասից, ինչպես նաև՝ *«Տիրոջ երկյուղը»* գրքի 9-րդ և 10-րդ գլուխներից:

«Ես հավատում եմ ամբողջ սրտով, որ մենք ապրում ենք եկեղեցու ժամանակաշրջանի վերջին օրերում: Շուտով Տերը վերադառնալու է: Մարգարեական խոսքերը կանխասեցին, որ Աստված զորավոր կերպով հայտնելու է Իր փառքը եկեղեցու ժամանակաշրջանի սկզբում, և կրկին՝ եկեղեցու ժամանակվա ավարտին՝ անմիջապես Իր երկրորդ գալուստից առաջ: Առաջին անձրևը սկսվեց Պենտեկոստեի օրը: Վերջին անձրևը դեռ պետք է գա»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

ԽՆ 1 Շատերն են համաձայնում, որ Աստծո դրսևորված փառքը ժամանակակից եկեղեցում, ինչպես և եկեղեցու միջոցով, այն չէ, ինչ առաջին եկեղեցում էր՝ Գործք առաքելոց գրքում: Մեր ներկա տեսանկյունից, առաջինն ավելի փառավոր է թվում, քան վերջինը: Բայց այս իրավիճակը փոխվելու է:

ա. Թվարկե՛ք Աստծո փառքի որոշ զարմանալի դրսևորումներ առաջին եկեղեցում:

_____

_____

_____

_____

Օգնության համար **կարդացե՛ք** Գործք առաքելոց գրքի հետևյալ հատվածները. 2.1-4, 41, 3.1-10, 12.6-11, 16.25-34, 19.11,12

բ. Սուրբ գրքի համաձայն, Աստծո փառքի վերջին անձրևն Իր եկեղեցու վրա ավելի *մեծ* է լինելու, քան առաջինը: Ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ն է այն լինելու այս ճշմարտության լույսի ներքո:

ԱՆՁՐԵՎԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի վերջին ուժեղ անձրևներ են սկսվում, որոնք ընդմիջվում են մեկ կամ մի քանի օրով: Աստվածաշունչն անվանում է սա **առաջին անձրև**: Այսպես սկսվում է գյուղատնտեսական տարին: Հողը, որ պնդացել և ճաքճքել էր երկարատև ամառվա ընթացքում, փափկում է, և գյուղացին սկսում է վարել և ցանել: Մինչև նոյեմբերի ավարտը անձրևների քանակն այնքան էլ շատ չէ, բայց այն ավելանում է դեկտեմբերի, հունվարի և փետրվարի ընթացքում: Թեև մինչև մարտ ամիսը անձրևները պակասում են, և մինչև ապրիլի կեսը՝ ամբողջովին դադարում, սակայն **վերջին անձրևները** Սուրբ գրքում հենց մարտից և ապրիլից սկսվող **հորդառատ** անձրևներն են: Քանի որ այդ անձրևները գալիս են *անմիջապես հունձքից* և երկար ամառային շոգից *առաջ*, դրանք շատ ավելի կարևոր են հողի համար, քան ձմեռային ամիսների անձրևները: Ահա թե ինչու են այդ միջանկյալ շրջաններն անտեսվում Սուրբ գրքում, և շեշտադրումն արվում է առաջին և վերջին անձրևների վրա[1]: Մարգարեների համար անձրևը նշանակում էր Աստծո շարունակաբար տրվող օրհնությունները և բարեհաճությունը Իր զավակների հանդեպ (տե՛ս Հովել 2.23): Ովսեն համեմատեց Աստծո ներկայությունը թարմացնող առաջին և վերջին անձրևների հետ (տե՛ս Ովսե 6.3): Անձրևի բացակայությունը Աստծո դժգոհության նշանն էր: Աստված կախվածության մեջ դրեց անձրևը, որն Իր պարգևն էր՝ Իր ժողովրդի շարունակական հավատարմությունից (տե՛ս Երկր. Օր. 11.13,14)[2]:

2 Այն բանից հետո, երբ Իսրայելը 70 տարի անցկացրեց բաբելոնյան գերության մեջ, նրանց թույլ տրվեց վերադառնալ իրենց հայրենիքը և վերականգնել այն: Նրանք մեծ նախանձավորությամբ սկսեցին վերակառուցել Երուսաղեմի տաճարը: Բայց մի քանի տարի անց կառուցման նախագիծը դադարեց: Անցավ տասնվեց տարի, բայց տաճարը դեռևս ավարտված չէր:

ա. Համաձայն Անգե 1.1-11 խոսքերի, ինչի՞ պատճառով աշխատանքները հետաձգվեցին, և մարդկանց նախանձավորությունը մարեց: Ի՞նչ ասաց Աստված այդ մասին (տե՛ս 9-11 խոսքերում):

բ. Ձեր կարծիքով, ինչպե՞ս է այս օրինակը կարելի համեմատել մեր ժամանակվա եկեղեցու հետ:

գ. Կարո՞ղ եք համեմատել այս պատմությունը ձեր անձնական կյանքի հետ: Եթե այո, ապա ինչպե՞ս: Ի՞նչ է Տերը մղում ձեզ անել՝ Իր *տաճարի* աշխատանքը վերականգնելու համար:

ԽՍ 3 Մաղաքիա մարգարեի ժամանակ, Իսրայել ժողովուրդը կրկին թողեց իր նվիրումն Աստծո հանդեպ: Այս դեպքում նրանք կույր, կաղ և հիվանդ կենդանիներ էին մատուցում Աստծուն (տե՛ս Մաղաքիա 1.6-8): Ըստ էության, նրանք լավը պահում էին իրենց, իսկ մնացորդները տալիս էին Աստծուն: Աստծո տեսանկյունից նման վարվելակերպը աներկյուղ վերաբերմունք էր:

ա. Մի պահ քննե՛ք ձեր կյանքը. կա՞ արդյոք որևէ բնագավառ, որում, ինչպես գիտեք, դուք տալիս եք ոչ թե լավագույնը, այլ մնացորդները: Եթե այո, ապա ո՞րն է այդ բնագավառը:

Հիշե՛ք ձեր պարտականությունները՝ որպես ամուսին/կին, ծնող, երեխա, տնօրեն/աշխատող, կամավորական, և այլն:

բ. Հիմնվելով ձեր նախորդ պատասխանի վրա՝ աղոթե՛ք և հարցրե՛ք Տիրոջը՝ ինչպե՞ս բարձրանալ հաջորդ մակարդակի վրա այդ բնագավառներում: Գրե՛ք այն, ինչ Նա ցույց է տալիս ձեր սրտում:

«Օ՜, եթե Դու ճեղքեիր Երկինքը և իջնեիր: Ինչպե՜ս սարերը կդողային Քո ներկայությունից: Քո փառքի մաշող կրակը կայրեր անտառները, կեռացներ և կչորացներ օվկիանոսները: Ազգերը կդողային Քո առջև. այդ ժամանակ Քո թշնամիները կիմանային Քո համբավի մասին: Այդպես եղավ անցյալում, երբ Դու իջար, որովհետև Դու զարմանալի բաներ արեցիր, ավելի, քան մեր ամենամեծ սպասումներն էին, և ինչպե՜ս էին սարերը դողում: Որովհետև աշխարհի սկզբից ի վեր ոչ ոք չի տեսել կամ լսել այսպիսի Աստծո մասին, որ մերն է, Ով գործում է նրանց համար, ովքեր սպասում են Նրան»:

— Եսայի 64.1-4, TLB

4 «Որպեսզի լիովին պատրաստ լինենք մասնակցելու այն ամենին, ինչ Աստված անելու է գալիք օրերում, կարևոր է, որ ճիշտ առաջնահերթություններ ունենանք: Մի պահ հարցրե՛ք ձեզ. *«Ի՞նչն է կարևոր ինձ համար՝ որո՞նք են իմ առաջնահերթությունները»*:

ա. Թվարկե՛ք հինգ առաջնահերթություն ձեր կյանքում (սկսած ամենակարևորից):

1) _____

2) _____

3) _____

4) _____

5) _____

բ. Այժմ հիշեք, թե ինչի վրա եք ծախսել ձեր ժամանակը և փողը վերջին մի քանի ամիսների ընթացքում: Արդյո՞ք ձեր քայլերը հաստատում են ձեր առաջնահերթությունների ցուցակը: Եթե ոչ, ապա հարցրեք Տիրոջը, թե ինչպիսի՞ փոփոխություններ կարող եք անել, որպեսզի կարգ ու կանոն հաստատեք ձեր կյանքում:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Առաջնահերթության ցուցանիշը մեր կյանքում այն է, թե ինչի վրա ենք ամենից շատ ծախսում մեր ժամանակը և փողը:
Կարդացե՛ք Մատթեոս 6.20,21 և 33 խոսքերը:

«Մենք պետք է հիշենք, թե ինչ նպատակով Աստված ստեղծեց մարդուն: Նա չդրեց Ադամին պարտեզում՝ համաշխարհային ավետարանչական, բժշկության կամ ազատագրման ծառայություն սկսելու համար: Ադամը դրված էր պարտեզում, որպեսզի Աստված կարողանար քայլել նրա հետ: Մենք ստեղծված ենք Աստծո համար: Մենք ստեղծված ենք, որպեսզի ապրենք Նրա փառքի մեջ. սա է Նրա նպատակը ձե՛զ համար»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

5 Աստծուն պատվելը և Նրան առաջին տեղը տալը Տիրոջ երկյուղի ցուցանիշ է: Կարդացե՛ք այս խոսքերը և տեսեք, թե ինչպիսի օրհնություններ կունենաք, երբ ձեր փոխհարաբերությունները Նրա հետ դարձնեք ձեր ամենագլխավոր առաջնահերթությունը:

«Բայց, նախ և առաջ, փնտրե՛ք (ձգտեք և փափագեք) Նրա արքայությունը և Նրա արդարությունը (Նրա արդար լինելը և արդարացի կերպով վարվելը), և դրանից հետո այս ամենը միասին կտրվի ձեզ, դրա հետ մեկտեղ»:

— *Մատթեոս 6.33,* AMP

«Այո, Ես որթն եմ, դուք ճյուղերն եք: Նրանք, ովքեր մնում են Ինձանում, և Ես՝ նրանցում, շատ պտուղ կտան: Որովհետև առանց Ինձ դուք ոչինչ չեք կարող անել: Բայց եթե դուք մնաք Ինձանում, և Իմ Խոսքերը մնան ձեզանում, դուք կարող եք խնդրել ինչ որ ցանկանաք, և դա կշնորհվի ձեզ»:

— *Հովհաննես 15.5,7,* NLT

«Սակայն նրանք, ովքեր սպասում են Տիրոջը, նոր ուժ կստանան. նրանք կբարձրացնեն թևերը արծիվների պես, նրանք կվազեն և չեն հոգնի, նրանք կքայլեն և չեն թուլանա»:

— *Եսայի 40.31,* NASB

«Մեկ բան է, որ խնդրում եմ Տիրոջից. այն, ինչին ամենից շատ եմ ձգտում՝ ապրել Տիրոջ տան մեջ իմ կյանքի բոլոր օրերում՝ Տիրոջ կատարելություններով հիացած և Նրա Տաճարի մասին մտորելով: Որովհետև Նա կծածկի ինձ այդտեղ, երբ փորձանք գա. Նա կթաքցնի ինձ Իր սրբարանում: Նա կդնի ինձ անհասանելի մի վայրում՝ բարձր ժայռի վրա»:

— *Սաղմոս 27.4,5,* NLT

Առնչվող սուրբգրային հատվածներ. Սաղմոս 119.2, Առակաց 3.5-8, Մարկոս 12.29,30

ա. Աստծուն առաջին տեղը տալու պատճառով գալիս են հետևյալ օրհնությունները…

_____

_____

_____

_____

_____

բ. Արդյո՞ք այս խոսքերը մարտահրավեր են նետում ձեզ: Արդյո՞ք դրանք խրախուսում են:

_____

_____

_____

_____

Մտածե՛ք այս մասին

«Ինչո՞ւ որոշ մարդիկ շատ ավելի մտերիմ շփում ունեն Աստծո հետ, քան մյուսները: Ինչո՞ւ է Աստված հայտնում Իր ներկայությունը մի քանիսին, և թույլ է տալիս, որ բազում մարդիկ պայքարեն՝ քայլելով քիստոնեական անկատար փորձառության կիսախավարի մեջ: Իհարկե, Աստծո կամքը նույնն է բոլորի համար: Նա անաչառ չէ Իր ընտանիքի հանդեպ: Այն ամենը, ինչ Նա երբևէ արել է Իր զավակներից մեկի համար, պատրաստ է անել մնացած բոլորի համար: Տարբերությունը ոչ թե Աստծո մեջ է, այլ՝ մեր:

Մտաբերե՛ք ամենամեծ սրբերի մի տասնյակ, ում կյանքերը և վկայությունները հայտնի են ամենուր: Ընտրեք կա՛մ Հին կտակարանի հերոսներից, կա՛մ Նոր կտակարանի քաջ հայտնի քրիստոնյաներից, կա՛մ Աստվածաշունչը գրվելուց հետո ապրող մարդկանցից: …Ես կհամարձակվեմ ասել, որ կա մեկ շատ կարևոր հատկություն, որ բոլորն էլ ունեին՝ հոգևորապես ընկալունակ լինելը: Ինչ-որ բան նրանց ներսում բաց էր Երկնքի համար, ինչ-որ բան նրանց մղում էր դեպի Աստված: Առանց փորձելու խորը հետազոտություններ անցկացնել՝ կասեմ հետևյալը. նրանք զգում էին իրենց հոգում, որ պետք է զարգացնեին այդ հատկությունը, մինչև որ դարձնեին այն իրենց կյանքի ամենակարևոր մասը: Նրանք տարբերվում էին հասարակ մարդկանցից հետևյալով. *զգալով այդ ներքին փափագը՝ նրանք սկսում էին ինչ-որ քայլեր ձեռնարկել:* Նրանք ձեռք էին բերել Աստծո հոգևոր ազդանշաններին արձագանքելու սովորություն և պահպանել էին այն ամբողջ կյանքի ընթացքում: Նրանք անհնազանդ չէին երկնային տեսիլքին: Դավիթը հստակորեն արտահայտեց սա՝ ասելով. «Իմ սիրտն ասում է Քեզ Քո Խոսքը, թե՝ խնդրե՛ք Իմ երեսը. ահա, Տե՛ր, ես էլ խնդրում եմ Քո երեսը» (Սաղմոս 27.8)»»:

— *Է. Ու. Թոզեր*[3]

Խ **6** Դավիթն Աստծո սրտի համեմատ մարդ էր: Նա փափագում էր, որ Աստծո փառքը վերադառնար Իսրայել: Ահա թե ինչու էր նա ցանկանում վերադարձնել Ուխտի տապանակը Երուսաղեմ: Թեև նրա դրդապատճառները մաքուր և գովելի էին, բայց նրա մեթոդներն ամբողջովին ճիշտ չէին:

ա. Ո՞ւմ հետ Դավիթը խորհրդակցեց *առաջին* անգամ՝ մինչև տապանակը տեղափոխելը: Ո՞վ ակնհայտորեն ազդեցություն թողեց այն մեթոդների վրա, որ նա կիրառում էր: Ի՞նչ տեղի ունեցավ արդյունքում:

_____

_____

_____

_____

Կարդացե՛ք Ա Մնացորդաց 13.1-14-ը: Ա Թագավորաց 6.1,2,7,8 խոսքերը համեմատե՛ք Բ Թագավորաց 6.1-4-ի հետ:

բ. Ինչպե՞ս է այս օրինակը համեմատելի այն ամենի հետ, ինչ մենք այսօր անում ենք Աստծո համար: Ի՞նչ կարող ենք սովորել սրանից:

_____

_____

_____

_____

գ. Ի՞նչ արեց Դավիթը, մինչև տապանակը *երկրորդ* անգամ տեղափոխելը: Ո՞ւմ կամ ինչի՞ հետ նա խորհրդակցեց: Ի՞նչ կարող եք սովորել սրանից:

_____

_____

_____

_____

Կարդացե՛ք Ա Մնացորդաց 15.2,12,13

Խ **7** Աներկյուղ վերաբերմունքը և վարքը Աստծո հանդեպ հիմնական խոչընդոտներն են, որ պահում են Նրա փառքի «վերջին անձրևը»: Աստծուն երկյուղածություն և պատիվ տալով՝ դուք կարող եք օգնել, որ Նրա փառքը նորովի հայտնվի ժամանակակից եկեղեցում: Աղոթե՛ք և խնդրե՛ք Աստծուն՝ ցույց տալ ձեզ, թե ինչպես կարող եք փառք բերել Նրան եկեղեցում, տանը, տալու, մարդկանց ծառայելու և այլնի միջոցով:

Ես կարող եմ պատիվ և երկյուղածություն ցուցաբերել Աստծո հանդեպ հետևյալ կերպով...

_____

_____

Հոչակել
ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Ամենախոր տպավորությունը ստեղծվում է սուրբ կյանքից. փարոսները փողեր չեն փչում, դրանք միայն փայլում են»:

— *Ռ. Ջ. Մուրի*

8 Գործք առաքելոցի ամբողջ գրքում մենք տեսնում ենք, թե ինչպես էին աշակերտներն ամենուր հրաշքներ և նշաններ գործում: Հրաշքներից հետո շատերն էին ապաշխարում և սկսում հավատալ Տիրոջը: Այս հոգիների հունձքը պատվական պտուղն է, որ երկիրը տվեց Աստծո փառքի առաջին անձրևից: Կա ևս մեկ հունձք, որը դեռ լինելու է:

ա. Որքա՞ն կարևոր է ձեզ համար մարդկանց վերստին ծնունդը և մուտքը Աստծո ընտանիք: Որքա՞ն կարևոր է դա Աստծո համար:

Կարդացե՛ք Ա Տիմոթեոս 2.1-4, Բ Պետրոս 3.9

բ. Դուք հավատո՞ւմ եք, որ ձեր ընտանիքի չփրկված անդամները և ընկերները կընդունեն Տիրոջը մինչև Նրա վերադարձը:

Շարունակե՛ք աղոթել ձեր սիրելիների համար: Ձեր ջերմեռանդ, սրտանց աղոթքները դրական փոփոխություններ են բերում (տե՛ս Հակոբ. 5.16):

գ. *Լռությամբ եկեք Տիրոջ առջև*: Հարցրե՛ք Նրան. «Ի՞նչ պետք է փոխվի ինձանում, որպեսզի Քո հրաշքները դրսևորվեն իմ միջոցով և Քո եկեղեցու միջոցով»: Աղոթքով հանձնեք Տիրոջը այն ամենը, ինչը փոփոխության կարիք ունի:

«Արդարի պտուղը կյանքի ծառ է, և հոգիներ շահողը՝ իմաստուն»:

— Առակաց 11.30

«Վերջին անձրևը մշտապես ավելի մեծ հունձք էր բերում: Հոգիների ամենամեծ հունձքը, որ աշխարհը երբևէ տեսել է, մուտք է գործելու Արքայության մեջ այս վերջին սերնդի ժամանակ: Ես ցանկանում եմ հավատալ ողջ սրտով, որ մենք այդ սերնդի մասն ենք»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

ԽՍ 9 Աստված ցանկանում է, որ պատրաստվելով Նրա գալիք փառքին՝ մենք լայնացնենք մեր տեսիլքը և ակնկալենք, որ Նա մեզանում և մեր միջոցով կարող է անել շատ ավելին: Այս փառքը, որ գալիս է, յոթ անգամ գերազանցելու է նախորդը:

ա. Կարդացե՛ք Եսայի 30.18-ը (AMP, շեղագիրն ավելացրած է) և գրեք, թե ինչ է Սուրբ Հոգին հայտնում ձեզ այն վարձատրության մասին, որ ստանում են նրանք, ովքեր Աստծուց մեծ սպասումներ ունեն:

Եվ այդ իսկ պատճառով Տերը [նախանձախնդրությամբ] սպասում է [ակնկալելով, որոնելով և փափագելով], որպեսզի շնորհք ցուցաբերի ձեր հանդեպ. այդ իսկ պատճառով Նա բարձրացնում է Իրեն, որպեսզի կարողանա ողորմալ և Իր սիրող գթասրտությունը ցուցաբերել ձեր հանդեպ: Որովհետև Տերը արդարության Աստված է: Օրհնված (երջանիկ, բախտավոր և նախանձելի) են նրանք, ովքեր [նախանձախնդրությամբ] սպասում են Նրան, ովքեր *ակնկալում են* և *որոնում են* և *փափագում են Նրան* [Նրա հաղթանակին, Նրա բարեհաճությանը, Նրա սիրուն, Նրա խաղաղությանը, Նրա ուրախությանը և Նրա անսահման, անխախտ ընկերությանը]:

Հոչակել
ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«...Սպասումը կատարյալ միջավայր է հրաշքների դրսևորման համար: Համարձակվե՛ք չհանձնվել. համարձակվե՛ք զբաղեցնել ձեր տեղը պատմության այս փառահեղ ժամանակահատվածում: Որովհետև ո՞վ գիտի, թե ինչ է սպասվում իրեն: Ես զգում եմ, որ ջրերը բարձրանում են՝ հոգևոր մակընթացությունը բարձրանում է, և մենք կտարվենք այդ հոսքով, երբ մեր ներսում ամբողջովին համակվենք Աստծուն ծառայելու ցանկությամբ: Այն արդեն հասնում է մեզ, և մենք հրաշալի իրադարձությունների սահմանագծին ենք, այնպես որ, ես խրախուսում եմ յուրաքանչյուրին եկեղեցում՝ պատրաստվել»:

— *Դարրիլ Չեփ*[5]

բ. Ի՞նչ տեսիլք է Աստված դրել ձեր սրտում: Ի՞նչ եք փափագում, որ Նա անի ձեր, ձեր սիրելիների և ձեզ շրջապատող մարդկանց կյանքերում:

_____

_____

_____

«Գիտեք, Աստված կարող է անել ամեն ինչ՝ շատ ավելին, քան դուք երբևէ պատկերացրել կամ գուշակել կամ խնդրել եք ձեր ամենահամարձակ երազանքներում: Նա անում է դա՝ ոչ թե հարկադրելով մեզ, այլ խորապես և մեղմորեն գործելով մեր ներսում Իր Հոգով, Ով մեզանում է: Փա՜ռք Աստծուն եկեղեցում: Փա՜ռք Աստծուն Մեսիայի՝ Հիսուսի մեջ: Փա՜ռք բոլոր սերունդների մեջ: Փա՜ռք բոլոր հազարամյակների ընթացքում: Օ՜, այո՛»:

— Եփեսացիների 3.20,21, MSG

«Այն, թե որտեղ ենք մենք եղել և, թե որտեղ ենք հիմա, այն չէ՝ ուր ենք գնում: Մենք պետք է բարձրացնենք մեր աչքերը դեպի հորիզոնը և նայենք Նրա գալիք փառքին: Տարբերությունը առաջին եկեղեցու և այսօրվա եկեղեցու միջև մե՛ծ է լինելու: Վերջինի փառքը շատ ավելի մեծ է լինելու, քան առաջինի փառքը»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Աստծո երկյուղի օրհնություններ

«Այդ ժամանակ եկեղեցին՝ ողջ Հուդայում, Գալիլեայում և Սամարիայում, որոշ ժամանակ խաղաղություն ունեցավ: Այն զորացավ, և Սուրբ Հոգուց խրախուսված՝ քանակապես աճեց՝ ապրելով Տիրոջ երկյուղի մեջ»:

Գործք 9.31, NIV

«Փա՜ռք Տիրոջը: Որքա՜ն ուրախ են նրանք, ովքեր վախենում են Տիրոջից և բերկրանք զգում՝ հնազանդվելով Նրա պատվիրաններին: Նրանց երեխաներն ամենուր հաջողակ կլինեն. աստվածապաշտ մարդկանց մի ամբողջ սերունդ օրհնված կլինի: Նրանք հարուստ կլինեն, և նրանց բարի գործերը կմնան հավիտյան»:

Սաղմոս 112.1-3, NLT

«Երբ Հիսուսն այստեղ՝ երկրի վրա էր, Նա աղոթքներ և աղաչանքներ էր մատուցում բարձր աղաղակով և արցունքներով Նրան, Ով կարող էր փրկել Իրեն մահից: Եվ Աստված լսեց Նրա աղոթքները այն խորը երկյուղածության շնորհիվ, որ Նա ուներ Աստծո հանդեպ»:

Եբրայեցիների 5.7, NLT

Շաբաթական գործունեություն

6

Հենց այնտեղ, որտեղ ապրում եք

ՎԵՐԱՊՐԵ՛Ք ՆՐԱ ՁՈՐՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Կա՞ արդյոք որևէ բնագավառ ձեր կյանքում, որտեղ ցանկանում եք, որ Աստծո փառքն ավելի շատ դրսևորվի: Մի բնագավառ, որտեղ Նրա բնավորությունը չի արտացոլվում ձեր կյանքում: Կա հրաշալի նորություն՝ այն կարող է փոխվել: Պարտադիր չէ, որ այն, ինչ մշտապես նույնն է եղել, այդպես էլ մնա: Աստված տվել է ձեզ Իր զորության անխախտելի և անփոփոխ Խոսքը, որի շնորհիվ դուք կարող եք կործանել նույնիսկ ամենաարմատացած մտածելակերպերը և վարքագծերը:

Որքա՞ն զորավոր է Աստծո Խոսքը

«Մի՞թե Իմ Խոսքը կրակի նման չէ [որ կլանում է այն ամենը, որ չի կարող դիմանալ և փորձվում է Իրենով],- ասում է Տերը, և *մուրճի* նման, որ կտորկտոր է անում [ամենաուժեղ հակառակության] ժայռը»:

— *Երեմիա 23.29,* AMP

«Որովհետև այն Խոսքը, որ Աստված խոսում է, *կենդանի է* և *լի զորությամբ* [ինչն այն դարձնում է գործուն, կիրառելի, ուժ տվող և արդյունավետ]. այն ավելի սուր է, քան ցանկացած երկսայրի սուր, և թափանցում է կյանքի շնչի (անձի) և [անմահ] հոգու սահմանագծով, և հոդվածների և ծուծքի [մեր բնության ամենախոր մասերի] սահմանագծով՝ բացահայտելով, գտելով, վերլուծելով և դատելով սրտի մտքերը և մտադրությունները»:

— *Եբրայեցիների 4.12,* AMP

«Խոնարհ [հեզ, պարկեշտ] հոգով ընդունեք և ողջունեք այն Խոսքը, որ, լինելով սերմված և արմատացած [ձեր սրտերում], պարունակում է այնպիսի զորություն, որը կարող է փրկել ձեր անձերը»:

— *Հակոբոս 1.21,* AMP

[շեղագիրն ավելացրած է]

Առնչվող սուրբգրային հատվածներ. Սաղմոս 107.20, Հռոմեացիների 1.16, Հովհաննես 8.31,32

ՓՈՐՁԵ՛Ք ԽՈՍՔԸ: ԿԻՐԱՌԵ՛Ք ԱՅՆ ՁԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

- **Ընտրե՛ք որևէ բնագավառ ձեր կյանքում**, որտեղ ցանկանում եք, որ Աստծո փառքն ավելի շատ դրսևորվի: Օրինակ՝ միգուցե դուք կարիք ունեք վերահսկել ձեր միտքը՝ անհանգստությունը և մտահոգությունը հաղթահարելու համար:

- **Գտե՛ք հատվածներ Աստծո Խոսքից**, որոնք հռչակում են, որ Քրիստոսի մեջ դուք կարող եք ունենալ Աստծո բնավորությունը, ոչ թե այն բնավորության գծերը, որ ներկայումս նկատում եք: Կրկին, եթե ձեր խնդիրը

անհանգստությունը և մտահոգությունն են, գտե՛ք խոսքեր Աստծո սիրո և հավատարմության մասին, օրինակ՝ Մատթեոս 6.24-34, Ա Պետրոս 5.7 և Փիլիպեցիների 4.6-8:

- **Բարձրաձայն կարդացե՛ք այդ հատվածները** օրական մի քանի անգամ: Որոշում կայացրեք հռչակել Աստծո Խոսքը ձեր կյանքում հաջորդ 30 օրվա ընթացքում: Կարդացե՛ք բոլոր հատվածներն առաջին դեմքով: Ասե՛ք. «Ես հոգս չեմ անում այն մասին, թե ինչ եմ ուտելու կամ խմելու: Աստված հոգում է երկնքի թռչունների մասին, և իհարկե, Նա կհոգա իմ մասին»:

- **Զարմանքով տեսեք**, թե ինչ է կատարվում ձեր կյանքում այս քայլերի արդյունքում:

- **Գրանցե՛ք այն, ինչ կատարվեց**, նաև այն ամենը, ինչ Տերը հայտնում է ձեզ:

Գրի՛ առեք ձեր ընթացքը

Սկզբի ամսաթիվը _____

_____

_____

_____

_____

_____

_____

Ավարտի ամսաթիվը _____

Շաբաթական գործունեություն

6

ԽՈՐԱՑԵ՛Ք ԱՍՏԾՈ ԱՆԳԻՆ ԳԱՆՁԻ ՄԵՋ

«Ես ցնծում եմ Քո խոսքով, ինչպես նա, ով մեծ գանձ է գտել»:

— Սաղմոս 119.162, NLT

Ի՞նչ է ձեզ համար Աստվածաշունչը: Հուսով ենք, որ այն չեք համարում պարզապես լավ գիրք, որտեղ կան հետաքրքիր պատմություններ և «կարելիների ու չի կարելիների» երկար ցուցակներ: Այն հավիտենական գլուխգործոց է, որին նման չէ ոչ մի գիրք երկրի վրա: Այն Աստծո կենսատու, ոգեշնչված Խոսքն է, որն իսկապես անգին գանձ է: Սաղմոսերգուն ասում է. «Քո բերանի ճշմարտությունն ավելին է ինձ համար, քան անսպասելիորեն հարստանալը՝ ոսկու հանք գտնելով» (Սաղմոս 119.72, MSG):

Չարլզ Կոլսոնը, ով «Բանտերի ընկերակցության ծառայության» առաջնորդն է, նաև ոգեշնչող հեղինակ և քարոզիչ, խորաթափանց հայացք է գցում Աստվածաշնչին.

«Աստվածաշունչը՝ արգելված, այրված, սիրված: Ավելի շատ կարդացվող և ավելի հաճախ հարձակումների ենթարկվող, քան ցանկացած գիրք պատմության մեջ: Սերունդներ շարունակ մտավորականները փորձել են վարկաբեկել այն. բոլոր ժամանակների բռնապետերն արգելել են այս Գիրքը և մահապատժի ենթարկել նրանց, ովքեր կարդացել են այն: Սակայն զինվորները կռվի գնալիս վերցրել են այս Գիրքը՝ հավատքով, որ այն զենքերից ավելի զորավոր է: Այս Գրքի հատվածները, որոնք գաղտագողի տարվել են բանտային մենախցեր, փոխել են անգութ մարդասպաններին՝ դարձնելով հեզ սրբեր: Սուրբ գրքի էջերի կտորտանքը կրկին իրար միացվելուց հետո, դարձի են բերել հեթանոս հնդկացիների ամբողջ ցեղերի: …Գրականության դասականները դարեր շարունակ մնում են: Փիլիսոփաները կերտում են դեռևս չծնված սերունդների մտքերը: Ժամանակակից լրատվամիջոցները ձևավորում են մեր մշակույթը: Սակայն ոչինչ ազդեցություն չի թողել քաղաքակրթությունների բարձրացման և անկման, մշակույթների առանձնահատկությունների, կառավարությունների կառուցվածքի և աշխարհի բնակիչների կյանքի վրա այնքան խորապես, որքան Աստվածաշնչի Խոսքերը»:

— *Չարլզ Կոլսոն*[6]

Իսկապես, Աստվածաշունչը մշտապես ենթարկվել է հարձակումների և քննադատության, հատկապես ժամանակակից հասարակության մեջ: Բայց մտածե՛ք այս մասին… Ինչո՞ւ է այս գիրքն այդքան հարձակումների ենթարկվում: Պետք է ինչ-որ բան լինի այս 66 գրքերի հավաքածուի մեջ, որոնք գրվել են ավելի քան 1600 տարվա ընթացքում 40 տարբեր մարդկանց կողմից՝ ինչ-որ անհավանական, հզոր մի բան, որը սպառնում է Աստծո թշնամիներին և զորացնում Իր ժողովրդին:

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ

«Հիշե՛ք ամենակարևորը. չկա ոչ մի մարգարեություն Սուրբ գրքում, որը մասնավոր մարդկային կարծիքի առարկա է: Եվ ինչո՞ւ: Որովհետև այդտեղ գրվածը չի հղացել մարդկային սրտում: Մարգարեությունը սկիզբ է առել, երբ Սուրբ Հոգին մղել է տղամարդկանց և կանանց՝ խոսել Աստծո Խոսքը»:

— *Բ Պետրոս 1.20,21,* MSG

«Ողջ Սուրբ գիրքը ոգեշնչված է Աստծուց և օգտակար է սովորեցնելու մեզ այն, ինչ ճշմարիտ է, և հասկացնելու մեզ, թե ինչն է սխալ մեր կյանքերում: Այն ուղղում է մեզ, երբ մենք սխալ ենք, և սովորեցնում է անել այն, ինչ ճիշտ է: Աստված օգտագործում է այն, որպեսզի պատրաստի և սպառազինի Իր ժողովրդին՝ ամեն բարի գործ անելու համար»:

— *Բ Տիմոթեոս 3.16,17,* NLT

• • • • • •

«Որովհետև այն ամենը, ինչ գրված է անցյալում, գրված է մեզ սովորեցնելու համար, որպեսզի Սուրբ գրքի հարատևության և խրախուսանքի միջոցով մենք կարողանանք հույս ունենալ»:

— *Հռոմեացիների 15.4,* NIV

«Այս ամենը կատարվեց՝ որպես օրինակ այլ մարդկանց համար: Այս ամենը գրվեց՝ որպես զգուշացում մեզ համար, որ ապրում ենք պատմության վերջին օրերում»:

— *Ա Կորնթացիների 10.11,* GW

Համաձայն այս խոսքերի, ո՞վ է գրել Աստծո Խոսքը:

Ինչո՞ւ է այն գրվել:

Արդյո՞ք Աստվածաշունչը հնացած գիրք է, թե՞ այն արդիական է այսօր: Որտեղի՞ց գիտեք, որ կարելի է վստահել Աստվածաշնչին:

Կարդացե՛ք Ա Պետրոս 1.24,25 • Մատթեոս 5.18 • Սաղմոս 12.6, 119.89 • Թվոց 23.19

Ինչպիսի՞ գանձեր են պատրաստված ձեզ համար Սուրբ գրքում, երբ դուք մշտապես սնում եք ձեր հոգին Աստծո Խոսքով:

Կարդացե՛ք Հեսու 1.8 • Սաղմոս 1.1-3, 19.7-11 • Ա Պետրոս 2.2 • Երկրորդ Օրինաց 11.18-21

Արդյո՞ք ներկայումս Աստծո Խոսքը կենսականորեն կարևոր է ձեզ համար: Որքանո՞վ է ձեր առօրյա կյանքն ապացուցում դա:

«Քո խոսքերը հաստատում են ինձ. դրանք կերակուր են իմ քաղցած անձի համար: Դրանք ուրախություն են բերում իմ տրտմած սրտին և բերկրանք են պատճառում ինձ: Որքա՜ն եմ հպարտանում, որ կրում եմ Քո անունը, ո՜վ Տեր»:

— Երեմիա 15.16, TLB

«Ես հավատում եմ, որ եթե եկեղեցին իրականում ջանք թափեր Տիրոջ երկյուղն ունենալու համար, մենք կտեսնեինք, թե ինչպես է Աստծո փառքը վերականգնվում եկեղեցում: Ես հավատում եմ, որ եթե մենք իրականում քաղցած լինեինք Աստծո Խոսքի հանդեպ այն աստիճան, որ ուղղեինք մեր սրտերը հանճարին, աղաղակեինք հասկացողություն ստանալու համար և փնտրեինք իմաստությունը թաքնված գանձի պես, մենք կրկին կտեսնեինք Տիրոջ երկյուղը եկեղեցում»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Ինչո՞ւ է Աստծո Խոսքը կարևոր ձեզ համար: Եթե դուք 30 վայրկյան կամ ավելի պակաս ժամանակ ունենայիք, որպեսզի խրախուսեիք ողջ աշխարհին՝ կարդալ և ուսումնասիրել Աստվածաշունչը, ի՞նչ կասեիք:

_____

_____

_____

Անվանե՛ք ձեր երեք ամենասիրելի «գանձերը» Սուրբ գրքից: Ինչո՞ւ են այս խոսքերը կարևոր ձեզ համար: Ինչպե՞ս են դրանք փոխել ձեր կյանքը:

_____

_____

_____

_____

Աստծո Խոսքի հարստությունը դեռ սպասում է՝ բացահայտվելու համար: Դուք հրավիրված եք՝ հետազոտելու Խոսքի հարստությունները, և Սուրբ Հոգին պատրաստ է հայտնել այդ անգին ճշմարտությունները: Դուք ցանկանո՞ւմ եք ավելի շատ քաղց ունենալ Աստծո Խոսքի հանդեպ և ավելի լավ հասկանալ այն: Սրտանց աղոթե՛ք այս աղոթքը.

Աղոթք՝ քաղց և գիտելիք ստանալու համար

Հա՛յր, շնորհակալությո՛ւն Քո Խոսքի համար, որն անգին պարգև է: Այն իսկապես որ գանձ է: Ների՛ր ինձ երբևէ այն անտեսելու համար: Տո՛ւր ինձ անհագ քաղց՝ այն կարդալու և ուսումնասիրելու համար: Քո ճշմարտությունը ոչ միայն մտքի մեկ ականջից և դուրս գա մյուսից, այլ, որ այն մշտական

տեղ գտնի իմ սրտում և իմ անձի մեջ: Սո՛ւրբ Հոգի, եղի՛ր իմ ուսուցիչը: Սուրբ գրքում ասվում է, որ Դու մշտապես բնակվում ես ինձանում և առաջնորդում ես ինձ ամեն ճշմարտության մեջ (տե՛ս Ա Հովհ. 2.27, Հովհ. 14.26, 16.13): Տո՛ւր ինձ ականջներ՝ լսելու համար այն, ինչ սովորեցնում ես ինձ. տո՛ւր, որ ամբողջությամբ հիշեմ Քո ճշմարտությունը: Թո՛ղ որ ես միշտ առաջին տեղը հատկացնեմ քեզ և փնտրեմ Քո իմաստությունն ու առաջնորդությունը՝ ամեն ջանք գործադրելով: Դու զարմանալի ես, Տե՛ր, և ես փափագում եմ տեսնել Քո գալիք փառքը... Հիսուսի անունով, ամե՛ն:

Իմ օրագիրը

ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ՀԻՇԵԼ

Լավագույնը, որ Աստված պատրաստել է, դեռ առջևում է: Այն փառքը, որ գալիս է մեզ՝ Իր եկեղեցու վրա, կգերազանցի բոլոր աստվածային շարժերը և Աստծո փառքի դրսևորումները, որ եղել են նախորդ սերունդների ընթացքում: Արդյո՞ք դուք պատրաստում եք ձեզ Նրա համար: Արդյո՞ք դուք ավելի եք հասկանում և ընդունում Տիրոջ երկյուղը: Մի քանի րոպե հատկացրեք և գրի առեք ցանկացած միտք, որ, ինչպես զգում եք, Սուրբ Հոգին հայտնում է ձեր սրտին:

_____

_____

_____

_____

_____

ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Աստված սկսեց թափել Իր Հոգին ամեն մարմնի վրա Պենտեկոստեի օրը, ինչը Նրա փառքի «առաջին անձրևն» էր: Բայց Աստված դեռ չի ավարտել: Կա «վերջին անձրև», որը պետք է թափվի Նրա եկեղեցու վրա գալիք օրերում: Տիրոջ երկյուղի շնորհիվ, մենք կարող ենք մոտենալ Նրա սրտին, իմաստություն և առաջնորդություն ստանալ Նրա Խոսքից և պատրաստ լինել, երբ Նրա դրսևորված ներկայությունը կրկին գա: Ժամանակն է, որ ձեր կյանքում Աստծուն հատկացնեք առաջին տեղը, ընդլայնեք ձեր սպասումները և պատրաստվեք զարմանալի իրադարձությունների:

(1) Մեջբերում *«Անգերի նոր Աստվածաշնչի բառարան»*-ից, Մերիլ Ֆ. Անգեր (Չիկագո, Իլինոյս. «Moody Press», Վերանայված և նորացված հրատարակություն, 1988թ.):
(2) Մեջբերում *«Աստվածաշնչյան փաստերի Նելսոնի պատկերազարդ հանրագիտարան»*-ից. Ջեյմս Ի. Փեքեր, Մերիլ Ս. Թենի, Վիլյամ Ուայթ՝ կրտսեր խմբագիրներ, (Նեշվիլ, Տենեսի, «Thomas Nelson Publishers», 1995թ.), էջ 184:
(3) Է. Ու. Թոզեր. *«Հետել Աստծուն»* (Քեմփ Հիլ, Փենսիլվանիա, «Christian Publications, Inc.», 1993թ.), էջեր 62,63:
(4) *«Արագ ընդմիջում. հինգրոպեանոց ամենօրյա ընթերցանություններ՝ ձեր օրը սկսելու համար»* (Սենտ Սան Լուիս Օբսիպո, Կալիֆոռնիա, «Parable», 2007թ.), Օր 334:
(5) Դարլին Չեխ. *«Շռայլ երկրպագություն»*, (Բլումիգթոն, Մինեսոտա, «Bethany House Publishers», 2001թ., 2002թ.), էջեր 154,155:
(6) Չարլզ Կոլսոն. *«Սիրել Աստծուն»*, (Գրանդ Ռեփիդս, Միչիգան, «Judith Markham Books», 1983թ.), էջ 55:

Իմ նշումներիս

«Երբ ինչ-որ մեկը դառնում է դեպի Տերը, այն քողը հեռացվում է: Որովհետև Տերը Հոգի է, և որտեղ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատություն է:

Այնպես որ, բոլորս, ում վրայից այդ քողը հեռացվել է, կարող ենք տեսնել և արտացոլել Տիրոջ փառքը:

Եվ Տերը, Ով Հոգի է, մեզ դարձնում է ավելի ու ավելի Իր նման, և մենք փոխվում ենք Նրա փառավոր պատկերով»:

— Բ Կորնթացիների 3.16-18, NLT

7

ՓԱՌՔԻՑ՝ ՓԱՌՔ

Խնդրում ենք օգտվել ուսումնական դասընթացի 7-րդ դասից, ինչպես նաև՝ «Տիրոջ երկյուղը» գրքի 11-րդ և 12-րդ գլուխներից:

«Տեսնելով Տիրոջ փառքը Իր հայտնված Խոսքի *հայելու* մեջ՝ մենք «կերպարանափոխվում ենք [փոխվում ենք] համաձայն Տիրոջ պատկերին՝ փառքից՝ փառք»: Աստվածաշունչը սա անվանում է՝ «գործել» մեր փրկությունը»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

1 Նոր ուխտում Աստված չի ցանկանում, որ մենք արտացոլենք Նրա փառքը, այլ՝ որ *արծակենք* այն (տե՛ս Բ Կորնթ. 3.10): Ցավոք, իսրայելցիները չստացան Հին ուխտի փառքը: Պատճառն այն էր, որ նրանց մտքերը կուրացած էին, և նրանք չկարողացան տեսնել այն ամենը, ինչի կարիքն այդքան հուսահատորեն ունեին: Պողոսը զգուշացնում է մեզ, որ կույր չդառնանք և չհայտնվենք նույն երկընտրանքի առջև[1]:

ա. Ինչի՞ պատճառով նրանց սրտերը կուրացան:

_____

_____

_____

_____

_____

Կարդացե՛ք Երկրորդ Օրինաց 5.28,29

բ. Իսրայելցիները վստահեցին Մովսեսին՝ լսել Աստծուն իրենց փոխարեն: Պատճառն այն էր, որ նրանք վախենում էին Աստծո ներկայությունից:

Արդյո՞ք դուք որևէ կերպով վստահել եք ձեր հովվին կամ մեկ այլ քարոզչի՝ լսել Աստծուն ձեր փոխարեն, սակայն ինքներդ հեռացել եք Նրա ներկայությունից: Եթե այո, ապա ինչո՞ւ:

_____

_____

_____

_____

Լռությամբ մոտեցեք Տիրոջը: Ապաշխարեք և խնդրեք Նրան՝ ցույց տալ ձեր սրտի իրական վիճակը, և թե ինչպես է Նա տեսնում ձեզ: Ժամանակ հատկացրեք, որպեսզի պարզապես վայելեք Նրա ներկայության մեջ լինելը: Նա փափագում է, որպեսզի դուք մոտենաք Իրեն:

Խ 2 Աստծո շնորհքը միակ միջոցն է, որ կարող է օգնել մեզ՝ հեռու մնալ բողոքելուց և տրտնջալուց: Բողոքը և տրտունջը *թույլ չեն տալիս մեզ փոխվել*: Դրանք ցույց են տալիս, որ մարդը չունի Տիրոջ երկյուղը, նաև հավատք Աստծո և Նրա Խոսքի հանդեպ: Սուրբ գիրքը մշտապես կապակցում է այս վերաբերմունքը ապստամբության և անհավատության հետ:

ա. Կարդացե՛ք Թվոց 14.20-35 և Եբրայեցիների 3.12-4.1 հատվածները: Ի՞նչ կատարվեց իսրայելցիների հետ, իրենց տրտունջի և անհավատության արդյունքում:

_____

_____

_____

_____

Առնչվող սուրբգրային հատված. Ա Կորնթացիների 10.10

բ. Ի՞նչ է ցույց տալիս այս օրինակը և ինչի՞ է այն մղում ձեզ:

_____

_____

_____

_____

գ. Ի՞նչ է Աստված ցանկանում, որ անեք, երբ որևէ խնդիր է առաջանում՝ բողոքելու, տրտնջալու կամ ինքնատիրապետումը կորցնելու փոխարեն:

_____

_____

_____

_____

Կարդացե՛ք Փիլիպեցիների 4.6,7, Ա Պետրոս 5.6,7, Առակաց 3.5,6

դ. Կա՞ արդյոք որևէ բնագավառ կամ որևէ իրավիճակ ձեր կյանքում, որի հանդեպ վերջերս սխալ վերաբերմունք եք ունեցել: Եթե այո, ապա ինչի՞ մասին է խոսքը: Ինչպե՞ս կարող եք նայել դրան Աստծո տեսանկյունից:

_____

_____

_____

_____

«Արեք ամեն ինչ՝ առանց փնթփնթալու, սխալներ գտնելու, տրտնջալու [ընդդեմ Աստծո], անվստահություն ունենալու և կասկածելու [իրար հանդեպ]»:

— Փիլիպեցիների 2.14, AMP

«Տրտունջը Տիրոջ երկյուղի բացակայության ախտանշան է, նաև առաջին ցուցանիշը, որ մենք *անհնազանդ ենք դառնում*: Աստված ատում է այն: Տրտունջն այն հինգ մեղքերից մեկն է, որ թույլ չտվեցին Իսրայելին՝ մուտք գործել Խոստման երկիր: Ինչո՞ւ է Աստված ատում տրտունջը: Որովհետև տրտունջն ասում է Աստծուն. «Ինձ դուր չի գալիս այն, ինչ Դու անում ես իմ կյանքում, և եթե ես Քո փոխարեն լինեի, այլ կերպ կվարվեի»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Խ 3 Աստված ցանկանում է, որ տրտնջալու փոխարեն *գոհանանք*: Գոհությունը Տիրոջ երկյուղի արտահայտություններից մեկն է, և այն բացում է Նրա ներկայության դռները (տե՛ս Սաղմ. 100.4): Նրա շնորհիքով մենք կարող ենք սովորել, թե ինչպես գոհացող վերաբերմունք ունենանք, և ինչպես թույլ տանք, որ Նրա վերափոխող զորությունը գործի մեր ներսում:

ա. Երբ մարդիկ շնորհակալ են լինում ձեզնից, ինչպե՞ս եք զգում ձեզ: Ի՞նչ եք ցանկանում անել: Ձեր կարծիքով՝ ի՞նչ է զգում Աստված, երբ շնորհակալություն եք հայտնում Նրան:

_____

_____

_____

_____

_____

_____

բ. Ի՞նչն է դրդում ձեզ տրտնջալ կամ անշնորհակալ լինել: Ինչպե՞ս կարող եք հաղթահարել այդ զգացմունքները կամ խուսափել դրանցից:

_____

_____

_____

_____

_____

գ. Ի՞նչն է օգնում ձեզ գոհացող և շնորհակալ լինել թե՛ սրտով, թե՛ շուրթերով: Ինչպե՞ս կարող եք խթանել այդ զգացմունքները:

_____

_____

_____

_____

_____

*«Միշտ ուրա՛խ եղեք: Երբեք մի՛ դադարեք աղոթել: **Շնորհակալ եղեք** բոլոր հանգամանքներում, որովհետև սա է Աստծո կամքը ձեզ համար, որ պատկանում եք Հիսուս Քրիստոսին»:*

— Ա Թեսաղոնիկեցիների 5.16-18, NLT
[թավատառն ավելացրած է]

Հոչակել
ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Որտեղ ձեր հաճությունն է, այնտեղ ձեր գանձն է. որտեղ ձեր գանձն է, այնտեղ ձեր սիրտն է. որտեղ ձեր սիրտն է, այնտեղ ձեր երջանկությունն է»:

— *Օգոստինոս*[2]

4 Գոհացող սիրտն ուրախ է: Այս ուրախությունը հիմնված չէ հանգամանքների վրա: Այն հիմնված է Աստծո Խոսքի անփոփոխ ճշմարտությունների վրա այն մասին, թե ով է Աստված և ովքեր ենք մենք Նրանում: Նման ուրախությունը հնարավոր է շնորհիվ *խաղաղության*, որ Հիսուսը տվեց մեզ Հովհաննես 14.27-ում: Նեեմիա 8.10-ում գրված է, որ *Տիրոջ ուրախությունը* մեր զորությունն է: Այս զգացումը ճշմարիտ *բավականություն* է պատճառում:

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ

«Մինչդեռ ճշմարիտ աստվածապաշտությունը՝ գոհունակ լինելով, ինքնին մեծ հարստություն է: Ի վերջո, մենք ոչինչ չբերեցինք մեզ հետ, երբ եկանք այս աշխարհ, և մենք չենք կարող որևէ բան տանել մեզ հետ, երբ լքենք այն: Այնպես որ, եթե մենք բավականին ուտելիք և հագուստ ունենք, եկեք գոհանանք»:

— *Ա Տիմոթեոս 6.6-8,* NLT

«Ազատ պահեք ձեր կյանքը փողի հանդեպ սիրուց և գոհացեք այն ամենով, ինչ ունեք, որովհետև Աստված ասաց. «Ես երբեք չեմ թողնի քեզ. երբեք չեմ լքի քեզ»: Այնպես որ, մենք վստահությամբ ասում ենք. «Տերն իմ Օգնականն է, ես չեմ վախենա: Ի՞նչ կարող է մարդն անել ինձ»»:

— *Եբրայեցիների 13.5,6, NIV*

«Մինչև այժմ ես *սովորել* եմ գոհանալ՝ անկախ իմ հանգամանքներից: Ես նույնքան ուրախ եմ քչի դեպքում, որքան և շատի: Ես գտել եմ ուրախ լինելու դեղատոմսը թե՛ կուշտ, թե՛ քաղցած վիճակում, ունենալով թե՛ լիքը, թե՛ դատարկ ձեռքեր: Ինչ էլ ունենամ, որտեղ էլ լինեմ, ես կարող եմ հաղթահարել ամեն ինչ Նրանում, Ով դարձնում է ինձ այն, ով եմ»:

— *Փիլիպեցիների 4.11-13, MSG*
[շեղագիրն ավելացրած է]

ա. Այս խոսքերի լույսի ներքո, ո՞րն է, ըստ ձեզ, ճշմարիտ գոհության «դեղատոմսը»:

_____

_____

_____

բ. Ձեր կարծիքով, արդյո՞ք շնորհակալ լինելը և բավականություն ունենալը օգնում են ձևավորել Աստծո փառավոր բնավորությունը ձեզանում:

_____

_____

_____

_____

«Միայն նրանք, ում սրտերը քողարկված չեն, կարող են տեսնել Նրան: Հնազանդությունը Աստծո հանդեպ բաց է պահում ձեր աչքերը և հեռացնում է քողը ձեր սրտից: Նայելով Նրա փառքին Նրա հայտնված Խոսքի հայելու մեջ՝ մենք փոխվում ենք Նրա պատկերով, Աստծո Հոգու միջոցով: Մենք փոխվում ենք՝ նմանվելով այն բանին, ինչին նայում ենք»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

ԽՍ 5 *Հնազանդությունը* այն գլխավոր և անհրաժեշտ առանձնահատկություններից մեկն է, որ պետք է ձևավորվի մեր կյանքում, եթե ցանկանում ենք տեսնել Աստծո փառքը: Կարճ ասած՝ հնազանդություն՝ նշանակում է զիջել ձեր կամքը Նրա կամքին, որպեսզի ամբողջովին անեք այն, ինչ Նա խնդրում է ձեզ: Հնազանդությունն Աստծուն ոչ միայն ցույց է տալիս, որ

հավատում եք Նրան, այն նույնպես նշանակում է, որ դուք ճշմարտապես ունեք Տիրոջ երկյուղը:

Կարդացե՛ք Բ Կորնթացիների 3.16-18, Հակոբոս 1.22-25 և Եփեսացիների 4.17-24

ա. Ինչպե՞ս է Աստծո հանդեպ անհնազանդությունը «քող» գցում ձեր սրտի վրա: Ո՞րն է այդ քողը:

_____

_____

_____

_____

բ. Ինչպե՞ս հնազանդությունը թույլ չի տալիս, որ հեռացրած քողը կրկին գցվի ձեր սրտի վրա: Ինչպե՞ս է այն թույլ տալիս ձեզ ավելի լցվել Նրա փառքով:

_____

_____

_____

գ. *Լռությամբ մոտեցեք Տիրոջը:* Խնդրե՛ք Նրան՝ քննել ձեր սիրտը և հայտնել ցանկացած բնագավառ, որտեղ մասնակի հնազանդություն կամ անհնազանդություն կա: Գրե՛ք այն, ինչ Նա հայտնում է, և հանձնեք այդ ամենը Նրան աղոթքով:

_____

_____

_____

_____

Ապաշխարելուց հետո ընդունեք Նրա ներումը, և եթե դեռ հնարավորություն կա լիովին հնազանդվել Նրան, ապա կատարե՛ք այն, ինչ Նա խնդրել էր:

6 Կարդացե՛ք Եսայի 66.2 և Երեմիա 5.22 խոսքերը: «Դողալ Նրա Խոսքից»՝ նշանակում է պատրաստակամորեն հնազանդվել Աստծուն, նույնիսկ երբ չեք հասկանում Նրա հանձնարարության իմաստը: Եվ Նրա Խոսքին փոխզիջման գնալն ու անհնազանդություն ցուցաբերելն ավելի շահավետ է թվում[3]:

ա. Արդյո՞ք ձեր կյանքում եղել են դեպքեր, որոնք համապատասխանում են այս սահմանմանը: Եթե այո, ապա ինչպիսի՞ն էր իրավիճակը, և ի՞նչ դուք որոշեցիք անել: Ի՞նչ կատարվեց արդյունքում:

_____

_____

_____

Խ 7 Ողջ Սուրբ գրքում Աստված կապակցում է փորձությունները, էտումը և չարչարանքները Իր խրատի կամ դաստիարակության հետ: Ճշմարտությունն այն է, որ այդ ամենը բոլորովին հրապուրիչ չէ մեզ համար: Սակայն իրականում այդ երևույթները դրական են, և դրանց շնորհիվ Աստծո փառքն ավելանում է մեր կյանքերում:

ա. Կարդացե՛ք Եբրայեցիների 12.5-11-ը և ձեր բառերով բացատրեք, թե ինչպե՞ս է Աստծո խրատը բերում Նրա փառքը ձեր կյանքում:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Առնչվող սուրբգրային հատվածներ. Հովհաննես 15.1,2, Երկրորդ Օրինաց 8.2-6, Առակաց 15.5

Հոչակել

ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Աստծո հայտնությունները կնքված են մեզ համար, քանի դեռ հնազանդությունը չի բացահայտում դրանք: Դուք երբեք չեք կարողանա բացահայտել այդ հայտնությունները փիլիսոփայության միջոցով կամ դրանց մասին մտորելով: Անմիջապես հնազանդվելուց հետո, լույսը գալիս է: Թո՛ւյլ տվեք, որ Աստծո ճշմարտությունը գործի ձեզանում հոժարակամ հնազանդության շնորհիվ. մի՛ քայլեք անհանգստությամբ դեպի ձեր ապագան: Հնազանդվե՛ք Աստծուն այն բաներում, որ Նա ներկայումս ցույց է տալիս ձեզ, և անմիջապես կբացվի նորը… Աստված երբեք չի հայտնի ավելի շատ ճշմարտություն Իր մասին, քանի դեռ դուք չեք հնազանդվել այն ամենին, ինչ արդեն գիտեք»:

— *Օսվալդ Չեմբերս*[2]

բ. Ի՞նչ դրական բաներ են կատարվում ձեր ներսում և ձեզ համար, երբ խրատ եք ստանում կամ անցնում եք փորձություններով:

_____

_____

_____

_____

Կարդացե՛ք Բ Կորնթացիների 4.17, Հակոբոս 1.2-4, 12, 5.11, Ա Պետրոս 1.6,7, 4.12-16

գ. Դժվարությունները, որոնց մենք բախվում ենք, ցույց են տալիս, թե իրականում ի՞նչ կա մեր սրտերում և ինչի՞ն ենք հավատում: Մի քանի րոպեների ընթացքում հիշեք ձեր կյանքում տեղի ունեցած իրավիճակները և փորձառությունները: Ի՞նչ դուք իմացաք ձեր և Աստծո մասին և ի՞նչ հոգևոր աճ ունեցաք այդ ամենի արդյունքում:

_____

_____

_____

_____

_____

դ. Եթե դուք քրիստոնյա եք և հազվադեպ եք հանդիպում փորձությունների կամ հակառակությունների, ի՞նչ դա կարող է նշանակել:

_____

_____

_____

_____

Կարդացե՛ք Հայտնություն 3.15,16

ԽՐԱՏ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Խրատը նշանակում է «սովորեցնել կամ զարգացնել **հրահանգներով** և **վարժություններով**, հատկապես՝ ինքնավերահսկողության համար»[5]: Ինքնավերահսկողությունը կամ *չափավորությունը* (ժուժկալություն) նշանակում է «զսպվածություն, հատկապես՝ բնական, մարմնական ցանկություններին և կրքերին տրվելու հարցում»[6]: Լինել *խրատված* կամ կարգապահ հավատացյալ՝ նշանակում է շարունակաբար *հրահանգներ ստանալ* և *սովորել* Աստծո Խոսքից, Աստծո Հոգուց և Աստծուց սահմանված դժվարություններից: Երբ մենք որոշում ենք կայացնում ընդունել Աստծո շնորհքը և հնազանդվել Նրա հրահանգներին, հատկապես՝ դժվարությունների ընթացքում, Նրա Հոգին զարգացնում է մեր ներսում ինքնավերահսկողության կամ ժուժկալության պտուղը: Արդյունքում, մեղավոր սովորությունների փոխարեն ձևավորվում են աստվածապաշտ սովորություններ: Եթե խրատ եք ստանում, ապա դուք կարող եք իմանալ, որ Աստծո ճշմարիտ որդիներն ու դուստրերն եք:

«Որպես հավատացյալներ՝ մենք երկու ընտրություն ունենք: Մենք կարող ենք ամբողջովին տալ մեր կյանքը Հիսուսին, կամ պահել այն և մնալ խաբեության իշխանության ներքո՝ հայտնվելով ծուղակի մեջ: Եթե մենք վախենանք Աստծուց, ապա լիովին կհանձնվենք Նրա իշխանությանը և տիրապետությանը, ինչը թույլ կտա Նրան՝ ամբողջովին և անարգել կերպով տիրել մեր կյանքում: Մենք բառացիորեն կդառնանք Նրա ստրուկները»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Խ 8 Հիսուսն ասաց. «Մարդու որդին եկավ, որ ոչ թե Իրեն ծառայեն, այլ՝ **որ ծառայի** ուրիշներին և Իր կյանքը տա՝ որպես փրկագին շատերի համար» (Մարկոս 10.45, NLT, թավատառն ավելացրած է): Հոր հետ շփվելու հետ մեկտեղ, քրիստոնյա լինելը նշանակում է ծառայել Քրիստոսին և օգնել ուրիշներին: Երբ երկյուղածությամբ Տիրոջն ենք հանձնում իշխանությունը մեր կյանքում, անթիվ օրհնություններ ենք ստանում:

ա. Ձեր բառերով բացատրե՛ք, թե ինչ է նշանակում Հիսուս Քրիստոսին «Տեր» անվանել:

_____

_____

_____

_____

բ. *Լռությամբ մոտեցեք Տիրոջը:* Գնահատե՛ք ձեր կյանքը՝ ձեր առաջնությունները / առաջնահերթությունները, ամենօրյա առաջադրանքները և գործողությունները, ընտրությունները և այլն: Ձեր կյանքի ո՞ր բնագավառներն են դեռևս «պատկանում» ձեզ (եթե այդպիսիք կան): Ինչպիսի՞ գործնական քայլերի կարող եք դիմել, որպեսզի «կորցնեք ձեր կյանքը» և ծառայեք Տիրոջը և այլ մարդկանց շատ ավելի, քան հիմա:

_____

_____

_____

_____

գ. Հիսուսի խոսքերի համաձայն՝ ի՞նչ օրհնություններ կտրվեն ձեզ, եթե ձեր կյանքը լիովին տաք Նրան: Կարդացե՛ք Մատթեոս 19.27-30 խոսքերը՝ պատասխանելու համար:

_____

_____

_____

_____

Առնչվող սուրբգրային հատված. Մարկոս 10.28-31

«Ի՞նչ է կատարվում, երբ մենք հպատակվում ենք Տեր Հիսուսին և դողում Նրա խոսքից: Երկրորդ Կորնթացիների 3.16-ում Պողոսն ասում է. «Երբ մարդը դառնում է [ապաշխարությունով] դեպի Տերը, այդ քողը հանվում և հեռացվում է» (AMP): Երբ դուք ընդունում եք Հիսուսի իշխանությունը, որն Աստծուց վախենալու հոմանիշն է, քողը վեր է առնվում»»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

9 Երկրորդ Կորնթացիների 3.18-ը հայտարարում է, որ մենք *աստիճանաբար* փոխվում ենք փառքի մեկ աստիճանից մյուսը՝ նմանվելով Աստծո պատկերին: Ահա թե ինչ է նշանակում գործել մեր փրկությունը: Երեք անբաժանելի բաղադրիչները, որոնց շնորհիվ կատարվում է այս վերափոխումը, հետևյալն են. Աստծո Խոսքը, Աստծո Սուրբ Հոգին և պատրաստակամ, հնազանդ սիրտ ունենալը:

Ստորե՛ք այս խոսքերի շուրջ

«Բայց նա, ով զգուշորեն նայում է անսխալ օրենքին՝ ազատության [օրենքին], և հավատարիմ է դրան, և հարատևում է՝ նայելով դրան, ոչ թե անուշադիր ունկնդիր է, ով մոռանում է, այլ գործուն կատարող [ով հնազանդվում է], նա օրհնված կլինի իր անելով (հնազանդության կյանքով)»:

— *Հակոբոս 1.25,* AMP

«Որովհետև Աստված, Ով ասաց. «Թող լո՛ւյս լինի խավարում», այնպես արեց, որ այդ լույսը շողա մեր սրտերում, որպեսզի մենք կարողանանք ճանաչել Աստծո փառքը, որը երևում է Հիսուս Քրիստոսի դեմքում: Այժմ այս լույսը շողում է մեր սրտերում, բայց մենք ասես փխրուն կավե անոթներ լինենք, որ կրում են այս մեծ գանձը: Սրանից պարզ է դառնում, որ մեր մեծ զորությունն Աստծուց է, ոչ թե մեզնից»»:

— *Բ Կորնթացիների 4.6,7,* NLT

«Մենք հաստատ համոզված էինք նրանում, որ տեսանք և լսեցինք՝ Աստծո փառքը, Աստծո ձայնը: Մարգարեական Խոսքը հաստատվեց մեզ համար: Դուք լավ կանեք, եթե շարունակ կենտրոնանաք դրա վրա: Այն միակ լույսն է, որ դուք ունեք այս խավար ժամանակում, մինչ դուք սպասում եք, որ արևածագը գա և Առավոտյան Աստղը ծագի ձեր սրտերում»:

— *Բ Պետրոս 1.19,* MSG

ա. Ի՞նչ է Տերը ցույց տալիս ձեզ այս խոսքերի միջոցով: Կարո՞ղ եք տեսնել, թե որն է ձեր դերը վերափոխման գործընթացի մեջ:

_____

_____

_____

բ. Ի՞նչ ընդհանրություններ կարող եք նշել այս խոսքերում, որոնք կապված են Աստծո փառքը վերապրելու հետ:

_____

_____

_____

10 Մեր փառավոր վերափոխումը շարունակական և հարաճուն է: Ի՞նչ է լինելու դրա արդյունքում: Կարդացե՛ք այս խոստումները և գրե՛ք այն, ինչ Տերը հայտնում է ձեզ:

«Արդարի ճանապարհը նման է արևածագի առաջին ցոլքին, որն ավելի վառ է շողում, մինչև օրվա լրիվ լույսը»:

— *Առակաց 4.18,* NLT

«[Փոխզիջման չգնացող] արդարի լույսը [իր ներսում է. այն ավելի վառ է դառնում, և] ցնծում է, բայց անօրենի ճրագը [տալիս է միայն կողմնակի աղբյուրից ստացվող, ժամանակավոր լույս, և] շուտով կհանգչի»:

— *Առակաց 13.9,* AMP

«Վե՛ր կաց, լուսավորվի՛ր, որովհետև լույսդ եկել է, և Տիրոջ փառքը ծագել է քեզ վրա: Որովհետև, ահա՛ խավարը կծածկի երկիրը, և թանձր խավարը՝ ազգերը. բայց Տերը կծագի քեզ վրա, և Նրա փառքը կհայտնվի քեզ վրա: Ազգերը կգան քո լույսին, և թագավորները՝ քո ծագելու պայծառությանը»:

— *Եսայի 60.1-3,* NASB

Հոչակել
ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Նա անշոշափելի և անտեսանելի է: Բայց Նրա գործը շատ ավելի զորավոր է, քան ամենակատաղի քամին: Հոգին կարգ ու կանոն է ստանում քաոսից, և գեղեցկություն՝ տգեղությունից: Նա կարող է վերափոխել մեղքերով լցված մարդուն՝ առաքինի անձնավորության: Հոգին փոխում է մարդկանց: Կյանքի Հեղինակը նաև Կյանքը Վերափոխողն է»:

— *Ռ. Ա. Սպրոուլ*[7]

Առնչվող սուրբգրային հատվածներ. Մատթեոս 13.43, Դանիել 12.3, Եսայի 58.10

Ապրող երկյուղի օրհնությունները

«Եվ ահա թե ինչ է Նա ասում ողջ մարդկությանը. «Տիրոջ երկյուղը ճշմարիտ իմաստություն է. չարը թողնելը՝ իրական հասկացողություն»»:

Հոբ 28.28, NLT

«Երկյուղած և երկրպագող վախը Տիրոջ հանդեպ գիտության սկիզբը, գլխավոր և ընտիր մասն է [դրա սկզբնակետը և էությունը]. բայց հիմարներն անարգում են հմուտ և աստվածապաշտ Իմաստությունը, ուսուցումը և խրատը»:

Առակաց 1.7, AMP

«Տիրոջ երկյուղը իմաստության սկիզբն է, և Սուրբի գիտությունը հասկացողություն է»:

Առակաց 9.10, NKJV

«Տիրոջ երկյուղը իմաստություն է սովորեցնում մարդուն, և խոնարհությունը գալիս է պատվից առաջ»:

Առակաց 15.33, NIV

Շաբաթական գործունեություն

7

Հենց այնտեղ, որտեղ ապրում եք

ՀԵՏԵՎԵԼՈՎ ՁԵՐ ՎԵՐԱՓՈԽՄԱՆԸ

Հիշո՞ւմ եք՝ երբ երեխա էիք, հաճախ էիք մտահոգվում, թե որքանով եք մեծացել: Դուք մոտենում էիք ձեր հայրիկին կամ մայրիկին, ավագ եղբորը կամ քրոջը և չափում ձեզ նրանցով՝ պահելով ձեր ձեռքը ձեր գլխավերևում, որպեսզի տեսնեիք, թե որքան էր ձեր հասակը: Միգուցե դուք նույնիսկ գծեր էիք քաշում տան դռներից մեկի եզրին կամ պատերից մեկի վրա, որտեղ տարիներ շարունակ նշվում էր ձեր հասակը՝ տարիքին համապատասխան: Այնքան ոգեշնչող է տեսնել, թե ինչպես էին այդ գծերը վեր բարձրանում հինգ, տասը կամ տասնհինգ սանտիմետրով: Դա ձեր աճի ցուցանիշն էր:

Եթե դուք կերակրում եք ինքներդ ձեզ Աստծո Խոսքի ճշմարտությամբ, որը կարող է փոխել ձեր կյանքը, հնազանդվում եք այն ամենին, ինչ Սուրբ Հոգին հայտնում է, շփվում եք Հոր և նվիրված հավատացյալների հետ, ապա ողջ այդ ընթացքում **դուք** հոգևորապես **աճում եք**: Իրականում, միշտ չէ, որ աճը հեշտությամբ երևում է մեր կյանքերում, բայց ահա մի քանի միջոց՝ տեսնելու համար, թե ինչ աշխատանք է Աստված կատարել ձեր ներսում անցած ժամանակվա ընթացքում:

Հիշե՛ք ձեր անցյալը

Նստե՛ք լռության մեջ, ուշադրությամբ և աղոթքով հայացք գցեք ձեր կյանքի վերջին մի քանի տարիների վրա: Ի՞նչ էիք անում *այդ ժամանակ*, որ այլևս չեք անում *հիմա*: Օրինակ՝ արդյո՞ք պայքարում էիք վախի, ստելու, բարկությունը վերահսկելու հետ, և այլն, բայց Աստծո շնորհքով հաղթահարել եք այդ բաները: Բոլոր բնագավառները, որտեղ դուք աճ ունեք, ապացույց են, որ Աստծո վերափոխող զորությունը գործում է ձեր ներսում: *Լռությամբ մոտեցեք Տիրոջը*: Խնդրե՛ք Նրան՝ ցույց տալ ձեզ, թե ինչպիսի աճ եք ունեցել, և ինչ քայլերի Նա մղեց ձեզ, որպեսզի հաղթանակ տանեիք ձեր կյանքում:

Սխալ վարքագծեր և սովորություններ	Քայլ(եր), որ Աստված դրդեց ինձ անել՝ հաղթանակ տանելու համար
Ես...	
Ես...	
Ես...	
Ես...	
Ես...	
Ես...	
Ես...	

Լսե՛ք ձեր ընկերների կարծիքները

Կա ևս մեկ լավ միջոց՝ ձեր վերափոխմանը հետևելու համար. խոսե՛ք մի քանի վստահելի ընկերների հետ՝ հարցնելով ձեր հոգևոր աճի մասին: Այդ մարդիկ պետք է փորձառու հավատացյալներ լինեն, ովքեր հոգ են տարել ձեր մասին և

հետևել են ձեր կյանքին տարիների ընթացքում: Հարցրե՛ք նրանց անմիջական կերպով. «Ինչպե՞ս եմ ես փոխվել այս տարիների ընթացքում: Ինչպիսի՞ աճ եք նկատում իմ կյանքում: Ինչպիսի՞ պատկերացումներ ունեի, որ այլևս չունեմ, և ի՞նչ էի անում, որ այլևս չեմ անում: Գրե՛ք այն, ինչ նրանք կասեն: Կրկին խնդրե՛ք Սուրբ Հոգուն՝ հիշեցնել ձեզ, թե ինչպես եք հաղթանակ տարել:

Ապագայում աճ ակնկալել

Հաշվի առնելով այն ամենը, ինչ դուք արդեն հաղթահարել եք, ի՞նչ կարող եք սովորել անցյալից և կիրառել ապագայում: Արդյո՞ք նկատում եք որոշ օրինաչափություններ: Կա՞ն այնպիսի բաներ, որ շարունակաբար օգնել են ձեզ՝ հոգևոր աճ ունենալ և փոխվել:

_____

_____

_____

_____

Հիշեք՝ վերափոխման ամենամեծ գործակիցն Աստծո Խոսքն է (6-րդ գլխում կրկին կարդացե՛ք *«Վերապրե՛ք Նրա զորության Խոսքը* և *Խորացե՛ք Աստծո անգին գանձի մեջ»* բաժինները): Աստծո Խոսքը վերափոխող զորություն ունի, երբ դուք բարձրաձայն հռչակում եք այն ձեր կյանքում:

Շաբաթական գործունեություն

7

ՁԵՐ ԽՈՍՔԻ ՄԵՋ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ

«Խոսքերը կշտացնում են միտքը նույնքան, որքան կերակուրը՝ ստամոքսը. բարի խոսքերը նույնքան հաճելի են, որքան առատ հունձքը: Լեզուն իշխանություն ունի մահի և կյանքի վրա, և նրանք, ովքեր տրվում են դրան, պետք է ուտեն դրա պտուղը [կա՛մ մահվան, կա՛մ կյանքի համար]»:

— Առակաց 18.20,21

Խոսք 20-ը՝ MSG, խոսք 21-ը՝ AMP

Բառեր. ինչպիսի՜ զորություն դրանք ունեն: Որքան կարևոր է ճշտորեն դասավորել հայերեն այբուբենի երեսունհինգ տառերը, որոնք դուրս են գալիս մեր շուրթերից: Խոսքերը կարող են զորացնել, խրախուսել և կյանք ներշնչել, կամ կարող են մեծ կործանում բերել: Աստված ահռելի ստեղծարար ուժ է տվել մեզ, և այն հենց մեր քթի տակ է: Սովորելով օգտագործել այն ուժը, որ կա մեր բառերի մեջ, մենք կարող ենք տեսնել, թե ինչպես են մեծ գործեր կատարվում և՛ մեր, և՛ այլ մարդկանց կյանքերում:

Ինչպես արդեն իմացանք, բողոքը և տրտունջը թույլ չեն տալիս մեզ՝ փոխվել. դրանք բացասական խոսքեր են, որոնք մահ են առաջացնում: Գոհությունը և փառաբանությունը, ի տարբերություն բողոքի և տրտունջի, լի են կյանքով, և

դրանց միջոցով մենք հայտնվում ենք Տիրոջ ներկայության մեջ: Փառաբանության և երկրպագության շնորհիվ մենք ստանում ենք այն, ինչին ձգտում ենք՝ մենք փոխվում ենք ըստ Նրա պատկերի: **Ջոյս Մայերը**, ով Խոսքի զորավոր ծառայող է և շատ է խոսել այս թեմայով, ասել է.

> «Մենք կարող ենք օրհնել ինքներս մեզ կամ անիծել՝ մեր իսկ խոսքերով: Մեր բարի խոսքերն օրհնում են, չար խոսքերը՝ անիծում: Մեր բերանից դուրս եկող խոսքերով մենք կարող ենք օրհնել մեր կյանքերը և լցնել դրանք ուրախությամբ, կամ կարող ենք անիծել մեր կյանքերը և լցնել դրանք թշվառությամբ»[8]:

Աստված հաստատում է Հակոբոսի միջոցով, որ լեզուն զորություն ունի: Նա բացատրում է. «Մենք սանձ ենք դնում ձիերի բերանին՝ նրանց հնազանդեցնելու համար, և վերահսկում ենք նրանց բոլոր գործողությունները: Նույնը ճշմարիտ է նավերի դեպքում: Դրանք շատ մեծ են և քշվում են ուժեղ քամիներից: Սակայն նավավարները, օգտագործելով փոքրիկ ղեկեր, վարում են նավերը այնտեղ, որտեղ ցանկանում են: Նույն կերպով էլ՝ լեզուն մարմնի փոքրիկ մաս է, բայց այն կարող է պարծենալ, որ կարևոր բաներ է անում» (Հակոբոս 3.3-5, GW, շեղագիրն ավելացրած է): 7-րդ և 8-րդ խոսքերում Հակոբոսը շարունակում է. «Մարդիկ ընտելացրել են ամեն տեսակի կենդանիների, թռչունների և ջրում ապրող արարածների: Սակայն ոչ ոք չի կարող հնազանդեցնել լեզուն: Այն անվերահսկելի չար է, որը լցված է մահաբեր թույնով»:

Դուք կարող եք մտածել՝ *եթե ոչ ոք չի կարող հնազանդեցնել լեզուն, ինչպե՞ս մենք պետք է վերահսկենք այն:* Պատասխանն է՝ Աստծո օգնությամբ: Իսկապես որ «…մարդու համար սա անհնար է, բայց Աստծո համար **ամեն** բան հնարավոր է» (Մատթեոս 19.26, NIV, թավատառն ավելացրած է):

Կարդացե՛ք Առակաց 13.3, 21.23 և Սաղմոս 39.1, 141.3 խոսքերը: Ի՞նչ են այս խոսքերն ասում ձեզ, և ինչի՞ կոչ են անում:

_____

_____

_____

_____

Ըստ Սաղմոս 35.28, 49.3, 51.15 և 71.15-ի, ինչպիսի՞ խոսքեր պետք է դուրս գան մեր բերանից:

_____

_____

_____

_____

Առնչվող սուրբգրային հատվածներ. Եփեսացիների 5.19, Սաղմոս 37.30,31, Առակաց 10.20,21,31,32

«Ձեր խոսքն ամեն ժամանակ շնորհքով, աղով համեմված լինի, որ գիտենաք, թե ինչպես արժան է ձեզ՝ ամեն մեկին պատասխան տալ»:

—Կողոսացիների 4.6

Սրտի և բերանի կապը

Եթե ցանկանում ենք հնազանդեցնել մեր լեզուն, ապա պետք է հետևենք, թե ինչ կա մեր սրտում: Հիսուսն ասաց. «Որովհետև մարդու *սիրտն* է որոշում նրա *խոսքը*: Բարի մարդու խոսքը հայտնում է հարուստ գանձերը, որ նրա ներսում են: Չար սիրտ ունեցող մարդը լցված է թույնով, և նրա խոսքը հայտնում է դա» (Մատթեոս 12.34,35, TLB, շեղագիրն ավելացրած է): Ողջ Սուրբ գրքում գրված է սրտի և բերանի միջև եղած կապի մասին: Առակաց 16.23-ը հայտարարում է. «Իմաստուն մարդու *սիրտն* առաջնորդում է նրա *բերանը*, և նրա շուրթերը ուսուցանում են» (NIV, շեղագիրն ավելացրած է): Հավանաբար, Դավիթը հենց այս պատճառով էր աղոթում. «Թող իմ *բերանի* խոսքերը և իմ *սրտի* մտորումները հաճեցնե՛ն քեզ, ո՛վ Տեր, իմ վե՛մ և իմ Փրկի՛չ» (Սաղմոս 19.14, NLT, շեղագիրն ավելացրած է):

Ինչի՞ հետ են Առակաց 3.3, 7.3 և Բ Կորնթացիների 3.3 խոսքերը համեմատում *սիրտը*:

Ինչի՞ հետ է սաղմոսերգուն համեմատում լեզուն Սաղմոս 45.1-ում:

Ի՞նչ են ցույց տալիս ձեզ այս չորս խոսքերը միասին՝ Աստծո Խոսքը ձեր սրտի մեջ ունենալու մասին:

Հոչակել

ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Քրիստոսի մարմինը պետք է սկսի ապրել Խոսքի իշխանության մեջ: Որովհետև Աստծո Խոսքը ստեղծարար զորություն է: …Աստծո Խոսքը, որ ընկնում է մեր սիրտը, կազմվում է մեր լեզվով և խոսվում բերանով, ստեղծարար զորություն է»:

— *Ջարլզ Քեփս*[9]

Լավագույնը, որ կարող ենք պահել մեր սրտում, Աստծո Խոսքն է: Ինչպես տեսանք 6-րդ գլխում, Աստվածաշնչից բացի ամբողջ երկրում չկա ավելի հեղինակավոր գիրք, որի մեջ կյանք պարգևող զորություն կա: Ձեր սրտում պահված Խոսքն է, որ հեռու է պահում ձեզ մեղանչելուց, լուսավորում է ձեր ուղին և առաջնորդում է ձեզ ճիշտ ճանապարհով[10]: Մեր սրտով մենք *ընդունում ենք* ճշմարտությունը և *հավատում* դրան, և մեր շուրթերով դավանում ենք ճշմարտությունը և *արձակում* դրա փրկարար զորությունը: Եթե Աստծո Խոսքը ձեր սրտում է, Սուրբ Հոգին հեշտորեն կարող է վերցնել այն և դնել ձեր բերանում[11]:

Ինչպե՞ս եք թաքցնում Աստծո Խոսքը ձեր սրտում: Ի՞նչն է հաստատում, որ Աստծո Խոսքը ձեր սրտում է:

_____

_____

_____

«Քրիստոսի Խոսքը ***բնակվի ձեր միջում առատապես*** *ամեն իմաստությունով. իրար սովորեցրե՛ք և խրատե՛ք սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով, և շնորհքով օրհներգե՛ք Տիրոջը ձեր սրտերում»:*

— Կողոսացիների 3.16
[թավատառն ավելացրած է]

Աստծո Խոսքը կենդանի է և լի է զորությամբ[12]: Այն Աստծո գերբնական զորությունն է, որ գործում է մեր հոգու, շնչի և մարմնի մեջ՝ մեզ փրկություն տալու համար[13]: Եվ մեզ՝ Աստծո Խոսքն ունեցողներիս, պատվիրված է՝ հավատարմորեն *խոսել* Նրա Խոսքը[14]: Այն Խոսքը, որ ընկնում է մեր սիրտը, կազմվում է մեր լեզվով և խոսվում է մեր բերանով, արձակում է Աստծո ստեղծարար զորությունը: Այն կկատարի և կիրականացի իր նպատակը[15]:

Կարդացե՛ք պատմությունը Հիսուսի և թզենու մասին Մարկոս 11.12-14, 20-24 խոսքերում: Ի՞նչ է Սուրբ Հոգին հայտնում ձեզ այն մասին, որ կարելի է ՄԱՀ խոսել այն ամենին, ինչ բարի պտուղ չի բերում: Ինչպե՞ս կարող եք կիրառել սա ձեր կյանքում:

Մ՛դածե՛ք այս մասին

Ինչո՞ւ Հիսուսն անիծեց թզենուն: Թզերն աճում են ոչ բարձր, լայն տարածվող ճյուղեր ունեցող ծառերի վրա, և մշակվում դեռևս հին ժամանակներից: Թեև թուզը երբեմն չորացնում են կամ օգտագործում թխվածք պատրաստելու համար, այն նույնպես կարելի է ուտել անմիջապես ծառից: Հասկանալու համար Հիսուսի և թզենու պատմությունը, պետք է նշել, որ թուզը սկսում է աճել ծառի վրա **մինչև** տերևների հայտնվելը: Եթե տերևներն աճեն, իսկ պտուղ դեռ չլինի, ծառը անպտուղ կմնա բերքատվության ողջ ընթացքում[16]:

Սուրբ գրքում ասվում է, որ Հիսուսը քաղցած էր: Երբ Նա հեռվից տեսավ, որ թզենու վրա շատ տերևներ կային, Նա հավանաբար կարծեց, որ ծառի վրա արդեն հասած թուզ կլիներ: Բայց այդ ծառը ստեց նրան: Տերևներ ունենալով՝ այն պարծենում էր, որ պտուղ ուներ, ինչը կեղծիք էր. այդ ծառի վրա պտուղ չկար: *Տե՛ր, օգնի՛ր մեզ՝ լինել իրական և ունենալ Սուրբ Հոգու պտուղը՝ այն կենսապտուղ սնունդը, որը կսնուցի մարդկանց, ովքեր քաղց են զգում Քո հանդեպ... Հիսուսի անունով:*

Կարդացե՛ք պատմությունը *Եզեկիելի և չոր ոսկորներով լի դաշտի* մասին Եզեկիել 37.1-10-ում: Ի՞նչ է Սուրբ Հոգին հայտնում ձեզ այն մասին, որ կարելի է ԿՅԱՆՔ խոսել այն ամենին, ինչ մահացած (կամ անկարելի) է թվում: Ինչպե՞ս կարող եք կիրառել սա ձեր կյանքում:

Հիշե՛ք, որ բացասական խոսքերը չեզոքացնում են Աստծո կյանք պարգևող զորությունը, որը ձեր բերանում է: Շնորհք խնդրեք Նրանից, որպեսզի հեռու պահեք ձեր շուրթերից ցանկացած բամբասանք, չարախոսություն, սուտ և տրտունջ[17]: Թաքցրե՛ք Նրա Խոսքը ձեր սրտում, և այն դուրս կհոսի ձեր բերանից՝ բերելով կյանք և բժշկություն նրանց, ովքեր կլսեն ձեզ [18]:

Փառաբանության աղոթք

Տե՛ր, շնորհակալությո՛ւն, որ սիրում ես ինձ և թույլ ես տալիս Քո փառքի մասնակիցը լինել: Խնդրում եմ, ների՛ր ինձ՝ անցյալում Քեզ որևէ կերպով չհնազանդվելու համար, նաև՝ բողոքելու և տրտնջալու համար: Հեռացրո՛ւ ցանկացած խաբեության քող իմ սրտից: Թող որ ես լինեմ զգայուն և արշաձանքող Քո հպմանը: Օգնի՛ր ինձ՝ թաքցնել Քո Խոսքն իմ սրտում և խոսել այն իմ կյանքի համար: Ես ցանկանում եմ, որ Դու մեծ գործեր անես իմ կյանքում և իմ միջոցով: Շնորհակալությո՛ւն Քո Սուրբ Հոգու անգին պարգևի համար: Շնորհակալությո՛ւն, որ մշտապես լավագույնն ես ցանկանում ինձ համար: Դու իսկապես զարմանալի ես... Հիսուսի անունով, ամե՛ն:

Իմ օրագիրը

ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ՀԻՇԵԼ

«Մենք՝ Աստծուց վախեցողներս, շարունակաբար վերափոխվում ենք Նրա պատկերով, մինչև որ փայլենք պայծառ լույսերի նման այս խավար աշխարհում: Նրա հավատարիմ եկեղեցին զարմանալի լույս կարձակի այս վերջին օրերում: Փա՜ռք Աստծուն հավիտյան»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Աստծո Հոգին փոխում է ձեզ Իր պատկերին համաձայն՝ տանելով փառքի մեկ մակարդակից մյուսը: Բացե՛ք ձեր սիրտը Նրա Խոսքի և Նրա Հոգու հրաշալի աշխատանքի համար: Երբ որոշում կայացնեք ապրել հնազանդության մեջ, զիջել ձեր կամքը Նրա կամքին և Նրա Խոսքը կատարող լինել, մեծ բաներ

տեղի կունենան: Լռությամբ նստեք Տիրոջ առջև մի քանի րոպե և լսե՛ք, թե ինչ է Նա ասում ձեզ Իր սրտից: Գրե՛ք ցանկացած հայտնություն կամ հրահանգ, որ Նա տալիս է ձեզ:

ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Աշխարհի հիմնադրումից առաջ, Աստված ծրագրել էր, որ դուք վերափոխվեք Նրա պատկերով և Նրա փառքի մասնակիցը դառնաք: Այս վերափոխման գործընթացն իրականանում է Տիրոջ երկյուղի միջոցով: Բողոքելը, տրտնջալը և ցանկացած այլ բացասական դրսևորում դադարեցնում են այս վերափոխման գործընթացը, իսկ ջանասիրաբար Աստծուն փնտրելը, Նրա Խոսքին ուշադրություն դարձնելը և հնազանդությունն այն ամենին, ինչ Նա հայտնում է, շարունակում են այն: Այս վերափոխման ընթացքում ձեր սրտի աչքերը պարզ են տեսնում և ծածկված չեն քողով, ինչի շնորհիվ դուք ոչ միայն ճանաչում եք Նրա փառքը, այլ նույնպես փոխվում եք դրանով:

(1) Ջոն Բիվեր. *«Տիրոջ երկյուղը»*, (Լեյք Մերի, Ֆլորիդա, «Charisma House, A Strang Company», 1977թ., 2006թ.), էջեր 138,139: (2) Քրիստոնեական մեջբերումներ *«Բավականության մասին»*: (http://dailychristianquote.com/dcqcontent.html, վերցրած 13.10.2010թ.): (3) Տե՛ս Նշում 1, էջ 145: (4) *«Հաստատ կանգնել. 365 ամենօրյա ընթերցանության ուղերձներ՝ ձեր հավատքը զորացնելու համար»*, կազմված Փեթի Մ. Համելի կողմից (Սենթ Սաև Լուիս Օբսիպո, Կալիֆոռնիա, «Parable»), էջ 339: (5) Մեջբերում *«Մերիամ-Վեբսթերի Սեղանի բառարան»*-ից, (Սփրինգֆիլդ, Մասաչուսեթս, «Merriam-Webster, Incorporated», 1995թ.): (6) Մեջբերում Նոյ Վեբսթերի *«Անգլերեն լեզվի ամերիկյան բառարանի առաջին հրատարակություն»*-ից (1828թ.), վերահրատարակված պատճենման միջոցով «Foundation for American Christian Education»-ի կողմից (Սան Ֆրանցիսկո, Կալիֆոռնիա, 2000թ.): (7) Քրիստոնեական մեջբերումներ Հանգամանքների փոփոխության/Բնավորության փոփոխության մասին (http://dailychristianquote.com/dcqchange.html, վերցրած 13.10.2010թ.): (8) Ջոյս Մայեր, *«Վայելե՛ք ձեր ընթացքը այն ճանապարհին, որը տանում է դեպի ձեր նպատակը»* (Տալսա, Օկլահոմա, «Harrison House, Inc.», 1996թ.), էջեր 200,201: (9) Չարլզ Քեփս. *«Աստծո ստեղծարար ուժը կգործի ձեզ համար»*, (Տալսա, Օկլահոմա, «Harrison House, Inc.», 1976թ.), էջեր 8,15: (10) Տե՛ս Սաղմ. 119.11,105 (11) Տե՛ս Հռոմ. 10.8-10 (12) Տե՛ս Եբր. 4.12 (13) Տե՛ս Հռոմ. 1.16 (14) Տե՛ս Երեմիա 23.28 (15) Տե՛ս Եսայի 55.10,11 (16) Մեջբերում *«Աստվածաշնչյան փաստերի Նելսոնի պատկերազարդ հանրագիտարան»*-ից. Ջեյմս Ի. Փեքեր, Մերիլ Մ. Թենի, Վիլյամ Ուայթ՝ կրտսեր խմբագիրներ, (Նեշվիլ, Տենեսի, «Thomas Nelson Publishers», 1995թ.), էջ 260: (17) Տե՛ս Տիտոս 3.2, Ա Պետր. 2.1, 3.10,11 (18) Տե՛ս Առակ. 12.18, 15.4, 10.20,21,31,32

Իմ նշումներդ

*«**Ընկերությունը** Տիրոջ հետ պահված է նրանց համար, ովքեր վախենում են Նրանից: Նրանց հետ է Նա կիսում Իր ուխտի գաղտնիքը»:*

— Սաղմոս 25.14, NLT
[թավատառն ավելացրած է]

8

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԾՈ ՀԵՏ

Խնդրում ենք օգտվել ուսումնական դասընթացի 8-րդ դասից, ինչպես նաև՝ *«Տիրոջ երկյուղը»* գրքի 12-րդ, 13-րդ և 14-րդ գլուխներից:

«Տիրոջ երկյուղը Աստծո հետ մտերիմ շփման սկիզբը կամ սկզբնակետն է: Ես հավատում եմ, որ Աստծո հետ շփումը Տիրոջ երկյուղի մեջ քայլելու ամենաոգևորիչ կողմն է: Այն յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալի սրտի փափագն է, և միակ բանը, որ կարող է մնայուն բավականություն պատճառել մեզ»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

1 Մենք իմացանք, որ Աստված խորապես սիրահարված է մեզ: Նա հենց ամենասկզբից ցանկանում էր մտերիմ շփում ունենալ մարդկության հետ: Ադամի մեղքի պատճառով, Աստծո մտերմությունը մարդկության հետ մեծապես նվազեց: Հիսուսի զոհի միջոցով այն ամբողջությամբ վերականգնվեց:

ա. Երբ դուք լսում եք *մտերմություն* բառը, ինչպիսի՞ դրական բաներ եք մտաբերում:

_____

_____

_____

բ. Ո՞րն է տարբերությունը Աստծո *մասին* գիտելիք ունենալու և Աստծուն մտերմորեն ճանաչելու միջև:

_____

_____

ՄՏԵՐԻՄ

«Մոտ, մտերիմ ընկերություն կամ ծանոթություն. մոտ ընկեր կամ գործակից, ում անվերապահորեն վստահվում են մյուսի մտքերը. կիսվել միմյանց հետ»[1]: *Մտերիմ* բառի այլ հոմանիշներն են՝ անձնական, նվիրական, ջերմ, ընկերական, վստահելի, գաղտնի:

«Տերը հավանում է Իրենից վախեցողներին, որ Իր ողորմությանն են հուսացած»:

— Սաղմոս 147.11

Խ 2 Տիրոջ հետ մտերիմ ընկերությունն ավելի լավ հասկանալու համար, մտածեք այն փոխհարաբերությունների մասին, որ ունեք ձեր ամենամոտ, ամենանվիրական ընկերոջ հետ:

ա. Ի՞նչ համատեղ զբաղմունքներ ունեք, որոնց շնորհիվ ձեր շփումն այդքան հաճելի է դառնում: Ինչո՞ւ եք նախընտրում շփվել այդ մարդու հետ:

_____

_____

_____

_____

բ. Ի՞նչ եք անում, որ պահպանեք ձեր ընկերական կապը և չհեռանաք իրարից:

_____

_____

_____

_____

գ. Ի՞նչ զուգահեռներ կարող եք անցկացնել ձեր պատասխանների և Տիրոջ հետ ունեցած ձեր շփման միջև:

_____

_____

_____

_____

Խ 3 Մենք անձնական շփում ունենք մեր երկնային Հոր հետ: Ոչինչ այս երկրի վրա չի կարող համեմատվել դրա հետ: Նրա ներկայությունն այնքա՜ն քաղցր է, այնքա՜ն ազատագրող և այնքա՜ն զորացնող: Դավիթը շատ դիպուկ ասաց. «Ճաշակե՛ք և տեսե՛ք, որ Տերը բարի է: Օ՜, ինչպիսի՜ ուրախություն ունեն նրանք, ովքեր ապաստան են գտնում Նրանում» (Սաղմոս 34.8, NLT):

Հոչակել
ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Հասանելի դարձեք ամենամեծ արտոնության համար, որ կա երկնքի այս կողմում: Հիսուս Քրիստոսը մահացել է, որպեսզի հնարավոր դարձնի հաղորդությունը և հաղորդակցությունը Հոր հետ»:

— *Քիլլի Գրեհեմ*

ա. Ի՞նչ է Աստված խոստանում Հակոբոս 4.8-ում՝ խոսելով Իրեն մոտենալու մասին: Ո՞վ պետք է անի առաջին քայլը:

_____

_____

_____

բ. Աստված բոլորովին չի ցանկանում, որ դուք վախենաք Իրեն մոտենալուց: Կարդացե՛ք Եբրայեցիների 4.15,16 և 10.19-22 խոսքերը և բացատրեք, թե ինչո՞ւ դուք մուտք ունեք Նրա ներկայության մեջ, և *ինչպե՞ս* է Նա ցանկանում, որ մուտք գործեք Իր ներկայության մեջ:

_____

_____

_____

_____

Առնչվող սուրբգրային հատված. Եփեսացիների 3.12

գ. Նկարագրե՛ք, թե ինչպես եք պատկերացնում ավելի մտերիմ շփումը Տիրոջ հետ:

_____

_____

_____

_____

«Աբրահամի աստվածային երկյուղի և հավատքի ապացույցը նրա *հնազանդությունն* էր: Վախենալ Աստծուց՝ նշանակում է *հավատալ* Աստծուն: Հավատալ Աստծուն՝ նշանակում է *հնազանդվել* Նրան: Հակոբոսը ցույց տվեց, որ Աբրահամի հնազանդությունը, որի պատճառը Աստծո սուրբ երկյուղն էր, դարձրեց նրան Աստծո *ընկերը*»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Խ 4 Ինչպիսի՞ հատկանիշներ է Աստված որոնում մարդու մեջ՝ ընկերության համար: Նա բազմաթիվ դրական օրինակներ է տվել մեզ, որոնցից կարող ենք սովորել: Աբրահամն[3] այն մարդկանցից մեկն էր, ում Նա շարունակաբար Իր ընկերն է անվանում: Նրա գործերը ցույց են տալիս, որ նա իսկապես վախենում էր Աստծուց:

ա. Ուր էլ Աբրահամը գնար, նա զոհասեղան էր կառուցում Աստծո համար: Մտածե՛ք այդ մասին… Ո՞րն է զոհասեղանի նպատակը: Ի՞նչ է այս փաստն ասում նրա բնավորության և Աստծուն նվիրված լինելու մասին:

_____

_____

_____

_____

Առնչվող սուրբգրային հատվածներ. Ծննդոց 12.6-8, 13.4,18

բ. Ամենամեծ փորձությունն Աբրահամի կյանքում այն էր, երբ Աստված խնդրեց նրան՝ զոհաբերել իր որդի Իսահակին: Կարդացե՛ք այս պատմությունը Ծննդոց 22.1-19-ում: Ցո՛ւյց տվեք, թե ինչպես էր Աստծո երկյուղը Աբրահամի կյանքում ակնհայտորեն երևում նրա գործողություններից:

_____

_____

_____

գ. Արդյո՞ք Աբրահամի օրինակը խրախուսում է ձեզ: Արդյո՞ք այն մարտահրավեր է նետում ձեզ:

_____

_____

_____

*«Տիրոջ երկյուղը **կյանքի աղբյուր** է, որ հեռացնում է մարդուն մահվան որոգայթներից»:*

— Առակաց 14.27, NIV

[թավատառն ավելացրած է]

5 Լինում են պահեր, երբ մենք չենք զգում Տիրոջ հայտնված ներկայությունը: Այդ ժամանակ մեր գործերը ցույց են տալիս՝ արդյո՞ք մենք պահում ենք Տիրոջ երկյուղը, թե՞ ոչ: Այլ խոսքերով՝ արդյո՞ք մենք հռչակում ենք Աստծո հավատարմությունը նույնիսկ այն դեպքում, երբ ընդհանրապես չենք վերապրել այն որոշ ժամանակ: Հովսեփը վարվեց հենց այսպես, և արդյունքում նրա ընտանիքը և մի ամբողջ ազգ փրկվեցին սովից:

ա. Երբ դուք դժվարություններ եք ունենում և թվում է, թե Աստված հեռու է, ինչպե՞ս եք վարվում: Ինչպե՞ս կարող եք բարձրանալ այս բնագավառում:

_____

_____

_____

_____

Մի՛ կարծեք, թե միայն դուք եք այդպիսին: Բոլորս էլ հասունանալու տեղ ունենք այս հարցում: Հաջորդ անգամ, երբ ճնշում զգաք ձեր ներսում, խնդրե՛ք Աստծուն՝ առատ շնորհք տալ՝ այդ փորձությունն անցնելու համար: (տե՛ս Հակոբ. 4.6, Բ Կորնթ. 12.9):

բ. Տիրոջ երկյուղի զորությամբ Հովսեփը խուսափեց նախանձի, վիրավորանքի, զայրույթի, վրեժխնդրության և շնության ծուղակներից: Ինչպե՞ս է Աստծուց վախենալը ետ պահել ձեզ մահացու ծուղակներից: Ի՞նչ եք սովորել արդյունքում:

_____

_____

_____

_____

գ. Ի՞նչ է Տերը խոստանում նրանց, ովքեր պահում են Նրա երկյուղը դժվարությունների ընթացքում:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Կարդացե՛ք Սաղմոս 145.18,19, 34.11-22, Եսայի 8.11-14

Խ 6 Պողոսը շատ ասելիք ուներ այն մասին, թե ինչպիսին էր լինելու եկեղեցու վիճակը վերջին օրերում: Լինելով Աստծո նվիրված ընկերը՝ նա անգերազանցելի հասկացողություն էր ստացել Աստծո Խոսքի մասին, ինչպես նաև մարգարեական հայտնություն Սուրբ Հոգուց այն մասին, թե ինչ պետք է կատարվեր մինչև Քրիստոսի վերադարձը՝ ներառյալ մեծ ապստամբությունը կամ մեծ նահանջը:

Հոչակել

ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Նա գրկում է ինձ այն ժամանակ, երբ այլևս ուժ չունեմ, և չգիտեմ՝ ինչ անել: Նա գրկում է ինձ, երբ պարտված եմ զգում ինձ այն ամենի պատճառով, որ պետք է անեի: Երբ վազում եմ իմ էլ-Շադդայի մոտ, ես երբեք չեմ վերադառնում կարիքներով: Նա իմ Աստվածն է, Ով բավարարում է բոլոր կարիքները: Օ՜, սիրելիս, դու հասկանո՞ւմ ես: Արդյո՞ք դու ճանաչել ես Նրան որպես քո էլ-Շադդայը: Եթե ոչ, ապա Նա գրկաբաց սպասում է քեզ»:

— *Թեյ Ակրոյդ*

ա. Ինչո՞ւ էր Պողոսն այդքան հրատապ կերպով պատվիրում Տիմոթեոսին՝ *քարոզել Խոսքը*: Ի՞նչ է կատարվում մեր կյանքերում, երբ Խոսքը քարոզվում է:

Կարդացե՛ք Բ Տիմոթեոս 3.16,17 և Հռոմեացիների 10.17

բ. Ձեր կարծիքով, ինչպե՞ս է Տիրոջ երկյուղը օգնելու ձեզ՝ չհեռանալ հավատքից, որ ունեք Քրիստոսի հանդեպ:

Կարդացե՛ք Պողոսի հրահանգները Տիմոթեոսին Բ Տիմոթեոս 3.14-4.5-ում և Երեմիա 32.38-40

գ. Ձեր կարծիքով, ինչո՞ւ է աստվածային երկյուղի բացակայությունը դրդում շատերին՝ թողնել իրենց հավատքը:

Կարդացե՛ք Բ Տիմոթեոս 3.1-5, 4.3,4 և Ա Տիմոթեոս 4.1,2

«Պողոսն ասաց, որ յուրաքանչյուրին Քրիստոսի առջև կատարյալ կանգնեցնելու միակ միջոցը ոչ միայն սովորեցնելն է, այլ նույնպես զգուշացնելը (տե՛ս Կողոս. 1.28): Երբ ես փոքր տղա էի, հորս ուսուցումներն օգնում էին ինձ, բայց նրա զգուշացումները *փրկել* են իմ կյանքը: Մի անգամ ես վազեցի փողոց՝ գնդակս ետ բերելու համար, և վազելու ընթացքում հայրս գոչեց. «Ջո՛նի»: Ես գամվեցի տեղումս: Նրա ձայնը շատ խիստ էր, բայց դա փրկեց իմ կյանքը»»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

7 Մեր օրերում ամեն ինչ պարզ տեսնելը շատ կարևոր է: Ունենալով Տիրոջ երկյուղը՝ մենք կարող ենք տեսնել ամեն ինչ այնպես, ինչպես Աստված է տեսնում: Սակայն առանց Տիրոջ երկյուղի՝ մեր զանազանության կարողությունը թուլանում է:

Մտորե՛ք Հիսուսի խոսքերի շուրջ Մատթեոս 6.22,23-ում

«Մարմնի ճրագն աչքն է: Ուրեմն, եթե քո աչքը բարի է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի: Բայց, թե որ քո աչքը չար է, քո ամբողջ մարմինը խավար կլինի: Ուրեմն, եթե այն լույսը, որ քեզանում է, խավար է, ապա որքա՜ն մեծ է այդ խավարը» (NKJV):

• • • • • •

«Աչքը ճրագ է մարմնի համար: Ուրեմն, եթե քո աչքը առողջ է, քո ողջ մարմինը լույսով լցված կլինի: Բայց եթե քո աչքը առողջ չէ, քո ողջ մարմինը խավարով լցված կլինի: Ուրեմն, եթե քո միջի լույսը [քո խիղճը] խավարած է, ապա որքա՜ն թանձր է այդ խավարը» (AMP):

ա. Ի՞նչն է խավարեցնում մեր աչքերը: Ի՞նչն է պարզ և առողջ դարձնում դրանք: Ի՞նչ է Սուրբ Հոգին ասում ձեզ այս հատվածի միջոցով:

_____

_____

_____

_____

_____

բ. Ձեր կարծիքով, ի՞նչ կապ ունի Եփեսացիների թղթում գրված Պողոսի աղոթքը Հիսուսի խոսքերի հետ: Ի՞նչ է այս հատվածն ասում անձամբ ձեզ:

«Ես շարունակ խնդրում եմ, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Աստված՝ փառավոր Հայրը, տա ձեզ իմաստության և հայտնության Հոգին, որ դուք կարողանաք ավելի լավ ճանաչել Նրան: Ես նույնպես աղոթում եմ, որ ձեր սրտի աչքերը լուսավորվեն, որ դուք ճանաչեք այն հույսը, որի համար Նա կանչել է ձեզ, Նրա փառավոր ժառանգության հարստությունները սրբերի մեջ, և Նրա անհամեմատելի մեծ զորությունը մեզ համար, ովքեր հավատում են»:

— *Եփեսացիների 1.17-19,* NIV

_____

_____

_____

_____

_____

«Անկասկած, Ինքնիշխան Տերը ոչինչ չի անում՝ առանց հայտնելու Իր ծրագիրը Իր ծառաներին՝ մարգարեներին»:

— Ամովս 3.7, NIV

«Ընկերությունը Տիրոջ հետ պահված է նրանց համար, ովքեր վախենում են Նրանից: Նրանց հետ է Նա կիսում Իր ուխտի գաղտնիքները»:

— Սաղմոս 25.14, NLT

8 Տիրոջ երկյուղով ապրելու և Նրա ընկերը լինելու ամենազարմանալի օրհնություններից մեկն այն է, որ հաճախ Նա որոշում է կիսել մեզ հետ Իր մտադրություններն ու ապագա ծրագրերը, *մինչև* դրանց կատարվելը: Օրինակ…

ա. Նոյը բարեհաճություն գտավ Տիրոջ առջև, և որպես արդյունք, Աստված ցույց տվեց նրան Իր ծրագիրը՝ երկիրը և մարդկությունը ջրհեղեղով կործանելու մասին: Ինչպե՞ս այս հայտնությունը օգնեց Նոյին և առաջնորդեց նրա հետագա քայլերը:

_____

_____

_____

_____

Կարդացե՛ք Ծննդոց 6.5-22

բ. Աստված հայտնեց Աբրահամին Իր ծրագիրը այն մասին, որ կործանելու է Սոդոմը և Գոմորը՝ այդ քաղաքներում ապրող մարդկանց չարության պատճառով: Ի՞նչ արեց Աբրահամը՝ ստանալով այս տեղեկությունը:

_____

_____

_____

_____

Կարդացե՛ք Ծննդոց 18.17-33 (հատկապես՝ 22-33 խոսքերը):

գ. Ինչո՞ւ է Աստված հայտնում Իր ապագա ծրագրերը մեզ՝ Իր ընկերներին: Անվանե՛ք որոշ պատճառներ՝ համաձայն այս օրինակների: Արդյո՞ք սա խրախուսում է ձեզ: Արդյո՞ք սա մարտահրավեր է նետում ձեզ:

_____

_____

_____

_____

Մտածե՛ք այս մասին

Պատմություն երկու հավատացյալի մասին

Թե՛ Աբրահամը, թե՛ Ղովտը արդար են անվանվում Աստվածաշնչում: Սակայն երբ ուշադրություն ենք դարձնում նրանցից յուրաքանչյուրի բնավորությանը, մեծ տարբերություններ ենք տեսնում: Թեև Աբրահամը կատարյալ չէր, նա վախենում էր Տիրոջից, ապրում էր հնազանդության մեջ և խաղաղության էր ձգտում այլ մարդկանց հետ: Բացի այդ, Աբրահամը Աստծո առատաձեռն երկրպագու էր: Մյուս կողմից՝ Ղովտը եսասիրական ձգտումներ ունեցող մարդ էր, ով իր շահերը այլ մարդկանց շահերից վեր էր դասում, և թվում է՝ հետևում էր Աստծուն, բայց միայն երբ դա հարմարավետ էր: Աբրահամը նվիրված էր Աստծուն, իսկ Ղովտը մարմնավոր էր և հրապուրված էր աշխարհով: Ժամանակ առ ժամանակ Ղովտը փորձանքների մեջ էր ընկնում, որովհետև սխալ վայրում էր, սխալ ժամանակ և սխալ մարդկանց հետ: Նրա կյանքը առակ դարձավ մարդկանց համար, և, ի վերջո, նա դարձավ երկու ցեղերի հայր, որոնք մշտապես Իսրայելի թշնամիներն էին: Եթե չլինեին Աբրահամի աղոթքները և բարեխոսությունները, նա նույնիսկ չէր ապրի այնքան, որքան ապրեց: **Ո՞րն է այս պատմության խրատը**. մի՛ եղեք Ղովտի նման, ով վատնում է իր կյանքը և մի կերպ փրկվում է: Հետևե՛ք այն ճանապարհին, որը հիմնադրեց Աբրահամը: Վախեցե՛ք Տիրոջից, տվե՛ք Նրան առաջին տեղը այն ամենում, ինչ անում եք, և ձեր կյանքը օրհնության ժառանգություն կթողնի գալիք սերունդներին:

Կարդացե՛ք Աբրահամի կյանքի պատմությունը Ծննդոց 12-25 գլուխներում, և Ղովտի կյանքի պատմությունը՝ Ծննդոց 13,14 և 19 գլուխներում:

9 Համոզված եղեք՝ եթե ունենաք Տիրոջ երկյուղը, Նա ուշադիր է լինելու ձեր հանդեպ: Նա մշտապես մտածելու է ձեր մասին, և Նրա օրհնությունները լինելու են ձեր կյանքում: Կարդացե՛ք այս խոստումը Մաղաքիա 3.16-18-ում (NLT):

«Այդ ժամանակ նրանք, ովքեր վախենում էին Տիրոջից, խոսեցին իրար հետ, և Տերը լսեց այն, ինչ նրանք ասացին: Նրա ներկայության մեջ մի հիշատակի մագաղաթ գրվեց՝ գրանցելու համար այն մարդկանց անունները, ովքեր վախենում էին Նրանից և մշտապես մտածում Նրա անվան պատվի մասին»:

«Նրանք Իմ ժողովուրդը կլինեն,- ասում է Երկնքի Բանակների Տերը:- Այն օրը, երբ Ես դատաստան անեմ, նրանք կլինեն Իմ հատուկ գանձը: Ես կխնայեմ նրանց, ինչպես հայրը խնայում է հնազանդ զավակին: Այդ ժամանակ դուք կրկին կտեսնեք տարբերությունը արդարի և անօրենի միջև, նրանց միջև, ովքեր ծառայում են Աստծուն, և ովքեր չեն ծառայում»:

Առնչվող սուրբգրային հատվածներ. Հայտնություն 3.7-12, Ղուկաս 1.50, Սաղմոս 31.19, 147.11

Ի՞նչ են այս խոսքերն ասում այն մասին, որ Աստծուց վախենալու պատճառով ձեր կյանքն օրհնված կլինի թե՛ հիմա, թե՛ հավիտենության ընթացքում:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Հոչակել
ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Քրիստոսը նման է գետի, որ շարունակաբար հոսում է: Այդ աղբյուրից միշտ թարմ ջուր է գալիս, այնպես որ մարդը կարող է ապրել դրա կողքին և ջուր ունենալ իր ողջ կյանքի ընթացքում: Քրիստոսը հավիտենական աղբյուր է. Նա մշտապես ապահովում է Իր ժողովրդին, և այդ աղբյուրը երբեք չի վերջանում: Նրանք, ովքեր ապրում են Քրիստոսով, կարող են թարմ պաշար ունենալ ողջ հավիտենության ընթացքում. նրանք կարող են առատությամբ նորանոր օրհնություններ ստանալ, որոնք երբեք չեն վերջանա»:

— *Ջոնաթան Էդվարդս*[6]

10 Արդյո՞ք կցանկանաք, որ ձեր և Աստծո մտերմության մակարդակը *բարձրանա*: Նա ցանկանում է դա: Նա փափագում է անձամբ ներգրավված լինել ձեր կյանքի յուրաքանչյուր բնագավառում: Ոչ միայն կիրակի օրը, այլ նույնպես երկուշաբթիից - շաբաթ՝ օրը քսանչորս ժամ:

ա. Ի՞նչ եք անում, կամ ի՞նչ եք արել անցյալում, ինչը թույլ է տվել ձեզ ՝ հեռացնել ձեր ուշադրությունն աշխարհից և իրականում զգալ Տիրոջ մտերմությունը:

_____
_____
_____
_____
_____
_____
_____

բ. Ինչի՞ց եք պատրաստ հրաժարվել՝ Տիրոջ հետ ավելի որակյալ ժամանակ անցկացնելու համար:

_____
_____
_____
_____
_____
_____

գ. *Լռությամբ մոտեցեք Տիրոջը:* Հարցրե՛ք Նրան՝ արդյո՞ք Նա ցանկանում է, որ փոփոխություններ մտցնեք ձեր օրակարգի, պարտականությունների, նախասիրությունների և այլնի մեջ՝ Իրեն ավելի մոտենալու համար: Գրե՛ք, թե ինչ է Նա հայտնում:

_____

_____

_____

_____

«Ամեն ինչ լավեց. ահա ամենի վերջը. վախեցի՛ր Աստծուց [երկյուղածություն ունեցիր Նրա հանդեպ և երկրպագի՛ր Նրան՝ իմանալով որ Նա է] և պահիր Նրա պատվիրանները, որովհետև սա է մարդու ամբողջը [նրա ստեղծման ամբողջական, նախնական նպատակը, Աստծո նախահնամության առարկան, բնավորության ձևավորման արմատը, ամեն երջանկության հիմքը, արևի ներքո գտնվող բոլոր աներերդաշնակ հանգամանքների և պայմանների համապատասխանեցումը] և ամբողջը [պարտականությունը]՝ յուրաքանչյուր մարդու համար»:

— Ժողովող 12.13, AMP

Աստծո երկյուղի օրհնությունները

«Եվ Տերը՝ մեր Աստված, պատվիրեց մեզ՝ հնազանդվել բոլոր այս կանոններին և վախենալ Նրանից, որպեսզի Նա կարողանա շարունակել օրհնել մեզ և պահպանել մեր կյանքերը, ինչպես Նա արել է մինչև օրս»:

Երկրորդ Օրինաց 6.24, NLT

«Որտե՞ղ է այն մարդը, ով վախենում է Տիրոջից: Աստված կսովորեցնի նրան՝ ինչպես ընտրել լավագույնը: Նա կապրի Աստծո օրհնությունների շրջանի ներսում, և նրա երեխաները կժառանգեն երկիրը»:

Սաղմոս 25.12,13, TLB

«Տիրոջ երկյուղը երկարացնում է մարդու կյանքը, բայց անօրենների տարիները հանկարծ ընդհատվում են»:

Առակաց 10.27, NLT

«Խոնարհությունը և Տիրոջ երկյուղը բերում են հարստություն և պատիվ և կյանք»:

Առակաց 22.4, NIV

Խ

Շաբաթական գործունեություն

8

Հենց այնտեղ, որտեղ ապրում եք

ԲԱՐԻ ԽՈՍՔԵՐ

«Ինչպես երկաթն է սրում երկաթը, այնպես էլ ընկերը՝ ընկերոջը»:

— Առակաց 27.17, NLT

Ճշմարիտ ընկերներն անհավատալի են: Նրանց խրախուսանքը կարող է ոգեշնչել մեզ՝ հասնելու նոր բարձունքների. այն կարող է նեցուկ լինել դժվար պահերին: Նրանց կառուցողական քննադատությունը կարող է հեռու պահել մեզ կործանարար սխալներից կամ անխոհեմ որոշումներից, որոնց մասին մենք հետագայում զղջալու էինք: Գաղատացիների 6.10-ում գրված է, որ «…ամեն անգամ, երբ հնարավորություն ունենք, պետք է բարի գործենք բոլորի հանդեպ, *հատկապես նրանց, ովքեր հավատքի ընտանիքի մեջ են*» (NLT, շեղագիրն ավելացրած է): Մեր եղբայրների և քույրերի հանդեպ բարի գործելու ձևերից մեկը ժամանակ հատկացնելն է՝ նրանց ուժեղ կողմերը մատնացույց անելու համար: Ինչպես մենք տեսանք նախորդ գլխում, բառերը զորություն ունեն, և ճիշտ կերպով օգտագործելու դեպքում դրանք կարող են կյանք տալ:

Փորձե՛ք այս վարժությունը խրախուսանքի համար

Խնդրե՛ք ձեր խմբակի յուրաքանչյուր անդամի՝ վերցնել թուղթը և գրել իր անունը: Իրար փոխանցեք այդ թղթերը: Յուրաքանչյուրը պետք է գրի մեկական դրական հատկանիշ խմբակի տվյալ անդամի մասին: Բոլոր անդամները պետք է նշեն այն հատկանիշը տվյալ անձնավորության կյանքում, որը հիացնում է իրենց և հարգանք առաջացնում նրա հանդեպ՝ նրա բնավորության գծերից մեկը, որ շինություն է տալիս և խրախուսում է ուրիշներին: Երբ յուրաքանչյուրը հնարավորություն ունենա գրել բոլոր թղթի թերթերի վրա, դրանք պետք է վերադարձվեն իրենց տերերին: Եթե ժամանակը թույլ տա, խմբակի անդամները կարող են միմյանց ասել, թե ինչ են գրել յուրաքանչյուրի մասին:

Համապատասխանեցրե՛ք այս առաջադրանքը ձեր խմբին

Այս առաջադրանքը կարելի է կատարել եկեղեցական խմբակում, աշխատակիցների, ամուսնու և կնոջ, ընտանիքի անդամների (նաև հարազատների) միջև, և այլն: Ավելի փոքր խմբերի համար կարելի է ավելացնել ուժեղ կողմերի քանակը՝ մինչև հինգը, տասը կամ ավելին:

Գրե՛ք ձեր դիտողությունները

Ընդհանուր առմամբ, ինչպիսի՞ տպավորություն թողեց այս առաջադրանքը ձեր խմբակի անդամների վրա:

_____

_____

_____

_____

Ի՞նչ տպավորություն ստացաք անդամների մեկնաբանություններից: Արդյո՞ք ինչ-որ նոր բան իմացաք ձեր մասին: Կա՞ր արդյոք որևէ բան, որ դժվարանում եք հավատալ կամ ընդունել:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Անցյալում նման վարժություններ անցկացվել են Ամերիկայով մեկ՝ բազմաթիվ դպրոցներում և եկեղեցիներում: Մի մարդ այնպես էր տպավորվել, որ պահել էր իրեն ուղղված խրախուսական խոսքերը իր դրամապանակում ավելի քան 30 տարի: Մեկ այլ մարդ, որ որոշել էր ինքնասպանություն գործել, այնքան էր ազդվել իրեն ուղղված սրտանց խոսքերից, որ չէր զրկել իրեն կյանքից: *Այլևս ի՞նչ կարող եք անել, որպեսզի սրեք ձեր խմբակի անդամների կյանքերը:*

Հոչակել
ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

Ընկերության փառքը պարզած ձեռքը, կամ բարի ժպիտը և ընկերակցության հաճույքը չէ: Դա հոգևոր ոգեշնչում է, որ գալիս է մեկից երբ նա հայտնաբերում է, որ ինչ-որ մեկը ևս հավատում է իրեն և կամենում է վստահել իրեն իր ընկերությամբ:

— *Քոթի գեն Քում*

Շաբաթական գործունեություն
8

ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏԾՈ ԵՐԿՅՈՒՂԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ Է

«Տիրոջ երկյուղը իմաստություն է սովորեցնում մարդուն, և խոնարհությունը գալիս է պատվից առաջ: Խոնարհությունը և Տիրոջ երկյուղը հարստություն, պատիվ ու կյանք են բերում»:

— Առակաց 15.33, 22.4, NIV

Աստծո հետ մտերիմ ընկերության դուռը բացվում է Տիրոջ երկյուղով, իսկ Տիրոջ երկյուղի բանալին *խոնարհ* սիրտն է: Աստծո Հոգու այս երկու դրսևորումներն անբաժան են: Եթե մենք կարողանայինք հոգևոր մանրադիտակ վերցնել և դնել Տիրոջ երկյուղի որևէ նմուշ խոշորացնող ապակու տակ, ապա կտեսնեինք, որ խոնարհությունը ներհյուսված է դրա կառուցվածքի մանրաթելերի մեջ: Մտածե՛ք այս մասին… *խոնարհությունը* սահմանվում է որպես «ազատություն հպարտությունից և ամբարտավանությունից, մտքի խոնարհ վիճակ, անարժան լինելու խորը զգացում Աստծո առջև, և հնազանդություն՝ աստվածային կամքին»[8]:

Էնդրյու Մյուրին այն մարդկանցից մեկն էր, ով իրականում հասկանում էր, թե ինչ է խոնարհությունը: Նրա կյանքի կարգախոսն էր՝ «գցել սեփական անձը» Քրիստոսի վրա[9]: Այս Աստծո մարդը ծառայել է ավելի քան 60 տարի և գրել

ավելի քան 200 գիրք: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է նա սահմանում խոնարհությունը.

> «**Խոնարհությունը**՝ Աստծուց բացարձակ կախվածություն ունենալու վիճակը, մարդ արարածի առաջին պարտականությունը և բարձրագույն առաքինությունն է: Իրականում, այն *յուրաքանչյուր առաքինության արմատն է*: Նույնպես *հպարտությունը*՝ խոնարհության կորուստը, յուրաքանչյուր մեղքի և չարիքի արմատն է:
> Խոնարհությունը միակ հողն է, որի վրա շնորհներն արմատ են գցում. խոնարհության պակասը բավարար բացատրություն է յուրաքանչյուր թերության և ձախողման համար: Խոնարհությունն այնքան էլ շնորհ կամ առաքինություն չէ՝ մյուսների հետ մեկտեղ, քանի որ այն բոլոր շնորհների արմատն է, որովհետև *միայն ինքն է ճիշտ դիրք զբաղեցնում Աստծո հանդեպ* և թույլ տալիս Նրան՝ որպես Աստված, անել ամեն ինչ»[10]:

Հիսուս Քրիստոսը մարմնավորեց «ճիշտ վերաբերմունքը», որը առկա է ճշմարիտ խոնարհությունն ու Տիրոջ երկյուղը ունենալու դեպքում: Ամենից պարզ սա երևում է Հովհաննեսի Ավետարանում, որտեղ Նա շարունակ նշում է, որ չասաց և չարեց որևէ բան Իր կամքով. Նա միայն անում էր այն, ինչ որ Հայրն էր ասում Իրեն[11]: Նա չուներ սեփական ծրագրեր: Նա չէր ձգտում կառուցել Իր արքայությունը: Նա ուներ մեկ ցանկություն՝ հաճելի լինել Հորը և փառք բերել Նրան: Տիրոջ երկյուղն իսկապես որ Նրա *բերկրանքն* էր (տե՛ս Եսայի 11.3):

Խոնարհության հակադրությունը հպարտությունն է: Այն առաջին մեղքն է, որ գտնվեց Լյուցիֆերի ներսում, և որի պատճառով նա վտարվեց Երկնքից: Հպարտությունը, հավանաբար, մեծագույն խոչընդոտն է՝ Տիրոջ երկյուղի մեջ ապրելու և հոգևորապես աճելու համար: Հպարտ սիրտը մեծարում է իր անձը և չի ցանկանում ակնածանք, պատիվ կամ երկյուղ ցուցաբերել Տիրոջ հանդեպ: Այն իսկապես որ բոլոր մեղքերի արմատն է: Էնդրյու Մյուրին շարունակում է…

> «Չարը չունի այլ սկիզբ՝ բացի հպարտությունից, և այլ վերջ՝ բացի խոնարհությունից: Ճշմարտությունը հետևյալն է. հպարտությունը պետք է մահանա ձեզանում, այլապես՝ ոչինչ, որ գալիս է Երկնքից, չի կարողանա բնակվել ձեր մեջ: Ճշմարտության դրոշի ներքո, անձնատուր եղեք սուրբ Հիսուսի հեզ և խոնարհ Հոգուն»[12]:

Հպարտության խաբեբայությունը մեր ներսում մոլորեցնում է մեզ՝ դրդելով հավատալ, որ մենք ունենք ուժ, իմաստություն և բարություն՝ առանց Աստծո: Ոչինչ չի կարող ավելի հեռու լինել ճշմարտությունից: Առանց Նրա մենք ոչինչ չենք կարող (տե՛ս Հովհ. 15.5):

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ

> «Հոգին է, Ով կյանք է տալիս [Նա է Կյանք տվողը]. մարմինը ոչ մի օգուտ չի տալիս [դրանում ոչ մի շահ չկա]: Այն խոսքերը (ճշմարտությունները), որ ես խոսում էի ձեզ, հոգի և կյանք են»:

— *Հովհաննես 6.63,* AMP

«Որովհետև ես գիտեմ, որ ոչ մի բարի բան չի բնակվում ինձանում, այսինքն՝ իմ մարմնում: Ես կարող եմ կամենալ այն, ինչ ճշմարիտ է, բայց չեմ կարող կատարել դա: [Ես ունեմ ճշմարիտն անելու մտադրությունը և մղումը, բայց չունեմ զորություն՝ այն ի կատար ածելու համար]»:

— *Հռոմեացիների 7.18,* AMP

«Որովհետև մենք ենք թլփատությունը՝ մենք, որ երկրպագում ենք Աստծո Հոգով, որ պարծենում ենք Քրիստոս Հիսուսով, և վստահություն չունենք մարմնի հանդեպ»:

— *Փիլիպեցիների 3.3,* NIV

Ի՞նչ են ասում այս խոսքերը ձեզ՝ ձեր մարմնի մասին: Ինչի՞ վրա պետք է ուղղված լինի ձեր ուշադրությունը: Ինչո՞ւ:

_____

_____

_____

_____

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ

«Բոլորը, ովքեր վախենում են Աստծուց, կատեն չարը: Այդ իսկ պատճառով, ես ատում եմ հպարտությունը և ամբարտավանությունը, անբարոյությունը և նենգավոր խոսքը»:

— *Առակաց 8.13,* NLT

«Իր հպարտությամբ անօրենը չի փնտրում Նրան. իր բոլոր մտածմունքների մեջ *տեղ չկա Աստծո համար*»:

— *Սաղմոս 10.4,* NIV

«Հպարտությունը տանում է խայտառակության, բայց խոնարհության հետ գալիս է *իմաստությունը*»:

— *Առակաց 11.2,* NLT

«Հպարտությունը գալիս է կործանումից առաջ, և ամբարտավան հոգին՝ անկումից առաջ»:

— *Առակաց 16.18,* NKJV

«Մարդու հպարտությունը կցածրացնի նրան, բայց հոգով խոնարհը կպահի *պատիվը*»:

— *Առակաց 29.23,* NKJV

[շեղագիրն ավելացրած է]

Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս է հպարտությունը խանգարում մեզ՝ ունենալ Տիրոջ երկյուղը: Ինչպե՞ս է խոնարհությունը նպաստում դրան:

_____

_____

Ըստ Հակոբոս 4.6,7-ի և Ա Պետրոս 5.5,6-ի, ի՞նչ կապ կա *խոնարհ սիրտ* ունենալու և Աստծո *շնորհքը* (զորությունը և կարողությունը) ընդունելու միջև, որն անհրաժեշտ է հաղթանակող և աստվածապաշտ կյանքով ապրելու համար:

_____

_____

_____

_____

Առնչվող սուրբգրային հատվածներ. Առակաց 3.34, 15.25

Խոնարհությունը և Տիրոջ երկյուղը նույն աղբյուրն ունեն

Որտեղի՞ց է գալիս խոնարհությունը: Այն անկարելի է գնել որևէ քրիստոնեական համաժողովի ընթացքում, կամ զարգացնել՝ համալսարանական կրթություն ստանալով: Խոնարհությունը կարելի է ստանալ միայն Քրիստոսից: Նա է խոնարհությունը: Ակնհայտ է՝ մենք խոնարհություն ենք ստանում միայն շնորհիվ այն գերբնական աշխատանքի, որ Նրա Հոգին կատարում է մեր ներսում: Նույնը ճշմարիտ է Տիրոջ երկյուղի համար. մարդը չի կարող սովորեցնել այս առաքինությունը: Այն պետք է ներշնչվի և զարգացվի մեր հոգու մեջ Աստծո Հոգու կողմից: Էնդրյու Մյուրին շարունակում է…

> «Խոնարհությունը այնպիսի բան չէ, որ ինքնին կգա մեր կյանքում. այն պետք է դառնա մեր փափագը, աղոթքի, հավատքի և համբերության առարկան: … Եկեք ուսումնասիրենք Քրիստոսի բնավորությունը, մինչև որ մեր անձերը լցվեն սիրով և հիացմունքով Նրա համեստության հանդեպ: Եվ եկեք հավատանք, որ երբ մենք փշրվենք և դեն նետենք հպարտության ու սեփական անձի կարևորության զգացումը, անձամբ Հիսուս Քրիստոսը կայցելի մեզ և կհաղորդի նաև այս շնորհը՝ որպես Նրա զարմանալի կյանքի ևս մեկ մաս մեր ներսում»[13]:

Հիսուսը հատուկ հրավեր է հղում ձեզ. դուք կարող եք մոտենալ Իրեն՝ մտերիմ շփման համար: Կարդացե՛ք այս խրախուսող և զորացնող խոսքերը.

> «Եկեք Ինձ մոտ, բոլորդ, որ ծանր աշխատանք եք կատարում, և խիստ ընկճված ու գերծանրաբեռնված եք, և Ես կհանգստացնեմ ձեզ: [Ես կհանդարտեցնեմ և կթեթևացնեմ և կթարմացնեմ ձեր անձերը]:
>
> Վերցրե՛ք Իմ լուծը և սովորե՛ք Ինձնից, որովհետև Ես հեզաբարո (հեզ) եմ և խոնարհ (համեստ) սրտով, և դուք հանգիստ (թեթևություն և հանդարտություն և թարմացում և վերականգնում և օրհնված անդորր) կգտնեք ձեր անձերի համար:
>
> Որովհետև Իմ լուծը բարերար է (օգտակար, բարի՝ ոչ խիստ, սուր կամ ճնշող, այլ՝ հարմարավետ, դուրեկան և հաճելի), և Իմ բեռը թեթև է և հեշտ է կրել»:
>
> — *Մատթեոս 11.28-30,* AMP

Ի՞նչ է Սուրբ Հոգին ասում ձեզ այս հատվածի միջոցով: Արդյո՞ք կընդունեք Հիսուսի հրավերը:

Կա ևս մեկ կարևոր միջոց, որը բացում է մեր սրտերը և պատրաստում ընդունելու խոնարհության և Տիրոջ երկյուղի թանկարժեք պարգևները: Խոսքը *աղոթքի* մասին է: Պարզ ասած՝ աղոթել՝ նշանակում է խոսել Աստծո հետ և լսել Նրան: Աղոթքը և՛ հաղորդակցություն է, և՛ հաղորդություն. այն երկխոսություն է մեր և Հոր միջև: Ինչպիսի՜ զարմանալի արտոնություն: Աղոթքը հազվադեպ տեղի ունեցող գործողություն չէ, այլ՝ շարունակական կենսառոճ: Սուրբ գիրքը մշտապես խրախուսում է մեզ անդադար աղոթել՝ աղոթքի բոլոր տեսակներով[15]:

> *Հոչակել*
> ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ
>
> «Խոնարհ սիրտը նման է մագնիսի, որը *գրավում է Աստծո բարեհաճությունը* մեր հանդեպ»:
>
> — *Ջիմ Սիմբալա*[14]

Համաձայն վերը ասվածի, ձեր կարծիքով՝ ինչպե՞ս են աղոթքը, խոնարհությունը և *Տիրոջ երկյուղը* օգնում ձեզ վայելել շարունակական մտերիմ շփում Աստծո հետ:

Կարդացե՛ք Երեմիա 29.12,13, Առակաց 3.5-8, Սաղմոս 25.9, Բ Մնացորդաց 7.14-16, Եսայի 57.15

Աստծո ընկե՛ր, թող որ Նա շնորհի ձեզ Քրիստոսի խոնարհությունը և Նրա սուրբ ակնածալի երկյուղը, որպեսզի կարողանաք լիարժեք կերպով ապրել այն կյանքը, որ Նա ծրագրել է ձեզ համար:

Աղոթք խոնարհության համար

Ո՜վ Տեր, խնդրում եմ, շնորհի՛ր ինձ Քրիստոսի խոնարհությունը: Նրա խոնարհ սիրտը և Նրա երկյուղածությունը Քո հանդեպ դուռ բացեցին ամենաիսոր և ամենամտերիմ շփման համար, որ որևէ մեկը երբևէ ունեցել է երկրի վրա: Ես ցանկանում եմ նման շփում ունենալ Քեզ հետ: Ների՛ր, որ հպարտ եմ եղել: Հեռացրո՛ւ հպարտության ամեն մի հետք իմ սրտից: Օգնի՛ր ինձ՝ ուշադիր լինել և ամեն օր խոնարհություն հագնել, որպեսզի կարողանամ մտերիմ կապ ունենալ քեզ հետ: Դու հրաշալի ես, Տե՛ր: Այսօրվանից և ողջ հավիտենության ընթացքում, ես ակնկալում եմ ավելի ու ավելի մտերիմ ընկերություն ունենալ Քեզ հետ, որը կգերազանցի իմ ամենահամարձակ երազանքները... Հիսուսի անունով, ամե՛ն:

Իմ օրագիրը

ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ՀԻՇԵԼ

«Ես հավատում եմ ողջ սրտով, որ այս սերունդը ամենամեծն է, որ երբևէ ապրել է այս երկրի վրա: ...Ես հավատում եմ, որ սա այն ամենամեծ սերունդն է, որի մասին գրում էին մարգարեները, որտեղ որդիները, դուստրերը, ծառաները և աղախինները մարգարեանում են Տիրոջ Խոսքը, և ազգերը գալիս են Նրա արքայության մեջ: Թող որ Աստված օգնի մեզ՝ վերադառնալ Տիրոջ երկյուղին, որպեսզի մենք կարողանանք իրականացնել մեր կոչումը»:

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Ձեզ դուր եկա՞վ այս դասընթացը Տիրոջ երկյուղի մասին: Արդյո՞ք այն բացեց ձեր աչքերը՝ հայտնելով նոր բաներ Աստծո մասին: Արդյո՞ք այն լցրեց ձեզ քաղցով՝ Նրան ավելի մոտենալու համար: Մի քանի րոպե հատկացրեք, որպեսզի շնորհակալություն հայտնեք և փառք տաք Աստծուն այն ամենի համար, ինչ Նա սովորեցրեց ձեզ: Նա արժանի է մեր երկրպագությանը: Մենք կարող ենք շփվել Նրա հետ. ինչպիսի՜ արտոնություն: Գրե՛ք ցանկացած նոր միտք կամ առաջնորդություն, որ Նա հայտնում է:

_____

_____

_____

_____

ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Տիրոջ երկյուղի ամենաոգևորիչ և ամենաթանկ օրհնությունը՝ Նրա հետ մտերմորեն շփվելու արտոնությունն է: Ընկերությունը Աստծո հետ պահված է նրանց համար, ովքեր վախենում են Նրանից: Ոչինչ այս երկրի վրա չի համեմատվի այս ազատագրող և զորացնող շփման հետ: Աստված վստահում է նրանց, ովքեր վախենում են Իրենից, և հայտնում է նրանց Իր ուխտի գաղտնիքները և Իր ապագա ծրագրերը: Խոնարհության և Տիրոջ երկյուղի միջոցով դուք կհաստատվեք և ավելի կհարատևեք, նաև անչափ օրհնված կլինեք թե՛ հիմա, թե՛ հավիտենության ընթացքում:

(1) Մեջբերում Նոյ Վեբսթերի *«Անգլերեն լեզվի ամերիկյան բառարանի առաջին հրատարակություն»*-ից (1828թ.), վերահրատարակված պատճենման միջոցով «Foundation for American Christian Education»-ի կողմից (Սան Ֆրանցիսկո, Կալիֆոռնիա, 2000թ.): (2) Մեջբերումներ Բիլլի Գրեհեմից (http://www.dailychristianquote.com/dcqgraham.html, վերցրած 08.10.2010թ.): (3) Տե՛ս Բ Մնաց. 20.7, Եսայի 41.8, Հակոբ. 2.23 (4) Մեջբերումներ Մխիթարության մասին (http://www.dailychristianquote.com/dcqcomfort.html, վերցրած 20.10.2010թ.): (5) Տե՛ս Բ Տիմոթ. 4.1,2 (6) *«Արագ ընդմիջում. հինգրոպեանոց ամենօրյա ընթերցանություններ՝ ձեր օրը սկսելու համար»* (Սենտ Սան Լուիս Օբսիպո, Կալիֆոռնիա, «Parable», 2007թ.), Օր 238: (7) Նույնը՝ Օր 278: (8) Տե՛ս Նշում 1: (9) Մեջբերում՝ *«131 Քրիստոնյա, ում մասին յուրաքանչյուրը պետք է իմանա»*, Էնդրյու Մյուրի (www.christianitytoday.com/history/special/131christians/murray.hl, վերցրած 22.09.2007թ.): (10) Էնդրյու Մյուրի. *«Խոնարհություն»* (Ֆորթ Վաշինգտոն, Փենսիլվանիա, «CLC Publications», 2006թ.), էջեր 12,14: (11) Տե՛ս Հովհ. 5.30, 6.38, 7.16, 8.28,42,50, 14.10,24 (12) Տե՛ս Նշում 10, էջ 101: (13) Նույնը՝ էջեր 15,16: (14) Տե՛ս Նշում 6, Օր 314: (15) Տե՛ս Ա Թեսաղ. 5.17, Ղուկ. 18.1, Եփես. 6.18, Մատթ. 7.7-11

Իմ նշումներդ

ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂԸ

ԲԱՑԱՀԱՅՏԵ՛Ք ԱՍՏՇՈՒՆ ՄՏԵՐՄՈՐԵՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԲԱՆԱԼԻՆ

Այս գիրքը, որ ձեր ձեռքում է, Ջոն Բիվերի «Տիրոջ երկյուղը» Դասընթացի մի մասն է: Կարդալով այս գիրքը և օգտագործելով հավելյալ ուսումնական նյութերը, որոնք հասանելի են «DVD» սկավառակների միջոցով և առցանց, դուք ավելի խորը կուսումնասիրեք այս դինամիկ և կյանք փոխող դասընթացը: Ամբողջ դասընթացը պատշաճ կերպով ուսումնասիրելու դեպքում, ձեր քրիստոնեական կյանքի ընթացքը կզորանա՝ հնարավորություն տալով ձեզ՝ անել ավելին Աստծո համար:

Ամբողջ դասընթացը բաղկացած է հետևյալ մասերից.

«Տիրոջ երկյուղը» գիրք

Այս դասընթացի միակ տպագրված մասն այս գիրքն է, որն այժմ ձեր ձեռքում է: Գրքի էլեկտրոնային տարբերակն առկա է նաև կցված «DVD» սկավառակ 1-ում՝ «PDF» ձևաչափով:

«Տիրոջ երկյուղը» «DVD» սկավառակներ 1 և 2

Կցված սկավառակները պարունակում են դասընթացի բոլոր նյութերը՝ թվային ձևաչափերով:

«Տիրոջ երկյուղը» սերտողության և ամենօրյա ընթերցանության ձեռնարկ

Սկավառակ 1-ում առկա է «PDF» ձևաչափով տարբերակը:

«Տիրոջ երկյուղը» աուդիո գիրք

«Տիրոջ երկյուղը» գրքի բոլոր տասնչորս գլուխները՝ ընթերցված հայերենով, առկա են սկավառակ 1-ում «MP3» ձևաչափով:

«Տիրոջ երկյուղը» տեսադասընթացները

«Տիրոջ երկյուղը» ուսուցողական տեսադասընթացի բոլոր ութ դասերն առկա են սկավառակներ 1 և 2-ում: Այս դասերը կարել է նաև անվճար ներբեռնել cloudlibrary.org ինտերնետային կայքէջից:

«Տիրոջ երկյուղը» տեսադասընթացները՝ աուդիո տարբերակով

«Տիրոջ երկյուղը» ուսուցողական տեսադասընթացի բոլոր ութ դասերը՝ «MP3» ձևաչափով, առկա են սկավառակ 1-ում:

ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂԸ

ԲԱՑԱՀԱՅՏԵ՛Ք ԱՍՏԾՈՒՆ ՄՏԵՐՄՈՐԵՆ ԳԱՆԱՉԵԼՈՒ ԲԱՆԱԼԻՆ

Լրացուցիչ տեղեկություն «Տիրոջ երկյուղը» դասընթացի վերաբերյալ.

«MP3» աուդիո ֆայլերը - կարելի է ներբեռնել ձեր աուդիո ձայնարկիչի, սմարթֆոնի կամ համակարգչի մեջ:

«PDF» ֆայլերը - կարելի է ներբեռնել ձեր համակարգչի մեջ: Դրանք կարելի է հեշտորեն կարդալ, տպել կամ կրկնօրինակել: Կարող եք նույնիսկ հատվածներ պատճենել տեքստից:

էլեկտրոնային գիրքը - տպագրված գրքի թվային ձևաչափն է: Կարող եք ներբեռնել այն ձեր «iPad»-ի, համակարգչի կամ սմարթֆոնի մեջ:

«DVD» սկավառակներ: Եթե ինչ-ինչ պատճառով ձեզ չհաջողվի նվագարկել այս սկավառակները ձեր տեսանվագարկչի վրա, փորձեք բեռնել ֆայլերը ձեր համակարգչի մեջ և նվագարկել համակարգչի միջոցով: Եթե դարձյալ խնդիրներ ունենաք, ապա ցույց տվեք սկավառակները այնպիսի մարդու, ով հասկանում է համակարգիչներից: Թույլ տվեք նրան օգնել ձեզ՝ նվագարկել տեսանյութերը և օգտագործել դրանք ձեր ուսումնառության ընթացքում:

Այս դասընթացի բոլոր նյութերը նվեր են ձեզ: Կարող եք ազատորեն բազմացնել այս սկավառակը, պատճենել դրանում առկա նյութերը, ուղարկել դրանք էլ. փոստով՝ ձեր ընկերներին, պատճենել և տեղադրել «Word» ֆայլերի մեջ, տրամադրել այս ուսմունքները ձեր եկեղեցուն, բեռնել դրանք ինտերնետում, որպեսզի այլ մարդիկ կարողանան օգտվել դրանցից: Տարածե՛ք այս նյութերն ամենուր, որտեղ մարդիկ քաղց ունեն Աստծո Խոսքի ողջամիտ ուսմունքների հանդեպ և ցանկանում են ապրել զորացված քրիստոնեական կյանքով:

ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂԸ

ԲԱՑԱՀԱՅՏԵ՛Ք ԱՍՏԾՈՒՆ ՄՏԵՐՄՈՐԵՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԲԱՆԱԼԻՆ

Այս գիրքը, որ ձեր ձեռքում է, Ջոն Բիվերի «Տիրոջ երկյուղը» Դասընթացի մի մասն է: Կարդալով այս գիրքը և օգտագործելով հավելյալ ուսումնական նյութերը, որոնք հասանելի են «DVD» սկավառակների միջոցով և առցանց, դուք ավելի խորը կուսումնասիրեք այս դինամիկ և կյանք փոխող դասընթացը: Ամբողջ դասընթացը պատշաճ կերպով ուսումնասիրելու դեպքում, ձեր քրիստոնեական կյանքի ընթացքը կզորանա՝ հնարավորություն տալով ձեզ՝ անել ավելին Աստծո համար:

Ամբողջ դասընթացը բաղկացած է հետևյալ մասերից.

- **«Տիրոջ երկյուղը» գիրք**
  Այս դասընթացի միակ տպագրված մասն այս գիրքն է, որն այժմ ձեր ձեռքում է: Գրքի էլեկտրոնային տարբերակն առկա է նաև կցված «DVD» սկավառակ 1-ում՝ «PDF» ձևաչափով:

- **«Տիրոջ երկյուղը» «DVD» սկավառակներ 1 և 2**
  Կցված սկավառակները պարունակում են դասընթացի բոլոր նյութերը՝ թվային ձևաչափերով:

- **«Տիրոջ երկյուղը» սերտողության և ամենօրյա ընթերցանության ձեռնարկ**
  սկավառակ 1-ում առկա է «PDF» ձևաչափով տարբերակը:

- **«Տիրոջ երկյուղը» աուդիո գիրք**
  «Տիրոջ երկյուղը» գրքի բոլոր տասնչորս գլուխները՝ ընթերցված հայերենով, առկա են սկավառակ 1-ում (MP3 ձևաչափով):

- **«Տիրոջ երկյուղը» տեսադասընթացները**
  «Տիրոջ երկյուղը» ուսուցողական տեսադասընթացի բոլոր ութ դասերն առկա են սկավառակներ 1 և 2-ում: Այս դասերը կարելի է նաև անվճար ներբեռնել Cloudlibrary.org ինտերնետային կայքէջից:

- **«Տիրոջ երկյուղը» տեսադասընթացները՝ աուդիո տարբերակով**
  «Տիրոջ երկյուղը» ուսուցողական տեսադասընթացի բոլոր ութ դասերը՝ MP3 ձևաչափով, առկա են սկավառակ 1-ում:

Ջոն և Լիզա Բիվերների այս և այլ ուսմունքները հայերենով կարող եք ներբեռնել հետևյալ կայքէջերից.

www.MessengerInternational.org
www.CloudLibrary.org

Հավելյալ նյութերը բազմաթիվ լեզուներով կարող եք դիտել և ներբեռնել Youtube.com, Youku.com և այլ նյութեր տարածող կայքէջերից:

ԲԱՑԱՀԱՅՏԵ՛Ք ՓՐԿՈՒԹՅԱՆ, ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԱՆՆԵՐԸ

Ավելի քան երբևէ, կա մի բան, որ պակասում է մեր եկեղեցիներում, աղոթքներում և անձնական կյանքում: Այն օգնում է մեզ՝ մտերիմ փոխհարաբերություններ ունենալ Աստծո հետ:
Այն մեր կյանքն իրական և մաքուր է դարձնում: Այն վերափոխում է մեզ՝ դարձնելով ճշմարտապես Սուրբ Հոգով առաջնորդվող Աստծո զավակներ:
Խոսքը **Տիրոջ երկյուղի** մասին է:

Այս հետաքրքրաշարժ գրքում հեղինակ Ջոն Բիվերը բացահայտում է Աստծո երկյուղի անհրաժեշտությունը: Իր մեղմորեն հակադրվող ոճով նա կոչ է անում մեզ՝ նորովի երկյուղ տածել Աստծո հանդեպ մեր առօրյա կյանքի և երկրպագության մեջ: Նա ցույց է տալիս, որ Տիրոջ երկյուղը՝ Աստծուն ճանաչելու բանալին է, նաև խոսում է այն մասին, որ Աստված փափագում է ճանաչվել, և որ ցանկացած մոտեցում Աստծուն՝ առանց Տիրոջ երկյուղի, անխուսափելիորեն կավարտվի դատաստանով:

Այս խոր ուղերձը կդրդի ձեզ՝ պատվել Աստծուն այնպես, որ ձեր կյանքն արմատական փոփոխությունների ենթարկվի:

ՋՈՆ ԲԻՎԵՐԸ հանրաճանաչ գրքերի հեղինակ և հանրահայտ խոսնակ է: Նա և նրա կինը՝ Լիզան, ով նույնպես հանրաճանաչ հեղինակ է, հիմնադրել են «Ջոն Բիվերի ծառայությունը» 1990 թ.-ին: Այս ծառայությունն աճել է՝ վերածվելով բազմաբնույթ միջազգային գործունեության, ներառյալ՝ շաբաթը մեկ անգամ հեռարձակվող «Մեսինջեր» հեռուստատեսային հաղորդումը, որը դիտում են 214 երկրներում: Ջոն Բիվերը մի շարք գրքերի հեղինակ է, որոնց թվում են՝ «Կոտրել երկչոտությունը», «Սատանայի խայծը» և «Ծածկոցի տակ» գրքերը:

Ներբեռնե՛ք այս և այլ նյութերը հետևյալ կայքէջերից.
www.CloudLibrary.org

Ցանկանում եք իմանալ ավելի՞ն, Տեսնացե՛ք այս պատվերը:

teach reach rescue
Messenger International®
MessengerInternational.org

Այս գիրքը նվեր է հեղինակի կողմից և ենթակա չէ վաճառքի: